

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈԱԶՄՄԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

1 (103). 2020



«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ
ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»

«АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ В ОДНОЙ ВОЙНЕ»

“ARMENIA CANNOT LOSE ANY WAR”

ՄԱՅԻՍՅԱՆ ՓԱՌԱՊԱՆԾ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ



«Վաշտպանության նախարարության և Զինված ուժերի ղեկավարությունը վետերանների հետ հարգանքի տուրք է մատուցում «Մայր Հայաստան» հուշահամալիրի անմար կրակի մոտ Երևան, 2020 թ. մայիսի 9



«Պաշտպանության նախարար Դ. Տոնոյանը «Եռաբլուր» զինվորական պանթեոնում ծաղկեպսակ է դնում՝ ի հիշատակ Շուշիի ազատագրման ժամանակ զոհված հերոսների Երևան, 2020 թ. մայիսի 8



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

1 (103). 2020

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Տավարաձյան Գ. Վ.
(նախագահ)
- Զիլինգարյան Գ. Ս.
(գլխավոր խմբագիր)
- Ալեքսանյան Ա. Ջ.
Ալբունյան Գ. Ռ.
Այդինյան Ռ. Ա.
Այվազյան Լ. Գ.
Ապերյան Վ. Վ.
Բալայան Գ. Կ.
- Գասպարյան Օ. Վ.
Դավթյան Ա. Մ.
Խաչատրյան Տ. Վ.
Ղամբարյան Մ. Ա.
Մակարյան Ա. Ա.
Մարգարյան Ռ. Պ.
Մարգարյան Վ. Հ.
Մարտիկյան Ա. Մ.
Մարտիրոսով Լ. Ա.
- Շահնագարյան Թ. Ն.
Սիմոնյան Ս. Վ.
Սմբատյան Ն. Վ.
Վարդանյան Ա. Գ.
- Տեր-Գրիգորյանց Ն. Գ.
Օհանյան Ս. Ռ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՄԱՅԻՍՅԱՆ ՓՈՌՈՂԱՆԾ ՀԱԴԹԱՆԱԿՆԵՐ

- Է. Գ. Մինասյան, Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941–1945 թթ.) 9
- Ա. Գ. Ավագյան, Երկրորդ աշխարհամարտի ավարտական փուլում Թուրքիային ԽՍՀՄ ներկայացրած պահանջների հարցի շուրջ 33
- Գ. Ա. Պեպրոսյան, Թուրքիայի ազգային անվտանգության ծառայության գործունեությունը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939–1945 թթ.) 47
- Մ. Ա. Հարությունյան, Շուշի քաղաքի ազատագրման օպերացիայի արդյունքների և պատմական նշանակության մասին 55

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- Ա. Ա. Ավերյան, ՌԻՆիտար պետությունում տարածքային կառավարման համակարգի գործունեության որոշ հիմնախնդիրներ (ՀՀ օրինակով) 64

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

- Ա. Գ. Դավթյան, Ադրբեջանի տնտեսական հեռանկարները ներքաղաքական և համաշխարհային առևտրատնտեսական զարգացումների լույսով 72

ՀԱԿԱՄԱՐՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ա. Մ. Շահվերդյան, Բնահամակարգերի ոչնչացման մեջ մեղադրանքների օգտագործումը քաղաքական շահարկումների նպատակով՝ Ղարաբաղյան հակամարտության օրինակով 81

ԿԱՊԻ ԶՈՐՔԵՐՈՒՄ

- Գ. Ս. Ալեքսանյան, Արդիական ռազմական ռադիոկայանները և դրանց զարգացման հեռանկարները 89

ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Վ. Վ. Մեկրոնյան, Հայաստանի Հանրապետությունում կրթության նոր հե-
ռանկարային մոդելի մշակման նկատմամբ որոշ մտտեցումներ 97

ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Գ. Է. Հարությունյան, Արհեստական բանականության կիրառման համաշ-
խարհային փորձից. հեռանկարներ ռազմական ոլորտի համար 107

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ս. Ա. Սուջյան, Ռազմական գործողությունների բատերաբեմի ռազմավա-
րական գնահատման մեթոդաբանության որոշ հարցեր 121

ԳԻՏԱԽՈՐՀՐԳԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԲԳ

Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ա. Գ. Ավագյան*, պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր *Լ. Ս. Արզումանյան*, բանասիրական գիտությունների դոկտոր,
Գ. Ե. Բաղդասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ս. Ա. Գալստյան*, բանասիրական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ս. Գ. Գալստյան*, բժշկական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր, *Հ. Ա. Գևորգյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Կ. Ս. Դանիելյան*,
կենսաբանական գիտությունների թեկնածու, աշխարհագրական գիտությունների դոկտոր,
Բ. Ն. Հարությունյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Վ. Մ. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Հ. Հ. Մարտոսյան*, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Ա. Հ. Մանթաշյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Մ. Մ. Մարգարյան*, քաղաքական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Մ. Վ. Մարկոսյան*, *Կրեմլիկական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր*, *Է. Գ. Մինասյան*, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Մ. Մ. Միրիջանյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Հ. Յ. Սայադյան*,
աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ռ. Ա. Սաֆրասարյան*, ՀՀ ԳԱԱ
ակադեմիկոս, *Ա. Հ. Սիմոնյան*, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, *Հ. Ս. Սիսակյան*, բժշկական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Յու. Մ. Սուվարյան*, ՀՀ ԳԱԱ հայագիտության
և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ
նախագահության անդամ, *Հ. Ս. Քոթանջյան*, գեներալ-լեյտենանտ (պաշտոնաթող),
քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԲԳ

Գ. Վ. Տավարածյան, գեներալ-մայոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետ, *Վ. Հ. Մարգարյան*,
հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, գեղապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի
կրթության և գիտության գծով տեղակալ-ԱՌՀԻ-ի պետ, *Ս. Ա. Սուջյան*, աշխարհագրական
գիտությունների թեկնածու, պահեստագործի գեղապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմարվեստի
պատմության հետազոտությունների կենտրոնի պետ, *Գ. Մ. Մանասյան*, պատմական
գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի տարածաշրջանային ռազմավարական
վերլուծությունների կենտրոնի պետ, *Հ. Հ. Հովհաննիսյան*, ռազմական գիտությունների
թեկնածու, գեղապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմավարական առաջնորդության
և կառավարման հետազոտությունների կենտրոնի ավագ դասախոս

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)

ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОГО
ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

№ 1 (103). 2020

Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Таварацян Г. В. (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор),
Айвазян Л. Г., *Айдинян Р. А.*, *Алексян А. Дж.*, *Алтунян Г. Р.*, *Аперян В. В.*,
Балаян Г. К., *Варганян А. Г.*, *Гамбарян М. А.*, *Гаспарян О. В.*, *Давтян А. М.*,
Макарян А. А., *Маргарян В. Г.*, *Маргарян Р. П.*, *Мартикян А. М.*, *Мартиросов Л. А.*,
Оганян С. Р., *Симонян С. В.*, *Смбатян Н. В.*, *Тер-Григорьянц Н. Г.*,
Хачатрян Т. В., *Шахназарян Т. Н.*

СОДЕРЖАНИЕ

СЛАВНЫЕ МАЙСКИЕ ПОБЕДЫ

- Э. Г. Минасян.* Участие армянского народа в Великой Отечественной войне (1941–1945 гг.) 9 (29)*
А. Г. Авагян. К вопросу о требованиях СССР, выдвинутых Турцией на заключительном этапе Второй мировой войны 33 (45)
Г. А. Петросян. Деятельность Службы национальной безопасности Турции в годы Второй мировой войны (1939–1945 гг.) 47 (53)
М. А. Арутюнян. Об итогах и историческом значении освобождения города Шуши 55 (62)

ГОСУДАРСТВЕННОЕ УПРАВЛЕНИЕ

- А. А. Аветян.* Некоторые проблемы функционирования системы территориального управления в унитарном государстве (на примере РА) 64 (70)

РЕГИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ

- А. Г. Давтян.* Экономические перспективы Азербайджана в свете внутривосточных и глобальных торгово-экономических процессов 72 (79)

КОНФЛИКТОЛОГИЯ

- А. М. Шахвердян.* Использование обвинений в уничтожении экосистемы в целях политических спекуляций на примере Карабахского конфликта 81 (87)

В ВОЙСКАХ СВЯЗИ

- Г. С. Алексян.* Современные военные радиостанции и перспективы их развития 89 (95)

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

ВОЕННОЕ ОБРАЗОВАНИЕ

В. В. Мелконян. Некоторые подходы к разработке новой перспективной модели образования в Республике Армения 97 (104)

ВОЕННАЯ ИНФОРМАТИКА

Г. Э. Арутюнян. Из мирового опыта применения искусственного интеллекта: перспективы для военной сферы 107 (120)

ВОЕННАЯ ГЕОГРАФИЯ

С. А. Сугжян. Некоторые вопросы методологии стратегической оценки театра военных действий 121 (129)

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

А. Г. Авагян, доктор исторических наук, профессор, *Н. У. Аракелян*, академик НАН РА; *А. С. Арзуманян*, доктор филологических наук; *Б. Н. Арутюнян*, доктор медицинских наук, профессор; *В. М. Арутюнян*, академик НАН РА; *Г. Е. Багдасарян*, академик НАН РА; *С. А. Галстян*, доктор филологических наук, профессор; *С. Г. Галстян*, доктор медицинских наук, профессор; *Г. А. Геворкян*, академик НАН РА; *К. С. Даниелян*, кандидат биологических наук, доктор географических наук; *Г. С. Котанджян*, генерал-лейтенант (в отставке), доктор политических наук, профессор; *А. А. Манташян*, академик НАН РА; *М. М. Маргарян*, доктор политических наук, профессор; *М. В. Маркосян*, доктор технических наук, профессор; *Г. Г. Матевосян*, член-корреспондент НАН РА; *Э. Г. Минасян*, доктор исторических наук, профессор; *М. М. Мириджанян*, доктор медицинских наук, профессор; *Р. А. Сафрастян*, академик НАН РА, *О. Я. Саядян*, доктор географических наук, профессор, *А. Г. Симонян*, член-корреспондент НАН РА, *А. С. Сисакян*, доктор медицинских наук, профессор, *Ю. М. Суварян*, академик-секретарь Отделения арменоведения и общественных наук НАН РА, член Президиума НАН РА

ВОЕННО-НАУЧНЫЙ СОВЕТ:

Г. В. Таварацян, генерал-майор, начальник НИУО МО РА;
В. Г. Маргарян, доктор психологических наук, доцент, полковник, заместитель начальника НИУО МО РА по образованию и науке – начальник ИНСИ;
С. А. Сугжян, кандидат географических наук, полковник запаса, начальник Центра исследований истории военного искусства НИУО МО РА;
Д. М. Манасян, кандидат исторических наук, начальник Центра региональных стратегических исследований, *Г. О. Оганисян*, кандидат военных наук, полковник, старший преподаватель Центра исследований стратегического руководства и управления НИУО МО РА

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)

DEFENSE-ACADEMIC JOURNAL,
NATIONAL DEFENSE RESEARCH UNIVERSITY,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 1 (103), 2020

Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Tavaratsyan G. V. (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Alexanyan A. J.*,
Altunyan G. R., *Aperyan V. V.*, *Ayvazyan L. G.*, *Balayan G. K.*, *Davtyan A. M.*,
Gasparyan O. V., *Ghambaryan M. A.*, *Idinyan R. A.*, *Khachatryan T. V.*, *Makaryan A. A.*,
Margaryan R. P., *Margaryan V. H.*, *Martikyan A. M.*, *Martirossov L. A.*,
Ohanyan S. R., *Shahnazaryan T. N.*, *Simonyan S. V.*, *Smbatyan N. V.*,
Ter-Grigoryants N. G., *Vardanyan A. G.*

CONTENTS

GLORIOUS MAY VICTORIES

- E. G. Minasyan.* The participation of the Armenian people in the Great Patriotic War (1941–1945) 9 (30)*
- A. G. Avagyan.* On the issue of the claims the USSR submitted to Turkey at the final stage of WWII 33 (45)
- G. A. Petrosyan.* The activity of Turkey's National Security Service during World War II (1939–1945) 47 (53)
- M. A. Harutyunyan.* On the outcomes and historical significance of the liberation of the city of Shushi 55 (63)

PUBLIC ADMINISTRATION

- A. A. Avetyan.* Some issues of functioning of the system of territorial governance within a unitary state (by the case of the RA) ... 64 (71)

REGIONAL SECURITY

- A. G. Davtyan.* Azerbaijan's economic outlooks in the light of domestic-political and global trade and economic processes 72 (80)

CONFLICTOLOGY

- A. M. Shahverdyan.* Bringing accusations of destroying the ecosystem for the purpose of political speculations by example of the Karabakh conflict 81 (88)

IN THE SIGNAL CORPS

- G. S. Alexanyan.* Modern military radio stations and the perspectives for their development 89 (96)

* Numbers in brackets mean the page of the text in English.

MILITARY EDUCATION

V. V. Melkonyan. Some approaches to the development of the new perspective educational model in the Republic of Armenia 97 (105)

MILITARY INFORMATION SCIENCE

G. E. Harutyunyan. From the world's experience of applying artificial intelligence: perspectives for the military sphere 107 (120)

MILITARY GEOGRAPHY

S. A. Sujyan. Some issues of the methodology of the strategic assessment of the theater of operations 121 (130)

ACADEMIC-ADVISORY COUNCIL:

A. G. Avagyan, Doctor of History, Professor; *N. H. Arakelian,* Full Member, NAS, RA; *L. S. Arzumanyan,* Doctor of Philology; *G. Y. Baghdassarian,* Full Member, NAS, RA; *K. S. Danielyan,* PhD in Biology, Doctor of Geography; *S. A. Galstyan,* Doctor of Philology, Professor; *S. G. Galstyan,* Doctor of Medical Sciences, Professor; *H. A. Gevorkian,* Full Member, NAS, RA; *B. N. Harutyunyan,* Doctor of Medical Sciences, Professor; *V. M. Haroutyunian,* Full Member, NAS, RA; *H. S. Kotanjian,* Lieutenant General (retired), Doctor of Political Sciences, Professor; *A. H. Mantashian,* Full Member, NAS, RA; *M. M. Margaryan,* Doctor of Political Sciences, Professor; *M. V. Markosyan,* Doctor of Technical Sciences, Professor; *H. H. Matevosyan,* Corresponding Member, NAS, RA; *E. G. Minasyan,* Doctor of Historical Sciences, Professor; *M. M. Miridjanian,* Doctor of Medical Sciences, Professor; *R. A. Safrastyan,* Full Member, NAS, RA; *Hov. Y. Sayadyan,* Doctor in Geography, Professor; *A. H. Simonyan,* Corresponding Member, NAS, RA; *H. S. Sissakian,* Doctor of Medical Sciences, Professor; *Yu. M. Suvaryan,* Academician-Secretary of the Division of Armenology and Social Sciences, NAS, RA, Member of the Presidium, NAS, RA

DEFENSE-ACADEMIC COUNCIL:

G. V. Tavaratsyan, MG, Head, NDRU, MOD, RA; *V. H. Margaryan,* Doctor of Psychology, Associate Professor, Col, Deputy Head in Education and Research–Head, INSS, NDRU, MOD, RA; *S. A. Sujyan,* PhD in Geography, Col (Ret.), Head, Center for Research on the History of Military Art, NDRU, MOD, RA; *D. M. Manasyan,* PhD in History, Head, Center for Regional Strategic Analyses, NDRU, MOD, RA; *H. H. Hovhannisyan,* PhD in Military Science, Col, Senior Lecturer, Center for Research on Strategic Leadership and Management, NDRU, MOD, RA

Սահմանք քաջաց՝ զէնն իւրեանց

Մ. Խորենացի

Մեր սուրը փառքով դրեցինք պատրյան

Ավ. Իսահակյան

ՄԱՅԻՍՅԱՆ ՓԱՌԱՊԱՆԾ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄ – 1945

ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ – 1992

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1941–1945 ԹԹ.)

*Է. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, «Հայկական բանակ» ՌԳՀ
գիտախորհրդատվական խորհրդի անդամ*



1941 թ. հունիսի 22-ի վաղ առավոտյան ֆաշիստական Գերմանիան, խախտելով ԽՍՀՄ-ի հետ 1939 թ. օգոստոսի 23-ին 10 տարի ժամկետով կնքված չհարձակման մասին պայմանագիրը, առանց պատերազմ հայտարարելու հարձակվեց Խորհրդային Միության վրա: Դեռ 1940 թ. դեկտեմբերի 18-ին Հիտլերը հաստատել էր ԽՍՀՄ-ի դեմ կայծակնային պատերազմի պլանը, որն ստացել էր «Բարբարոսա» անվանումը: Այդ պլանով գերմանական հրամանատարությունը ԽՍՀՄ սահմանի մոտ կենտրոնացրել էր լավ սպառազինված 190 դիվիզիաներ, որոնք «Հյուսիս», «Հարավ» և «Կենտրոն» բանակայնների կազմում գործելու էին 3 համապատասխան հիմնական ռազմավարական ուղղություններով:

Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին Գերմանիայի դաշնակիցների թիվը ավելացել էր ևս մեկով. 1941 թ. հունիսի 18-ին բարեկամության և չհարձակման պայմանագիր էր կնքվել Գերմանիայի և Թուրքիայի միջև, ինչը նշանակում էր, որ Գերմանիան հնարավորություն է ստացել անարգել կերպով օգտագործելու Թուրքիայի ցամաքային, առավել ևս ծովային տիրույթները (և առաջին հերթին՝ նեղուցները):

Ինչ վերաբերում է Գերմանիայի հետ բարեկամացած Թուրքիային, ապա առաջին աշխարհամարտի տարիներին Գերմանիայի դաշնակցությամբ Հայոց ցեղասպանությունն իրագործած այդ պետությունը անմիջապես Խորհրդային Հայաստանի սահմանի մոտ կենտրոնացրել էր խոշոր ուժեր՝ 26 սպառազեն դիվիզիա, և սպասում էր հարմար պահի՝ այնտեղ ներխուժելու համար¹:

Դեռ Լեհաստանի վրա հարձակումից մի քանի օր առաջ՝ 1939 թ. օգոստոսի 22-ին, Օբերգայցբուրգում Երրորդ ռայխի բարձրագույն հրամանատարության հետ հանդիպման ժամանակ Հիտլերը ցուցում է տվել առաջիկա պատերազմում անխնա կերպով բնաջնջել սլավոնական ժողովուրդներին՝ հիշեցնելով, թե «մեր ժամանակներում ով է հիշում 1915 թ. Թուրքիայում հայերի բնաջնջման մասին»²: Եվ պատահական չէ, որ հայ ժողովուրդը պատերազմի հենց առաջին օրվանից ելավ ոտքի՝ մասնակցելով մարտական

¹ Տես *С. Штеменко*. Генеральный штаб в годы войны. М., 1968, с. 54:

² Տես "The New York Times", 24 November 1945:

գործողություններին խորհրդա-գերմանական ռազմաճակատի բոլոր հաստատվածներում՝ հյուսիսային Մուրմանսկից մինչև հարավային Օդեսա և Ղրիմ: Հայ մարտիկները խորհրդային Միության բազմազգ ժողովուրդների շարքում մարտնչում էին բոլոր զինվորական օկրուգների և ռազմաճակատների տարբեր զորատեսակների կազմում: 1941 թ. օգոստոսի 25-ին «Պրավդա» թերթը «Հայ ժողովուրդը խորհրդային Միության ազատագրական պատերազմի մարտական մասնակիցն է» առաջնորդող հոդվածում նշել է. «Հայ ժողովուրդն իր բազմադարյան պատմության մեջ քանիցս ենթարկվել է օտար բռնակալների հարձակումներին, նա գիտե, ժողովուրդը չի մոռացել հայերի ֆիզիկական ոչնչացումը, որը առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին կազմակերպել էր արյունառուշտ Հիտլերի նախորդ Վիլիելմ կայսրը: Այդ նպատակով էլ, երբ արյունալի հրդեհի պես բռնկվեց պատերազմը, որն սկսել է մարդակեր Հիտլերը խորհրդային Միության դեմ, ամբողջ հայ ժողովուրդը մեկ մարդու պես ոտքի կանգնեց պաշտպանելու հայրենիքը»³:

Պատերազմի առաջին օրվանից Հայաստանի պետական և կուսակցական մարմինները, տեղական խորհուրդների գործադիր կոմիտեները, հանրապետական, քաղաքային և շրջանային զինվորական կոմիսարիատները անմիջապես լծվեցին հանրապետության ռազմական կարողությունը գործարկելու աշխատանքներին: Հանրապետության առջև դրվեցին հույժ կարևոր խնդիրներ՝ առաջին հերթին ամբողջ գործունեությունը վերակառուցելու ռազմական հիմունքներով, ապահովելու զորահավաքը, ձակատ մեկնածներին փոխարինելու կադրեր ընտրելու և թիկունքի աշխատանքն անխափան շարունակելու համար, ապա սկսելու բնակչության ռազմական ուսուցումը, աշխարհագրի կազմավորումը, սահմանամերձ շրջաններում պաշտպանական ամրաշինությունների կառուցումը և այլն⁴:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության 1941 թ. հունիսի 22-ի զինապարտության մասին հրամանագրով բանակ են զորակոչվել 1905–1918 թթ. ծնված զինապարտները, այնուհետև՝ 1919–1925 թթ., մասամբ՝ 1926 թ. ծնվածները⁵: Ջորահավաքը կատարվում էր կազմակերպված ձևով՝ զորակոչիկների ու նրանց ընտանիքի անդամների բարձր հայրենասիրության պայմաններում: Մեծ թիվ էին կազմում ռազմաճակատ կամավոր մեկնել ցանկացողները: Ըստ պրոֆեսոր Կ. Հարությունյանի հաշվարկումների՝ 1941–1945 թթ. բանակ են զորակոչվել 22 տարիքային խմբերի հայ զորակոչիկներ, որոնց ընդհանուր թիվը կազմել է շուրջ 286 հազար⁶: Բանակում քիչ չէին նաև ավելի մեծ տարիքի (1895–1904 թթ.) զինծառայողները (մո-

³ Տես «Правда», 25 августа 1941 г.:

⁴ Տես Հայաստանի Ազգային Արխիվ (ՀԱԱ), ֆ. 1, ց. 30, գ. 29, թ. 192, գ. 30, թ. 113, ց. 31, գ. 34, թ. 190, 191, գ. 296, թ. 29, ց. 33, գ. 111, թ. 21:

⁵ Տես Կ. Հարությունյան, Հայ ժողովրդի մասնակացությունը Հայրենական մեծ պատերազմին (1941–1945 թթ.): Ե., 2002, էջ 19:

⁶ Տես Կ. Արությունյան. Армянский народ в Великой Отечественной войне 1941–1945 гг. Е., 2018, с. 74:

տավորապես 10 հազար մարդ): Գումարելով նաև նախապատերազմյան տարիներին զորակոչվածներին (1938–1940 թթ.), որոնց թիվը ՀՀ զինվորական կոմիսարիատի տվյալներով կազմել է 28384, ստացվում է, որ Հայրենական մեծ պատերազմին Հայաստանից մասնակցել է 320000-ից ավելի մարդ (շուրջ 300 հազարը՝ հայ)⁷: Որոշ հաշվարկներով միութենական այլ պետություններից պատերազմին հայ մասնակիցների թիվը կազմել է մոտ 200 հազար: Ղա նշանակում է, որ Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են մոտ 500 հազար հայեր⁸, որոնցից շուրջ 200 հազարը զոհվել են:

Խորհրդային ժողովրդի ազատության և անկախության համար մղվող պայքարում իրենց հերոս եղբայրներից, ամուսիններից, հայրերից ու որդիներից հետ չեն մնացել նաև կանայք: Նրանք ոչ միայն թիկունքում փոխարինել են տղամարդկանց, այլև համալրել են բանակի շարքերը՝ իրենց մեծ լուծման ներդրելով հաղթանակի գործում: Նրանք ծառայել են տղամարդկանց հետ հավասարապես՝ հաղթահարելով մարտական բոլոր դժվարությունները, նրանց հետ հասել են վերջնական հաղթանակի՝ մինչև Բեռլին⁹: «Երբեք, ոչ մի պատերազմում կանայք այնպիսի դեր չեն խաղացել, ինչպես 1941–1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում», գրել է գեներալ Չույկովը¹⁰:

Պատերազմի առաջին շրջանում իրագործված ռազմահավաքային աշխատանքներում կարևոր տեղ է գրավել ազգային դիվիզիաների կազմավորումը: Հայրենական պատերազմի հենց սկզբում Կարմիր բանակի կենդանի ուժի հսկայական կորուստներն խորհրդային բարձրագույն ռազմաքաղաքական ղեկավարությանն ստիպեցին 1941 թ. նոյեմբերի 13-ին ԽՍՀՄ Պաշտպանության պետական կոմիտեի որոշմամբ թույլատրել ստեղծել նաև ազգային դիվիզիաներ¹¹: Այդ զորամիավորումները պետք է կազմավորվեին հանրապետությունների նյութական և մարդկային ռեսուրսների հաշվին, ինչը բավականին կկրճատեր դիվիզիայի կազմավորման ժամկետները՝ բարձրացնելով ուսուցման արդյունավետությունն ու որակը:

Հայ ժողովրդի 60 հազարից ավելի զավակներ պատերազմին մասնակցել են հայկական վեց ազգային դիվիզիաների շարքերում: **Դրանցից մեկը՝ 261-րդը**, մշտապես մնացել է ՀԽՍՀ-ում և ոչ միայն պաշտպանել է Թուրքիայի հետ Խորհրդային Հայաստանի պետական սահմանը, այլև ռազմաճակատի համար պատրաստել երթային զոււմարտակներ:

Առաջին հայկական դիվիզիան **76-րդ լեռնահրաձգային դիվիզիան** էր, որը կազմավորվել էր Հայաստանում դեռ 1920–1922 թթ.: 1938–1940 թթ. վերակազմավորվել էր որպես ոչ ազգային զորամիավորում: 1941 թ. հունիս–

⁷ Տես նույն տեղում:

⁸ Տես նույն տեղում, էջ 74–75:

⁹ Տես Է. Մինասյան, Հայ հերոսուհի կանայք: Ե., 2016, էջ 339–340:

¹⁰ В. Чуйков. Начало пути. М., 1962, с. 261.

¹¹ Տես Կ. Հարությունյան, Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ.: Ե., 2002, էջ 200–201:

հուլիս ամիսներին հանրապետության մարդկային ու նյութական միջոցների հաշվին ստանալով նոր համալրում՝ նա կրկին ձեռք է բերել իր նախկին ազգային տեսքը: Դիվիզիայի կոմիսար Անդրեյ Գերվասիևի (հետագայում՝ գեներալ-լեյտենանտ) վկայությամբ՝ դիվիզիայի ավելի քան 16-հազարանոց անձնակազմից շուրջ 14 հազարը, կամ 90 տոկոսը, հայեր էին¹²:

1941 թ. սեպտեմբերի սկզբին ռազմաճակատում ստեղծված ծանր կացությունը խորհրդային բարձր հրամանատարությանը հարկադրել է Իրանի Թավրիզ քաղաքում տեղաբաշխվող 76-րդ դիվիզիային ևս ուղարկել ռազմաճակատ: Նույն թվականի սեպտեմբերի 27-ին դիվիզիան ՌԻկրահնական ԽՍՀ Պոլտավայի մարզում շվեդների մեջ է մտել թշնամու հետ և մինչև տարեվերջ ծանր պաշտպանական մարտեր մղել նաև Խարկովի ուղղությամբ: Դիվիզիան առանձնակի աչքի է ընկել Ստալինգրադի ճակատամարտում 1942 թ. նոյեմբերի 19-ին սկսված նշանավոր հարձակման ժամանակ, որի շնորհիվ նոյեմբերի 23-ին օղակի մեջ է առնվել 330-հազարանոց ֆաշիստական խմբավորումը: Այդ գործում իր արժանի ավանդը ներդրած 76-րդ հրաձգային դիվիզիան ԽՍՀՄ Պաշտպանության ժողկոմի հրամանով 1942 թ. նոյեմբերի 23-ին արժանացել է գվարդիականի կոչման և անվանվել 51-րդ գվարդիական Կ. Վորոշիլովի անվան կարմրադրոշ հրաձգային դիվիզիա:

Ստալինգրադյան ճակատամարտում տարած փայլուն հաղթանակը Հայրենական պատերազմում դրել է արմատական բեկման սկիզբը: Գերմանա-ֆաշիստական զորքերի պարտությունը սթափեցրել է թուրքերին, որոնք անմիջապես սահմանից հետ են քաշել իրենց դիվիզիաները: Ստալինգրադի ճակատամարտից հետո Ճապոնիան նույնպես հրաժարվել է ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի մեջ մտնելուց:

51-րդ գվարդիական դիվիզիան 1943 թ. հունիսի 19-ին պարզևատրվել է Լենինի շքանշանով: Այդ ժամանակ հայերը թվով երրորդն էին՝ ռուսներից և ուկրաինացիներից հետո¹³:

Այնուհետև դիվիզիան ակտիվորեն մասնակցել է Կուրսկի ճակատամարտին¹⁴, իսկ 1944–1945 թթ. մասնակցել է Բելոռուսիայի հյուսիսային շրջաններից ու Մերձբալթիկայից թշնամու դուրսմղմանը: Պոլոնցկի ազատագրման համար նրա մի քանի գնդեր ստացել են «Պոլոնցկյան» պատվանունը¹⁵, իսկ Վիտեբսկի ազատագրման համար դիվիզիան 1944 թ. հուլիսին արժանացել է «Վիտեբսկյան» պատվանվանը¹⁶: 1945 թ. մայիսի 9-ը նա դիմավորել է Լիտվական ԽՍՀ Մեծնալա գյուղի շրջանում:

¹² Տես *К. Арутюнян*. Армянский народ в Великой Отечественной войне 1941–1945 гг., с. 82:

¹³ Տես *Կ. Հարությունյան*, Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ., էջ 233:

¹⁴ Տես նույն տեղում:

¹⁵ Տես նույն տեղում, էջ 234:

¹⁶ Տես նույն տեղում:

Այսպիսով՝ դիվիզիան, անցնելով ավելի քան 12 հազար կմ մարտական ուղի, ոչնչացրել է թշնամու ավելի քան 50 հազար և գերի վերցրել 15 հազար մարդ, ազատագրել 1000-ից ավելի բնակավայր, 6 անգամ արժանացել Գերագույն գլխավոր հրամանատարի շնորհակալության: Դիվիզիայի շուրջ 20000 զինվոր ու սպա պարգևատրվել են մարտական շքանշաններով ու մեդալներով, 26 հոգու շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում, իսկ 7-ը դարձել են «Փառքի» 3 աստիճանի շքանշանակիրներ¹⁷: Դիվիզիայի պատվիրակությունները 5 անգամ այցելել են Խորհրդային Հայաստան: Հայ ժողովուրդն իր հերթին միշտ ուշադրության կենտրոնում է պահել փառապանծ գվարդիականներին՝ նրանց ուղարկելով զանազան նվեր-ծանրոցներ, ոգևորող նամակներ և այլն:

Հայկական ազգային դիվիզիաների մեջ իր ուրույն տեղն ունի **390-րդ հրաձգային դիվիզիան**, որը հայկական դիվիզիաներից առաջինն է մեկնել ռազմաձևակառ: Մյուսների համեմատությամբ նրա մարտական ուղին շատ կարճ էր և բաժին ընկած ձակատագիրն էլ՝ դաժան:

Դիվիզիան կազմավորվել է 1941 թ. օգոստոսին Կրաստանի Ջուզդիդի և Փոթի քաղաքներում, 1941 թ. դեկտեմբերի վերջին և 1942 թ. հունվարի սկզբին տեղափոխվել է Կերչի մոտ: Այստեղ էլ հենց հունվար ամսին մարտական իրադրության պայմաններում համալրվել է հայ զինվորներով և սպաներով՝ դառնալով հայկական: 1942 թ. մարտին նրա անձնակազմի մոտ 10000 հոգուց 9000-ը հայ էր¹⁸:

Կերչի թերակղզում մղված մարտերում 390-րդ հայկական հրաձգային դիվիզիան ցուցաբերել է փայլուն մարտական որակներ: Այսպես. 1942 թ. մարտի 20-ին զորամիավորումը արյունահեղ մարտերում կասեցրել է գերմանական 22-րդ տանկային դիվիզիայի հարձակումը՝ նրան պատճառելով ծանր կորուստներ (47 տանկ): Կատաղի մարտերից մեկում՝ 1942 թ. մարտի 31-ին, ստացած մահացու վերքից, ապրիլի 2-ին վախճանվել է դիվիզիայի խիզախ հրամանատար գնդապետ Սիմոն Չաքյանը¹⁹:

1942 թ. մայիսի 8-ին հակառակորդը Կերչի ձակատում անցել է վճռական հարձակման ու նույն օրը ձեռքել խորհրդային զորքերի պաշտպանությունը: Խորհրդային զորքերի միայն մի փոքր մասին է հաջողվել տարահանել Թամանի թերակղզի: Կերչում և նեղուցի ջրերում զոհվել են հազարավոր հայ մարտիկներ: Կերչի մայիսյան աղետից հետո հունիսի 14-ին դիվիզիան կազմալուծվել է²⁰:

1941 թ. օգոստոսին Խորհրդային Հայաստանի տարածքում (Երևան, Էջմիածին) կազմավորվել է **408-րդ հրաձգային դիվիզիան** (հրամանատար՝ գնդապետ Պավել Կիցուկ): Սկզբում այն իր ազգային կազմով եղել է խառը,

¹⁷ Տես նույն տեղում, էջ 235:

¹⁸ Տես *К. Арутюнян*. Армянский народ в Великой Отечественной войне 1941-1945 гг., с. 82:

¹⁹ Տես նույն տեղում, էջ 35:

²⁰ Տես նույն տեղում, էջ 85–86:

սակայն, հետագայում (1942 թ. մարտ) դարձել է հայկական` պայմանավորված անձնակազմի հայացմամբ. ռազմաձևակատ մեկնելիս անձնակազմի (11 500 մարդ) ավելի քան 97 տոկոսը հայեր էին²¹:

1942 թ. սեպտեմբերի 11–13-ը 408-րդ դիվիզիան մեկնել է ռազմաձևակատ` Կովկասը պաշտպանելու: Ի դեպ, Կովկասի համար մղվող ձևակատամարտին մասնակցող երեք հայկական ազգային դիվիզիաներում (89-րդ, 408-րդ և 409-րդ) և այլ զորքերում մարտնչում էին ընդհանուր առմամբ 100 000 հայ մարտիկներ²²:

1942 թ. սեպտեմբեր–նոյեմբեր ամիսներին 408-րդ դիվիզիան Տուապսե–Գելենջիկ շրջանում ընթացող արյունահեղ կռիվներում ջախջախել է ռումինական 3-րդ լեռնահրաձգային դիվիզիան, իսկ այնուհետև, ծանր կորուստներ պատճառելով գերմանական 19-րդ հետևակային դիվիզիային, կասեցրել է նրա գրոհը²³: Սակայն այդ անզիջում պայքարում կրած մեծ կորուստների պատճառով 1942 թ. նոյեմբերին 408-րդ Հայկական հրաձգային դիվիզիան դուրս է բերվել ռեզերվ և վերակազմավորվել 7-րդ առանձին հրաձգային բրիգադի²⁴:

409-րդ Հայկական հրաձգային դիվիզիան կազմավորվել է 1941 թ. հուլիսին ՀԽՍՀ Ստեփանավան քաղաքում` հանրապետության տարածքում տեղաբաշխված 45-րդ բանակի կազմում:

1942 թ. փետրվարի 5-ին դիվիզիան վերակազմավորվել է որպես Հայկական ազգային դիվիզիա, որի անձնակազմի (13 800 մարդ) ավելի քան 97 տոկոսը հայեր էին²⁵:

1942 թ. վերջերին դիվիզիայի հրամանատար գնդապետ Արտաշես Վասիլյանը նշանակվել է 89-րդ Հայկական հրաձգային դիվիզիայի հրամանատար, իսկ նրան փոխարինել է գնդապետ Վասիլի Գլադկովը: Հետագայում դիվիզիայի հրամանատարներ են եղել գնդապետ Միխայիլ Դոբրովոլսկին ու Գավրիիլ Սորոկինը և գվարդիայի գեներալ-մայոր Եվստաֆի Գրեչանին:

1942 թ. դեկտեմբերի 2-ին դիվիզիան Լենինականից (Գյումրի) մեկնել է ռազմաձևակատ և 1943 թ. հունվարի 3-ին Հյուսիսային Կովկասում խորհրդային զորքերի հակահարձակման հենց սկզբում հարևան զորամիավորումների հետ ազատագրել է Սոզոկոկը:

Դիվիզիան հերոսաբար կռվել է ՌԻկրաինայում (Կիրովոգրադի ազատագրման համար արժանացել է «Կիրովոգրադյան» պատվանման), Մոլդավիայում (մասնակցել է Յասսի-Քիշնևյան խմբավորման ջախջախմանը` գերե-

²¹ Տես նույն տեղում, էջ 81–82:

²² Տես նույն տեղում, էջ 253:

²³ Տես *Կ. Հարությունյան*, Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ., էջ 253–254:

²⁴ Տես նույն տեղում, էջ 255, նաև` *С. Саркисян*. 408-я Армянская стрелковая дивизия в битве за Кавказ. Е., 1985, сс. 133–134:

²⁵ Տես *Կ. Հարությունյան*, Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ., էջ 257:

վարելով թշնամու 2000 զինվորի), Ռումինիայում, Հունգարիայում, Չեխոսլովակիայում (արժանացել է «Բրատիսլավյան» կոչման), ապա նորից տեղափոխվել է Հունգարիա, որտեղ էլ 1945 թ. հուլիսին կազմալուծվել է:

Հայրենական մեծ պատերազմում 409-րդ Հայկական «Կիրովոգրադյան-Բրատիսլավյան» հրաձգային դիվիզիայի մարտական գործունեությունը տևել է 1941 թ. դեկտեմբերից մինչև 1945 թ. մայիս՝ Սոզոլով քաղաքից մինչև Պրահա: Այդ ընթացքում ոչնչացրել է թշնամու մեծ քանակությամբ տեխնիկա ու կենդանի ուժ, ռազմագերիների թիվը կազմել է մոտ 5200 զինվոր և սպա, այդ թվում՝ 3 գեներալ: Դիվիզիայի 1700 զինվորներ և սպաներ պարզատրվել են մարտական շքանշաններով ու մեդալներով²⁶:

Հայկական ազգային դիվիզիաներից առավել հանրահայտը և առավել հարուստ մարտական կենսագրություն ունեցողը **89-րդ Թամանյան դիվիզիան** է²⁷: Այն կազմավորվել է 1941 թ. դեկտեմբերին Երևանում: Դիվիզիայի առաջին հրամանատարը եղել է գնդապետ Սիմոն Զաքյանը, որին 1942 թ. մարտին փոխարինել է փոխգնդապետ Անդրանիկ Սարգսյանը, իսկ գնդապետ Զաքյանը նշանակվել է 390-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար:

Բազմամյա լարված վարժանքներից հետո 89-րդ դիվիզիան 1942 թ. օգոստոսի 6-ին մեկնել է ռազմաձակատ՝ Հյուսիսային Կովկաս: Մեկնման պահին նրա անձնակազմի (մոտ 12000 զինվոր և սպա) ավելի քան 99 տոկոսը հայեր էին²⁸:

Հենց այդ օրերին՝ 1942 թ. հուլիսի 25-ին, սկսվել և զնալով թեժացել է Կովկասի համար ձակատամարտը: Գերմանական «Ա» բանակախումբը (17-րդ դաշտային բանակ և 1-ին տանկային բանակ), կարճ ժամանակամիջոցում հասնելով զգալի հաջողությունների, նպատակ է ունեցել շրջանցել Գլխավոր Կովկասյան լեռնաշղթան և ներխուժել Անդրկովկաս²⁹:

Օգոստոսի 11-ին դիվիզիան ամբողջությամբ կենտրոնացվել է Գրոզնու մոտ, իսկ 10 օր հետո դիրքեր զբաղեցրել քաղաքի արտաքին պաշտպանական աղեղի աջ թևում՝ Թերեք գետի աջ ափին: Հոկտեմբերի կեսերին զորամիավորումը տեղափոխվել է Մալգոբեկ քաղաքի մատույցներ: Երկու և կես ամիս տևած ծանր պաշտպանական մարտերից հետո՝ 1943 թ. հունվարի 3-ին, 89-րդ Հայկական դիվիզիան Անդրկովկասյան ռազմաձակատի մյուս զորքերի հետ անցել է հակահարձակման և մասնակցել Մալգոբեկ, Գեորգիևսկ, Միներալնիե Վոդի, Ստավրոպոլ քաղաքների և մի շարք այլ մեծ ու փոքր բնակավայրերի ազատագրմանը: Հունվարյան հարձակումը ղեկա-

²⁶ Տես նույն տեղում, էջ 262:

²⁷ 89-րդ Հայկական Թամանյան դիվիզիայի մարտական ուղին տես նաև նրա սպա, հետազայում պատմական գիտությունների դոկտոր, պաշտոնաթող գնդապետ Գ. Ս. Աբրահամյանի հոդվածում՝ «Հայկական Թամանյան դիվիզիայի մարտական ուղին»: «ՀԲ», 1995, հմ. 2–3:

²⁸ Տես *К. Арутюнян. Армянский народ в Великой Отечественной войне 1941-1945 гг.*, с. 81:

²⁹ Տես նույն տեղում, էջ 87:

վարել է դեռ 1942 թ. հոկտեմբերին նշանակված նրա հրամանատար գնդապետ Արտաշես Վասիլյանը, որը, ցավոք, Նովոջիրովիսկայա բնակավայրի մոտ փետրվարի 9-10-ը մղված զինչերային մարտում զոհվել է: Գնդապետ Վասիլյանին փոխարինել է մարտական մեծ փորձ ունեցող գնդապետ Նվեր Սաֆարյանը (1943 թ. դեկտեմբերից՝ գեներալ-մայոր), որը դիվիզիան ղեկավարել է մինչև պատերազմի ավարտը³⁰:

Դիվիզիայի մարտական ուղու փառավոր էջերից է 1943 թ. սեպտեմբերին Թամանի թերակղզում ամրացած հակառակորդի պաշտպանական «Կապույտ գծի» ձեռքումը Սախառնայա Գոլովկա-Դոլգայա լեռան հատվածում: Այստեղ անմահ սխրանքներ են գործել դիվիզիայի ավագ սերժանտներ Հունան Ավետիսյանը, Սուրեն Առաքելյանը և սակրավոր շարքային Զահան Կարախանյանը, որոնց հետմահու շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում: 1943 թ. հոկտեմբերի 3-ին դիվիզիան ազատագրել է Թաման քաղաքը, ինչի համար Գերագույն գլխավոր հրամանատարության հոկտեմբերի 9-ի հրամանով նրան շնորհվել է «Թամանյան» կոչումը³¹:

Այնուհետև 89-րդ Թամանյան դիվիզիան, այլ խորհրդային զորամիավորումների հետ, ապրիլի 11-ին ազատագրել է Կերչ քաղաքը, ինչի համար պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով, իսկ մայիսին աչքի է ընկել Սևոստյան ռազմական նավատորմի գլխավոր բազայի՝ Սևաստոպոլի ազատագրման օպերացիայում՝ գրոհելով ամենադժվարին հատվածներից մեկում՝ Գոռնայա լեռան դիմաց: Սևաստոպոլի ազատագրման համար դիվիզիայի 5 մարտիկներ արժանացել են Խորհրդային Միության հերոսի կոչման, 6000 զինվոր և սպա պարգևատրվել մարտական շքանշաններով ու մեդալներով, իսկ դիվիզիային շնորհվել է Կարմիր դրոշի շքանշան³²:

1944 թ. սեպտեմբերին դիվիզիան Դրիմից տեղափոխվել է Լեհաստան և, մասնակցելով 1945 թ. հունվարի 12-ին սկսված մեծ հարձակմանը, ազատագրել է Լեհական տասնյակ մեծ ու փոքր բնակավայրեր, շրջապատել և ջախջախել գերմանական 6000-անոց խմբավորումը³³:

Հունվարի վերջին ոտք դնելով գերմանական հող՝ զորամիավորումը մասնակցել է մեծ թվով գերմանական բնակավայրերի գրավմանը: Ջանքերի գերագույն լարումով ուղիղ երկու ամիս պաշտպանելով «Հայկական փոքր հող» անվանումն ստացած Օդերի հենակետը (3 կմ*1 կմ)՝ 89-րդը հետ է մղել հակառակորդի 19 կատաղի հակազորոհներն ու 2 ընդհանուր հարձակումները³⁴:

1945 թ. ապրիլի 16-ին սկսվել է Հայրենական մեծ պատերազմի եզրափակիչ, իր ծավալներով վիթխարի Բեռլինի օպերացիան: Ապրիլի 22-ին

³⁰ Տես Կ. Հարությունյան, Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ., էջ 237–238:

³¹ Տես նույն տեղում, էջ 238:

³² Տես նույն տեղում, էջ 239–240:

³³ Տես նույն տեղում, էջ 240:

³⁴ Տես նույն տեղում, էջ 241–242:

89-րդ Թամանյան դիվիզիան գրավել է Օդերի Ֆրանկֆուրտ քաղաքը և մասնակցել Բեռլինի պատմական գրավմանը: Արդեն ապրիլի 28-ին զորամիավորումը մարտեր է մղել գերմանական մայրաքաղաքի փողոցներում: Մի քանի օր տևած այրումահեղ մարտերում Հայկական 89-րդը հասել է մինչև քաղաքի կենտրոն և մայիսի 2-ին՝ Բեռլինի կապիտուլյացման օրը, Ռայխստագի հարևանությամբ գտնվող Հումբոլդիայն այգու երկու հզոր ամրոցներում գերել հակառակորդի ավելի քան 5100 զինվորի ու սպայի³⁵: Ֆաշիստական մայրաքաղաքի գրավման համար դիվիզիան պարզևատրվել է Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշանով: Այդ նույն շքանշանով պարգևատրվել է նաև դիվիզիայի հմուտ հրամանատար գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանը:

Բեռլինի գրավումից հետո 89-րդ Թամանյան դիվիզիան շարժվել է դեպի հարավ-արևմուտք, մայիսի 7-ին էլբա գետի ափին՝ Վիտենբերգ քաղաքի մոտ, հանդիպել ամերիկյան զորքերի հետ, ինչով էլ ավարտել է Հայրենական մեծ պատերազմում իր հաղթարշավը³⁶:

Այսպիսով՝ պատերազմի ընթացքում Հայկական 89-րդ Թամանյան Կարմրադրոշ, Կուտուզովի 2-րդ աստիճանի և Կարմիր աստղի շքանշանակիր հրաձգային դիվիզիան անցել է մարտական երկար ու փառավոր ուղի՝ Մեծ Կովկասի նախալեռներից (Գրոզնի) մինչև Բեռլին և էլբա գետը՝ 7250 կմ տարածություն, որից 3640-ը՝ մարտերով: Դիվիզիան ազատագրել է ավելի քան 900 բնակավայր և 300 քաղաք, ոչնչացրել թշնամու ավելի քան 11 հազար զինվորի և սպայի: Դիվիզիայի ավելի քան 12 հազար մարտիկներ պարգևատրվել են մարտական շքանշաններով ու մեդալներով, այդ թվում՝ Խորհրդային Միության 9 հերոս և Զինվորական փառքի շքանշանի 8 լրիվ ասպետ³⁷:

Նշված վեց ազգային դիվիզիաներից բացի, պատերազմի նախնական փուլում Հայաստանում կազմավորվել կամ համալրվել են ևս ութ դիվիզիաներ, որոնք, պաշտոնապես չլինելով ազգային, իրենց կազմով իրականում հայկական էին: Դրանք են՝ 36-րդ, 61-րդ, 320-րդ, 136-րդ (15-րդ գվարդիական), 138-րդ (70-րդ գվարդիական), 151-րդ, 236-րդ, 406-րդ հրաձգային դիվիզիաները:

Պատերազմի հենց սկզբում բանակին աջակցելու նպատակով Խորհրդային Միությունում, այդ թվում՝ Խորհրդային Հայաստանում, ստեղծվել է ժողովրդական աշխարհազոր: 1941 թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ հայկական աշխարհազորն ունեցել է 52 ջոկատ՝ 26000 հոգի անձնակազմով³⁸:

Հայերն առանձնացել են նաև անհատական մակարդակում: Առաջին իսկ մարտերում իրենց քաջությամբ աչքի են ընկել Մերձբալթյան հատուկ զին-

³⁵ Տես ՀԱԱ, ֆ. 1007, ց. 1, գ. 12, թ. 6-7:

³⁶ Տես նույն տեղում, ց. 1, գ. 16, թ. 11-12:

³⁷ Տես Կ. Հարությունյան, Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., էջ 242-244:

³⁸ Տես նույն տեղում, էջ 420:

վորական օկրուգի շտաբի օպերատիվ բաժնի պետ գնդապետ Ստեփան Գինոյանը (հետագայում՝ գեներալ-լեյտենանտ), նրա տեղակալ փոխգնդապետ Անդրանիկ Սարգսյանը, 183-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի տեղակալ փոխգնդապետ Սերգեյ Կարապետյանը (հետագայում՝ գեներալ-մայոր), 28-րդ տանկային դիվիզիայի 28-րդ հրետանային գնդի շտաբի պետ մայոր Գևորգ Միրզոյանը և ուրիշներ³⁹:

Պատերազմի առաջին հայ խիզախների թվում անմոռաց սխրանքներ են գործել Բրեստի ամրոցի հերոսական պաշտպանությանը մասնակցած շուրջ 200 հայ ռազմիկներ: Կայազորը, հայտնվելով թշնամու թիկունքում, մայոր Պ. Գավրիլովի, գնդի կոմիսար Ե. Ֆոմինի և կոմերիտական բյուրոյի քարտուղար Սամվել Մաթևոսյանի ղեկավարությամբ դիմել է հերոսական պաշտպանության:

Արևմտյան ռազմաճակատում պատերազմի առաջին օրերին իր սխրանքներով աչքի է ընկել 113-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Քրիստափոր Ալավերդյանը: Մարտերից մեկում գեներալը ծանր վիրավորվել և գերվել է, սակայն գեներալի ոգին գերության մեջ էլ բնավ չի ընկձվել: Նա մերժել է հիտլերյան բանակում ծառայելու առաջարկությունը, իսկ Համելբուրգի համակենտրոնացման ճամբարում զբաղվել է ընդհատակյա աշխատանքով, որը բացահայտվել է, և նա 1942 թ. ապրիլին գնդակահարվել է:

Հայ մարտիկները սխրագործություններով աչքի են ընկել նաև Լենինգրադի 900-օրյա անօրինակ հերոսական պաշտպանության ժամանակ (1941 թ. հուլիսի 10–1944 թ. օգոստոսի 9): Շուրջ 30 հազար հայ մասնակցել է Լենինգրադի պաշտպանությանը, 10 հազարը զոհվել է Լենինգրադն ու մարզն ազատագրելիս: Լենինգրադի պաշտպանության ժամանակ ցուցաբերած խիզախության համար գնդացրային ստորաբաժանման հրամանատար Աշոտ Ղազարյանն արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման⁴⁰:

Էրմիտաժի գիտական և մշակութային արժեքները պահպանելու համար Լենինի շքանշանի է արժանացել նրա տնօրեն ակադեմիկոս Հովսեփ Օրբելին: Հերոս Լենինգրադցիների հետ է եղել հայ թատրոնի մեծերից մեկը՝ աշխարհահռչակ դերասան Վահրամ Փափազյանը, որի կինը՝ Գալինան, թշնամու ռումբի պայթյունից զոհվել է նրա կողքին⁴¹:

Լենինգրադի հերոսական պաշտպանության հետ անխզելիորեն կապված է 42-րդ բանակի ռազմական խորհրդի անդամ գեներալ-մայոր Բենիամին Գալստյանի անունը: Նա զոհվել է 1942 թ. դեկտեմբերին՝ Պուլկովոյի բարձունքում: Ռուս մեծ գրող Նիկոլայ Տիխոնովը, նշելով նրա արժանիքները, գրել է. «Գալստյանի անունը մենք կմտցնենք հերոսների՝ Լենինգրադի

³⁹ Տես *К. Арутюнян*. Армянский народ в Великой Отечественной войне 1941-1945 гг., сс. 50–53:

⁴⁰ Տես *К. Арутюнян, Г. Погосян*. Вклад армянского народа в победу в Великой Отечественной войне (1941-1945). Е., 2010, сс. 366–368:

⁴¹ Տես նույն տեղում, էջ 109–127:

պաշտպանների անջնջելի ցուցակում և կհիշենք նրան ընդմիշտ՝ որպես մեր մեծ քաղաքի սքանչելի հայրենասերի»։ Այժմ Ս. Պետերբուրգում նրա անունով կա փողոց⁴²։

Հազարավոր հայեր ծառայել են Հարավարևմտյան և Հարավային ռազմաճակատներում։ Նրանց թվում քաջագործություններով աչքի են ընկել ռազմաճակատի գլխավոր վիրաբույժ, առաջին կարգի զինվորական բժիշկ Ալեքսանդր Հարությունյանը, հրաձգային գնդի դպրոցի պետ կապիտան Մաթևոս Մադաթյանը և ուրիշներ։ Հարավային ռազմաճակատում հայ քաջորդիներից առաջիններից մեկը Լենինի շքանշանի է արժանացել ականանետային մարտկոցի հրամանատար լեյտենանտ Քրիստափոր Իվանյանը (հետագայում՝ Հայկական բանակի գեներալ-լեյտենանտ)⁴³։

Օդեսայի հերոս պաշտպանների թվում էին ծովայիններ Կարլոս Ղուկասյանը, Գևորգ Շատվորյանը, գնդի հրամանատար Լևոն Տատյանը, գումարտակի հրամանատար Ամբիոս Կուրդինյանը, գնդապետ Հմայակ Մեյրաբյանը։

Խորհրդային բանակի տարբեր զորատեսակներում հազարավոր հայ մարտիկներ ու սպաներ աչքի են ընկել նաև Մոսկվայի մատույցներում, Ստալինգրադում ու Կուրսկի աղեղում, Ղրիմում ու Կովկասում, Ռկրաինայում ու Բելոռուսիայում, Մերձբալթիկայում ու եվրոպական երկրներում։

Պատերազմի առաջին տարում կատարած սխրանքների համար 4 հայորդիների շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում։ Հայերից առաջինը այդ բարձր կոչմանն արժանացել է օդաչու Լազար Չափչախյանը, երկրորդը՝ Բալթյան նավատորմի ռազմաօդային ուժերի օդաչու Նելսոն Ստեփանյանը, երրորդը՝ գումարտակի հրամանատար լեյտենանտ Խաչատուր Մելիքյանը, չորրորդը՝ հրետանային մարտկոցի հրամանատար լեյտենանտ Սերգեյ Օգանովը։ Հայրենական պատերազմի առաջին օրերին տանկային ճակատամարտում առանձնակի քաջությամբ ու հերոսությամբ աչքի է ընկել 22-րդ մեքենայացված տանկային զորակազմի շտաբի պետ, գեներալ-մայոր Վլադիմիր Թամրուչին, որը 1941 թ. հուլիսի 22-ին պարգևատրվել է Լենինի շքանշանով⁴⁴։

1941 թ. հուլիսի 10-ից մինչև սեպտեմբերի 10-ը տեղի ունեցած Սմոլենսկի ճակատամարտում մարտիկների ցուցաբերած զանգվածային հերոսության և ռազմական բարձր վարպետության շնորհիվ ծնվել է Խորհրդային գվարդիան։ Առաջին գվարդիականների թվում էր 395-րդ հրաձգային գնդի հրամանատար մայոր Համազասպ Բաբաջանյանը, որը գվարդիականի պատվավոր կոչման արժանանալու հետ մեկտեղ պարգևատրվել է «Կարմիր դրոշ» շքանշանով։ Դա ապագա ԽՍՀՄ զրահատանկային զորքերի Գլխավոր մարշալի առաջին մարտական պարգևն էր⁴⁵։

⁴² Տես նույն տեղում, էջ 46–48։

⁴³ Տես «Հայոց պատմություն», հ. 4, գիրք 1. «Նորագույն ժամանակաշրջան (1918-1945 թթ.)»։ Ե., 2010, էջ 546։

⁴⁴ Տես նույն տեղում։

⁴⁵ Տես նույն տեղում, էջ 41–42։

Հայրենական մեծ պատերազմի առաջին օրերին իր ռազմավարական ունակություններով ու խիզախությամբ աչքի է ընկել ԽՍՀՄ ռազմածովային ժողկոմի առաջին տեղակալ, Գլխավոր ռազմածովային շտաբի պետ ծովակալ Հովհաննես Իսակովը (Տեր-Իսահակյան, հետագայում՝ Խորհրդային Միության ծովակալ, Խորհրդային Միության հերոս): Իսակովն զբաղվում էր Լենինգրադի հրետանային պաշտպանության ամրապնդմամբ⁴⁶:

Արևմտյան ռազմաճակատի ռազմաօդային ուժերի շտաբի ղեկավարն էր գնդապետ Սերգեյ Խուդյակովը (Արմենակ Խանփեդյանց, հետագայում՝ ավիացիայի մարշալ): Դժվարին իրավիճակում նա ղեկավարել է շտաբի աշխատանքը, կապ հաստատել բոլոր զորամասերի հետ, ինչի շնորհիվ պատերազմի միայն առաջին օրը Արևմտյան ռազմաճակատի օդաչուները ոչնչացրել են հակառակորդի 100 ինքնաթիռ: Հետագայում Խուդյակովը դարձել է առաջին հայ մարշալը, նշանակվել օդային բանակի հրամանատար, Կարմիր բանակի ռազմաօդային ուժերի շտաբի պետ⁴⁷:

Արդեն առաջին մարտերում իրենց խիզախությամբ և օպերատիվ հմտությամբ աչքի են ընկել Հարավ-արևմտյան ռազմաճակատի շտաբի օպերատիվ բաժնի պետ գնդապետ Հովհաննես Բաղրամյանը (հետագայում՝ Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս), նույն ռազմաճակատի հրետանու պետ, Խորհրդային Միության հերոս, հրետանու գեներալ-լեյտենանտ Միքայել Պարսեղովը (հետագայում՝ հրետանու գեներալ-գնդապետ), Հարավային ռազմաճակատի հրետանու պետ գնդապետ Իվան Վեքիլովը (հետագայում՝ գեներալ-լեյտենանտ), 12-րդ բանակի շտաբի պետ գեներալ-մայոր Բագրատ Առուշանյանը, դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Սերգեյ Գալաշևը (հետագայում՝ գեներալ-լեյտենանտ) և շատ ուրիշներ:

Մոսկվայի ճակատամարտին ռուսների, ուկրաինացիների, բելոռուսների, ԽՍՀՄ այլ ժողովուրդների ներկայացուցիչների հետ մասնակցել են մի քանի հազար հայորդիներ: Նրանց թվում էին նաև դիվիզիայի հրամանատար փոխգնդապետ Սարգիս Վանեցյանը (հետագայում՝ գեներալ-լեյտենանտ, Խորհրդային Միության հերոս), 239-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար գնդապետ Հայկ Մարտիրոսյանը (հետագայում՝ գեներալ-մայոր) և ուրիշ հրամանատարներ:

Մոսկվայի ճակատամարտում իր զորավարական տաղանդով աչքի է ընկել 340-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար փոխգնդապետ Սարգիս Մարտիրոսյանը: Նրա ղեկավարած դիվիզիան Տուլայի մոտ 1941 թ. դեկտեմբերի 5-9-ը ջախջախել է գեներալ Գուդերիանի տանկային դիվիզիան՝ վիժեցնելով Տուլան շրջափակելու հակառակորդի պլանը: Դրա համար նրան շնորհվել է գնդապետի կոչում (հետագայում՝ գեներալ-լեյտենանտ):

Հայ ռազմիկներն իրենց արժանի ավանդն են ներդրել նաև Ստալինգրադի ճակատամարտում (1942 թ. հուլիսի 17–1943 թ. փետրվարի 2): Այստեղ կատարած սխրանքների համար Խորհրդային Միության հերոսի կոչում է

⁴⁶ Տես նույն տեղում, էջ 33–34:

⁴⁷ Տես նույն տեղում, էջ 36–39:

շնորհվել ավիաէսկադրիլիայի հրամանատար ավագ լեյտենանտ Սերգեյ Բուռնազյանին, որը օդային մարտերում խոցել է հակառակորդի 22 ինքնաթիռ:

Ստալինգրադի ճակատամարտում աչքի են ընկել նաև 5-րդ տանկային բանակի ռազմական խորհրդի անդամ գեներալ-մայոր Հայկ Թումանյանը (հետագայում՝ գեներալ-լեյտենանտ), 60-րդ մոտոհրաձգային բրիգադի հրամանատար փոխգնդապետ Աքբանազ Կարապետյանը (հետագայում՝ գեներալ-մայոր, Խորհրդային Միության հերոս), օդաչուներ Ստեփան (հետագայում՝ ավիացիայի գեներալ-լեյտենանտ, Խորհրդային Միության հերոս) և Վլադիմիր (այստեղ գոհվել է) Միկոյան եղբայրները, հետախույզ Սուրեն Միրզոյանը, սակրավոր Սուրեն Ավետիսյանը և ուրիշներ⁴⁸:

Հայ ռազմիկներն ակտիվ մասնակցություն են ունեցել նաև Կուրսկի ճակատամարտում, որը տեղի է ունեցել 1943 թ. հուլիսի 5-ից մինչև օգոստոսի 23-ը: Կուրսկի ճակատամարտում Կարմիր բանակը ոչ միայն գլխովին ջախջախել է հակառակորդի 30 ընտիր դիվիզիաներից կազմված զորախմբավորումը, այլև ընդմիջտ կործանել է գերմանա-ֆաշիստական բանակի հարձակողական ներուժը: Այդ ճակատամարտում տարած հաղթանակի գործում ցուցաբերած հերոսությունների համար հայ ռազմիկներից շատերը արժանացել են բազմապիսի կառավարական պարգևների: Մարտերում իրենց խիզախությամբ առավել աչքի ընկած գնդապետ Գրիգոր Գալուստովին և լեյտենանտ Վլադիմիր Իոնիսյանին հետմահու շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում⁴⁹: Սուվորովի առաջին աստիճանի բարձրագույն զորավարական շքանշանով պարգևատրվել է 11-րդ գվարդիական բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Հովհաննես Բաղրամյանը, որին նաև շնորհվել է գեներալ-գնդապետի կոչում: Նույն շքանշանին և ավիացիայի գեներալ-գնդապետի կոչման է արժանացել Կարմիր բանակի ռազմաօդային ուժերի շտաբի պետ Սերգեյ Խուդյակովը⁵⁰:

Կովկասի համար նդվող մարտերում ցուցաբերած խիզախության համար Խորհրդային Միության հերոսի կոչում է շնորհվել ավիաէսկադրիլիայի հրամանատար կապիտան Սամսոն Մկրտումյանին և հրաձգային բրիգադի գումարտակի հրամանատար ավագ-լեյտենանտ Ղուկաս Մադոյանին⁵¹: Հետմահու այդ կոչմանն է արժանացել Սևծովյան նավատորմի ռազմաօդային ուժերի 11-րդ ավիագնդի օդաչու գվարդիայի լեյտենանտ Սուրեն Տաշիկը (Թաշյան), որը Նովոռոսիյսկի վրա տեղի ունեցած օդային մարտում ոչնչացրել է թշնամու 7 ինքնաթիռ⁵²:

⁴⁸ Տես նույն տեղում, էջ 170–171:

⁴⁹ Տես *К. Арутюнян. Участие сынов армянского народа в Курской битве. Е.*, 2014, сс. 109–111:

⁵⁰ Տես նույն տեղում, էջ 112–113:

⁵¹ Տես նույն տեղում:

⁵² Տես *К. Арутюнян. Армянский народ в Великой Отечественной войне 1941-1945 гг.*, сс. 253–254:

Կովկասի հերոսամարտի շրջանում հայ ժողովուրդը 1943 թ. փետրվարին հայրենասիրական նամակ-կոչով դիմել է ռազմաճակատում գտնվող իր զավակներին: Նամակի տակ ստորագրել են 335316 մարդ: Այն վառ կերպով արտահայտել է հայ ժողովրդի բոցաշունչ հայրենասիրությունը, վկայակոչել նրա հարուստ մարտական ավանդույթները⁵³: Ժողովուրդն իր որդիներին ու դուստրերին կոչ է արել տուն վերադառնալ հաղթանակով: Այդ նամակը, որը բազմահազար օրինակներով հրատարակվել է հայերեն և ռուսերեն, տարածվել է ոչ միայն Կովկասյան, այլև մյուս բոլոր ռազմաճակատներում, լայն արձագանք ստացել թշնամու դեմ մարտնչող բոլոր հայ ռազմիկների սրտերում: Պատասխան նամակում նրանք երդվում էին սուրը պատյան չդնել մինչև լիակատար հաղթանակը: Եվ նրանք անվեհերաբար պաշտպանում էին իրենց հայրենիքը: Այսպես. ավագ սերժանտներ Հունան Ավետիսյանը (1943 թ., Նովոռոսիյսկի մոտ), Սուրեն Առաքելյանը (1943 թ., Անապայի շրջան) և Ապավեն Ռոստոմյանը (1945 թ., Լեհաստան) գիտակցաբար կրծքով փակել են ամրակառույց կրակակետի ակնատը, ինչի համար հետմահու արժանացել են Հերոսի կոչման⁵⁴:

Ղրիմի և Կերչի ազատագրման մարտերում ցուցաբերած խիզախության համար 10 հայորդու շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում⁵⁵:

1943 թ. օգոստոսի վերջերից մինչև 1944 թ. վերջերը ՌԿրաինայի ազատագրման համար մարտնչել են շուրջ 80000 հայ ռազմիկներ, որոնցից ավելի քան 30000-ը զոհվել են⁵⁶: Այդ մարտերում իրենց սխրանքներով առավել աչքի ընկած 21 հայ քաջերի շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում: Դնեստրի գետանցման ժամանակ 1-ին տանկային բանակի 20-րդ գվարդիական մեքենայացված բրիգադի գործողությունները հմտորեն դեկավարելու և մարտերում ցուցաբերած խիզախության համար Խորհրդային Միության հերոսի կոչման է արժանացել գնդապետ Համազասպ Բաբաջանյանը⁵⁷:

ՌԿրաինայի ազատագրմանն ակտիվորեն մասնակցած հայազգի զորավետներից են գեներալ-մայորներ Նիկոլայ Հովհաննիսյանը, Խորհրդային Միության հերոս Անդրանիկ Ղազարյանը, Գևորգ Տեր-Գասպարյանը (հետագայում՝ գեներալ-լեյտենանտ), Ասքանազ Կարապետյանը (հետագայում՝ Խորհրդային Միության հերոս) և ուրիշներ: 1943 թ. նոյեմբերի 6-ին առաջինների թվում Կիև են մտել 50-րդ հրաձգային կորպուսի զորամասերը՝ կորպուսի հրամանատար գեներալ-մայոր Սարգիս Մարտիրոսյանի գլխավորությամբ:

50 հազար հայ ռազմիկներ մասնակցել են Բելոռուսիայի ազատագրմանը, նրանցից 15000-ը զոհվել են: Հայերից շատերը սխրանքների համար պարգևատրվել են շքանշաններով ու մեդալներով, իսկ 11 կտրիճ արժանա-

⁵³ Տես նույն տեղում, էջ 251–252:

⁵⁴ Տես նույն տեղում, էջ 254–255:

⁵⁵ Տես նույն տեղում, էջ 253:

⁵⁶ Տես Կ. Հարությունյան, Գ. Պողոսյան, Նշ. աշխ., էջ 282:

⁵⁷ Տես նույն տեղում, էջ 258–260:

ցել է Խորհրդային Միության հերոսի կոչման⁵⁸: Նրանց թվում էր Առաջին մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Հովհաննես Բաղրամյանը: Իրենց վարպետությամբ փայլել են նաև հայ գեներալներ Իսահակ Գասպարյանը, Հրայր Սիմոնյանը, Կարապետ Հախնազարյանը, Խաչիկ Համբարյանը, Արսեն Բոչնաղյանը, բժշկական ծառայության պետ գեներալ-մայոր Ավետիք Բուռնազյանը և ուրիշներ⁵⁹: Օդային մարտերում իրենց խիզախությամբ ու վարպետությամբ առանձնացել են Խորհրդային Միության ապագա հերոսներ օդաչուներ Վազգեն Օզանեզովը, Մարտիրոս Նազուկյանը, Աշոտ Գասպարովը, Հակոբ Մանուկյանը և ուրիշներ: 1943 թ. նոյեմբերի 1-ին Գոմել քաղաքի օդային մարտում զոհվել է Խորհրդային Միության հերոս մայոր Սամսոն Մկրտումյանը⁶⁰:

Բազմաթիվ հայորդիներ ակտիվորեն մասնակցել են նաև Լենինգրադի, Մերձբալթյան հանրապետությունների, Կարելիայի, Խորհրդային Անդրբևեռի համար մղված մարտերին: Այդ կռիվներում հերոսաբար զոհվել է Խորհրդային Միության հերոս, գրոհային ավիացիոն հրամանատար փոխգնդապետ Նելսոն Ստեփանյանը, որին հետմահու շնորհվել է Խորհրդային Միության հերոսի երկրորդ կոչումը⁶¹:

Մերձբալթիկայի ու Բելոռուսիայի ազատագրման և Արևելյան Պրուսիայի գրավման համար մղված դաժան մարտերում կրկին աչքի է ընկել ականավոր զորավար Հովհաննես Բաղրամյանը, որի զորքերը հաջողությամբ իրագործել են մի շարք դժվարին օպերացիաներ:

Մերձբալթիկայի ազատագրման մարտերում հերոսացած հայերից նշենք գեներալ-մայորներ Հմայակ Բաբայանի (հետագայում՝ Խորհրդային Միության հերոս), Մուշեղ Մինասյանի (հետագայում՝ պատմական գիտությունների դոկտոր) անունները: Վիլնյուսի ուղղությամբ ծավալված թեժ մարտում ցուցաբերած խիզախության համար Խորհրդային Միության հերոսի կոչման է արժանացել ջոկի հրամանատար, գվարդիայի ավագ Հմայակ Սնոպյանը, իսկ Լատվիայի համար մղված մարտերում ցուցաբերած խիզախության համար հետմահու Խորհրդային Միության հերոսի կոչում է շնորհվել սերժանտ Վաչագան Վանցյանին⁶²:

1944 թ. աշնանը գերմանացի զավթիչները վերջնականապես դուրս շարտվեցին խորհրդային երկրից, և մարտերը տեղափոխվեցին Գերմանիայի ու նրա դաշնակիցների տարածքներ: Խորհրդային բանակը ձեռնամուխ եղավ ֆաշիզմի լծի տակ տառապող եվրոպական ժողովուրդներին ազատագրելու իր պատմական առաքելությանը, հիտլերյան բանակի ջախջախմանն ու Բեռլինի վրա հաղթանակի դրոշի բարձրացմանը: Այդ մեծագույն

⁵⁸ Տես նույն տեղում, էջ 283:

⁵⁹ Տես նույն տեղում, էջ 290–291:

⁶⁰ Տես նույն տեղում, էջ 289:

⁶¹ Տես «Նելսոն Ստեփանյան»: Նելսոն Ստեփանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտական հոդվածների ժողովածու: Ե., 2015, էջ 141–160:

⁶² Տես «Հայոց Պատմություն», հ. 4, գիրք 1, էջ 564:

պատմական խնդիրները կատարվել են 1944–1945 թթ. ծնունդի ու գարնան հարձակողական ռազմարշավների ընթացքում: Եվ արդեն 1945 թ. ապրիլի 30-ին Բեռլինի երկնքում ծածանվել է կարմիր դրոշը, իսկ երկու օր հետո Գերմանիայի մայրաքաղաքը գրավվել է: Մայիսի 8-ին ֆաշիստական Գերմանիան ընդունել է իր անվերապահ կապիտուլյացումը:

Հայ ժողովրդի հազարավոր զավակներ՝ որպես ազատարարներ, անցել են մի շարք եվրոպական պետությունների տարածքով և ազնվորեն կատարել իրենց սրբազան պարտքը: Պատերազմի հաղթական ավարտի մարտերին մասնակցել են 200 հազարից ավելի հայրողիներ, որոնցից 32-ին շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում⁶³:

Ավելի քան 20 հայ գեներալներ իրենց միավորումներով ու զորամիավորումներով հետապնդել և ջախջախել են թշնամուն Գերմանիայի ու նրա դաշնակիցների տարածքներում: Բեռլինի գրավմանը ակտիվորեն մասնակցել են գեներալ Համազասպ Բաբաջանյանը և ուրիշ հայ զորապետներ: Ցուցաբերած խիզախության համար գեներալ-մայոր Հմայակ Բաբայանին հետմահու շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում: Նույն կոչման արժանացել է նաև գվարդիայի շարքային Սարիբեկ Չիլինգարյանը⁶⁴:

89-րդ Թամանյան դիվիզիան խորհրդային բանակի միակ ազգային զորամիավորումն է, որը մասնակցել է Բեռլինի գրավմանը և պատերազմն ավարտել էլքայի ափին: Դա մեծ պատիվ էր հայկական դիվիզիայի համար:

Բեռլինի գրավումը մեծ ցնծություն է առաջ բերել հաղթող զորքերում: Վեր են սլացել հազարավոր հրթիռներ, թնդացել հաղթական կրակոցներ և ուռններ, որոնց ձայնը խլացվել է Ռայխստագի պատերի տակ հայկական քոչարի պարողների խրոխտ դոփյունով և զուռնայի ու դիլիզիլ նվագով:

Հայրենական մեծ պատերազմն ավարտվել է մայիսի 9-ին, իսկ ԽՍՀՄ Հաղթանակի ավարտական ստուգատեսը կայացել է 1945 թ. հունիսի 24-ին Մոսկվայի Կարմիր հրապարակում տեղի ունեցած զորահանդեսում, որին մասնակցել է 150 հայրողի:

Խորհրդային բանակի վճռական հաղթանակում իրենց ավանդն են ունեցել նաև բռնազավթված շրջաններում թշնամու խոր թիկունքում գործած պարտիզանները, որոնց շարքերում ևս աչքի են ընկել հայրուրավոր հայեր: Միայն ՌԻկրախնայում և Բելոռուսիայում մարտնչել են ավելի քան 2000, Դրինում և Հյուսիսային Կովկասում՝ 500, Մերձբալթիկայում, Լենինգրադի և Կալինինի մարզերում՝ 200 հայ պարտիզան⁶⁵: Գոյություն են ունեցել մի քանի պարտիզանական ջոկատներ, նույնիսկ՝ գունդ, որոնք համալրված են եղել առավելապես հայերով: Օրինակ՝ ՌԻկրախնայում մարտնչել են 100 հոգուց կազմված «Հաղթանակ» ջոկատը՝ Սերգեյ Հարությունյանի հրամանատարությամբ, և 250 հայից կազմված «Անաստաս Միկոյանի անվան» ջոկատը՝

⁶³ Տես նույն տեղում, էջ 566:

⁶⁴ Տես նույն տեղում, էջ 566–567:

⁶⁵ Տես *К. Арутюнян. Участие сынов армянского народа в Курской битве*, сс. 28–30:

Արամայիս Հովսեփյանի հրամանատարությամբ: 80 հայերից էր բաղկացած Լենինգրադի և Կալինինի մարզերում գործող պարտիզանական 41-րդ ջոկատը՝ Արտեմ Սաղունյանի գլխավորությամբ, Ղրիմում՝ Արամ Տերյանի 10-րդ պարտիզանական ջոկատը, Կրասնոդարի երկրամասի Արմյանսկի շրջանում՝ Անդրանիկ Մալխասյանի «Ստեփան Շահունյանի անվան» ջոկատը: Իրենց խիզախությամբ առավել աչքի ընկած հայ պարտիզաններից են Հենրիկ Ջաքարյանը և Վահան Գրիգորյանը (Բելոռուսիա), քույր ու եղբայր Հայկ և Թամարա Մարտիրոսյանները, Աշոտ Հայրապետյանը (Ղրիմ), Կրասնոդարի հռչակավոր «Երիտասարդ գվարդիա» կազմակերպության անդամներ Գեորգի (Ժորա) Հարությունյանը (հետագայում՝ գնդապետ, գիտությունների թեկնածու), Մայա Փեղիվանյանը (Ուկրաինա) և ուրիշներ⁶⁶:

Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում իր արժանի ավանդն է ունեցել Խորհրդային Հայաստանի թիկունքի աշխատավորությունը: Չնայած ծանր պայմաններին ու զրկանքներին, ռազմաձակատից անընդհատ ստացվող՝ հարազատների մահվան բոթը գուժող «սև թղթերին»՝ Հայաստանի աշխատավորները պատերազմի տարիներին իրենց հերոսական աշխատանքի շնորհիվ պատվով են կատարել բոլոր առաջադրանքները:

Պատերազմը շատ լուրջ խնդիրներ էր դրել հանրապետության արդյունաբերության առաջ: Պետք էր արագորեն յուրացնել մինչ այդ հանրապետությունում չթողարկվող զենքերի, կապի ու տրանսպորտի միջոցների, ռազմական այլ պարագաների արտադրությունը, ընդլայնել պաշտպանական արդյունաբերության համար ռազմավարական նշանակություն ունեցող հումք և կիսաֆաբրիկատներ, սննդամթերք ու թեթև արդյունաբերական ապրանքներ թողարկող ձեռնարկությունների ցանցն ու հզորությունը՝ գերազանցապես տեղական ռեսուրսների հաշվին:

Անդուլ աշխատանք էր կատարում նաև գյուղի աշխատավորությունը՝ ռազմաձակատին տալով կենսամթերքներ, իսկ արդյունաբերությանը՝ անհրաժեշտ հումք: Ռազմաձակատ մեկնածներին ամենուրեք փոխարինում էին կանայք, պատանիներն ու ծերերը: Արդեն 1941 թ. վերջերին Հայաստանը ռազմաձակատի համար թողարկում էր ավելի քան 140 անուն արտադրանք, այդ թվում՝ ամենահիմնական 53 տեսակի զինվորական հագուստեղեն ու գույք⁶⁷:

Ամբողջ պատերազմի ընթացքում արդյունաբերությունը յուրացրեց 300 նոր արտադրատեսակներ, այդ թվում՝ 10 տեսակի զինամթերք, ականանետներ, ականներ, նռնակներ, ավիառումբերի պատյաններ, ինքնաթիռներ, ռետինատեխնիկական իրեր, կաուստիկ սոդա, ծծմբական թթու, հեղուկ քլոր և այլն: Քիմիական արդյունաբերության մեջ ստեղծվեցին նոր ենթաձյուղեր, որոնք հումքի թողարկումից անցան պատրաստի արտադրանք տալուն:

⁶⁶ Տես նույն տեղում, էջ 625–627:

⁶⁷ Տես «Советская Армения в годы Великой Отечественной войны (1941-1945)». Сборник документов и материалов. Е., 1975, сс. 327–328:

1942 թ. հոկտեմբերից Երևանի հմ. 447 (հետագայում՝ Հայլեկտրամեքենաշինական) գործարանն սկսեց վերանորոգել վնասված ինքնաթիռներ, ապա և արտադրել «Յակ-3» կործանիչի թևեր և ամրաշրջանակներ: Պատերազմի վերջին տարում հմ. 447 գործարանում արտադրվում էին «ՈՒՏ-2Ս» ինքնաթիռներ, որոնք տեղում փորձակվելուց հետո ուղարկվում էին ռազմաճակատ⁶⁸:

Գյուղատնտեսության աշխատողների հերոսական ջանքերով պատերազմի տարիներին ոչ միայն չկրճատվեցին գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ու ցանքատարածությունների մակերեսը, այլև զգալիորեն ավելացան: Ձեռնարկված միջոցների շնորհիվ չի նվազել անասունների գլխաքանակը, անգամ ավելացել է Կարմիր բանակի համար նախատեսվող մսի ֆոնդը: Գյուղի աշխատավորության խնայողությունների հաշվին կառուցվել են «Հայաստանի կոլտնտեսական» տանկային շարասյունը և «Սովետական Հայաստան» զրահագնացքը:

Ընդհանրապես պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանի թիկունքի աշխատավորների խնայողությունների հաշվին ստեղծվել են նաև «Զանգեզուրի լեռնագործ», «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ», «Հայաստանի կոմերիտական», «Հայաստանի պիոներիա», «Սովետական Հայաստան» տանկային շարասյունները, «Սովետական Հայաստան», «Հաղթանակ», «Երիտասարդ գվարդիա», «Սովետական արտիստ» ավիաէսկադրիլյաները և այլն⁶⁹:

Ընդհանուր առմամբ, Հայրենական մեծ պատերազմի ընթացքում Հայաստանի աշխատավորությունն իր սուղ և աղքատիկ միջոցներից ԽՍՀՄ Պաշտպանության ֆոնդ փոխանցեց ավելի քան 42 մլն ռուբլի և, ի հավելումն դրա, Կարմիր բանակի ֆոնդ՝ ևս 83 մլն ռուբլի: Այդ ամենից բացի, որպես նվեր ռազմաճակատ ուղարկվեց 1136000 միավոր տաք հագուստ, ավելի քան 206000 անհատական ծանրոց և 45 վագոն պարենամթերք⁷⁰:

Պատերազմում տարած հաղթանակի գործում իրենց արժանի ավանդը ներդրեցին հանրապետության գիտության, կրթության, արվեստի, գրականության, մշակույթի բնագավառների աշխատողները:

Գիտնականներից պահանջվում էր հիմնական ուշադրությունը կենտրոնացնել ռազմական պատվերների, երկրի պաշտպանունակության ամրապնդման, ժողովրդի հայրենասիրական ոգին բարձրացնելու վրա: Հայոց բազմադարյան պատմության մեջ հույժ կարևոր իրադարձություն էր պատերազմի տարիներին՝ 1943 թ. նոյեմբերին, ԽՍՀՄ կառավարության որոշմամբ ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի հիմնադրումը, ինչը մեծապես նպաստեց ռազմական պատվերների՝ ժամկետում ու որակյալ կատարմանը: Նրա Նախագահ ընտրվեց նշանավոր արևելագետ Հովսեփ Օրբելին:

⁶⁸ Տես ՀԱԱ, ֆ. 113, ց. 33, գ. 74, թ. 8:

⁶⁹ Տես «Советская Армения в годы Великой Отечественной войны (1941-1945)», сс. 311–312:

⁷⁰ Տես նույն տեղում, էջ 36:

Ականավոր աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանն առաջ քաշեց մութ միջավայրում լույսի սփռման նոր տեսություն, որը կիրառում ուներ նաև ռազմական գործում⁷¹:

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում զգալի ավանդ ունեցան ԽՍՀՄ պետական բարձրագույն մարմիններում ռազմական արդյունաբերության և տնտեսության տարբեր բնագավառներում աշխատող հայ պետական գործիչները, գիտնականները, կոնստրուկտորները: Ահա նրանցից մի քանիսի անունները՝ Անաստաս Միկոյան (ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քաղքյուրոյի և Պաշտպանության պետական կոմիտեի անդամ, ԽՍՀՄ կառավարության նախագահի տեղակալ, Կարմիր բանակի մատակարարման կազմակերպման ղեկավար), Իվան Թևոսյան (ԽՍՀՄ սև մետալուրգիայի ժողկոմ), Արտեմ Միկոյան («ՄիԳ» կործանիչների գլխավոր կոնստրուկտոր), Համո Յույան (Ն92 հրետանային գործարանի տնօրեն), Ստեփան Ակոպով (ԽՍՀՄ մեքենաշինության ժողկոմ), Սուրեն Աղաջանով (Ն21 ավիագործարանի տնօրեն), Պարույր Մաթևոսյան (Ստալինգրադի «Կրասնի Օկտյաբր» մետաղամշակման գործարանի տնօրեն), Բագրատ Հարությունով (ԽՍՀՄ հաղորդակցության ճանապարհների ժողկոմի առաջին տեղակալ), Լևոն Օրբելի (բժշկական ծառայության զեներալ-գնդապետ, ԽՍՀՄ ԳԱ փոխնախագահ, Լենինգրադի Ռազմաբժշկական ակադեմիայի պետ): Հովսեփ Օրբելին 1946 թ. մասնակցել է Նյու Ջերսիի դատավարությանը որպես մեղադրող կողմի վկա և մերկացրել ֆաշիստական բարբարոսների հանցագործությունները⁷²:

Պատերազմի տարիներին հատուկ ուշադրություն դարձվեց հայրենասիրական ոգու բարձրացմանը: Հասարակագիտական ինստիտուտներին և բուհերի համապատասխան ամբիոններին հանձնարարվեց հայրենասիրական թեմաներով աշխատությունների պատրաստում, անդրադարձ անցյալի հերոսական էջերին: Այս իմաստով կարևոր նշանակություն ունեցան հայ գրողներից Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք», Ստեփան Զորյանի «Պապ թագավոր» վեպերը, Ավետիք Իսահակյանի, Գեղամ Սարյանի և այլ գրողների ստեղծագործությունները, որոնք ընթերցողին սնուցում էին հայրենասիրություն:

Այսպիսով՝ Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրից մինչև նրա հաղթական ավարտը Խորհրդային Հայաստանի աշխատավորների հերոսական աշխատանքի շնորհիվ հանրապետությունը վերածվեց Կարմիր բանակի իսկական մարտական զինանոցի, որտեղից «Ամեն ինչ ռազմաձակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով ամեն օր տասնյակ զնացքակազմերով ռազմաձակատ էին ուղարկվում մարդկային համալրումներ, զենք, զինամթերք, սնունդ, հանդերձանք և այլն: Ռազմաձակատում մարտնչող հայ ռազմիկները մարտերի ամենածանր պահերին և ամենուրեք

⁷¹ Տես *С. Гарибджанян. Наука в Армении в годы Великой Отечественной войны (1941-1945)*. Е., 2007, сс. 10–15:

⁷² Տես նույն տեղում, էջ 57–61:

մշտապես զգում էին թիկունքի աշխատավորության աջակցությունը՝ ստանալով նրանց նյութական ու բարոյական օգնությունը:

Ընդհանուր առմամբ Խորհրդային Միության հերոսի կոչում է շնորհվել 106 հայի, ընդսմին 4-ին՝ Խորհրդա-ֆիննական պատերազմում, 99-ին՝ Հայրենական մեծ պատերազմում, 3-ին՝ հետպատերազմյան խաղաղ շինարարության տարիներին⁷³: Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը՝ և գրոհային օդաչու, գվարդիայի փոխգնդապետ Նելսոն Ստեփանյանն այդ բարձր կոչմանն արժանացել են կրկնակի: Հերոսի կոչում է շնորհվել նաև Հայաստանում ծնված 10 այլազգի քաղաքացու:

26 հայ ռազմիկներ պարգևատրվել են բոլոր երեք աստիճանների «Փառքի» շքանշանով՝ դառնալով այդ շքանշանի լրիվ ասպետներ, որոնց իրավունքները հավասարեցված են Խորհրդային Միության հերոսի կոչում ունեցողների իրավունքներին: Ի դեպ, Կարմիր բանակում այդ շքանշանին առաջինը 1943 թ. նոյեմբերին արժանացել է հայազգի սերժանտ Գևորգ (Ժորա) Իսրայելյանը⁷⁴:

Պատերազմի տարիներին գիտության և արդյունաբերության բնագավառում կատարած ակնառու ծառայությունների համար 8 հայորդիների շնորհվել է «Սոցիալիստական աշխատանքի հերոսի» կոչում (Համո Յոյան, Անաստաս Միկոյան, Իվան Թևոյան, Բագրատ Հարությունով, Նիկոլայ Նարինյան, Բորիս Սալամբեկով, Անդրանիկ Խաչատրյան և Լևոն Օրբելի):

Հրամանատարական կազմում հայերը ռուսներից, ուկրաինացիներից և բելոռուսներից հետո թվով 4-րդն էին (1079)⁷⁵: 1945 թ. դեկտեմբերի տվյալներով պատերազմին մասնակցել են 68 հայ գեներալ, ավիացիայի մեկ մարշալ (Սերգեյ Խուդյակով) և մեկ ծովակալ (Հովհաննես Իսակով), այսպիսով՝ պատերազմին մասնակցած գեներալների թվով հայերը նույնպես չորրորդ տեղում էին՝ դարձյալ նշված ազգություններից հետո:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայ զորավարներից մեկը եղել է ռազմաձևակառու (Հովհաննես Բաղրամյան), 3-ը՝ բանակի (Հ. Բաղրամյան, Ս. Խուդյակով և Ս. Պարսեղով), 8-ը՝ կորպուսի, 28-ը՝ դիվիզիայի, 25-ը՝ բրիգադի, ավելի քան 100-ը՝ զնդի հրամանատարներ⁷⁶:

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում իրենց ծանրակշիռ ավանդն են ունեցել նաև անտեսանելի ձևակառու առասպելական հետախույզներ գեներալ-մայորներ Հայկ Հովակիմյանը, Իվան Աղայանցը, Միքայել Ալավերդովը, Վյաչեսլավ Կևորկովը, գնդապետներ Աշոտ Հակոբյանը, Գերասիմ Բալասանովը, Վյաչեսլավ Գուրգենովը, Խորհրդային Միության հերոս գնդապետ Գևորգ Վարդանյանը և նրա կինն ու գործընկերուհին՝ քաջասիրտ հայուհի

⁷³ Տես նույն տեղում, էջ 24:

* Խորհրդային Միության հերոսի կոչում ստացել է 1944 և 1977 թթ.:– *Խմբ.*:

⁷⁴ Տես նույն տեղում:

⁷⁵ Տես *К. Арутюнян. Участие армянского народа в Великой Отечественной войне (1941-1945)*. Е., 2010, сс. 27–28:

⁷⁶ Տես նույն տեղում, էջ 27:

Գոհար Վարդանյանը և շատ ուրիշներ, որոնց գործած սխրանքները հայտնի պատճառներով դեռևս լիովին չեն լուսաբանվել⁷⁷:

Այսպիսով՝ Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովուրդը գերազանց քննություն բռնեց թե՛ ռազմաճակատում, թե՛ թիկունքում:

⁷⁷ Տես Կ. Հարությունյան, Գ. Պողոսյան, Նշ. աշխ., էջ 6–8, «Очерки истории Российской внешней разведки». В 6 томах, т. 4: «1941-1945 годы». М., 2003, сс. 324–333, նաև՝ Ա. Ե. Սարգսյան, Հետախուզություն և հակահետախուզություն. հայկական հենք: Ե., 2005:

УЧАСТИЕ АРМЯНСКОГО НАРОДА В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941–1945 гг.)

Յ. Գ. МИНАСЯН, доктор исторических наук, профессор, декан факультета истории ЕГУ, член научно-консультационного совета ВНЖ «Айкакан банак»

РЕЗЮМЕ

22 июня 1941 г. нацистская Германия без объявления войны напала на Советский Союз. Накануне Великой Отечественной войны Германия обзавелась новым союзником – Турцией, что давало ей возможность беспрепятственно использовать сухопутные, тем более – морские владения Турции (в первую очередь – Черноморские проливы). Турция, еще в годы Первой мировой войны в союзнничестве с Германией совершившая Геноцид армян, сразу же сосредоточила 26 дивизий у границы с Советской Арменией и ждала подходящего момента для нападения. Поэтому не случайно, что армянский народ с еще большей решимостью и самоотверженностью посвятил себя освободительной борьбе против фашизма.

На фронтах Великой Отечественной войны из Советской Армении сражалось более 320000 человек (около 300 тысяч – армяне), из других союзных республик – около 200 тысяч. Таким образом, в Великой Отечественной войне участвовало почти 500 тысяч армян, из которых около 200 тысяч погибло.

Значительная часть армян сражалась в составе 6-и армянских стрелковых дивизий: 76-й, 89-й, 261-й, 390-й, 408-й, 409-й. Воины-армяне сражались против врага на всех фронтах: от Мурманска на севере до Кавказа и Крыма на юге, – отличились в битвах за Москву, Сталинград, Курск, Кавказ, Ленинград, в освобождении Украины и Белоруссии, Прибалтики, европейских государств.

89-я Армянская Таманская дивизия была единственным национальным соединением, принявшим участие в сражениях в самом Берлине, и армянские воины исполнили национальный танец «Кочари» под стенами Рейхстага.

В общей сложности звания Героя Советского Союза удостоились 106 армян, причем 4 – в Советско-финской войне, 99 – в Великой Отечественной войне, 3 – в годы послевоенного мирного строительства. Маршал Советского Союза Ованес Баграмян и летчик штурмовой авиации, гвардии подполковник Нельсон Степанян удостоились этого высокого звания дважды. 26 армян стали полными кавалерами Ордена Славы.

Армяне после русских, украинцев и белорусов были четвертыми по представленности в командном составе Советской армии (1079). По данным на декабрь 1945 г. в ВОВ приняли участие 68 армянских генералов, один маршал авиации (Сергей Худяков) и один адмирал (Ованес Исаков), таким образом, по числу генералов армяне также были на четвертом месте. В годы войны один из полководцев-армян был командующим фронтом (генерал армии Ованес Баграмян, в дальнейшем – Маршал Советского Союза), трое – командующими армией (О. Баграмян, маршал авиации С. Худяков и Герой Советского Союза генерал-лейтенант М. Парсегов, в дальнейшем – генерал-полковник), 8 – командирами корпуса, 28 – дивизии, 25 – бригады, более чем 100 – командирами полка.

Свой весомый вклад в победу над фашизмом внесли и легендарные разведчики: генерал-майоры Гайк Овакимян, Иван Агаянц, Геворг Варданян (в дальнейшем – Герой Советского Союза, полковник) и его жена и коллега отважная Гоар Варданян, и многие другие.

Велика была и помощь армян-тыловиков. Руководствуясь лозунгом «Все для фронта! Все для победы!», работники тыла республики, в основном – женщины, старики и дети, заменившие мужчин, ушедших на войну, с честью выполняли и перевыполняли задания в сферах промышленности, сельского хозяйства, науки и техники, культуры и просвещения; многие из них стали Героями Социалистического труда.

Таким образом, в Великой Отечественной войне армянский народ отлично выдержал экзамен как на фронте, так и в тылу.

THE PARTICIPATION OF THE ARMENIAN PEOPLE IN THE GREAT PATRIOTIC WAR (1941–1945)

*E. G. MINASYAN, Doctor of Historical Sciences, Professor, Dean,
Department of History, YSU, Member, Academic-Advisory Council,
Defense-Academic Journal "Haikakan Banak"*

SUMMARY

On June 22, 1941, Nazi Germany attacked the Soviet Union without declaring war. On the threshold of the Great Patriotic War Germany got a new ally, aka Turkey, that gave Germany the opportunity to freely make

use of Turkey's land, and moreover – sea possessions (first of all Black Sea straits). Turkey, which had in alliance with Germany committed Genocide against Armenians back in World War I, immediately concentrated 26 divisions on the boundary with Soviet Armenia and waited for a favourable moment to attack. Thus, no wonder that the Armenian people devoted itself to the liberation struggle against fascism with a greater vigour and selflessness.

Over 320000 people from Armenia (about 300 thousand of them being Armenians), and about 200 thousand of Armenians from other Union Republics fought on the fronts of the Great Patriotic War. Thus, almost 500 thousand Armenians were in the Great Patriotic War, with about 200 thousand being killed.

The greater part of Armenians fought within 6 Armenian Rifle Divisions – the 76th, 89th, 261st, 390th, 408th, 409th. The Armenian combatants fought against the enemy on all the fronts: from Murmansk in the north to Caucasus and the Crimea in the south, and distinguished themselves in battles for Moscow, Stalingrad, Kursk, Caucasus, Leningrad, in the liberation of Ukraine and Belarus, the Baltic and European countries.

The 89th Armenian Tamanyan Division was the only national tactical formation which participated in battles within Berlin, the Armenian warriors having performed the national dance of Kochari near the walls of the Reichstag.

All in all 106 of Armenians have been honoured with the title of Hero of the Soviet Union, with four of them in the Soviet-Finnish War, 99 – in the Great Patriotic War, and 3 – during the years of post-war peace building. The Marshal of the Soviet Union Hovhannes Baghramyan and the attack pilot, Guards Lieutenant Colonel Nelson Stepanyan were honoured with this high title twice. 26 Armenians became full Cavaliers of the Order of Glory.

The Armenians ranked fourth after Russians, Ukrainians and Belarusians in terms of representation in the Soviet Army Command Staff (1079). As of December, 1945, 68 Armenian generals, the Marshal of the Aviation (Sergei Khudyakov) and the Admiral of the Fleet (Hovhannes Isakov) had taken part in the Great Patriotic War, thus Armenians again ranked fourth by number of generals. During the war one of the Armenian generals (Army General, later Marshal of the Soviet Union – Hovhannes Baghramyan) was the Army Group Commander, three of them (H. Baghramyan, Marshal of the Aviation S. Khudyakov and the Hero of the Soviet Union Lieutenant General, later Colonel General, M. Parsegov) became Army commanders, eight of them became Corps Commanders, 28 were division commanders, 25 were brigade commanders, and over 100 – regimental commanders.

The legendary scouts: Major General Hayk Hovakimyan, Major General Ivan Agayants, Gevorg Vardanyan (later Hero of the Soviet Union, Colonel) with his spouse and colleague brave Gohar Vardanyan, and many others – also had their significant contribution to the victory over fascism.

Great was the assistance of the Armenian Home Front Workers. Being driven by the slogan “Everything for the front! Everything for victory!”, our republic’s home front workers, mainly women, aged people and children, replacing men who had gone off to war, completed and exceeded with honour their tasks in industry, agriculture, science and technology, culture and education; many of them becoming Hero of Socialist Labor.

Thus, during the Great Patriotic War the Armenian people perfectly passed the exam both on the front and on the home front.

ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՍԱՐՏԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓՈՒՆՈՒՄ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ ԽՍՀՄ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

*Ա. Գ. ԱՎԱԳՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ արտաքին գործերի նախարարության սահմանակից երկրների
վարչության պետ, «Հայկական բանակ» ՈԳՀ
գիտախորհրդատվական խորհրդի անդամ*



1945 թ. Թուրքիային ԽՍՀՄ ներկայացրած պահանջների հարցը հանգամանորեն ուսումնասիրվել է հայ և օտար հեղինակների աշխատություններում¹: Ուստի սույն հոդվածում փորձ է արվում միայն հակիրճ ներկայացնել խնդիրը 1945–1946 թթ. տեղի ունեցած խորհրդա-թուրքական բանակցությունների համատեքստում, ինչպես նաև առաջ քաշված պահանջների՝ Թուրքիայի և երկրորդ համաշխարհային պատերազմում ԽՍՀՄ դաշնակիցների ընկալումները:

Նախ, նշենք, որ Թուրքիային Խորհրդային Միության ներկայացրած պահանջներում Արևմտյան Հայաստանի որոշ տարածքների նկատմամբ պահանջախնդրությունը չի կարելի դիտարկել Բոսֆորի և Դարդանելի (այսուհետև՝ Նեղուցներ) պրոբլեմից անջատ, քանի որ երկար տարիներ հենց դա է եղել գերակա:

Նեղուցների հարցում ԽՍՀՄ-ը փաստորեն շարունակել է ցարական Ռուսաստանի արտաքին քաղաքական գիծը՝ Նեղուցներում նավագնացության կարգավորումը կազմակերպել համապատասխան իր շահերի և, հնարավորության դեպքում, ամրապնդվել այդ կարևոր ռազմավարական

¹ Տես Զ. Մարտիկյան, Արևմտահայ բռնագրաված հողերու հարցը, 1921–1971: Պէյրուք, 1971, *նույնի՝* ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և Հայկական հարցը (1900–1976): «Հայկազյան հայագիտական հանդես»: Պէյրուք, 1977, *նույնի՝* Հայկական հարցի մասին: Պէյրուք, 1978, *նույնի՝* Մեծ Բրիտանիա և Խորհրդային Հայաստանի ու Խորհրդային Վրաստանի անունով 1945-ին կատարուած հողային պահանջքը: «Հայկազյան հայագիտական հանդես»: Պէյրուք, 1998, *նույնի՝* Հայկական հարցի հոլովոյթը 1939-2010: Պէյրուք, 2011, Զ. Մելքոնյան, ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունները. Հայկական հարցը, Սևծովյան նեղուցների խնդիրը և դաշնակից պետությունները (1945-1947 թթ.): Ե., 2013, «Արմենիա և սովետսկո-տուրեքիե օրնոշենիա և Դիպլոմատիչեսկի Դոկումենտախ 1945-1946 Գ.». Под ред. Армана Киракосяна. Е., 2010; Ա. Գալսպարյան, Սևծովյան նեղուցների խնդիրը սառը պատերազմի սկզբում: ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների»: Ե., 2004, հմ. 2, Բ. Կորխմաչյան. Территориальные проблемы советско-турецких отношений на Берлинской (Потсдамской) конференции руководителей трех союзных держав – СССР, США и Великобритании. «Страны и народы Ближнего и Среднего Востока». Е., 1999, т. 16; Դժ. Գասանլի. СССР-Турция: от нейтралитета к холодной войне. 1939-1953. М., 2008; *նույնի՝* Советская политика по расширению южных границ: Сталин и азербайджанская карта в борьбе за нефть (1939-1945). М., 2017:

հատվածում: Թուրքիայում ազգայնական շարժման հաղթանակից հետո Նեղուցների խնդիրն առաջին անգամ քննարկվել է 1922–1923 թթ. Լոզանում տեղի ունեցող բանակցություններում: Լոզանի համաժողով խորհրդային պատվիրակությունը հրավիրվել էր միայն այն հարցերի քննարկմանը, որոնք վերաբերում էին սևծովյան Նեղուցների կարգավիճակին: 1923 թ. հուլիսի 24-ին ի թիվս այլ փաստաթղթերի (ընդհանուր թվով՝ 17) ստորագրվել է նաև Նեղուցների վերաբերյալ կոնվենցիան, որով նախատեսվում էր Նեղուցների ապառազմականացում և դրանցով բոլոր պետությունների առևտրական ու ռազմական նավերի (վերջիններիս դեպքում՝ որոշ սահմանափակումներով) ազատ երթևեկություն, իսկ Ստամբուլում գործելու էր Նեղուցներով նավարկությունը վերահսկող միջազգային հանձնաժողով: Թեև ԽՍՀՄ ներկայացուցիչը 1924 թ. օգոստոսի 1-ին ստորագրել էր կոնվենցիան, սակայն Խորհրդային Միությունը հրաժարվել է վավերացումից՝ պատճառաբանելով, որ այն չի համապատասխանում իր ազգային շահերին և ոտնահարում է իր իրավունքները:

1920-ական թթ. սկզբներին խորհրդա-թուրքական հարաբերությունները վերելք էին ապրում, ինչի ապացույցն էր այն, որ Խորհրդային Միությունն, իր անվտանգության ապահովման պահանջներին համապատասխանությամբ մշակված և միջազգային հարաբերությունների ասպարեզում շրջանառության մեջ դրված «բարեկամության և չեզոքության» պայմանագրերից առաջինն ստորագրել է Թուրքիայի հետ (1925 թ. դեկտեմբերի 17-ին Փարիզում): Այս տարեթիվը պատահական չէ ոչ միայն միջազգային իրավիճակի տեսակետից, որը ԽՍՀՄ-ին ստիպում էր որպես իր անվտանգության երաշխիք կիրառել այդ կարգի պայմանագրերի կնքման պրակտիկան, այլև այն նկատառումով, որ 1925 թ. արդեն իրենց լուծումն էին ստացել խորհրդա-թուրքական սահմանի տեղում գծանշմանը վերաբերող որոշ կնճռոտ հարցեր և երկու պետություններն էլ կարիք ունեին փոխօգնության: Հարկ է նշել, որ թեև կովկասյան խորհրդային հանրապետությունների և Թուրքիայի միջև սահմանը որոշվել էր 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով, բայց տեղում այն անցկացնելու ժամանակ ծագել էին որոշ խնդիրներ: Այսպես. 1922 թ. հունվարի 24-ին ԽՍՀՄ Արտաքին գործերի ժողկոմի տեղակալ Լ. Կարախանը գրել է Անկարայում Խորհրդային Ռուսաստանի դեսպան Ս. Արալովին, որ «ընկ. Միխայլովի ռադիոհեռագիրը վկայում է Մ. Քեմալի ուղեգծի՝ դեպի մեզ կողմնորոշվածության հաստատունությունը: Ներկայումս երկու հարց են խախտում Թուրքիայի նկատմամբ մեր հարաբերությունների լիակատար բարեկամացմանը՝ մոլոկաններն ու Ճորոխը»²: Ճորոխի ավազանի հատվածից բացի վիճահարույց մասեր գոյություն ունեին նաև Իգդիրի սահմանամերձ շրջանում և սահմանի մի շարք այլ հատվածներում: Որպես արդյունք՝ տեղանքում սահմանի անցկացման վերաբերյալ բանակցություններն ավարտվել են միայն 1925 թ. հոկտեմբերի 22-ին, իսկ սահմանի անցման իրավական

² Ств Архив внешней политики РФ (АВП РФ), ф. 04, Секретариат Чичерина, оп. 39, папка 232, д. 53021, л. 3:

ծնակերպումը տրվել է 1926 թ. սեպտեմբերի 8-ին ստորագրված խորհրդա-թուրքական սահմանի անցման գծի մասին գլխավոր արձանագրությամբ³:

Ինչ վերաբերում է փոխօգնությանը, ապա 1925 թ. Մոսկվի ճգնաժամի պատճառով Թուրքիան հայտնվել էր Մեծ Բրիտանիայի հետ պատերազմի շեմին, պետության ներսում էլ բռնկվել էր քրդերի ապստամբություն: Իսկ ԽՍՀՄ-ում 1924 թ. օգոստոս–սեպտեմբեր ամիսներին Վրաստանում տեղի էր ունեցել հակախորհրդային խռովություն, Հյուսիսային Կովկասում 1925 թ. ճնշվել էր իմամ Գոտցինսկու ղեկավարած ապստամբությունը և ձեռնարկվել էր Չեչնիայի բնակչության առաջին համընդհանուր զինաթափումը: Այս պայմաններում երկու պետություններն սկսել են համագործակցել՝ սատարելով միմյանց, քանի որ «երկու օպերացիաների հաջողությունն էլ պայմանավորված էր նաև խորհրդա-թուրքական համաձայնությամբ, որով նախատեսվել էր քրդերի և լեռնականների խմբերի անցուդարձը կանխելու նպատակով փակել սահմանը և այնտեղ հաստատել խիստ վերահսկողություն»⁴:

1925 թ. դեկտեմբերի 17-ին Փարիզում ստորագրված բարեկամության և չեզոքության պայմանագրով կողմերը պարտավորվել են նրանցից մեկի վրա այլ պետության կամ պետությունների ձեռնարկած ռազմական հարձակման դեպքում պահպանել չեզոքություն, ինչպես նաև չհարձակվել միմյանց վրա և չմասնակցել մյուս կողմի ռազմական անվտանգության դեմ ուղղված քաղաքական բնույթի որևէ պայմանագրի կամ դաշինքի: Հատուկ նշվում էր, որ «քաղաքական բնույթ» հասկացությունը ներառում է նաև մյուս կողմին վնասող ֆինանսական կամ տնտեսական համաձայնությունները⁵:

1925 թ. պայմանագրի գործողության ժամկետը 3 տարի էր, սակայն Անկարայում 1931 թ. հոկտեմբերի 30-ին և 1935 թ. նոյեմբերի 7-ին կնքված համաձայնագրերով երկարացվել է համապատասխանաբար 5 և 10 տարով⁶:

Նեղուցներով նավագնացությունը կարգավորող ներկայիս կոնվենցիան կնքվել է 1936 թ. շվեյցարական Մոնտրյոյ քաղաքում: Դրանով վերացվել է 1924 թ. Լոզանի կոնվենցիայի հիման վրա գործող միջազգային հանձնաժողովը և վերականգնվել Նեղուցների նկատմամբ Թուրքիայի ինքնիշխանությունը: Թուրքիան իրավունք է ստացել պատերազմի կամ վտանգի դեպքում Նեղուցները փակել բոլոր օտար պետությունների նավերի համար: Խաղաղ պայմաններում սևծովյան պետությունների ռազմական նավերն ստացան Նեղուցներն անարգել անցնելու իրավունք, ինչպես նաև սահմա-

³ Տես «СССР и Турция 1917-1979». М., 1981, с. 74:

⁴ Տես *Ա. Ավագյան*, Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում (1920-1971 թթ.): Ե., 2011, էջ 146:

⁵ Տես «Дипломатический словарь», т. 3. М., 1986, с. 314: Ուշագրավ է, որ «Դիվանագիտական բառարանի» 1948 թ. հրատարակությունում հատուկ նշվում էր, որ «1925 թ. Անգլիայի հետ Մոսկվի հակամարտության սրման ժամանակ խորհրդա-թուրքական պայմանագրի կնքումը հատուկ նշանակություն ուներ Թուրքիայի համար, քանի որ ԽՍՀՄ-ը միակ պետությունն էր, որը Թուրքիային բարոյական աջակցություն ցուցաբերեց» («Дипломатический словарь», т. 3. М., 1948):

⁶ Տես նույն տեղում:

նափակումներ սահմանվեցին ոչ սևծովյան պետությունների ռազմանավերի համար (տոննաժի և Սև ծովում գտնվելու ժամկետի տեսակետից):

Սևծովյան պետությունների շահերի ապահովման տեսակետից Մոնտրոյի կոնվենցիան Լոզանի կոնվենցիայի համեմատությամբ ավելի ձեռնադուրս էր, սակայն հզորացող ԽՍՀՄ իշխանությունները համարում էին, որ ԽՍՀՄ-ը Նեղուցների անցման հարցում պետք է ունենա ավելի բարենպաստ կարգավիճակ: 1939 թ. Մոլոտով–Ռիբենտրոպի պակտի կնքումից հետո ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովում Վ. Մոլոտովը Մոնտրոյի կոնվենցիայի վերանայման հարցը բարձրացրել է Ա. Հիտլերի և Ի. Ռիբենտրոպի հետ 1940 թ. նոյեմբերի 13-ին Բեռլինում կայացած հանդիպման ժամանակ: Ինչպես նշում է Ի. Ռիբենտրոպի թարգմանիչ Պ. Շմիդտը. «Նեղուցների հարցում գերմանական քաղաքականության վերաբերյալ Մոլոտովի հարցին ֆյուրերը պատասխանել է, որ Ռայխի արտաքին գործերի նախարարն արդեն հաշվի է առել այդ կետը և մտադիր է վերանայել Մոնտրոյի կոնվենցիան հոգուտ ԽՍՀՄ-ի»⁷: Շմիդտը հայտնում է նաև, որ Հիտլերն ավելի է հստակեցրել, թե «Գերմանիան այն տեսակետին է, որ Դարդանելից ազատ կարող են անցնել միայն ռուսական ռազմանավերը, իսկ բոլոր մյուս ռազմանավերի համար Նեղուցները պետք է փակ լինեն»⁸:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ գերմանական ռազմանավերին թուրքական իշխանությունների տված թույլտվությունը առևտրական նավերի քողի տակ անցնելու Սև ծով ԽՍՀՄ ղեկավարության համար առիթ է դարձել այդ հարցը դաշնակիցների հետ բանակցությունների ժամանակ բարձրացնելու համար: Մասնավորապես՝ Նեղուցների խնդիրը քննարկվել է Ի. Ստալինի և Ու. Չերչիլի միջև 1943 թ. Թեհրանում և 1944 թ. Մոսկվայում, ընդամենը Ու. Չերչիլը դրական է արձագանքել խորհրդային ղեկավարության ցանկությանը՝ Մոնտրոյի կոնվենցիան վերանայել ԽՍՀՄ պահանջների հաշվառմամբ⁹: Այսպիսով՝ դաշնակիցները տեղյակ էին Նեղուցների կարգավիճակի փոփոխման վերաբերյալ ԽՍՀՄ պահանջներին: Ըստ այդմ՝ Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի համար զաղտնիք չէր 1945 թ. նոյեմբերի 7-ին ավարտվող «Բարեկամության և չեզոքության» պայմանագիրը չերկարածգելու և Թուրքիային համապատասխան պահանջներ ներկայացնելու ԽՍՀՄ մտադրությունը, որը որոշակիորեն համաձայնեցված քայլ էր: Սակայն, անհրաժեշտ է հաշվի առնել, որ խոսքը միայն ԽՍՀՄ պահանջներին համապատասխան Մոնտրոյի պայմանագիրը վերանայելու մասին էր, քանի որ տարածքային պահանջը ԽՍՀՄ-ն առաջ քաշեց միայն 1945 թ. հունիսին, այն էլ՝ դաշնակիցներին տեղյակ չպահելով:

⁷ «Переговоры А. Гитлера и В. Молотова в Берлине. 13 ноября 1940 г.». Запись личного переводчика Риббентропа посланника Пауля Шмидта (<http://doc20vek.ru/node/1398>):

⁸ Նույն տեղում:

⁹ *Stu Nicholas Tamkin. Britain, Turkey and the Soviet Union, 1940-45: Strategy, Diplomacy and Intelligence in the Eastern Mediterranean. N.Y., 2009, P. 168:*

Թուրքիան Գերմանիային և Ճապոնիային պաշտոնապես պատերազմ է հայտարարել 1945 թ. փետրվարի 23-ին՝ հիմնականում այն հաշվարկով, որ կարողանա մասնակցել ՄԱԿ-ի հիմնադիր համագումարին¹⁰: Սակայն, ինչպես ներկայացնում է թուրքական պատմագրությունը, «արտգործնախարար Մուլտոփը Եվրոպայում պատերազմի ավարտից 7 շաբաթ առաջ՝ 1945 թ. մարտի 19-ին, իր մոտ հրավիրելով Թուրքիայի դեսպան Սելիմ Սարպերին, տեղեկացնում է, որ ԽՍՀՄ-ը չի երկարաձգելու 20 տարի թուրք-խորհրդային հարաբերությունների հիմքում դրված 1925 թ. դեկտեմբերի 17-ի «Բարեկամության և չեզոքության» պայմանագիրը» և, մասնավորապես, «երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում ի հայտ եկած արմատական փոփոխությունների պատճառով, 1935 թ. նոյեմբերի 7-ի համաձայնագրի դրույթներին համապատասխան ցանկանում է չեղյալ հայտարարել այդ պայմանագիրը և դրա վերաբերյալ հայտագիր է ներկայացնում»¹¹: 1945 թ. մարտի 21-ին «Իզվեստիա»-ում հրապարակվել է ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմատի հայտարարությունը 1925 թ. պայմանագիրը չեղյալ հայտարարելու վերաբերյալ Թուրքիայի կառավարությանը հայտագիր ներկայացնելու մասին¹²:

Այդ շրջանի խորհրդա-թուրքական բանակցություններում առաջատար թուրք դիվանագետներից ներգրավված Ֆերիդուն Ջեմալ Էրքինն իր հուշերում պատմում է, որ Սարպերի հաղորդագրությունն ստանալուց հետո ԽՍՀՄ-ին տրվելիք պատասխանը քննարկվել է նախարարների խորհրդում, և որ քննարկման հիմքում դրված է եղել իր մշակած նախագիծը, որում թուրքական կառավարությունը, «երկու պետությունների միջև երկար տարիների բարեկամական ու բարիդրացիական կապերը պահպանելու և ամրապնդելու ցանկություն հայտնելով», պատրաստակամություն է հայտնել ընդունելու նոր բանակցություններ սկսելու ԽՍՀՄ առաջարկությունը¹³: Ֆերիդուն Էրքինը նշում է, որ թուրքական կառավարությունը այդ պահին ելնում էր այն ենթադրությունից, թե ԽՍՀՄ ներկայացրած ամենածանր պահանջը կապված է լինելու Նեղոցների կարգավիճակում փոփոխություն կատարելու հետ¹⁴: Թուրք դիվանագետը շեշտում է ևս մեկ ուշագրավ նրբերանգ. նախարարների խորհրդի նիստում նա ամենայն վճռականությամբ պնդում էր, որ հարկավոր է սպասել ԽՍՀՄ առաջարկությանը և տվյալ պահին պատասխան առաջարկությամբ հանդես չգալ, «քանի որ յուրաքանչյուր մեր առաջարկություն, որքան էլ որ այն լինի առատաշնորհ, հակառակ կողմը կհամարի անբավարար և կօգտագործի ավելին ստանալու նպատակով որպես զսպանակ: Այս պայմաններում լավագույն ճանապարհն ու գործելաոճը կլինեին նա-

¹⁰ Տես "Türk Dış Politikası. Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar", cilt I (1919-1980). Editör: Baskın Oran. İstanbul, 2001, s. 472:

¹¹ Տես նույն տեղում:

¹² Տես «О денонсации советско-турецкого договора 19 марта 1945 года». Информбюро НКВД СССР. «Известия», 21 марта 1945 г.:

¹³ Տես *Feridun Cemal Erkin*. Dışişlerinde 34 Yıl. I cilt: "Anılar-Yorumlar". Ankara, 1987, s. 146:

¹⁴ Տես նույն տեղում:

խաձեռնությունը հակառակ կողմին թողնելը: Այս տեսակետը և պատասխանի նախագիծը նախարարների խորհուրդը նույնությամբ ընդունեց»¹⁵:

1945 թ. ապրիլի 4-ին Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հասան Սաքան Անկարայում ԽՍՀՄ դեսպան Սերգեյ Վինոգրադովին հայտնեց, որ Թուրքիայի կառավարությունը «պատրաստ է ամենայն ուշադրությամբ և բարյացկամությամբ ուսումնասիրելու նոր պայմանագիր կնքելու առաջարկությունները»¹⁶:

1945 թ. ապրիլի 25-ի ՄԱԿ-ի համաժողովում թուրքական պատվիրակությունը փորձել է հանդիպումների ժամանակ տեղեկանալ, թե ինչպիսի առաջարկություններով է հանդես գալու ԽՍՀՄ կառավարությունը, սակայն Սաքայի հարցին Մոլոտովը պատասխանել է, թե դեռ ժամանակ չի ունեցել ուսումնասիրելու թղթապանակը և հակառակը՝ ինքն ուրախ կլինի լսել նոր պայմանագրի վերաբերյալ թուրքական կողմի առաջարկությունները¹⁷:

ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմ Վ. Մոլոտովի և ԽՍՀՄ-ում ԹՀ դեսպան Սելիմ Սարպերի միջև պատմական հանդիպումը, որի ժամանակ ԽՍՀՄ-ը Թուրքիային ներկայացրել է տարածքային պահանջներ, տեղի է ունեցել 1945 թ. հունիսի 7-ին Մոսկվայում և տևել է երկու ժամ¹⁸: Հանդիպման ժամանակ Վ. Մոլոտովը նշել է, որ «ԽՍՀՄ բարեկամությունը վաստակելը, դրան արժանի լինելը հնարավոր է, սակայն նոր պայմանագիր կնքելուց առաջ հարկավոր է հարթել բոլոր խրթին հարցերը: Ես դրանք մեկ առ մեկ կթվարկեմ: Առաջին խնդիրը. Թուրքիայի և մեր միջև 1921 թ. ստորագրված պայմանագիրը կնքվել է մեր թույլ եղած ժամանակաշրջանում, և ի հայտ է եկել մի շարք տարածքային փոփոխությունների անհրաժեշտություն: Նախևառաջ հարկավոր է կարգավորել այդ իրավիճակը»¹⁹:

Սարպերի այն հարցին, թե արդյոք Մոլոտովը նկատի ունի Թուրքիայի արևելյան սահմանի փոփոխությունը, Մոլոտովը պատասխանել է, որ նկատի ունի նախկին անարդարությունը շտկելու անհրաժեշտությունը: Դրան Սարպերը պատասխանել է, որ «պայմանագիրը խորհուրդներին ուժով պարտադրված պայմանագիր չէ: Ինչ վերաբերում է անարդարությունը շտկելուն, ապա կարող ենք առանց որևէ դրական արդյունքի հասնելու ուսումնասիրել մեր պետությունների միջև պատմական հարաբերությունների խորքերը: Եվ ես 1921 թ. պայմանագրի հետևանքով ի հայտ եկած իրավիճակը դիտում եմ ոչ թե որպես անարդարություն, այլ որպես անարդարության շտկում: Այդ անարդարությունը անձամբ Լենինն է նկատել և շտկել»²⁰:

Մոլոտովը բերել է Լեհաստանի օրինակը, որի հետ նույնպես 1921 թ.

¹⁵ Տես նույն տեղում, էջ 146–147:

¹⁶ Տես «Ответ Турецкого правительства на заявление Советского правительства о денонсации турецко-советского договора 4 апреля 1945 года». «Правда», 11 апреля 1945 г.:

¹⁷ Տես *Ֆերիդուն Ջենալ Էրքին*, Նշ. աշխ., էջ 147:

¹⁸ Տես «Türk Dış Politikası. ...», s. 473:

¹⁹ Տես նույն տեղում:

²⁰ Տես նույն տեղում:

խորհրդային Ռուսաստանի ստորագրած անարդար պայմանագրի խնդրի կարգավորումից հետո, Լեհաստանի և ԽՍՀՄ-ի միջև հաստատվել է երկարաժամկետ բարեկամություն²¹: Դրան Սարպերը պատասխանել է, թե ոչ մի թուրքական կառավարություն չի կարող հասարակությանը բացատրել նման ցանկությունը, և ինքն էլ չի կարող նման առաջարկություն ներկայացնել կառավարությանը, ուստի այդ ցանկության իրականացման համար ոչ մի հնարավորություն չկա²²: Իսկ հանդիպման երկրորդ մասը վերաբերում էր Նեղուցներում խորհրդային ռազմաբազա հիմնելու պահանջին:

Ուշագրավ է, որ և՛ Մոլոտովը, և՛ Սարպերը խոսում են եզակի թվով, այսինքն՝ նկատի ունեն միայն մեկ հիմնական՝ 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագիրը, որից բխում, և որի դրույթներն էլ արտացոլում 1921 թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագիրը: Երկրորդ. Լենինի անունը կարելի է հիշատակել ոչ միայն 1921 թ. Մոսկվայի պայմանագրի, այլև 1918 թ. Բրեստ-Լիտովսկում կնքված պայմանագրի առնչությամբ, մի պայմանագրի, որը կնքվել է «խաղաղություն առանց բռնակցումների և ռազմատուգանքների» լենինյան հիմնադրույթի ոգով: Տարածքների գիջման և սահմանագծի տեսակետից Մոսկվայի պայմանագիրը, որոշ չնչին փոփոխությամբ, կրկնում էր Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը:

Մոլոտովի հետ հանդիպումից հետո խորհրդային պահանջների վերաբերյալ իր տեսակետը ներկայացնելով Անկարային՝ Սարպերը անում է հետևյալ ուշագրավ դիտարկումը. «Կարծում եմ խորհրդային կառավարությունը չի դադարեցնի բանակցությունները: Տարածքային հարցի վրա չեն պնդի: Դա առաջ են քաշել որպես առևտրի թեմա»²³:

Թուրք դեսպանի գրառումը վկայում է, որ ներկայացված պահանջներն ընկալվել են ոչ թե որպես վերջնագիր, այլ որպես բանակցային առարկա: Թուրքական կառավարությունում շատերն էին այն կարծիքի, թե ԽՍՀՄ-ի համար առաջնայինը ոչ թե տարածքային, այլ Դարդանելում ռազմաբազա ունենալու պահանջն է: Նեղուցներին տիրելու Ռուսաստանի, ապա՝ ԽՍՀՄ-ի ձգտումը ակնհայտ էր, քանի որ այնտեղ ռազմաբազա ունենալու դեպքում ԽՍՀՄ-ը կվերածվեր հզոր ծովային տերության, իսկ այդ շրջանում ԽՍՀՄ-ում քննարկվում էր միջերկրական նավատորմ ստեղծելու ծրագիրը²⁴:

Մոլոտովը Սարպերին ընդունել է նաև 1945 թ. հունիսի 18-ին՝ վերջինիս Անկարա մեկնելուց առաջ, և կրկնել է պահանջները:

Նեղուցներում ռազմաբազայի ստեղծման և 1914 թ. սահմանի վերականգնման վերաբերյալ ԽՍՀՄ պահանջներն ստանալուց հետո ԹՀ Արտա-

²¹ Տես նույն տեղում:

²² Տես նույն տեղում: Ֆերիդուն Էրքինը նշում է, որ Սարպերին ի պատասխան Վ. Մոլոտովը սառը տոնով ասել է. «Դուք գրեք ձեր կառավարությանը և ստացված պատասխանը փոխանցեք ինձ» (*Ֆերիդուն Ջեմալ Էրքին*, Նշ. աշխ., էջ 148):

* Խոսքը հիմնականում Բաթումի շրջանի, Կրաստանի և Հայաստանի հետ սահմանի փոքր հատվածների (մասնավորապես՝ Աշոցքի) մասին է:

²³ Տես «Türk Dış Politikası. ...», s. 502:

²⁴ Տես *Նիկոլայա Թամկին*, Նշ. աշխ., էջ 173:

քին գործերի նախարար Սաքայի գլխավորած պատվիրակությունը մեկնել է բանակցելու Լոնդոն, քանի որ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Մեծ Բրիտանիան էր պարտավորվել Թուրքիային կտրել նացիստական Գերմանիայից և հանոգել, որ պատերազմին մասնակցի դաշնակիցների կողմում, ինչն էլ կատարել էր դժվարությամբ և միայն մի շարք հանդիպումներից հետո՝ պատերազմի ավարտական փուլում:

Սաքայի հետ հանդիպման ժամանակ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Էնթոնի Իդենը նկատել է. «Տեսնո՞ւմ եք: Եթե մեզ լսեիք և ժամանակին պատերազմին մասնակցեիք, այժմ այս վիճակում չէիք լինի»²⁵: Ուշագրավ է թուրքական պատվիրակության անդամներից մեկի պատասխանը. «Հակառակը, ինչ լավ արեցինք, որ պատերազմին չմասնակցեցինք: Եթե նման սխալ անեինք, այդ ժամանակ հզոր Գերմանիան կոչնչացներ մեր քաղաքները և կգրավեր մեր պետությունը: Իսկ ազատագրելու պարտականությունը, ինչպես մյուս բալկանյան պետությունների դեպքում, կտրվեր Կարմիր բանակին: Այդ դեպքում մենք ևս, ինչպես Ռուսիիան, Բուլղարիան, կհայտնվեինք խորհրդային կամակատար պետության կարգավիճակում»²⁶:

ԽՍՀՄ պահանջների հարցում դեռևս չստանալով Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի միանշանակ աջակցությունը՝ թուրքական դիվանագիտությունը ձեռնարկել է մեկ այլ քայլ: Պատրաստակամություն հայտնելով խորացնելու ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունները՝ նա հանդես է եկել երկու պետությունների միջև պաշտպանական և հարձակողական դաշինք կնքելու առաջարկությամբ: Առաջարկությունը ԹՀ-ում ԽՍՀՄ դեսպան Ս. Վինոգրադովի հետ հանդիպման ժամանակ արել է ԽՍՀՄ-ում ԹՀ դեսպան Ս. Սարպերը: Նա ասել է, թե Թուրքիան պատրաստ է ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունները խորացնել ընդհուպ մինչև դաշինք կնքելը, և վստահեցրել է, որ այդ առաջարկությանը հավանություն է տալիս նաև նախագահ Ի. Ինյոնյուն²⁷:

Լսելով առաջարկությունը՝ Ս. Վինոգրադովը, օգտվելով առիթից և պատճառաբանելով, որ թուրքական կառավարությունը պետք է ապացուցի իր վճռականությունն ու ստեղծի բարենպաստ մթնոլորտ, առաջ է քաշել երկու պահանջ. 1942 թ. Գերմանիայի դեսպան ֆոն Պապենի դեմ ձեռնարկած մահափորձի համար 20 տարով դատապարտված ԽՍՀՄ երկու քաղաքացիներին ներում շնորհվի և վերմախտում ծառայած ու Թուրքիայում ապաստանած ԽՍՀՄ քաղաքացիները հանձնվեն խորհրդային իշխանությունների: Առաջին պահանջը թուրքական իշխանությունները լիովին բավարարել են, երկրորդը՝ մասամբ. ԽՍՀՄ-ին հանձնել են վերմախտի ազգային լեգեոններում ծառայած մոտ երկու տասնյակ խորհրդային քաղաքացիների:

Այսպիսով՝ խորհրդային պահանջներն ստանալուց հետո թուրքական դիվանագիտության մարտավարությունն էր հանոգել ԽՍՀՄ ղեկավարությանը հետ կանգնել պահանջներից, փոխարենը Թուրքիայի հետ հարաբերութ-

²⁵ *Ֆերիդուն Ջեմալ Էրքին*, Նշ. աշխ., էջ 148:

²⁶ Տես նույն տեղում:

²⁷ Տես նույն տեղում:

յունները բարձրացնել ավելի բարձր մակարդակի, իսկ չեղյալ հայտարարված պայմանագրի փոխարեն կնքել ոչ թե չհարձակման, այլ պաշտպանական ու հարձակողական դաշինք: Սակայն խորհրդային ղեկավարությունն օգտագործեց թուրքական դիվանագիտության քայլը որպես ևս մեկ փաստարկ տարածքային պահանջների հիմնավորման համար՝ ի վնաս թուրքական կողմի: Պոտսդամի խորհրդաժողովում 1945 թ. հուլիսի 23-ին կայացած պետությունների ղեկավարների յոթերորդ նիստում ԽՍՀՄ Նախարարների խորհրդի Նախագահ Ստալինը, խոսելով ԽՍՀՄ առաջ քաշած տարածքային պահանջների հարցի մասին, նշել է, որ խոսքը մինչև առաջին համաշխարհային պատերազմը գոյություն ունեցած սահմանի վերականգնման մասին է²⁸: «Ես նկատի ունեմ Կարսը, որը մինչև պատերազմը գտնվում էր Հայաստանի կազմում, և Արդահանը, որը մինչև պատերազմը գտնվում էր Վրաստանի կազմում: Հին սահմանի վերականգնման հարցը ի հայտ չէր գա, եթե թուրքերը չբարձրացնեին ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև դաշինքի պայմանագիր կնքելու հարցը: Դաշինք նշանակում է, որ Թուրքիան պարտավորվում է պաշտպանել մեր սահմանը, ինչպես և մենք Թուրքիայի սահմանը: Բայց մենք գտնում ենք, որ Կարսի և Արդահանի շրջանում սահմանը սխալ է, և մենք հայտնեցինք Թուրքիային, որ եթե նա ցանկանում է մեզ հետ դաշինքի պայմանագիր կնքել, պետք է կարգավորի այդ սահմանի խնդիրը, եթե չի ցանկանում շտկել, ապա դաշինքի մասին խոսք լինել չի կարող»²⁹:

Հարկ է նշել, որ Պոտսդամում Ստալինի դիրքերն ուժեղ էին նաև այն պատճառով, որ թուրքերը Մեծ Բրիտանիայից և ԱՄՆ-ից գաղտնի էին պահել **ԽՍՀՄ-ի հետ պաշտպանական և հարձակողական** դաշինքի մասին առաջարկությունը, իսկ երբ Սարպեր-Վինոգրադով հանդիպումը հայտնի է դարձել երկրորդ համաշխարհային պատերազմում ԽՍՀՄ դաշնակիցներին, նրանք բացատրություններ են պահանջել թուրքական իշխանություններից, թե որքանով է դա համապատասխանում իրականությանը³⁰: Ֆ. Էրքինի բնութագրմամբ՝ խորհրդա-թուրքական այդ երկկողմ բանակցություններն ինքնին վտանգավոր էին, իսկ Սարպերը, «մարտ ամսին ԽՍՀՄ-ին տրված մեր հայտագրի պայմաններից դուրս գալով, բարեկամության և դաշնակից լինելու առաջարկություն արեց: Վերջապես բոլոր այդ իրադարձություններն սկզբից մինչև վերջ մեր դաշնակիցներից գաղտնի էին արվել և խուսափել էինք նրանց տեղեկություններ տրամադրելուց»³¹:

Միջազգային բանակցությունների ասպարեզում ԽՍՀՄ պահանջներն արտացոլվել են 1945 թ. հուլիսին Պոտսդամում տեղի ունեցած՝ հաղթող

²⁸ Տես «Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг.». Под ред. Армана Киракосяна. Е., 2010, с. 262:

²⁹ Տես «Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны», т. VI: «Берлинская (Потсдамская) конференция руководителей трех союзных держав – СССР, США и Великобритании (17 июля – 2 августа 1945 г.)». Сборник документов. М., 1984, сс. 148–149:

³⁰ Տես *Ֆերիդուն Ջեմալ Էրքին*, Նշ. աշխ., էջ 149:

³¹ Նույն տեղում:

պետությունների ղեկավարների գազաթնաժողովի ժամանակ: Պետությունների ղեկավարների վեցերորդ հանդիպման ժամանակ Ռ. Զերչիլը, անդրադառնալով Մոնտրոյի կոնվենցիայի վերանայման և Թուրքիային ներկայացված տարածքային պահանջների հարցին, նշել է, որ դրանք վախճցրել են թուրքերին³²: Ստալինը խոսքը փոխանցում է Վ. Մոլոտովին, որն ասում է, թե 1921 թ. Խորհրդային Հայաստանից և Խորհրդային Վրաստանից Թուրքիան զավթել է Կարսի, Արդվինի և Արդահանի շրջանները: Եվ դաշինքի պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է կարգավորել Վրաստանից և Հայաստանից զավթած տարածքների հարցը՝ վերադարձնելով դրանք³³:

Նշենք, որ «Թուրքիայի արտաքին քաղաքականությունը» աշխատության մեջ Պոտսդամում ԽՍՀՄ տարածքային պահանջների քննարկումը այսպես է մեկնաբանվել. «հակառակ Թուրքիայի տարածքային ամբողջականության Չերչիլի շեշտադրմանը, Թրումենն այն կարծիքին էր, որ «տարածքներ հանձնելու հարցը թուրքերի և ռուսների միջև կարգավորման անհրաժեշտ խնդիր է»: Այսպիսով՝ պատերազմից հետո ԽՍՀՄ վարած արևմտյան սկզբնական շրջանում Թուրքիան չի կարողացել ապահովել Արևմուտքի աջակցությունը և միայնակ է մնացել ԽՍՀՄ ներկայացրած պահանջների առաջ»³⁴:

Ռեսուլտատներով 1945 թ. առաջ քաշված տարածքային պահանջների հետ կապված զարգացումները՝ հարկ ենք համարում նշել նաև 1945–1946 թթ. Հյուսիսային Իրանում տեղի ունեցած իրադարձությունները, երբ խորհրդային զորքերի վերահսկողության գոտում ԽՍՀՄ օգնությամբ ձևավորվել են Հարավային Ադրբեջանի և Մեհրաբադի (քրդական) պետությունները: Իրանի նկատմամբ ԽՍՀՄ վարած քաղաքականության տեսակետից Կարսի նահանգի վերադարձի խնդիրն ստացել է ավելի կարևոր նշանակություն և, միևնույն ժամանակ, անհանգստացրել Բրիտանիային, որը ԽՍՀՄ տարածքային պահանջները դիտում էր իր իրանական քաղաքականության համատեքստում:

Թուրքական իշխանություններին անհանգստացնում էին ԽՍՀՄ ձեռնարկած նախապատրաստությունները և Թուրքիայի ազգային անվտանգությանն սպառնացող գործոնների օգտագործումը: Այսպես. Ն. Թամկինը նշել է, թե 1945–1946 թթ. կիրառվել է «նյարդերի պատերազմի» գործիքարանը, այդ թվում՝ խորհրդա-թուրքական սահմանին զորքերի կուտակումը, որը կատարվել էր նաև Իրանում տեղաբաշխվող խորհրդային զորքերի հաշվին, թե «Թեհրանի «բոլոր հայերը» հասկացել են, որ պետք է համագործակցեն ռուսների հետ, ինչպես քրդերն են համագործակցում Կովկասում կազմավորված բանակի հետ, որը ժողովուրդը կոչում է «թուրքական ռազմաճակատի բանակ», խորհրդային օգնությունն անկախ Քրդստանի ստեղծմանը»³⁵:

Երկրորդ աշխարհամարտի ավարտին տարածքային պահանջներ ա-

³² Տես «Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946 гг.», с. 259:

³³ Տես նույն տեղում, էջ 260:

³⁴ Տես "Türk Dış Politikası. ...", s. 503:

³⁵ Տես *Նիկոլաս Թամկին*, Նշ. աշխ., էջ 173:

ռաջ քաշելու հարցում դեր են ունեցել նաև պատերազմից առաջ Կովկասի առնչությամբ անգլո-ֆրանսիական դաշինքի, իսկ պատերազմի ժամանակ՝ այնտեղ ներխուժելու, մասնավորապես՝ Բաքվի նավթահանքերին տիրանալու, գերմանա-թուրքական ծրագրերը: Դեռ 1920 թ. դեկտեմբերի 5-ին ՌԿԿ Բաղբյուրոյին հղած նամակում արտաքին գործերի ժողկոմ Չիչերինը, ներկայացնելով 1918 թ. Բրեստ-Լիտովսկի պայմանագրի վրա հիմնված թուրքական տարածքային պահանջները, նշել էր. «Հարկ է նկատի ունենալ, որ Կարսը Բաքվի բանալին է: Երբ Բրեստում մենք զիջում էինք Կարսը, ռազմական մասնագետները բացատրեցին մեզ, որ այդ բարձրաբերձ տեղանքը անհրաժեշտ ծածկապաշտպանություն է թիֆլիսի համար»³⁶:

Սակայն 1921 թ. Կարսի և Արդահանի շրջանները թուրքիային հանձնելու վերաբերյալ խորհրդային ռազմական մասնագետները հայտնել էին միանգամայն այլ կարծիք, որը ներկայացվել էր Չիչերինին Կարմիր բանակի շտաբի պետ Լեբեդևի 1921 թ. մարտի 4-ի գրությամբ: «Արդահանի մեզ համար նշանակության հարցի վերաբերյալ տեղեկացնում են, որ Արդահանի շրջանը մեզ համար շատ կարևոր ռազմական նշանակություն ունի հետևյալ նկատառումներով: 1) Եթե Կարսն ու նրա սարահարթը անցնեն թուրքերին, Արդահանի շրջանը մեզ համար կդառնա շահավետ տարածք ուժերը կուտակելու տեսակետից ինչպես Կարսի, այնպես էլ Էրզրումի և Օլթիի ուղղությամբ հարձակվելու համար: Ընդ որում, եթե մենք տիրելիս լինենք Արդահանի ամբողջ շրջանին, ապա մենք Կարսի նկատմամբ կպահպանենք շրջառող դիրք: 2) Արդահանը և նրա շրջանը թուրքերին հանձնելու դեպքում նրանք խորապես կմխրձվեն ներկայիս վրացական տարածքներ և կմոտենան Ախալցխայի հովտին, ինչով նրանց համար կհեշտանա ներթափանցումը Կրաստանի կենտրոն: Հավասարապես Արդահանի օկրուգին տիրելը թուրքերին մոտեցնում է Բաթումի շրջանին: Բացի այդ, Արդահանի շրջանից թուրքերը մշտապես կսպառնան Ախալքալակով հյուսիսից Ալեքսանդրապոլ տանող մեր ուղիներին: Սակայն, եթե հաշվի առնենք, որ Կարսի հիմնական մատույցները գալիս են Ալեքսանդրապոլից, իսկ, վերջինիս, իր հերթին, գլխավոր մատույցները գալիս են թիֆլիսից Բորչալուի ուեզդով, ապա Արդահանի շրջանը մեզ համար չի կարող համարվել մի այնպիսի բացարձակ անհրաժեշտություն, որ դրան տիրելը դրվեր բանակցությունների անսասան հիմքում: Մասնավորապես՝ առանձնակի կարևոր է, որ մեր ձեռքում պահենք միայն հյուսիսային հատվածը (Քուռ գետից հյուսիս)»³⁷:

Սահմանի շտկման հարցում հիմք է ծառայել հենց այս փաստաթուղթը, և խորհրդային Ռուսաստանը, վճռականություն է ցուցաբերել նշված հատվածի առնչությամբ՝ 1921 թ. Մոսկվայի պայմանագրով պահելով Բաթումը և փոքր շտկումներ կատարելով սահմանի մյուս հատվածներում, մասնավորապես՝ պահելով Արդահանի նահանգի նշված հյուսիսային մասը: Փաստաթուղթը կարևոր է նաև այն առումով, որ այնտեղ նշված է, թե «Կարսի

³⁶ Ств АВР РФ, ф. 04, Секретариат Чичерина, оп. 39, папка 232, д. 52987, л. 6:

³⁷ Ств նույն տեղում, թ. 21:

հիմնական մատույցները գալիս են Ալեքսանդրապոլից», քանի որ 1945 թ. Կարս մտնելու համար նախատեսած խորհրդային զորքերը կուտակվել էին հենց այդ հատվածում՝ Լենինական–Կարս գլխավոր հարվածի ուղղությամբ:

Խորհրդային զորքերի հավանական ներխուժմանը դիմադրելու ծրագրերում թուրքական իշխանություններն առաջնորդվել են երկու կարևոր ռազմաքաղաքական նկատառումներով: Առաջինը, որ բուն ռազմական տեսակետից Կարսի ուղղությամբ խորհրդային զորքերի առաջխաղացումը շատ դժվար կլինի կանգնեցնել, իսկ ավելի լավ պաշտպանական դիրք ունի էրզրումի գիծը: Երկրորդն այն էր, որ պատմական հողերի վերաբերյալ հայ և վրաց գիտնականների հրապարակումները, ինչպես նաև պարբերաբար տարբեր աղբյուրներից ստացվող տեղեկությունները հիմք էին տալիս մտածելու, թե ԽՍՀՄ-ը մտադիր չէ սահմանափակվելու 1914 թ. ռուս-թուրքական սահմանի վերականգնմամբ, այլ ունի էապես ավելի ծավալապաշտական ծրագրեր, որոնք տարածվում են մինչև Էրզրում: Դա ևս ստիպում էր կենտրոնանալ հիմնական դիմադրությունը Էրզրումի ուղղությամբ կազմակերպելու վրա, որտեղ էլ քաշվել և կուտակվել են թուրքական զորքերը:

Ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ 1945–1946 թթ. թուրքական իշխանությունների թե՛ դիվանագիտական ջանքերի, թե՛ խորհրդա-թուրքական սահմանամերձ տարածքներում վարած քաղաքականության ուսումնասիրությունը վկայում է, որ Թուրքիան մտահոգված էր հավանական խորհրդային ներխուժմամբ: Եթե ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան նրան թողնեին ԽՍՀՄ-ի դեմ միայնակ, ապա թուրքերը ամենայն հավանականությամբ կգործեին այնպես, ինչպես 1925 թ. Մոսուլի ձգնաժամի ժամանակ, երբ Մեծ Բրիտանիայի հետ պատերազմի վտանգը և պարտության մեծ հավանականությունը Աթաթյուրքի կառավարությանն ստիպեցին համակերպվել Իրաքի կազմում Մոսուլի շրջանի ընդգրկման հետ: Կարելի է ընդունել նաև թուրքական և արևմտյան աղբյուրներում տարածված այն տեսակետը, թե խորհրդային իշխանությունը, ի սկզբանե միավորելով տարածքային և Նեղուցներում ռազմաբազայի տրամադրման պահանջները, ավելի կարևոր էր համարում բազայի խնդիրը:

ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան նույնպես հիմնական վտանգ համարում էին ԽՍՀՄ ամրապնդումը Նեղուցներում: Մի բան էր Մոնտրոյոյի կոնվենցիայում ի նպաստ ԽՍՀՄ-ի որոշ փոփոխությունների կատարումը, և միանգամայն այլ՝ Դարդանելի նեղուցում խորհրդային ռազմաբազայի ստեղծումը, ինչն արմատապես կփոխեր ԽՍՀՄ կարգավիճակը՝ նրան դարձնելով հզոր ծովային տերություն: Ուստի երկրորդ համաշխարհային պատերազմում նախկին դաշնակիցներն իրենց ջանքերը կենտրոնացրին սնան գարգացումը կանխելու վրա՝ Թուրքիային դրդելով խորհրդային վտանգի դեմ պայքարի և ամեն կերպ աջակցելով: Մասնավորապես՝ ԽՍՀՄ պահանջների հարցում Թուրքիային աջակցության դեմարշ էր ԱՄՆ-ում ԹՀ դեսպան Մեհմեթ Մունիր Էրթեգյունի աճյունը 1946 թ. «Միտուրի» ռազմանավով Ստամբուլ փոխադրումը:

Խորհրդային Միությանը զսպող կարևոր ձեռնարկում էր նաև Ճապոնիայի միջուկային ռմբակոծությունը:

К ВОПРОСУ О ТРЕБОВАНИЯХ СССР, ВЫДВИНУТЫХ ТУРЦИИ НА ЗАКЛЮЧИТЕЛЬНОМ ЭТАПЕ ВТОРОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

*А. Г. АВАГЯН, доктор исторических наук, профессор, начальник Департамента
сопредельных государств МИД РА, член научно-консультационного совета
ВНЖ «Айкакан банак»*

РЕЗЮМЕ

В требованиях, предъявленных Турцией Советским Союзом на заключительном этапе Второй мировой войны, вопрос о некоторых районах Западной Армении не следует рассматривать в отрыве от проблемы создания советской военно-морской базы в проливах Босфор и Дарданеллы (впредь – Проливы), поскольку долгие годы для СССР именно это было приоритетным.

Территориальные претензии к Турции основывались на идее восстановления исторической справедливости путем пересмотра условий Московского договора 1921 г., по которому к Турции отошли Карсская и Ардаганская области, а также фактической поддержке Турцией нацистской Германии в годы Второй мировой войны. Однако дипломатические ухищрения Турции, прибегшей к помощи западных союзников СССР в войне, а также перемены в направлении внешне-политического курса СССР и угроза ядерной войны против него заставили Советский Союз отказаться от немедленного осуществления своих планов. А со смертью Сталина в 1953 г. СССР вообще отказался от своих претензий.

ON THE ISSUE OF THE CLAIMS THE USSR SUBMITTED TO TURKEY AT THE FINAL STAGE OF WWII

*A. G. AVAGYAN, Doctor of History, Professor, Head, Department of Bordering
Countries, MFA, RA, Member, Academic-Advisory Council, Defense-Academic
Journal "Haikakan Banak"*

SUMMARY

In the claims submitted to Turkey by the USSR at the final stage of WWII, the matter of certain regions in Western Armenia should not be addressed in isolation from the issue of establishing a Soviet naval base in the Bosphorus and Dardanelles Straits, since this last question, in particular, had been the USSR's key priority for many years.

The territorial claims to Turkey rested upon the idea of restoring the historical justice by means of reviewing the terms of Moscow Treaty 1921, according to which Kars and Ardahan Provinces were withdrawn to

Turkey, as well as upon the actual support that Turkey provided for Nazi Germany during WWII. However, diplomatic subterfuges of Turkey, who had had recourse to the assistance of the USSR's Western allies in the war, as well as shifts in the USSR foreign policy, and the threat of nuclear war against the USSR, made the Soviet Union give up on the immediate implementation of its plans. With Stalin's death in 1953, the Soviet Union completely waived its claims.

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՄԱՇՆԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ
(1939–1945 ԹԹ.)

Գ. Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ, ՀՀ ՉԱԱ Արևելագիտության ինստիտուտի
ասպիրանտ

Թուրքիայի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը, որը պաշտոնապես իր գործունեությունն սկսել էր 1926 թվականին¹, հետագա տարիներին ակտիվորեն շարունակել է հիմնային կառուցվածքային ու կադրային փոփոխությունները, ինչն ընդհանուր առմամբ բնորոշ էր նորաստեղծ թուրքական հանրապետության տարբեր պետական հաստատություններին:



ԱԱԾ-ն մասնակցեց Թուրքիայի Հանրապետությանը Ալեքսանդրեթի սանջակի միացմանը, որը տեղի ունեցավ երկրորդ համաշխարհային պատերազմի (1939–1945 թթ.) նախօրեին: Թուրքական պետության, այդ թվում՝ հետախուզական կառույցի ճկուն նպատակային գործունեության հետևանքով Ալեքսանդրեթի սանջակն անջատվեց Ֆրանսիայի մանդատի տակ գտնվող Սիրիայի տարածքից և 1939 թ. հունիսի 30-ին միացվեց Թուրքիային՝ հետագայում ստանալով Հաթայ անվանումն ու դառնալով Թուրքիայի նահանգներից մեկը: Թուրքական պաշտոնական պատմագրությունը նշում է, որ «Թուրքիայի ԱԱԾ-ն կարողացավ հակառակորդ կողմի մտադրությունների և քայլերի մասին կարևոր տեղեկություններ հաղորդել Թուրքիայի արտաքին գործերի նախարարությանն ու զինված ուժերի գլխավոր շտաբին, ինչն զգալիորեն օգնեց ճիշտ որոշումներ կայացնելուն»²:

Այսպիսով՝ 1939 թ. թուրքական հետախուզական կառույցը ձեռնարկեց իր առաջին խոշոր գործողությունը Թուրքիայի սահմաններից դուրս: Ակնհայտ էր, որ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին պետք է ցցուն դառնար հետախուզական կառույցների արդյունավետ աշխատանքի անհրաժեշտությունը:

Այդ տարիներին տվյալ կառույցում տեղի ունեցան կարևոր կադրային փոփոխություններ. կառույցի հիմնադրման օրվանից այն ղեկավարած Շյուքրու Ալի Օզենը 1941 թ. հուլիսին հեռացավ զբաղեցրած պաշտոնից վարչա-

¹ Հանգամանորեն տես Գ. Ա. Պետրոսյան, Թուրքիայի ազգային անվտանգության ծառայության ստեղծման պատմությունը: «ՀԲ», 2019, հմ. 1 (էլեկտրոնային տարբերակը՝ https://razmavaraget.files.wordpress.com/2019/07/armenianarmy_2019_n1.pdf):

² Stü Erdal İliter. Milli İstihbarat Teşkilâtı Tarihçesi. Ankara, 2002, s. e2-1:

պետ Ռեֆիք Սայրամի հետ ունեցած սկզբունքային անհամաձայնությունների պատճառով: Օգտնին այս պաշտոնում փոխարինեց Մեհմետ Նեջի Փերքալը, որը ռազմական ակադեմիայի շրջանավարտ էր, նախկին զինվորական, ԱԱԾ-ի շարքերում էր 1929 թվականից, իսկ 1934 թվականից կառույցի ղեկավարի տեղակալն էր³: Այսպիսով՝ ղեկավարի այս փոփոխությունը ժամանակային առումով գրեթե համընկավ ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև պատերազմի մեկնարկի հետ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքիան պաշտոնապես պահպանում էր չեզոքություն, թեև տարբեր ոլորտներում, այդ թվում՝ տնտեսական և ռազմական, ակտիվորեն համագործակցում էր նացիստական Գերմանիայի հետ: Այստեղ կարևոր է նշել նաև այն փաստը, որ գերմանական փորձի ընդօրինակումը, որն սկսվել էր ԱԱԾ-ի հիմնադրման օրվանից, շարունակվեց նաև երկրորդ աշխարհամարտի առաջին տարիներին:

Թեև Թուրքիան անմիջականորեն չմասնակցեց երկրորդ համաշխարհային պատերազմին, սակայն նրա կարևոր ռազմավարական դիրքը և արտաքին քաղաքականության հնարավոր փոփոխությունները պատերազմին մասնակից պետություններին ստիպում էին ուշադրության կենտրոնում պահել Ստամբուլն ու Անկարան: Թուրքական հետախուզությունն ուսումնասիրող մասնագետները նշում են, որ «պատերազմի ժամանակ Թուրքիան անմասն չէր մնում երկրի տարածքում այլ պետությունների լրտեսական ու հետախուզական կազմակերպությունների և գործակալների ակտիվ գործունեությունից»⁴: Մասնավորապես՝ Թուրքիայում հետախուզական և գործակալական աշխատանքը հետաքրքրում էր Գերմանիային, Իտալիային, ԽՍՀՄ-ին, Մեծ Բրիտանիային, ինչպես նաև ԱՄՆ-ին և մի շարք այլ պետությունների:

Թուրք հեղինակ էրդալ Շիմշեքը նշում է, որ «Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և դրանից առաջ թուրքական հետախուզությունը բաց էր այլ պետությունների հետ համագործակցության հարցում», ինչը բացատրվում է «այդ միջոցով արտասահմանյան կազմակերպությունների գործունեությունը վերահսկելու մտադրությամբ»⁵:

Ըստ նույն հեղինակի՝ Անկարան ֆրանսիայի ռազմաօդային ուժերին թույլ էր տալիս տարածքն օգտագործել հետախուզական թռիչքների, մասնավորապես, Բաքվի նավթահորերը լուսանկարելու համար, սակայն պայմանով, որ այդ լուսանկարները տրամադրվեն նաև Թուրքիային⁶:

Թուրքիայի ԱԱԾ-ն, համագործակցելով ֆրանսիական և բրիտանական հետախուզությունների հետ, շարունակում էր նաև ամուր կապեր պահել նացիստական Գերմանիայի համապատասխան կառույցների հետ:

³ Stu “Milli Emniyet Reisleri Biyografiler”. “Milli İstihbarat Teşkilâtı” (<https://www.mit.gov.tr/must-biyog-meh8.html>):

⁴ Stu *Էրդալ Իլթեր*, Նշ. աշխ., էջ e2-1:

⁵ E. Şimşek. Türkiye’de İstihbarat Savaşları ve MIT. İstanbul, 2012, s. 220–221:

⁶ Stu *Էրդալ Իլթեր*, Նշ. աշխ., էջ e2-1:

«Ազգային շեֆի»^{*} կառավարման ժամանակաշրջանի Թուրքիայի և նացիստական Գերմանիայի հետախուզական կազմակերպությունների համագործակցության թիրախներից էր Կովկասը: Երկու պետությունների հետախուզություններն իրենց նպատակներին հասնելու համար ձգտում էին համատեղ օգտագործելու կովկասյան մահմեդական քաղաքական վտարանդիությունը⁷: Ընդ որում, պատերազմի առաջին տարիներին Թուրքիայի իշխանությունները փորձում էին քողարկել Կովկասի նկատմամբ իրենց ունեցած հետաքրքրությունը և Գերմանիայի հետ համագործակցությամբ վտարանդիության օգտագործման ծրագրերը: Այսպես, ԽՍՀՄ Ազգային անվտանգության ժողովրդական կոմիսարիատի (ԱԱԺԿ) ռեզիդենտը 1941 թ. հուլիսին Ստամբուլից հայտնում էր կենտրոնին, որ «Թուրքական կառավարությունը, տվյալ պահին ձգտելով ցույց չտալու «կովկասյան» հարցում իր հետաքրքրվածությունը և ծրագրերը, Անվտանգության վարչության և ոստիկանության քաղաքական բաժանմունքներին հրահանգ է տվել թույլ չտալ վտարանդիության որևէ օրինական ձևի կամ այլ գործունեություն, որը կարող է մեկնաբանվել որպես ԽՍՀՄ-ի նկատմամբ թշնամական: Մինևույն ժամանակ, ինչպես երևում է Անվտանգության վարչության Անկարայի բաժանմունքի տեղեկություններից և ֆոն Պապենի հետ Յակուբի ու Շամիլի խոսակցություններից, թուրքերն իրենց հետախուզական ծառայությունների միջոցով անհրաժեշտ նախապատրաստություն են տեսնում, իսկ վտարանդիության առաջնորդների ամբողջ գործունեությունը, ընդհուպ մինչև գերմանացիների և ձապոնացիների հետ նրանց շփումները, պահում են իրենց վերահսկողության տակ»⁸:

Երկրորդ աշխարհամարտի նախօրեին և պատերազմի տարիներին ԱԱԾ-ի կարևորագույն խնդիրներից էր թույլ չտալ պատերազմող պետությունների գործակալներին միմյանց դեմ ուղղված քայլեր ձեռնարկել Թուրքիայի տարածքում, ինչը բավական բարդ խնդիր էր և մեծ ջանքեր էր պահանջում, մանավանդ, որ գերմանական գաղտնի ծառայության՝ «Աբվեր»-ի պետ ծովակալ Վիլիելմ Կանարիսը Ստամբուլում գերմանական գործակալության ղեկավար էր նշանակել կապիտան Պաուլ Լևերկյունին, որը, օգտագործելով իր նախկին կապերը^{**}, կարողացավ ստեղծել լայն լրտեսական

^{*} Թուրքիայի երկրորդ նախագահ Իսմեթ Ինյունյուի կառավարման շրջանը (1938–1950 թթ.) անվանվում էր «Ազգային շեֆի» կառավարման շրջան: «Ազգային շեֆ» «սիտղոսը» թուրքերը ընդօրինակել էին ֆաշիստական Իտալիայի առաջնորդ՝ «դուչը» Բենիտո Մուսոլինիից:

⁷ Կովկասյան վտարանդիության ներգրավման մասին ավելի հանգամանորեն տես *Ա. Ավազյան*, Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում (1920-1971 թթ.): Ե., 2011, էջ 234–264:

⁸ Տես *Лев Соцков*. Неизвестный сепаратизм. На службе СД и Абвера, с. 4 (<http://www.antiterrortoday.com/images/docs/SeparatismSD.pdf>):

^{**} Ինչպես նշում է Ա. Ավազյանը. «Առաջին աշխարհամարտի տարիներին Պաուլ Լևերկյունը կռվել էր թուրքական բանակում և կովկասյան ուղղությամբ մի շարք կարևոր նախաձեռնությունների մասնակից էր» (*Ա. Ավազյան*, Նշ. աշխ., էջ 212):

ցանց: Թուրքական իշխանությունները, անհանգստանալով, որ գերմանական լրտեսական ցանցի ակտիվությունն իրենց համար անցանկալի հետևանքներ կունենա, արտաքսեցին Լևերկյունին, և Գերմանիայի լրտեսական ցանցի կենտրոն դարձավ հարևան Բուլղարիան⁹:

Չնայած Թուրքիայի ԱԱԾ-ի գործադրած ջանքերին՝ 1942 թվականի փետրվարի 24-ին Ստամբուլում մահափորձ կատարվեց Թուրքիայում Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Ֆրանց ֆոն Պապենի դեմ: Ղեկավարվեց, իսկ Թուրքիայի ԱԱԾ-ի ձեռնարկած գործողությունների հետևանքը եղավ այն, որ կարճ ժամանակ անց մահափորձի մեղադրանքով ձերբակալվեցին ԽՍՀՄ Ստամբուլի հյուպատոսարանի արխիվային բաժնի աշխատող Լեոնիդ Կոռնիլովն ու ԽՍՀՄ առևտրային կցորդության աշխատող Գեորգի Պավլովը, ինչպես նաև նրանց երկու աջակիցները, որոնք Թուրքիայի քաղաքացիներ էին: Որպես ՆԳԺԿ գործակալներ ներկայացված Կոռնիլովն ու Պավլովը դատապարտվեցին 20 տարվա, նրանց թուրք աջակիցները՝ 10 տարվա ազատազրկման¹⁰:

Թուրքական հանրապետության ձևավորվող և զարգացող հետախուզական համակարգի համար կարևոր էին նաև անհատական ջանքերը և առանձին գործակալների արհեստավարժությունը: Այս ժամանակահատվածում ԱԱԾ-ի հայտնի դարձած գործակալներից էր Չիչերո կեղծանվամբ գործող Իլյաս Բազնան*։ Ալբանական ծագում ունեցող Բազնան, որը ծնվել էր այդ ժամանակահատվածում Օսմանյան կայսրության կազմում գտնվող Պրիշտինայում, 1918 թվականին տեղափոխվել էր Ստամբուլ, իսկ Թուրքիայի Հանրապետության առաջին տարիներին զինվորական ծառայության անցել առաջին նախագահ Մուստաֆա Բենալի (Աթաթյուրք) մերձավորների շրջանում: Հետագայում ծառայության անցնելով Թուրքիայի ԱԱԾ-ում՝ Չիչերոն 1930–1944 թվականներին որպես գաղտնի գործակալ աշխատել է Թուրքիայում Հարավսլավիայի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի դեսպանատներում, կատարելով վարորդի կամ անվտանգության աշխատողի պարտականություններ, ինչի շնորհիվ հավաքել էր թուրքական հետախուզությանը հետաքրքրող տեղեկություններ ու տարաբնույթ տվյալներ: Հատկապես կարևոր էր 1943–1944 թվականներին Չիչերոյի ծավալած գործունեությունը Անկարայում Մեծ Բրիտանիայի դեսպանությունում, որտեղ նրան հաջողվեց արժեքավոր տվյալներ կորզել ու հաղորդել ԱԱԾ-ին, ինչպես նաև գերմանական հետախուզությանը: Թուրքական պաշտոնական պատմագրությունը Չիչերոյին անվանում է «դարի խոշորագույն գործակալ», թեև նույն այդ աղբ-

⁹ Տես *Tuncay Özkan*. *MİT'in Gizli Tarihi*. İstanbul, 2003, s. 171:

¹⁰ Տես *Է. Շիմշեք*, Նշ. աշխ., էջ 224:

* Ծնված լինելով 1904 թվականին՝ 60-ականներից նա տեղափոխվել էր Գերմանիա, որտեղ էլ ստացել է թոշակ ու հետագայում մահացել: Չիչերոյին բրիտանական կողմը մեղադրում էր հոգուտ Գերմանիայի գործակալական գործունեություն ծավալելու համար:

յուրները նշում են Գերմանիայի համապատասխան կառույցների հետ նրա ակտիվ գործակցության փաստը*:

Ուշագրավ է, որ թուրքական հետախուզությունների պատմությունն ուսումնասիրող Թունջայ Օզքանը փորձում է այնպես ներկայացնել, թե երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին արտասահմանյան լրտեսները լայնորեն օգտագործում էին փոքրամասնություններին: «Գաղտնի ծառայությունների ամենակարևոր օգնականներն էին նրանց հավաքագրած հույները, հայերը և հրեաները: Նրանք ժողովրդի հետ միախառնված էին և Թուրքիայի քաղաքացի լինելու շնորհիվ ազատ կերպով օգտագործվում էին ցանկացած գործում»¹¹: Սակայն տարբեր հեղինակների աշխատություններում բերվող այդ շրջանի հետախուզական գեկույցների ու ականատեսների հուշերի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ գերմանական լրտեսական ցանցն առաջին հերթին օգտագործում էր հենց թուրք պաշտոնյաներին, այդ թվում՝ բարձրաստիճան, որոնց հետ կապերը հաստատվել էին դեռ առաջին համաշխարհային պատերազմում դաշնակից լինելու տարիներից: Նման արժեքավոր անձերից էր գերմանացի լրտեսների՝ Վիդմանի և Լևերկյունի հետ կապ պահպանող գնդապետ Ջելալ Քորալը, որը ԱՄԾ-ի Ստամբուլի կենտրոնի պետն էր¹²: Նա նաև ներգրավված էր կովկասյան վտարանդիության շարքերից գերմանական հետախուզության հավաքագրած դիվերսանտներին թուրքական սահմանից անցկացնելու ու Կովկաս տեղափոխելու գործում¹³:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին թուրք-գերմանական համագործակցության վառ օրինակներից է նաև «Ջեպելին» օպերացիան: 1942 թվականի օգոստոսին Ստամբուլ գաղտնի այց կատարեց գերմանական հատուկ ծառայության՝ Աբվերի ղեկավար ծովակալ Վիլհելմ Կանարիսը: Այցի արդյունքներով սկսեց իրագործվել «Ջեպելին» օպերացիան, ըստ որի՝ Թուրքիայի տարածքում պետք է ստեղծվեին հավաքագրված ադրբեջանցիներից ու հյուսիսկովկասյան լեռնականներից կազմված հատուկ ջոկատներ և ծածուկ կերպով տեղափոխվեին ԽՍՀՄ տարածք այնտեղ դիվերսիոն գործունեություն վարելու համար: Գերմանական հետախուզական ծառայություններին աջակցում էր Թուրքիայի ԱՄԾ-ն, որն օգնում էր լեռնականների հավաքագրմանն ու գերմանական կողմին տրամադրում էր տարածք նրանց պատրաստելու համար: «Ջեպելին» օպերացիայի շրջանում գերմանացիները ցանկանում էին հասնել Բաքվի նավթահորերին, սակայն խորհրդային հակահետախուզությունը ձերբակալեց ԽՍՀՄ տարածք

* Ժամանակակից թուրքական պատմագրության մեջ հաճախացել է Չիչերոյի քննադատությունը՝ նրան բնորոշելով որպես երկակի գործակալ:

¹¹ Թունջայ Օզքան, Նշ. աշխ., էջ 172:

¹² Տես Լև Մոկլով, Նշ. աշխ., էջ 61–62:

¹³ Տես նույն տեղում:

ներթափանցած խմբի անդամներին, ինչպես նաև խնդրի առնչությամբ Մոսկվան պաշտոնական նոտա հղեց Անկարային¹⁴:

Սակայն պատերազմի ընթացքում Գերմանիայի դիրքերի թուլացման հետ մեկտեղ սկսվեց թուրք-գերմանական համագործակցության անկումը, իսկ 1945 թվականի փետրվարին Թուրքիան պաշտոնապես պատերազմ հայտարարեց նրան, թեև որևէ ակտիվ գործողություն չձեռնարկեց՝ խուսափելով պատերազմին ակտիվ կերպով մասնակցելուց: Դրանով պաշտոնապես վերջ դրվեց նաև թուրքական հետախուզական ծառայության և համապատասխան գերմանական կառույցների համագործակցությանը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքը կարևոր փորձ էր թուրքական հետախուզության համար, որն առաջիկայում պետք է ենթարկվեր նոր հիմնավոր փոփոխությունների: Դրա հետ մեկտեղ համաշխարհային պատերազմի ավարտով իր վախճանին հասավ նաև թուրքական հետախուզության այսպես կոչված «գերմանական փուլը», որի ժամանակ հետախուզության գերմանական մոդելը և Գերմանիան ու գերմանացի մասնագետները բավական մեծ ազդեցություն էին գործում Թուրքիայի ԱԱԾ-ի ստեղծման ու հետագա կայացման ընթացքի վրա:

Միևնույն ժամանակ, Խորհրդային Միության հետ հարաբերությունների վատթարացումը, որը շարունակվում էր երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և հատկապես սրվել էր պատերազմի վերջին փուլում, ինչպես նաև ԱՄՆ-ի հետ հարաբերությունների շարունակական բարելավումը նույնպես իրենց կնիքն էին դնում Թուրքիայի հետախուզական կառույցի գործունեության և հետագա փոփոխությունների վրա: Ստեղծված նոր քաղաքական ու ռազմական իրադրությունում Թուրքիան, համագործակցության նվազագույն եզրեր Գերմանիայի և ԽՍՀՄ-ի հետ ունենալով, ինքնաբերաբար հակված էր համագործակցելու եվրոպական այլ պետությունների, ինչպես նաև Միացյալ Նահանգների հետ, ինչն էլ խորհրդանշեց Թուրքիայի ԱԱԾ-ի կենսագործունեության հաջորդ փուլը:

Այսպիսով՝ Թուրքիայի ԱԱԾ-ն պատերազմի տարիներին վարում էր գերմանամետ ու բացահայտորեն հակախորհրդային գործունեություն: Թեև Թուրքիան այդպես էլ չմտավ պատերազմի մեջ Գերմանիայի կողմում, ինչը նախատեսվում էր, սակայն իր և առաջին հերթին իր ազգային անվտանգության ծառայության գործունեության հետևանքով զգալի թվով խորհրդային դիվիզիաներ էր գամում խորհրդա-թուրքական սահմանի մոտ՝ էապես նվազեցնելով խորհրդային բանակի մարտական ներուժը խորհրդա-գերմանական ռազմաձևակառույցում, ինչով էլ վնաս էր պատճառում դաշնակից տերությունների գործին:

¹⁴ Տես Ա. Ավագյան, Նշ. աշխ., էջ 258–259:

ДЕЯТЕЛЬНОСТЬ СЛУЖБЫ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ ТУРЦИИ В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ ВОЙНЫ (1939–1945 ГГ.)

Г. А. ПЕТРОСЯН, аспирант Института востоковедения НАН РА

РЕЗЮМЕ

Турция непосредственного явного участия во Второй мировой войне не принимала, однако стратегически важное географическое положение и возможность влияния на ее внешнюю политику вынуждали воюющие державы концентрировать свое внимание и на ней. В эти годы СНБ Турции, хотя внешне и сотрудничая в рамках нейтралитета с французской и английской разведками, на самом деле продолжала поддерживать тесные связи с соответствующими структурами нацистской Германии, в свое время оказавшими большую помощь при ее создании.

На основе анализа цитированных в трудах различных авторов, в том числе и турецких, различных документов и воспоминаний очевидцев опровергаются утверждения официальной турецкой историографии о якобы широком использовании иностранными разведками представителей национальных меньшинств Турции. На самом деле, германская агентурная сеть в первую очередь пользовалась услугами турецких чиновников, в том числе – высокопоставленных, часть которых имела связи с Германией еще со времен союзничества в годы Первой мировой войны. Однако после окончания войны, завершившейся поражением Германии, завершился и так называемый «немецкий этап» турецкой разведки.

Таким образом, в военные годы СНБ Турции вела прогерманскую и явно антисоветскую деятельность.

THE ACTIVITY OF TURKEY'S NATIONAL SECURITY SERVICE DURING WORLD WAR II (1939–1945)

G. A. PETROSYAN, Graduate student, Institute of Oriental Studies, NAS, RA

SUMMARY

Turkey was not directly, apparently involved in WWII, nevertheless its strategically important geographic location and the possibility of changing its foreign policy made the belligerent powers keep the focus on Turkey, too. While externally cooperating with the French and English intelligence services within neutrality framework, Turkey's NSS in reality continued to liaise closely with the corresponding structures of Nazi Germany, which formerly had greatly contributed to the formation of the Turkish NSS.

The Turkish official historiography's assertions that representatives of Turkey's ethnic minorities were allegedly widely exploited by the foreign intelligence services, are demolished based on the analysis of various documents and memories of eyewitnesses, cited in the works of a number of authors, some of them being Turkish. In fact, German human intelligence network first of all used the services rendered by the Turkish officials, including high-ranking officials, some of whom had had connections with Germany since the alliance in World War I. However, when the war ended, with Germany's defeat, the so-called "German stage" of the Turkish intelligence came to an end as well.

Thus, during the war years Turkey's NSS led pro-German and explicitly anti-Soviet activities.

ՄԱՅԻՍՅԱՆ ՓԱՌԱՊԱՆԾ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ ԿԵՐՏԱԾ ՀԱՅՈՐԴԻՆԵՐ



Ռազմաճակատի հրամանատար, ԽՄ Խերոս (կրկնակի), բանակի գեներալ (ԽՄ մարշալ) Հովհաննես Բաղդամյան



ՌՕՈՒ-ի շտաբի պետ, ՌՕՈՒ-ի հրամանատարի տեղակալ, ավիացիայի մարշալ Արմենակ Խանփերյանց



ՌԾՈՒ-ի Գլխավոր շտաբի պետ, ՌԾՈՒ-ի ժողկոմի առաջին տեղակալ, ԽՄ Խերոս, Նավատորմի ծովակալ (ԽՄ նավատորմի ծովակալ) Հովհաննես Իսակով



Գվարդիական տանկային կորպուսի հրամանատար, ԽՄ Խերոս, գեներալ-մայոր (գրահատանկային զորքերի գլխավոր մարշալ) Համազասպ Բաբաջանյան



ԽՍՀՄ ԳԱ փոխնախագահ, ԽՍՀՄ ռազմաթշկական ակադեմիայի պետ, Սոց. աշխ. Խերոս, ք/ծ գեներալ-գնդապետ Լևոն Օրբելի



Ռազմաճակատի հրետանու հրամանատար, ԽՄ Խերոս, գեներալ-լեյտենանտ (գեներալ-գնդապետ) Միքայել Պարսեղով



Կարմիր բանակի
հրետանու մարտական
պատրաստման
վարչության պետ,
հրետանու
գեներալ-լեյտենանտ
Իվան Վեքիլով



Կալինինյան
ռազմաճակատի
բժշկական
ծառայության պետ,
բ/ժ գեներալ-լեյտենանտ
Ավետիք Բուռնագյան



Հարավարևմտյան
ռազմաճակատի
տանկային զորքերի
հրամանատար,
ռազմաճակատի
հրամանատարի տեղակալ,
տանկային զորքերի
գեներալ-լեյտենանտ
Վլադիմիր Տամրուչի
(Դեմիրճյան)



Բանակի շտաբի պետ,
գեներալ-լեյտենանտ
Ստեփան Գինոսյան



Գերմանիայում
խորհրդային
ռազմաճակատի
քաղվարչության պետ,
գեներալ-լեյտենանտ
Սերգեյ Գալաջև



Կորպուսի ռազմական
կոմիսար, բանակի
ռազմական խորհրդի
անդամ,
տանկային զորքերի
գեներալ-լեյտենանտ
Հայկ Թումանյան



89-րդ Հայկական
Թամանյան դիվիզիայի
հրամանատար
(1942–1946 թթ.),
գեներալ-մայոր
Նվեր Սաֆարյան



89-րդ Հայկական
Թամանյան դիվիզիայի
հրամանատար (1942 թ.),
գնդապետ
Անդրանիկ Սարգսյան



89-րդ Հայկական
Թամանյան դիվիզիայի
(1941–1942 թթ.),
390-րդ Հայկական
հրաձգային դիվիզիայի
հրամանատար (1942 թ.),
գնդապետ
Սիմոն Զաքյան



409-րդ Հայկական
հրաձգային դիվիզիայի
(1941 – 1942 թթ.),
89-րդ Հայկական
Թամանյան դիվիզիայի
(1942 թթ.)
հրամանատար
Արտաշես Վասիլյան



Կործանիչ ավիագնդի
հրամանատար,
ԽՍ հերոս
(ՀՄՊ 1-ին հայ),
ավիացիայի մայոր
Լազար Զափչախով



Գրոհային ավիագնդի
հրամանատար,
ԽՍ կրկնակի հերոս
(հայերից առաջինը),
գվարդիայի
փոխգնդապետ
Նելսոն Ստեփանյան




Շուշիի ազատագրման
օպերացիայի պլանի
համահեղինակ,
«Մարտական խաչ»
1-ին աստիճանի
շքանշանակիր,
գեներալ-գնդապետ
Գուրգեն Դալիբալթայան



«26-ի» (հյուսիսային)
ուղղության հրամանատար,
«Մարտական խաչ»
2-րդ աստիճանի
շքանշանակիր,
փոխգնդապետ
Վալերի Զիթյան



Շուշիի ազատագրման
օպերացիայի ղեկավար,
ԻՊՈՒ-ի հրամանատար,
Արցախի հերոս,
գեներալ-մայոր
Արկաղի Տեր-Թադևոսյան



Շուշիի (արևելյան)
ուղղության հրամանատար,
«Մարտական խաչ»
2-րդ աստիճանի
շքանշանակիր,
գնդապետ
Արկաղի Կարապետյան



Քյոսալարի
(հյուսիսարևմտյան)
ուղղության հրամանատար,
Արցախի հերոս,
գեներալ-գնդապետ
Սեյրան Օհանյան



Լաչինի (հարավային)
ուղղության հրամանատար,
Արցախի հերոս,
գեներալ-լեյտենանտ
Սամվել Բաբայան

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՕՊԵՐԱՑԻԱՅԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ*

*Մ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, պահեստագործի մայրը, պատմական
գիտությունների թեկնածու, դոցենտ, «Կաճառ» գիտական
կենտրոնի ղեկավար*



Շուշիում ադրբեջանական կրակակետերի ու ռազմական հենակետի ծավալման սպառնալիքի և ագրեսիայի այդ օջախի վնասագերծման անհրաժեշտության մասին հրապարակայնորեն արտահայտվել ենք տակավին այն ժամանակ, երբ դեռ նոր-նոր էին Արցախում և ԱդրեսՍՀ հայկական բնակավայրերում ծավալվել Բաքվի սանձազերծած մարտական գործողությունները¹: Տեսական ու գաղափարական հիմնավորումները հետագայում դարձան կենսական անհրաժեշտություն, որովհետև Շուշիից հրթիռահրետանային ու զորային մշտական հարձակումների էին ենթարկվում մայրաքաղաք Ստեփանակերտի և շրջակա մյուս հայկական բնակավայրերի խաղաղ թաղամասերը: Միայն 1992 թ. սկզբից մայրաքաղաքը ենթարկվել է հրետակոծության 170, իսկ Շուշիից անմիջական հարձակման՝ 11 անգամ: ԼՂՀ մայրաքաղաքի վրա արձակվել է տարբեր տրամաչափի 4253 արկ ու հրթիռ, այդ թվում՝ ՄՄ-21 «Գրադ» կայանքի 2437 ռեակտիվ արկ (հիմնականում՝ բեկորաֆուզասային), «Ալազան» և «Կրիստալ» կայանքների փոխված մարտազխիկներով 527 հրթիռ, 100 մմ 593 արկ և այլն: Ավերվել է 188 և վնասվել 223 բնակելի շենք կամ մոտ 2000 բնակարան: Հիմնահատակ ավերվել են 54 և վնասվել 147 սոցիալ-մշակութային, կենցաղային և վարչական օբյեկտներ: Զոհվել են Ստեփանակերտի 90 քաղաքացիներ, մեծ մասամբ՝ կանայք ու երեխաներ, իսկ 268-ն ստացել են բեկորային և այլ վնասվածքներ: Մայրաքաղաքի մոտ 10 հազար բնակիչ մնացել է անօթևան²: ԼՂՀ ինքնապաշտպանության կոմիտեի մայիսի 1-ին տարածած հայտարարությունում, մասնավորապես, ասված էր. «Միայն անցած շաբաթվա ընթացքում ԼՂՀ մայրաքաղաքի վրա հակամարտության գոտում Ադրբեջանի զխավոր ռազմական հենակետ Շուշիից արձակվել է շուրջ 1000

* Հետազոտությունն իրականացվել է ԱՀ ԿԳՍ նախարարության տրամադրած ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № 18 AK-007. «Ռազմարվեստի զարգացման արդի փուլի առանձնահատկությունները Արցախում» գիտական թեմայի շրջանակներում:

¹ Տես Մ. Ա. Հարությունյան, Ո՞րն է Արցախի անկախությունը նվաճելու ուղին: «Ավետյաց Երկիր» «Հայ երիտասարդության ձակատ»-ի պաշտոնաթերթ, 1990 թ. դեկտեմբերի 15, հմ. 6:

² Տես ԼՂՀ ԱԳՆ մամուլի կենտրոնի արխիվ, գ. 29, թ. 52:

արկ, այդ թվում՝ 800-ը՝ ռեակտիվ: Ջոհվել է 20 խաղաղ բնակիչ, փլատակների են վերածվել հարյուրավոր բնակելի տներ, ավերվել կամ հրդեհվել են կենսապահովման բոլոր ձեռնարկությունները: Հազարավոր կանայք ու երեխաներ մնացել են առանց տանիքի ու ապրուստի միջոցի: Հատկապես տազնապահարույց է այն հանգամանքը, որ շարունակ գենք ու զինամթերք է բերվում Շուշի (ի դեպ՝ որտեղից դուրս է բերվել ամբողջ բնակչությունը): Նկատվում են զինված կազմավորումների, զրահատեխնիկայի նորանոր կուտակումներ»³: Արցախի ինքնապաշտպանության ուժերի հատուկ ծառայություններն ամենօրյա աշխատակարգով արձանագրում էին Ստեփանակերտի վրա գրոհելու նպատակով Շուշիում և Արցախում գտնվող մյուս ադրբեջանական հենակետեր առբերվող սպառազինության և ռազմական տեխնիկայի թվաքանակի ահագնացող աճումը*: Դա ադրբեջանական հրամանատարությանը թվում էր հեռանկարային, քանի որ նրա հաշվարկներով շուրջ քառամյա պաշարման ու մշտական հրթիռահրետակոծությունների հետևանքով մայրաքաղաքի դիմադրողականությունը պետք է իսպառ հյուծված լիներ:

Շուշիի ազատագրման պատմական պահը, անհրաժեշտությունը, նախապատրաստման ու պլանավորման, չորս հիմնական ուղղություններով ծավալված մարտական գործողությունները և առանձին զորատեսակների ներգրավման հանգամանքները հնարավորինս մանրամասնորեն ներկայացված են զանազան ուսումնասիրություններում⁴, ուստի նպատակահարմար է

³ Տես «Երկիր» ՀՅԴ Հայաստանի կենտրոնական կոմիտեի պաշտոնաթերթ, 1992 թ., հմ. 82:

* Ըստ հետախուզական տվյալների՝ 1992 թ. ապրիլի 27-ի դրությամբ Շուշիում կենտրոնացված էր 11 միավոր տանկ, 9 ՀՄՄ, 10 ՋՓՂ, 2 ՋՀՂՄ, 100 մմ-ոց 3 թնդանոթ, 2 ՄՍ-21 «Գրադ» համազարկային կայանք, «ՈՒԱԶ»-ներում տեղակայված 3 ԿՊՎԴ գնդացիր, մոտ 1500 զրոհային (ԼՂՀ ՊԲ արխիվ, ռադիոկայանի ապարատային մատյան, հաղորդում ժամը 16.00 առ 27.04.92 թ.), իսկ մայիսի 6-ին Լաչինից Շուշի են տեղափոխվել 15-20 միավոր մեքենա, 4 ՀՄՄ, 4 ՋՓՂ (ն. տ., հաղորդում ժամը 11.35 առ 06.05.92 թ.): Ըստ երևույթին, այս տեխնիկայի ու սպառազինության մի մասը տեղաբաշխվել է Զանհասան-Քյոսալար, Քիրս և Նաբիլար ուղղություններում: Ադրբեջանական աղբյուրներն ընդունում են, որ Շուշիում մայիսի 7-ի դրությամբ կային 3 S-72 և 1 S-55 տանկեր, 9 ՀՄՄ (ՀՄՄ-1՝ 5 միավոր, ՀՄՄ-2՝ 4 միավոր), 2 ՋՓՂ, 2 ՋՀՂՄ: 1 միավոր ՀՄՄ-2-ից բացի ամբողջ զրահատեխնիկական սարքին վիճակում էր (տես *Р. Бабаев*. При обороне Шуши мы использовали все боеприпасы.... «Зеркало», 04.09.2002, հմտ.՝ *М. А. Арутюнян*. О некоторых вопросах историографии освобождения города Шуши и становления Армии обороны. «Салют, Победа!». Сборник научных трудов IV Всероссийской научно-практической военно-исторической конференции с международным участием. Томск, 2014, с. 268; *И. Самедов*. Шуша: ожидание с надеждами.... «Наш Век», 03.05.2002 (<http://www.nashvek.media.com/18/bol.html>):

⁴ Տես, օրինակ, *Ս. Ս. Դավթյան, Ս. Ա. Ավանեսյան*, Շուշիի ազատագրումը և դրա պատմական նշանակությունը: «ՀԲ», 2012, հմ. 1–2 (էլեկտրոնային տարբերակը՝ https://razmavaraget.files.wordpress.com/2012/06/hb-n1-2_2012.pdf), *Ս. Ա. Հարությունյան*, Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը: Ե., 2000, էջ 75–123, *նույնի՝* Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991–1994 թթ.: «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Շուշի, 2015, գիրք 5 (59–70), էջ 65–84, *նույնի՝* Ոգու և գեների փառավոր հաղթանակը: «ՀԲ», 2002, հմ. 1–2:

այստեղ քննարկել զուտ այդ օպերացիայի արդյունքները և փորձել վերա-
 իմաստավորել դրա պատմական նշանակությունը: Ընդամին նոր ուսումնա-
 սիրությունների շնորհիվ հայտնաբերվել են նոր տվյալներ, կատարվել են
 ճշգրտումներ, որոնց արդյունքները տեղ են գտել սույն հոդվածում:

Շուշիի ազատագրման արդյունքների մասին մեզ հայտնի ամենավաղ
 ռազմագիտական գնահատականը այդ նշանակալի իրադարձության տարե-
 լիցի առթիվ Ինքնապաշտպանության կոմիտեի անունից հրապարակվել է
 ԻՊԿ պաշտոնաթերթում, որտեղ շեշտվել են ԼԴՀ ինքնապաշտպանության
 ուժերի շտաբի մեծածավալ նախապատրաստական աշխատանքը և հնուտ
 ղեկավարումը, բոլոր աստիճանների հրամանատարների լավ կազմակերպ-
 ված համագործակցությունը, ազատամարտիկների անձնվիրությունը և վճռա-
 կան գործողությունները, ինչի շնորհիվ հաջողվել է երկու օրում կտրել կեն-
 դանի ուժի և միջոցների, ինչպես նաև աշխարհագրական դիրքի էական
 առավելություն ունեցող հակառակորդի դիմադրությունը և ազատագրել
 ռազմական տեսանկյունից հույժ կարևոր Շուշի բերդաքաղաքը⁵:

Շուշիի ազատագրման ամենատեսանելի արդյունքն ստեղծված ռազմա-
 քաղաքական նպաստավոր պայմանների օգտագործմամբ քառանյա շրջա-
 փակման ձեղքումն ու Լաչինի մարդասիրական միջանցքի բացումն էին, ինչի
 շնորհիվ Արցախը փրկարար կապ հաստատեց Մայր Հայրենիքի հետ:

Ռազմավարության տեսանկյունից բարդագույն խնդիրը հնարավոր
 եղավ լուծել, այնուհետև Շուշիի հաղթանակն ամրապնդել նաև Ասկերանի,
 Մարտակերտի, Հադրութի շրջանների պաշտպանական բնագծերի առան-
 ձին հատվածներում հակառակորդի հարձակումները պատեհաժամորեն
 հետ մղելու շնորհիվ:

Շուշիի ազատագրման և Ստեփանակերտին հարակից ադրբեջանական
 հենակետերի վնասազերծման օպերացիային մասնակցած ազատամար-
 տիկների թիվը, կողմերի կորուստները տարբեր կերպ են գնահատվում, և
 դրանց ճշգրտման աշխատանքը դեռ շարունակվում է⁶:

Օպերացիայում կողմերի ներգրաված ընդհանուր ուժերի և միջոցների
 հարաբերակցության, մարդկային, տեխնիկայի ու սպառազինության կո-
 րուստների մասին ճշգրտված տվյալներ կան ՀՀ ԶՈՒ-ի Գլխավոր շտաբի
 օպերատիվ վարչության (նաև մեր մասնակցությամբ) կազմած ու հրապա-
 րակած աշխատության մեջ⁷:

Շուշիի ազատագրման փայլուն օպերացիայի շնորհիվ վերացվեցին
 Ստեփանակերտի շրջակա թշնամական կրակակետերը և ռազմական հենա-

⁵ Տես «Շուշիի ազատագրման ռազմաքաղաքական արդյունքները»: «Մարտիկ», 1993
 թ., հմ. 7:

⁶ Տես, օրինակ, *Մ. Ա. Հարությունյան*, Արցախյան պատերազմի կարևոր օպերացիա-
 ների պատմագրական լուսաբանման որոշ վիճահարույց հարցերի մասին: «ՀԲ», 2019,
 հմ. 4 (էլեկտրոնային տարբերակը՝ <https://razmavaraget.files.wordpress.com/2019/12/hb-4-2019.pdf>):

⁷ Տես «Շուշիի ազատագրման օպերացիան ռազմական արվեստի տեսանկյունից»
 (առանց հրատ. տվյալների), էջ 12, 23–24:

կետերը: Հակառակորդին պատճառվեցին կենդանի ուժի ու տեխնիկայի նշանակալի կորուստներ, նրանից առգրավվեցին մոտ 10 միավոր զրահատեխնիկա, տարաբնույթ փոխադրամիջոցներ, հարյուրավոր հրթիռներ ու արկեր, մի քանի միավոր հրետանի և այլ զենք ու զինամթերք: Գերվեց 13 ադրբեջանցի⁸, որոնք հետագայում փոխանակվեցին հայ ռազմագերիների կամ պատանդառված խաղաղ բնակիչների հետ:

Շուշիի ազատագրման պատմական նշանակության մասին խոսելիս պետք է այն դիտարկել ոչ միայն արցախյան, նույնիսկ ոչ միայն հայաստանյան, այլև համահայկական տիրույթում: Այդ փայլուն հաղթանակը հայ ժողովրդին վերադարձրեց իր հոգևոր-մշակութային փառավոր անցյալի հիշատակները պահպանած պատմական բերդաքաղաքը, որտեղ վերջնական ոչնչացումից փրկվեցին մահաբեր հրթիռների ու արկերի պահեստների վերածված Սբ. Ամենափրկիչ Ղազանչեցոց և Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցիները, կարևոր արձանագրություններով հայտնի՝ 18-19-րդ դարերի տապանաքարերը, հայկական պատմաճարտարապետական այլ հուշարձաններ: Շուշիի ազատագրման շնորհիվ կասեցվեց այլ ժողովուրդների, այդ թվում նաև պարսիկների, պաշտամունքային կառույցները յուրացնելու տասնամյակներ շարունակվող ադրբեջանական քաղաքականությունը և նպաստավոր պայմաններ ստեղծվեցին դրանք վերանորոգելու, ապա այցելուների համար մատչելի դարձնելու համար, ինչի վկայությունն է 2019 թվականին պարսկական մզկիթի վերաբացումը⁹:

Շուշիի ազատագրման նշանակության քաղաքական բաղադրիչն շեշտված է նախորդած և հաջորդած զարգացումներով: Արտաքին քաղաքական ասպարեզում որոշ ժամանակով լիցքաթափվեցին տարածաշրջանում իրենց շահերը հետապնդող պետությունների միջև առկա հակասությունները, անհրաժեշտություն առաջացավ վերագործարկելու կողմերի ուժերի հարաբերակցության ու քաղաքական ուղեգծերի վրա ազդեցության լծակները և այլն: Գաղտնիք չէ, որ այս հաղթանակը էապես փոխել է տարածաշրջանի ռազմաքաղաքական հաշվեկշիռը՝ հոգուտ հայկական կողմի: Հայաստանի Հանրապետության, Արցախի և Սփյուռքի միասնությունն ակներև է դարձրել հայ ժողովրդի ռազմական ներուժը, ինչպես նաև հակառակորդի ագրեսիվությունը զսպելու և պաշտպանական-անվտանգային ռազմավարական օրախնդիր իրավիճակ ձևավորելու կարողությունը: Ընդամեն այդ եռամիասնությունը այսօր էլ շարունակում է մնալ որպես պատերազմը վերսկսելու և ռևանշի հասնելու Ադրբեջանի վերնախավի չիմնավորված ձգտումների ռազմաքաղաքական զսպման ազդու միջոց:

Շուշիի և Ջանհասան-Քյոսալարի ենթաշրջանի գյուղերի ազատագրման օպերացիայի իրագործումը նշանավորել է հայ ժողովրդին հատուկ ռազ-

⁸ Տես ԼՂՀ ՊԲ արխիվ, ռադիոկայանի ապարատային մատյան, հաղորդում ժամը 21.40 առ 10.05.1992 թ.:

⁹ Տես «В городе Шуши состоялось торжественное открытие реконструированной Верхней мечети». «NEWS.am», 14.10.2019 (<https://news.am/rus/news/538808.html>):

մական մտքի փայլուն հաղթանակը, որը լրջագույն մարտական մկրտություն էր ընդհանրապես Արցախի ինքնապաշտպանության ուժերի և մասնավորապես նրա առանձին զորատեսակների ու միավորների համար: Առաջադրված խնդրի համեմատությամբ նվազագույն ուժերի ու միջոցների ներգրավմամբ, ինչպես նաև առադրելի ու համաչափ կորուստներով հայկական ուժերի նվաճած փայլուն հաղթանակը ցույց է տվել օպերացիաներ մշակելու, նախապատրաստելու և իրականացնելու գործում ԻՊՈՒ-ի հրամանատարության ունեցած անվիճելի առավելությունն ադրբեջանական հրամանատարության նկատմամբ, ինչպես նաև հայ ազատամարտիկի բարոյահոգեբանական անհերքելի գերազանցությունը հակառակորդի զինվորի նկատմամբ: Շուշիի ազատագրումը ցուցադրել է հայ ռազմիկին յուրահատուկ որակական բարոյամարտական հատկանիշները, անհնարինը հնարավոր դարձնելու նրա հրաշագործ ունակությունը:

Շուշիի հաղթանակը դարձել է ազգային իղծերի իրականացման, ինքնագիտակցության ու մարտական ոգու բարձրացման, ազգային ինքնության հաստատման խորհրդանիշ:

Ներքաղաքական ասպարեզում ակներև է դարձել մեկ գաղափարի (տվյալ պարագայում Շուշիի ազատագրման) շուրջ համայն հայության համախմբման հնարավորությունը, որի մասնակի իրականացումը, թերևս, հաղթանակի գրավականներից մեկն էր: Այդ գաղափարի կենսագործումը կարելի է համարել մեկնակետ Արցախի Հանրապետության անկախության ամրապնդման և պետականության կերտման համար: Անկասկած, Շուշիի ազատագրումից հետո ավելի ամբողջական ու լիարժեք դարձավ Արցախի Հանրապետության անկախությունը:

Ռազմական անվտանգության, հակառակորդի վտանգավոր կրակակետերի ու ռազմահենադաշտերի վնասագերծման անհրաժեշտությունից բխող իրադարձությունների պատճառահետևանքային կապի համատեքստում մեծ է Շուշիի ազատագրման նշանակությունը ոչ միայն Արցախի հայ ազգաբնակչության ֆիզիկական գոյության ապահովման, այլև երկու հայկական հանրապետություններին պարտադրված պատերազմում ռազմական նախաձեռնությունը տիրելու գործում:

Շուշիի ու մայրաքաղաքին հարակից ադրբեջանական կրակակետերի ճնշումից և վտանգավոր հենակետերի վնասագերծումից հետո պատերազմի բնույթը փոխվել է: Եթե մինչ այդ Արցախի Հանրապետության ներսում մղվել է հայրենական պատերազմ, որը նպատակաուղղված էր ներքին թշնամուց ձերբազատմանը, ապա Շուշիից հետո պատերազմն ընդունեց ԽՍՀՄ փլուզման հետևանքով միութենական նախկին հանրապետություններից մեկի՝ ԱդրխՍՀ վարչական տարածքում օրինաչափորեն ձևավորված երկու պետությունների՝ Ադրբեջանի Հանրապետության և Արցախի Հանրապետության միջև ռազմական հակամարտության բնույթ, և մարտական գործողությունները տեղափոխվեցին սահմանային բնագծեր¹⁰:

¹⁰ Տես Հ. Ս. Քղթանջյան, Ղարաբաղյան հակամարտության լուծման առանձնահատ-

Փայլուն ռազմական հաջողությունը հնարավորություն ընձեռեց կանխելու մարդասիրական աղետը: Շուշիում հակառակորդի ծավալած կրակակետերից ու ռազմահենադաշտից Արցախի մայրաքաղաքի և շրջակա խաղաղ հայկական բնակավայրերի մշտական հրթիռահրետակոծումները այդպիսի աղետի էին հասցրել տասնյակ հազարավոր մարդկանց, հիմնականում՝ ծերերի, կանանց ու երեխաների...

Արցախի Հանրապետության գրեթե քառամյա շրջափակումը և Ստեփանակերտի պաշարումը տասնյակ հազարավոր բնակիչների դատապարտել էին սովի, համաճարակների, հարկադրված նկուղային կյանքի: Տնտեսությունը և ընդհանրապես կյանքը կաթվածահար էին եղել ջրի, էլեկտրականության և գազի մատակարարման չարանենգ խափանման պատճառով: Դրանք հետևանք էին Ստեփանակերտի ոչնչացման անսքող նպատակով ձեռնարկված կանոնավոր հրթիռահրետանային կետային հարվածների ու հետազորային հարձակումների: Որպես անհերքելի վկայություններ կարող ենք հիշատակել Ստեփանակերտի դաժան հրթիռահրետակոծությունների գերխիտ ժամանակագրությունը և Շուշիի ազատագրումից հետո տեղի եկեղեցիներում և շենքերի նկուղներում հայտնաբերված հազարավոր հրթիռներն ու արկերը:

Այս առումով ինչպես Արցախի հայ ազգաբնակչության, այնպես էլ համայն հայության համար Շուշիի ազատագրման օպերացիայի արդյունքների կենսական նշանակությունն անհնար է գերազնահատել: Վերացավ Արցախի բնակչության գլխին դամոկլյան սրի պես կախված բնաջնջման իրական սպառնալիքը և ստեղծվեցին բարենպաստ պայմաններ գոյատևման ու կենսապահովման միջոցների հայթայթման համար: Շուշիում հակառակորդի կենտրոնացած մեծ ուժերի ու միջոցների հետագա ծավալումը անմիջական սպառնալիք կստեղծեր Հայաստանի Հանրապետությանը, որը համայն հայության պետականություն ունենալու դարավոր երազանքի մարմնացումն է:

Շուշիի հաղթանակի հաղորդած համընդհանուր լիցքը, այդ կարևոր իրադարձության բարենպաստ հետևանքներից զրկվելու տագնապն օգնեցին արցախահայությանը դիմանալու, տոկալու 1992 թ. հունիսի 12-ին հակառակորդի նախաձեռնած լայնածավալ ագրեսիային, Շահումյանի ու Մարտակերտի անկմանը, մայրաքաղաքի ու մյուս խաղաղ բնակավայրերի վերսկսված անմարդկային ռմբահարումներով ու հրթիռահրետակոծություններով պատճառվող աներևակայելի տառապանքներին ու զրկանքներին:

Շուշիի օպերացիայում ձեռք բերված հաղթանակը համաշխարհային հասարակայնությանը ցույց տվեց ինքնորոշման իրավունքի իրացման համար ծավալված պայքարի ամբողջ լրջությունը: Շուշիի ազատագրումը նաև նշանավորեց իրարից անջատ գործող ինքնապաշտպանական ջոկատներից

կությունները (քաղաքագիտական փորձաքննություն): «Ղարաբաղ. հակամարտություն-համաձայնություն» (պատմաքաղաքագիտական ժողովածու): Հրատարակիչ՝ ՀՀ ՊՆ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես: Ե., 1997, էջ 5-11:

ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի՝ նոր հաստիքակազմակերպական կառուցվածքի անցման և արագ զարգացման փուլի սկիզբը¹¹:

Իր իսկական տերերին վերադարձված քաղաքը վերջին 28 տարիների ընթացքում վերակառուցվել և նոր տեսք է ստացել: Հիմնովին նորոգվել կամ կառուցվել են բազմաթիվ շենքեր, պատմաճարտարապետական հուշարձաններ, վերաբացվել են միջնակարգ ու բարձրագույն ուսումնական հաստատություններ, մանկապարտեզներ, մշակութային ու մարզական օջախներ, զբոսաշրջային ենթակառուցվածքներ, հաղորդակցության ուղիներ, կենցաղային ու սոցիալական ապահովության օբյեկտներ: Շուշին օրեցօր շենանում է, մշտական բնակչության և զբոսաշրջիկների քանակական աճը դինամիկ է:

Տարեցտարի Շուշիի ազատագրումն ավելի ու ավելի է իմաստավորվում՝ տարիների հեռավորությունից պատկերանալով նոր կողմերով ու նշանակությամբ: Շուշիի ազատագրման օրը դարձել է եռակի տոն՝ միավորվելով Արցախի Պաշտպանության բանակի օրվա և գերմանական ֆաշիզմի նկատմամբ տարած հաղթանակի հետ: Պատահական չէ, որ Երկրպագահ կամավորականներն իրենց նոյեմբերյան համագումարում մայիսի 8-ը հռչակել են որպես Երկրպագահի օր, քանի որ 1992 թ. մայիսի 8-ի երեկոյան Շուշիի ազատագրումն արդեն իրական էր, և այդ գործում ոչ քիչ ջանք ու ներդրում ունեցան կամավորական-ազատամարտիկները¹²:

Երախտապարտ քաղաքացիներն ամեն տարի մեծարում են իրենց քաջորդիներին, գնահատում նրանց սխրանքը, գլուխ խոնարհում բոլոր նահատակների անմար հիշատակի առջև և զարնանային թարմ ծաղիկներ դնում Շուշիի տանկ-հուշարձանի, Շուշիի ազատարարներին նվիրված խաչքարերի պատվանդաններին:

ԼՂՀ ՊՆ Նախագահությունը 1993 թ. մայիսի 7-ի որոշմամբ ընդունել է «Շուշիի ազատագրման համար» մեդալ հիմնելու որոշման նախագիծը¹³: «Շուշիի ազատագրման համար» մեդալի ուրվանկարի հեղինակը գծանկարիչ Ռաֆայել Ազիզյանն է¹⁴:

Ըստ ԱՀ Նախագահի աշխատակազմի քարտուղարության պարզների և կոչումների բաժնի տրամադրած տվյալների՝ «Շուշիի ազատագրման համար» մեդալով մինչև 2020 թ. ապրիլի 30-ը ներառյալ պարգևատրվել է 1679 մարդ, իսկ 1994 թ.՝ ևս 67 մարդ ԼՂՀ ՊՆ նախագահության երեք հրամանագրերով¹⁵:

¹¹ Տես «Մարտիկ», 1993 թ., հմ. 7:

¹² Տես «Հայաստանի Հանրապետություն», 1998 թ., հմ. 90:

¹³ Տես ԼՂՀ ԱԺ ընթացիկ արխիվ, ԼՂՀ ՊՆ նախագահության 1993 թ. մայիսի 7-ի նիստի հմ. 97 արձանագրություն:

¹⁴ Տես նույն տեղում, ԼՂՀ ՊՆ նախագահության 1994 թ. հուլիսի 19-ի նիստի հմ. 156 արձանագրություն (մեդալի էսքիզի հեղինակին պարգևատրելու մասին):

¹⁵ Տես Մ. Ա. Հարությունյան, Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, էջ 145–146: Մոտ 1000 մարդու այդ մեդալով պարգևատրելու ԼՂՀ ՊՆ նախագահության հետագա հրամանագրերը, վերհանված անձնությունների պատճառով, կասեցվել են:

Ներկա ու գալիք սերունդներն այլևս երբեք չպետք է կորցնեն իրենց հա-
յաշունչ ոգին ու կերպարանքը վերստացած Շուշին և պարտավոր են այն
պահել անառիկ, քանի որ առանց հայոց Շուշիի կիսաթարվի Արցախի պատ-
մաիրավական զարգացման, հոգևոր, մշակութային, ռազմաքաղաքական,
սոցիալ-տնտեսական և կյանքի մյուս ոլորտների բնականոն ընթացքը:

ОБ ИТОГАХ И ИСТОРИЧЕСКОМ ЗНАЧЕНИИ ОСВОБОЖДЕНИЯ ГОРОДА ШУШИ

*М. А. АРУТЮНЯН, майор запаса, кандидат исторических наук, доцент,
руководитель научного центра "Качар"*

РЕЗЮМЕ

Разработка и осуществление военной операции по освобождению города Шуши и сел Джангасан-Кёсаларского субрегиона ознаменовали блестящую победу уникальной военной мысли армянского народа, ставшую серьезным боевым крещением для Сил самообороны Арцаха, в особенности для его отдельных родов войск.

Наиболее очевидными результатами освобождения Шуши стали: уничтожение укрепленного вражеского плацдарма, с которого непрерывному ракетно-артиллерийскому обстрелу подвергались мирные жители Степанакерта и близлежащих армянских поселений и открытие Лачинского гуманитарного коридора, благодаря которому блокадный Арцах установил спасительную связь с Арменией.

С точки зрения стратегии удалось решить исключительно сложную задачу, а затем закрепить шушинскую победу, своевременно и эффективно отразив атаки противника на некоторых рубежах обороны Аскеранского, Мартакертского и Гадрутского административных районов.

Однако, историческое значение освобождения Шуши следует рассматривать не только в контексте Арцаха и даже Армении, а всего армянства.

Эта блестящая победа вернула армянскому народу исторический город-крепость, олицетворявший его славное духовное и культурное прошлое. Освобождение Шуши пресекло многолетнюю азербайджанскую политику присвоения исторических памятников других народов и создало благоприятные условия для их восстановления, обеспечения их доступности для посетителей, о чем, в частности, свидетельствует открытие персидской мечети в 2019 году.

ON THE OUTCOMES AND HISTORICAL SIGNIFICANCE
OF THE LIBERATION OF THE CITY OF SHUSHI

*M. A. HARUTYUNYAN, Major (Ret.), PhD in History, Associate Professor,
Head, "Katchar" Scientific Center*

SUMMARY

The development and implementation of the military operation for liberation of Shushi and the settlements in Janhasan-Kyosalar subregion marked the brilliant victory of the Armenian people's unique military thought, which became a baptism of fire for the Artsakh Self-Defense Forces and for certain branches in particular.

The most vivid results of Shushi liberation were the annihilation of the enemy's reinforced foothold from which the non-combatants of Stepanakert, and Armenian adjacent settlements were constantly exposed to rocket artillery fire, and the recovery of the Lachin Humanitarian Corridor, through which the blockaded Artsakh established a life-saving communication with Armenia.

In terms of strategy, timely and effectively repelling the enemy attacks in some lines of defense in the administrative districts of Askeran, Martakert and Hadrut, an extremely difficult task was successfully solved, and the victory in Shushi was secured.

However, the historical significance of Shushi's liberation should be regarded not only in the context of Artsakh and even Armenia, but also in the context of the entire Armenian world community.

This brilliant victory returned the Armenians the historic fortress city that embodied the spiritual and cultural glorious past of the nation. The liberation of Shushi put an end to Azerbaijan's perennial policy of appropriation of other people's historical monuments and established favourable conditions to restore them, to make them publicly available, a particular evidence of which is the opening of the Persian Mosque in 2019.

**ՈՒՆԻՏԱՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)**

*Ա. Ա. ԱՎԵՏՅԱՆ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Ռազմավարական առաջնորդության
և կառավարման հետազոտությունների կենտրոնի
գիտնական-վերլուծաբան*



Պետության տարածքը, որը նրա բնութագրական հատկանիշներից մեկն է, պետական կառավարման կարևորագույն օբյեկտներից է*։ Միևնույն ժամանակ, տարածքային կառավարման համակարգը պետության ազգային անվտանգության ապահովման կարևոր հաստատություններից է, քանի որ տարածքային և տեղական ինքնակառավարման կազմավորումներում պետական կառավարումը կատարվում է հենց այս համակարգի միջոցով։ Բացի այդ, հիմնվելով համակարգային տեսության հիմնադրույթների վրա, կարող ենք նշել, որ պետության (համակարգ) գոյությունը,

անվտանգությունն ու զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է զարգացնել նրա տարածքային կազմավորումները (տարրեր)։

Տարածքային կառավարման արդյունավետ համակարգի ստեղծումը հատկապես մեծ կարևորություն ունի փոքր տարածք և սուղ ռեսուրսներ ունեցող պետությունների դեպքում (ինչպիսին Հայաստանի Հանրապետությունն է), քանի որ հնարավորություն է տալիս արագ և համարժեք կերպով դիմակայելու ազգային անվտանգության սպառնալիքներին¹։ Ուստի Հայաստանի Հանրապետության կայուն, համաչափ ու անվտանգ զարգացման համար անհրաժեշտ է մեծացնել կառավարման համակարգերի արդյունավետությունը։

Արդյունավետության մեծացման ժամանակ կարևոր է իրականացնել այնպիսի բարեփոխումներ, որոնցով ապահովվի ազգային ինքնության պահպանումը, և որոնք հենված լինեն առավելապես ազգային ներուժի վրա՝

* Պետություն է կոչվում քաղաքականորեն կազմակերպված հասարակությունը, որն ունի իշխանության հաստատությունների, իրավական նորմերի ու տնտեսական կապերի համակարգ, ինչպես նաև ինքնիշխանական տարածք (տես *Ղ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան*: Ե., 2015, էջ 499)։

¹ Տես Հ. Ս. Քոթանջյան, Պետության տարածքային պաշտպանության կազմակերպման հարցի շուրջ՝ Իսրայելի օրինակով։ «ՀԲ», 2009, հմ. 3 (էլեկտրոնային տարբերակը՝ <https://razmavaraget.files.wordpress.com/2011/09/2009-3.pdf>)։

միջազգային հանրության փորձի և աջակցության օգտագործմամբ: Այդ բարեփոխումների ձգձգումը կամ ձախողումը անմիջական սպառնալիքներ են ազգային անվտանգության համար²:

Կապիտալի (մարդկային, ֆինանսական և այլ) կենտրոնացման ու բեռնացման, ուրբանիզացման, համընդհանրացման, 21-րդ դարի գիտատեխնիկական նվաճումների հետևանքով բացահայտվում են պետական կառավարման համակարգերում եղած բազմաբնույթ թերություններ: Ուստի և պատահական չէ, որ նշված պրոբլեմով և դրա լուծման օպտիմալ ուղիների, այսինքն՝ տարածքային կառավարման արդյունավետ համակարգի, մշակմամբ զբաղվել և զբաղվում են այնպիսի հեղինակավոր գիտնականներ, ինչպիսիք են ակադեմիկոսներ Ա. Աղանբեկյանը (Ռուսաստան), Յու. Սուվարյանը (Հայաստան), պրոֆեսոր Մ. Փորտերը (ԱՄՆ) և ուրիշներ: Սակայն գիտնականներն իրենք էլ են նշում, որ չկա տարածքային կառավարման մի այնպիսի համապիտանի համակարգ, որն արդյունավետ կերպով կգործի ցանկացած պետությունում³:

Հայաստանի Հանրապետությունում, հայ հասարակության և պետության ձևավորման տնտեսական ու պատմաաշխարհագրական և զարգացման այլ առանձնահատկությունների հաշվառմամբ, 1995 թվականի հուլիսի 5-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրությամբ ու նույն թվականի նոյեմբերի 7-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով դրվեցին ունիտար պետության հիմքերը: Որպես արդյունք՝ հանրապետության նախկին 37 շրջանների և 4 քաղաքների (Գյումրի, Վանաձոր, Դիլիջան, Երևան) հիմքի վրա կազմավորվեցին պետական կառավարմամբ 10 մարզեր (Արագածոտն, Արարատ, Արմավիր, Գեղարքունիք, Կոտայք, Լոռի, Շիրակ, Սյունիք, Վայոց ձոր և Տավուշ) և մարզի կարգավիճակով տեղական ինքնակառավարմամբ մեկ քաղաք՝ Երևանը (առանձնացումը պայմանավորված է սոցիալ-տնտեսական, պատմական ու պետական նշանակությամբ): Այսպիսով՝ սահմանադրական հիմքերի վրա դրվեց կառավարման մի համակարգ, որը հետագայում պետք է դառնար պետության անվտանգության ապահովման կարևոր միջոցներից մեկը:

Իսկ տարածքային կառավարման մարմինների՝ մարզպետների, մարզպետարանների գործառույթներն ու գործունեության ուղղությունները սահմանվեցին ՀՀ Նախագահի 1997 թ. մայիսին ստորագրված «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ 728 հրամանագրով և դրա հետագա լրացումներով:

² Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007 (էլեկտրոնային տարբերակը՝ <https://razmavaraget.files.wordpress.com/2019/07/national-security-strategy-of-the-republic-of-armenia.pdf>):

³ Տես «Абел Аганбегян: «В Армении есть все возможности для улучшения экономического развития»». «Газета.РАУ», 01.11.2016 (<http://gazeta.rau.am/index.php?bid=2655>):

Ներդրվող ունիտար տարածքային կառավարման համակարգում նախատեսվում էին.

- պետական կառավարման մարմինների միասնական աստիճանակարգություն,
- օրենսդրության միասնակարգակ համակարգ,
- միասնական դրամական միավոր,
- ֆինանսների վերաբաշխման կենտրոնացված համակարգ, և այլն:

Գործող համակարգում մի քանի անգամ ձեռնարկվեցին բարեփոխումներ, որոնք նպատակաուղղված էին տարածքային կառավարման միավորներին տրվող ազատությունների ընդլայնմանը, որը պետք է հանգեցներ այդ կազմավորումների ինքնավարության աստիճանի բարձրացման, հետագա զարգացման համար կայուն հիմքերի ձևավորման: Սակայն այդ բարեփոխումների իրականացումը դժվար գործ էր, քանի որ դրանցում հաշվի չէր առնվում այն հանգամանքը, որ մարզպետարանները փաստացի կերպով պատրաստ չէին իրացնելու իրենց տրվող լիազորությունները: Որպես արդյունք՝ ստեղծվեց այնպիսի իրավիճակ, երբ, մի կողմից՝ օրենսդրական դաշտը տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրում էր զգալի ռեսուրսներ ու լիազորություններ, սակայն մյուս կողմից՝ ամբողջ կառավարումը շարունակում էր մնալ կենտրոնական իշխանության ձեռքում: Տվյալ վիճակն էլ ավելի խորացավ 2007–2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո, երբ կտրուկ կերպով անկում ապրեց տնտեսության շարժիչ ուժը՝ շինարարությունը: Վերը նշված խնդիրները ներկայացվում են նաև «Հայաստանի Հանրապետության 2016–2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարությունում», որտեղ նաև նշվում է, որ սահմանադրական փոփոխություններն առաջ են բերում տարածքային կառավարային հարաբերությունների վերանայման անհրաժեշտություն⁴:

Իրագործված համակարգային բարեփոխումները մի շարք պատճառներով տվեցին անհրաժեշտ արդյունք, իսկ նշված ճգնաժամն էլ ավելի վատթարացրեց իրավիճակը՝ պետության առաջ դնելով նոր պրոբլեմներ, որոնցից մի քանիսը ներկայացնում ենք ստորև.

- տարածքային զարգացումն ապահովելու նպատակով պետության հատկացրած ֆինանսական միջոցները անմիջական ազդեցություն չեն գործում մարդկանց կենսամակարդակի և կյանքի բարեկեցության վրա,
- մարզերի սոցիալ-տնտեսական զարգացումը անհամաչափ է և կայուն չէ,
- վարչատարածքային միավորների ու կենտրոնական իշխանության մարմինների միջև հաղորդակցային հոսքերն ու ենթակառուցվածքները անհամաչափ են, և չկան թափանցիկություն ու հաշվետվողականություն,

⁴ Տես «Հայաստանի Հանրապետության 2016–2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարություն»: ՀՀ կառավարության 2016 թ. հունիսի 29-ի նիստի հմ. 29 արձանագրային որոշման հավելված, էջ 7–8 (https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2016/07/ardzanagrayinNrq064.pdf):

- պետական կենտրոնական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև չկան փոխվստահություն և հավասար գործընկերային փոխհարաբերություններ:

Նշված պրոբլեմներն առաջին հերթին հարվածի տակ են դնում պետության տնտեսական անվտանգությունն ու թելադրում են տարածքային կառավարման համակարգի արդիականացման անհրաժեշտությունը և իրականացման համար պահանջում պետության բոլոր ռեսուրսների (մարդկային, ֆինանսական, նյութական և այլն) համախմբում ու արդյունավետ օգտագործում:

Մանրամասնորեն ուսումնասիրենք նշված պրոբլեմները և առաջարկենք դրանց լուծման՝ մեր կարծիքով օպտիմալ ուղիները:

Սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների ոլորտում պետության կատարած ներդրումները հիմնականում միտված են եղել անհատի սպառման հնարավորությունների ընդլայնմանը: Հատկացվող միջոցների նպատակային ծախսման համար անհրաժեշտ է աղքատության հաշվարկման հիմքում դնել ոչ թե անհատի կատարած սպառումը, այլ ՄԱԿ-ի ընդունած՝ մարդկային կապիտալի զարգացման սկզբունքները (կրթություն, առողջություն և երկարակեցություն, շրջակա միջավայրի պաշտպանվածություն և այլն)⁵:

Ներկայացվող սկզբունքները ենթադրում են մարդկային կապիտալի զարգացում՝ տարածքում բարեկեցիկ կյանքի հաստատման, որոշակի մակարդակի կրթության և առողջապահության ապահովման, գործազրկության նվազեցման միջոցով: Եվ քանի որ ՀՀ-ում պաշտոնական վիճակագրությունը տարածքային կտրվածքով ՀՆԱ-ն հաշվի չի առնում, մշակված չեն մարզերի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված նպատակային կառավարման օպտիմալ բաղադրիչները և մշտազննման չափանիշները, ապա անհրաժեշտություն է առաջանում գնահատելու տարածքներում ստեղծված հավելյալ արժեքի վրա կատարված ծախսերի ազդեցության չափը, ինչը մասնագետներին և անկախ փորձագետներին հնարավորություն կտա գնահատելու իրավիճակը և պետության հետ համատեղ մշակելու զարգացման ռազմավարություններ՝ ըստ առանձին մարզերի⁶:

Տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափության և անկայունության պրոբլեմ գոյություն ունի նույնիսկ զարգացած պետություններում: Եվրոպայում, օրինակ, արդեն նախորդ տասնամյակի վերջին սկսել են հրաժարվել նախկինում լայնորեն տարածված «կենտրոնականություն»

⁵ Տես «Реальное богатство народов: пути к развитию человека». Доклад о развитии человека 2010. 20-е, юбилейное издание. ООН, 2010 (http://www.un.org/ru/development/hdr/2010/hdr_2010_complete.pdf); «Труд во имя человеческого развития». Доклад о человеческом развитии 2015. ООН, 2015 (http://hdr.undp.org/sites/default/files/hdr15_standalone_overview_ru.pdf):

⁶ Տես «Հայաստանի Հանրապետության 2016–2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարություն», էջ 12:

գաղափարից (միացյալ կառավարչական կենտրոնից ստացվող որոշումների կատարում)⁷:

Վիճակագրական տվյալներից պարզ է դառնում, որ տնտեսության հիմնական ճյուղերը (ինչպես նաև մարդկային և ֆինանսական ռեսուրսների մի զգալի մասը) կենտրոնացած են Երևանում (մեծ թվով ճյուղերում՝ մինչև 85–90 %), ինչը տնտեսության և առևտրային անվտանգության ապահովման տեսանկյունից կարող է առաջ բերել լուրջ խնդիրներ⁸:

Եկամտային աղքատությունը նվազեցնելու և մարզերի տնտեսական զարգացման անհամաձայնությունները մեղմելու նպատակով կարելի է նաև դիտարկել պետության կողմից յուրաքանչյուր մարզի տնտեսական ներուժի ուսումնասիրության և առանձին դեպքերում գործարարներին ուղղակի և անուղղակի աջակցության նպատակով ֆինանսական միջոցների հատկացման հնարավորությունը՝ ապահովելով դրանց հասցեական ու նպատակային օգտագործումը⁹:

Տարածքների համաչափ և կայուն զարգացման արդյունավետ լուծումներ է առաջարկում նաև Մ. Փորտերն իր «կլաստերային» տեսությամբ: Նա տարածքների զարգացումը տեսնում է այնտեղ գործող ընկերությունների շրջանակում արտադրական շղթաների ստեղծման ու դրանց զարգացման ձևով: Տարածքների փոխկապված և կայուն զարգացումը կհանգեցնի ազգային մրցունակության մեծացմանը և անվտանգային միջավայրի առողջացմանը⁹: Այս առումով հատկապես կարևոր է պետության վարած տնտեսական և տարածքային կառավարման քաղաքականությունը, քանի որ կլաստերային զարգացման մոդելով պահանջվում է ունենալ տարածքային կառավարման հնարավորինս ձկուն մեխանիզմներ:

Նշված վերջին երկու պրոբլեմի առնչությամբ առաջարկում ենք ձեռնարկել ընդգրկուն և համակարգային փոփոխություններ, այդ թվում նաև օրենսդրական ոլորտում:

Պետական կառավարման թափանցիկության ապահովման համատեքստում մեծանում է տարածքային կառավարման միավորում ընդգրկված համայնքների բնակիչների առջև հաշվետվողականությունը: Դա կարող է զգալիորեն մեծացնել պետություն–քաղաքացի փոխհարաբերությունների արդյունավետությունը, քանի որ իրենց համայնքներում քաղաքացիներն առաջին հերթին ու ավելի մեծ չափով են առնչվում տեղական ինքնակա-

⁷ Տես *Oliver H. Woshinsky*. Explaining Politics: Culture, Institutions, and Political Behavior. N.Y., 2008, P. 141:

* Ոխումնասիրվել է ՀՀ ՎԿ հրապարակումը. 2019 թ. Հայաստանի վիճակագրական տարեգիրք:

⁸ Տես Վ. Բ. *Տրյունդյան*, ՀՀ Տարածքային կառավարման համակարգի կատարելագործումը պաշտպանությանը պետության պատրաստման համատեքստում: «ՀԲ», 2009, հմ. 3 (էլեկտրոնային տարբերակը՝ <https://razmavaraget.files.wordpress.com/2011/09/2009-3.pdf>):

⁹ Տես «Абел Аганбегян: «В Армении есть все возможности для улучшения экономического развития»»:

ռաավարման մարմինների հետ, որոնք ի վիճակի չեն դառնալու պետության ու քաղաքացիների միջև գործուն «կամուրջ»:

Կառավարման գծային համակարգը, որը ձևավորվել էր անցած դարում, ժամանակի ընթացքում սպառել է իր բոլոր ռեսուրսները և այժմ չի համապատասխանում պետական տարածքային կառավարման արդի պահանջներին: Ռեստի անհրաժեշտ է կարճ ժամկետներում փոխել գործող համակարգի ընդհանուր գործունեության փիլիսոփայությունը:

Տարածքային կառավարման թափանցիկության ու հաշվետվողականության մեծացման, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխվստահության ու գործընկերային փոխհարաբերությունների զարգացման համար նպատակահարմար է մարզպետի պաշտոնը դարձնել ընտրովի:

Հաշվի առնելով նման ընտրությունների կազմակերպման աշխատատարությունը՝ առաջարկում ենք ստեղծել *համայնքների ավագանիների մարզային խորհուրդ*, որն էլ կկատարի կառավարության ներկայացրած թեկնածուներից (առնվազն 3 թեկնածու) մարզպետի ընտրությունը: Յուրաքանչյուր թեկնածու պարտավոր կլինի ներկայացնել մարզի զարգացման ծրագիր, որը պետք է համահունչ լինի կառավարության և տեղական ինքնակառավարման կազմավորումների զարգացման ծրագրերին: Ծրագրերի քննարկումից հետո միայն ավագանին փակ քվեարկությամբ կընտրի մարզպետին: Սույն համակարգը հնարավորություն կտա ապակենտրոնացնելու տարածքային կառավարման համակարգը և կբարձրացնի մարզպետների հաշվետվողականության աստիճանը, քանի որ յուրաքանչյուր տարի պարտավոր կլինեն քննարկման ներկայացնելու նաև կատարված աշխատանքների հաշվետվությունը:

Կարծում ենք, որ համակարգի գործունեության նպատակով նորմատիվ-իրավական դաշտի ստեղծման համար անհրաժեշտ են հետևյալ օրենսդրական փոփոխությունները.

- «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքում ավելացնել նոր գլուխ՝ «Համայնքների ավագանիների մարզային խորհուրդը և դրա լիազորությունները», որտեղ ամրագրվի խորհրդի կազմման ու մարզպետի ընտրության կարգը,
- նույն օրենքի 1-ին գլխի 4-6-րդ հոդվածներում փոփոխությունների միջոցով ամրագրել մարզպետի նոր լիազորությունները, խորհրդի առջև հաշվետվողականության սկզբունքներն ու կարգը:

Առաջարկում ենք նաև փոփոխություններ կատարել մարզպետի և մարզպետարանի գործառույթներում, քանի որ մինչ օրս քաղաքացիներն ու տեղական ինքնակառավարման մարմինները նրանց ընկալում են որպես պետական վերահսկող և կառավարող մարմին՝ մշտապես փորձելով նրանց հետ համաձայնեցնել իրենց գործողությունները: Մինչդեռ այդ հաստատությունը կոչված է իրեն վստահված տարածքում իրականացնելու պետական քաղաքականություն և միմյանց «կապելու» համայնքներն ու պետական կառավարման մարմինները՝ ստեղծելով «համայնք-պետություն-մասնավոր

հատված» արդյունավետ համագործակցության հարթակ, որտեղ համայնքները համագործակցեն ինչպես միմյանց, այնպես էլ պետության ու մասնավոր հատվածի հետ (որպես օրինակ կարելի է նշել Ֆրանսիան, Նիդեռլանդները):

Առաջարկվող փոփոխությունները անհիմաստ կլինեն, եթե շարունակի գործել մարդկային ռեսուրսների կառավարման ներկայիս համակարգը: Ուստի անհրաժեշտ պետք է համարել նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մշակմամբ մարզպետարանների աշխատողների շարժունակության և վարձատրության նոր հայեցակարգերի ներդրումը, հայեցակարգեր, որոնցով թույլ կտրվի, օրինակ, Երևանի բարձր որակավորում ունեցող մասնագետներին որոշակի ժամկետով աշխատել մարզերում՝ ավելի բարձր վարձատրությամբ (կախված հեռավորությունից), և հակառակը: Դրա շնորհիվ փորձի փոխանակման միջոցով մարզերում կբարելավվեն հանրային ծառայությունների որակը և աշխատողների հմտությունը:

Տարածքային կառավարման համակարգի արդիականացումը հրամայական է ոչ միայն ՀՀ անվտանգության ապահովման տեսակետից, այլև ընդհանրապես պետության կայուն և համաչափ զարգացման համար պարտադիր նախապայման: Սուղ ռեսուրսների պայմաններում թույլ զարգացած տարածքային կազմավորումների աջակցմանը միտված ծրագրերի անարդյունավետությունը վնասում է ամբողջ պետության տնտեսությանը: Ուստի անհրաժեշտ է իրագործվելիք բարեփոխումներն ու ծրագրերը դիտարկել ռազմավարական տեսանկյունից (որպեսզի դրանք միավորվեն և ստանան ռազմավարական զարգացման ծրագրի կարգավիճակ): Դրա շնորհիվ այդ ծրագրերը, նշված խնդիրների բազմակողմանիության հաշվառմամբ, կնպաստեն պետության մրցունակության և ազգային անվտանգության մակարդակի հետագա բարձրացմանը:

ГОСУДАРСТВЕННОЕ УПРАВЛЕНИЕ

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ФУНКЦИОНИРОВАНИЯ СИСТЕМЫ ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ В УНИТАРНОМ ГОСУДАРСТВЕ (НА ПРИМЕРЕ РА)

*А. А. АВЕТЯН, ученый-аналитик Центра исследований стратегического
руководства и управления НИУО МО РА*

РЕЗЮМЕ

Создание эффективно функционирующей системы территориального управления имеет особенно важное значение для государств с маленькими территориями и ограниченными ресурсами (как РА), поскольку обеспечивает возможность быстрого и эквивалентного противостояния угрозам национальной безопасности. Поэтому для

стабильного, равномерного и безопасного развития РА необходимо повысить эффективность системы управления. Данной цели можно достичь путем реформ, нацеленных на повышение уровня национальной безопасности и конкурентоспособности РА при условии сохранения национальной идентичности и с опорой преимущественно на национальный потенциал. В то же время, реализуемые реформы и программы должны обеспечивать возможность их объединения с приданием им статуса программы стратегического развития.

PUBLIC ADMINISTRATION

SOME ISSUES OF FUNCTIONING OF THE SYSTEM OF TERRITORIAL GOVERNANCE WITHIN A UNITARY STATE (BY THE CASE OF THE RA)

*A. A. AVETYAN, Research Fellow, Centre for Research on Strategic Leadership
and Management, NDRU, MOD, RA*

SUMMARY

Setting up an efficiently functioning system of territorial governance is of key importance for states with small territories and limited resources (like the RA), as it provides an opportunity to address the threats to the national security in quick and equivalent manner. Hence, for the stable, even and secure development of the RA it is necessary to improve the efficiency of the governance system. This goal can be achieved through reforms aimed at the improvement of the RA's national security and competitiveness with the proviso of preserving national identity and with reliance primarily on the national potential. However, the implemented reforms and programs should provide for the possibility of their integration giving them the status of a strategic development program.

**ԱՂՐԲԵՋԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՇՈՒՆԿԱՐՆԵՐԸ
ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՇՆԱՐՀԱՅԻՆ
ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍՈՎ**

*Ա. Գ. ԴԱՎԹՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի Տարածաշրջանային ռազմավարական
վերլուծությունների կենտրոնի ՌԽՄԽ գիտնական-վերլուծաբան*



**ԱՂՐԲԵՋԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Համառոտակի ներկայացնենք Աղրբեջանի տնտեսության ընդհանուր բնութագիրը: Առաջին հայացքից թվում է, թե վիճակը բարվոք է, սակայն, ինչպես ցույց կտա մեր հետագա վերլուծությունը, իրականում գոյություն ունեն լուրջ խտրեր:

Աղրբեջանի թե՛ աշխարհագրական դիրքի, թե՛ բնական ռեսուրսների հաշվառմամբ Արժույթի միջազգային հիմնադրամը նրա տնտեսությունը բնութագրում է որպես զարգացող¹: ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական գործակալությունը ևս Աղրբեջանին տեղադրել է զարգացող պետությունների շարքում²: Անվանական ՀՆԱ-ի ցուցանիշներով նա աշխարհում 71-րդ տեղում է, համաշխարհային մրցունակության ինդեքսով՝ 58-րդ տեղում, իսկ Համաշխարհային բանկի գործարարության «Դուինգ Բիզնես» (*“Doing Business”*) ցանկում զբաղեցնում է 25-րդ տեղը: Աղրբեջանի տնտեսական ազատության վարկանիշը 65,4 է՝ 2019 թ. նրան ապահովելով տնտեսական ազատություն ունեցող պետությունների 60-րդ հորիզոնականը³:

Ինչ վերաբերում է Աղրբեջանի արտաքին առևտրի կառուցվածքին⁴, ապա այն 2018 թ. կազմել է 20,1 մլրդ ԱՄՆ-ի դոլար, որի 62,1 %-ը բաժին է հասնում եվրոպական պետություններին, 32,1 %-ը՝ ասիական, 4,3 %-ը՝ հյուսիսամերիկյան, 1,3 %-ը՝ աֆրիկյան, 0,01 %-ը՝ լատինամերիկյան պետություններին, 0,005 %-ը՝ Օվկիանիային, այդ թվում՝ Ավստրալիային:

Արտահանման ապրանքային կառուցվածքի մասին խոսելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ դրանում մեծ տեսա-

¹ Տես *“Country Composition of WEO Groups”*, October 2018 (<https://www.imf.org/external/pubs/ft/weo/2018/02/weodata/groups.htm>):

² Տես *“The World Factbook”* (<https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/fields/207.html>):

³ Տես *“Azerbaijan”* (<https://www.heritage.org/index/country/azerbaijan>):

⁴ Տես *“Azerbaijan trade statistics”*. *“WITS”* (<https://wits.worldbank.org/CountryProfile/en/AZE>):

կարար կշիռ ունեն էներգակիրները (նավթ, գազ և այլն), իսկ գյուղատնտեսական արտադրանքը այնքան էլ մեծ տեսակարար կշիռ չունի, ինչը ևս մեկ անգամ վկայում է, որ Աղրբեջանը մեծապես կախված է էներգետիկ ռեսուրսներից, գյուղատնտեսությունը գտնվում է զարգացման ցածր մակարդակում և տեխնոլոգիական ոլորտներում զբաղեցնում է միջինից ցածր դիրք:

Ընդհանուր առմամբ, «Ստանդարտ և Փուրս» (*Standard & Poors*) վարկանիշային կազմակերպությունը, ինչպես նաև Արժույթի համաշխարհային հիմնադրամը կանխատեսում են Աղրբեջանի արտահանման աճ 2020 թ. և 2021 թ. համապատասխանաբար, 4 և 4,2 %-ով: Ընդ որում, 2018–2021 թթ. հունքի և պատրաստի արտադրանքի արտահանման մասնաբաժինը ՀՆԱ-ի ընդհանուր ծավալում կանխատեսվում է մոտ 44 %: Արտաքին առևտրի հաշվեկշռի պրոֆիցիտը 2020 թ. գնահատվում է ՀՆԱ-ի 13,8 %-ը, 2021 թ.՝ 14,5 %-ը⁵:

Աղրբեջանի ղեկավարության նպատակն է միանալ Առևտրի համաշխարհային կազմակերպությանը⁶, պետությունը դարձնել առևտրային ու տարանցիկ հանգույց՝ ներդրումների ներգրավմամբ զարգացնելով ճանապարհային ու երկաթուղային ենթակառուցվածքները, և բազմազանեցնել տնտեսությունը՝ ձերբազատվելով ածխաջրածիններից կախվածությունից: Միևնույն ժամանակ, նախատեսվում է 2025 թվականից հետո ստեղծել ուժեղ մրցունակ և ներառական տնտեսություն, ինչի շնորհիվ կբարելավվեն սոցիալական կեցությունն ու մարդու զարգացումը⁷:

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀՈՍՔԵՐԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ
ԵՎ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ԱՂՐԲԵԶԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՐԱ

2019 թվականին Աղրբեջանում տեղի է ունեցել տնտեսության լճացում և բիզնեսի մենաշնորհայնացում, զործազրկության և գնաձի մեծացում: Կյանքի պայմանները հարևան պետությունների համեմատությամբ ևս վատթարացել են: Չնայած 2019 թ. Աղրբեջանում աշխատավարձերի բարձրացմանը՝ միջին ամսական աշխատավարձը փոքր է, քան այն երկրներում, որտեղ սպառողական զամբյուղի արժեքն ավելի ցածր է, քան Աղրբեջանում⁸: Այս կարգի սոցիալ-տնտեսական խնդիրներին ավելացել է նաև կորոնավիրուսի համավարակի ազդեցության պայմաններում հիմնական հանքահումքային ռե-

⁵ Տես նույն տեղում:

⁶ Տես “The Republic of Azerbaijan and World Trade Organization” (<http://un.mfa.gov.az/content/39>):

⁷ Տես, օրինակ, *Ա. Գ. Ղափթյան*, Նավթի ցածր գների պայմաններում Աղրբեջանի տնտեսական վիճակի և ռազմական արդյունաբերության հիմնախնդիրների գնահատում: «ՀԲ», 2017, հմ. 3 (էլեկտրոնային տարբերակը՝ <https://razmavaraget.files.wordpress.com/2017/12/hb-2017-number-3.pdf>):

⁸ Տես «Азербайджан: Важные экономические события 2019 года», 31.12.2019 (<https://www.turan.az/ext/news/2019/12/free/analytics/ru/121614.htm>):

տուրսների, այդ թվում՝ նավթի միջազգային գների անկումը, որը Ադրբեջանի տնտեսությանը պատճառում է հսկայական ֆինանսական կորուստներ: Այսպես, Ադրբեջանի օրական ֆինանսական կորուստները կազմում են 120-150 միլիոն մանաթ⁹: Սա միանգամայն տրամաբանական է, քանի որ Ադրբեջանի բյուջեի եկամուտների 60 %-ը և արտահանման 91 %-ը պայմանավորված են նավթի վաճառքով¹⁰:

Իրավիճակը բարդանում է նաև այն պատճառով, որ կորոնավիրուսի համավարակի ազդեցությամբ միջազգային շուկաներում թույլ մրցակցային դիրքեր ունեցող պետությունները շատ ավելի են տուժում: Այս առումով ադրբեջանական նավթի գինը միջազգային շուկայում նշանակալիորեն բարձր է, քան, օրինակ, Սաուդյան Արաբիայի նավթի գինը, և, հետևաբար, դա ևս նպաստում է ադրբեջանական նավթի պահանջարկի անկմանը:

Մյուս բացասական գործոնն այն է, որ, ամենայն հավանականությամբ, Ադրբեջանին չի հաջողվի նավթի գների անկումը փոխհատուցել արդյունահանման աճով: Դա է վկայում նախորդ տարիների միտումը: Այս առումով, եթե նախորդ տասնամյակում երկրում նավթի արդյունահանումը գնահատվում էր տարեկան 50, իսկ երբեմն՝ 60 միլիոն տոննա, ապա փաստացի տվյալները նշանակալիորեն տարբերվում էին: Օրինակ՝ 2017 թ. Ադրբեջանում արդյունահանվել է ընդամենը 38,7 միլիոն տոննա նավթ և գազի կոնդենսատ, ինչը 6,3 %-ով պակաս է նախորդ տարվա ցուցանիշից: Իսկ 2019 թ. առաջին կիսամյակում արդյունահանումը 2018 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ նվազել է 3,1%-ով¹¹:

Մյուս կողմից՝ նավթի արդյունահանման կրճատման փոխհատուցումը գազի արդյունահանման աճով երկարաժամկետ կտրվածքով այլևս հնարավոր չէ, քանի որ միջազգային շուկայում գազի գինը նույնպես շարունակելու է նվազել:

Այնուամենայնիվ, ներկայումս Ադրբեջանի իշխանություններն ունեն տարաշարժի որոշակի հնարավորություն: Մասնավորապես՝ կուտակված պահուստների շնորհիվ կարելի է պահպանել ազգային արժույթի փոխարժեքը, սակայն ձգնաժամի տևականության դեպքում չեն բացառվում լրջագույն տնտեսական կորուստներ¹²:

⁹ Տես «Министр экономики назвал примерные цифры экономических потерь из-за коронавируса». «Sputnik», 25.04.2020 (<https://az.sputniknews.ru/economy/20200425/423754019/Ministr-ekonomiki-nazval-primernye-tsifry-ekonomicheskikh-poter-iz-za-koronavirusa.html>):

¹⁰ Տես «Азербайджан особо уязвим в условиях кризиса на рынке нефти: интервью». «EurAsia Daily», 10.03.2020 (<https://eadaily.com/ru/news/2020/03/10/azerbaydzhan-osobo-uyazvim-v-usloviyah-krizisa-na-rynke-nefti-intervyu>):

¹¹ Տես նույն տեղում:

¹² Տես նույն տեղում, տես նաև՝ *Թ. Մանասերյան*, Մանաթի աննախադեպ արժեզրկումը տնտեսության անկման միայն սկիզբն է, 24.02.2020 (<https://artsakhpress.am/arm/news/13014/>):

Կորոնավիրուսի համավարակը բերում է նաև միջազգային ենթակառուցվածքային նախագծերի իրագործման և առևտրային հոսքերի սառեցման: Այս առումով «Գոտի և Ճանապարհ» նախաձեռնությանը¹³, ինչպես նաև Հյուսիս-Հարավ տրանսպորտային միջանցք¹⁴ և «Լազուրիտ միջանցք»¹⁵ նախագծերին Աղրբեջանի երբեմնի ակտիվ մասնակցությունը սառեցված է: Ավելին. եթե նախկինում այդ նախագծերի իրականացմանը Աղրբեջանը նպաստում էր՝ մասնակից մյուս պետություններին խոստանալով բազմաթիվ տնտեսական օգուտներ, այդ թվում՝ երկկողմ առևտրում բազմաթիվ մաքսային արտոնություններ և առևտուրը ազգային արժույթով վարելու հնարավորություն, ապա ներկայումս նավթադուլարների ծավալների նշանակալի կրճատման պայմաններում Աղրբեջանն ինքը կարիք ունի միջազգային ֆինանսական օգնության:

Մյուս կողմից՝ Աղրբեջանի և Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու պետությունների համագործակցությանը կարծես թե պետք է նպաստեր 2018 թ. ստորագրված Կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին համաձայնագիրը, որը պայմաններ է ստեղծում Կասպից ծովը խաղաղության և համագործակցության գոտի դարձնելու համար¹⁶: Սակայն վերոնշյալ ենթակառուցվածքային նախագծերի իրագործման սառեցումը վնասում է նաև Աղրբեջանի և Կենտրոնական Ասիայի այդ պետությունների միջև Կասպից ծովով առևտրի ծավալների մեծացմանը:

Աղրբեջանը նաև նախկինում հետևողականորեն վարում էր ռազմաքաղաքական միություններին չանդամակցելու քաղաքականություն՝ կարևորելով տարածաշրջանային և արտատարածաշրջանային ենթակառուցվածքային նախագծերի մշակման և դրանց մասնակցության հնարավորությունը¹⁷: Այսպիսի քաղաքականությունը ներկայումս նույնպես աչքի չի ընկնում արդյունավետությամբ, քանի որ Աղրբեջանում տնտեսական ակտիվության և արտահանման անկման պայմաններում տեղական ձեռնարկությունների

¹³ Տես «Azerbaijan could be Transit Hub for Chinese Goods». «Belt & Road News», 3 September 2019 (<https://www.beltandroad.news/2019/09/03/azerbaijan-could-be-transit-hub-for-chinese-goods/>); «Azerbaijan's cooperation with China within BRI has great prospects». «Belt & Road News», 9 October 2019 (<https://www.beltandroad.news/2019/10/09/azerbaijans-cooperation-with-china-within-bri-has-great-prospects/>):

¹⁴ Տես *Nargiz Mammadli*. North-South Transportation Corridor Could Be A Boon For Azerbaijan & India. «Caspian News», 29 November 2019 (<https://caspiannews.com/news-detail/north-south-transportation-corridor-could-be-a-boon-for-azerbaijan-india-2019-11-29-33/>):

¹⁵ Տես «Lazurite Corridor» (<http://www.turannews.info/ext/news/2018/11/subsc-analytics/en/120095.htm>):

¹⁶ Տես «Активная внешняя политика Азербайджана, основанная на национальных интересах», 08 Июля 2019 (<https://yenicag.ru/aktivnaya-vneshnyaya-politika-azerbaydzh/304442/>):

¹⁷ Տես *Sergei Markedonov*. Will Azerbaijan Join the «Eurasian NATO»? , 28.08.2018 (<https://carnegie.ru/commentary/77116>):

միջտարածաշրջանային ենթակառուցվածքներով բեռնափոխադրումները դառնում են տնտեսապես ոչ շահավետ:

Կարող ենք նաև արձանագրել, որ Հյուսիս-Հարավ և Արևելք-Արևմուտք ուղղություններով Ադրբեջանի տարածքով բեռնափոխադրումների շեշտակի անկումը Ադրբեջանի ղեկավարությանն ստիպում է փնտրել կորցված եկամուտների փոխհատուցման տարբերակներ: Այդ ուղղություններից մեկն է օտարերկրյա ներդրումների ներգրավման մեծացումը: Այնուամենայնիվ, Ադրբեջանը, ինչպես և մյուս պետությունները, կորոնավիրուսի համավարակի պայմաններում զերծ չի մնացել օտարերկրյա ներդրումների արտահոսքից: Սա նույնպես մեծ հարված է Ադրբեջանի տնտեսությանը, քանի որ ալիկյան տնտեսական քաղաքականության հիմնաքարերից մեկը Ադրբեջանում գործընկեր-պետությունների խոշոր ձեռնարկությունների մասնաձյուղերի կամ համատեղ ձեռնարկությունների հիմնումն է:

Պետք է նշել, որ այդ գործոնները, բացի նշանակալի տնտեսական կորուստներ պատճառելուց, ավելի են սրում փաշակյան և երազի-նախիջևանյան կլանների միջև քաղաքական ու տնտեսական պայքարը: Վերջին տարիներին այն նոր թափ է ստանում երազի-նախիջևանյան կլանի ամենաազդեցիկ ներկայացուցիչներից մեկի՝ Ադրբեջանի Նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհտիկի պաշտոնազրկության և Ալիևների ընտանիքի նախաձեռնած նոր կադրային քաղաքականության մեկնարկման հետևանքով:

Այսպես. Ադրբեջանում վերջին 28 տարվա ընթացքում առաջին անգամ տեղի են ունեցել արտահերթ խորհրդարանական ընտրություններ: Դրանց արդյունքներով Իլհամ Ալիևից կնոջը՝ Մեհրիբան Ալիևային, և, փաստորեն, երազի-նախիջևանյան կլանից բաքու-ափշերոնյան (փաշակյան) կլանին իշխանության աստիճանական փոխանցումը հաստատող դեպքերից է միլիմեջլիսի խոսնակի պաշտոնում Սահիբա Գաֆարովայի ընտրությունը: Ձևական առումով նրան կարելի է համարել փաշակյան կլանի ներկայացուցիչ «Նոր Ադրբեջան» կուսակցությունում, սակայն, իրականում, նրա ընտրությունը ամբողջությամբ համահունչ է իշխանական վերնախավի կլանային վերակազմակերպմանը: Նախ, նա վերջին 30 տարվա մեջ առաջին կին քաղաքական գործիչն է, որը ընտրվել է այդ պաշտոնում: Մյուս կողմից՝ նրա ընտրությունը կարելի է համարել Մեհրիբան Ալիևային բարձրագույն իշխանությունը փոխանցելու նախնական փորձ: Այդպիսով՝ Ադրբեջանի հասարակությանը պատրաստում են հետագայում պետության ղեկավարի դերում կնոջ հանդես գալու փաստին¹⁸: Ընդ որում, միլիմեջլիսի այդ խոսնակի ընտրությունը կատարվել է Մեհրիբան Ալիևայի անմիջական ցանկությամբ և արտահերթ խորհրդարանական ընտրությունների ժամանակ Մեհրիբան

¹⁸ Տես «Мехрибан Алиева подчинила себе мили-меджлис. Дело за финальным действием». «Aysor», 25.03.2020 (<https://www.aysor.am/ru/news/2020/03/25/алиева-гафарова/1675459>):

Ալիևայի օգտին «Նոր Ադրբեջան» կուսակցության վերակազմակերպման շրջանակներում:

Պետք է նաև նշել, որ արտահերթ խորհրդարանական ընտրությունները տրամաբանական էին, քանի որ դեռ 2019 թ. հոկտեմբերին Իլհամ Ալիևը սոցիալ-տնտեսական հարցերի քննարկման ժամանակ խնդիր էր դրել իրականացնելու պետական կառավարման բարեփոխում՝ կարևորելով պետական կառույցներում երիտասարդության ներգրավումը¹⁹: Ընդ որում, դա արվում է երազի-նախիջևանյան կլանի պահպանողական ներկայացուցիչների հեռացման հաշվին:

Այդպիսով վերջին զարգացումները առիթ են տալիս ենթադրելու, որ երազի-նախիջևանցիները հայտնվել են ուժեղ ճնշման տակ, հատկապես՝ նախագահական վարչակարգից այդ կլանի «գորշ» կարդինալ և համադասող Ռամիզ Մեհտիևի հեռացումից հետո: Սակայն նրա հեռացումը դեռ չի նշանակում, թե կառավարման լծակներն ամբողջությամբ անցել են հակադիր կլանին: Երազի-նախիջևանյան կլանի ամենաազդեցիկ անձերից՝ Արտակարգ իրավիճակների նախարար Քեմալեդդին Հեյդարովը, Նախիջևանի ինքնավար հանրապետության Բարձրագույն խորհրդի նախագահ Վասիֆ Թալիբովը և Նախագահի անձնական անվտանգության պետ գեներալ Բեյյար Էյուբովը դեռևս մնացել են իրենց պաշտոններում²⁰: Այնուամենայնիվ, Ալիևների ընտանիքի նախածեռնած քաղաքական համակարգի կադրային թարմացումը լինելու է շարունակական և վերաբերելու է նաև նշված անձանց: Այդ տրամաբանությամբ Ալիևները աստիճանաբար ձերբազատվելու են հին և ազդեցիկ քաղաքական դեմքերից:

Նոր կադրային քաղաքականության պայմաններում Ալիևների ընտանիքը մեծացնում է ճնշումը նաև ընդդիմադիր ուժերի վրա: Սա պայմանավորված է նաև Հայաստանում իրականացված «թավշյա» հեղափոխության սցենարով Ադրբեջանում իշխանափոխության հնարավորությամբ: Այդ պայմաններում մեծանում է թալիշների հակաիշխանական լայնածավալ ընդվզումների հավանականությունը:

Պետք է նշել, որ Ադրբեջանի ղեկավարությունը աշխարհում կորոնավիրուսի համավարակի հաղթահարումից հետո ձգտելու է վերադիրքավորվելու իր ապրանքների արտահանման շուկաներում: Ընդ որում, Ադրբեջանը նպատակադրվելու է գրավելու այն պետությունների շուկայական դիրքերը, որոնք չեն կարողացել արագորեն վերականգնվել տնտեսական կորուստներից: Մեծ հավանականությամբ Ադրբեջանը ձգտելու է խորացնելու

¹⁹ Stu «Досрочные выборы в Азербайджане: страховка Алиева, борьба кланов и влияние на Украину». «Comments.UA», 13 февраля 2020 (<https://comments.ua/article/politics/foreign-policy/646440-dosrochnye-vybory-v-azerbaydzhane-strahovka-alieva-bor-ba-klanov-i-vliyanie-na-ukrainu.html>):

²⁰ Stu «Азербайджан. Война кланов или консенсус». «Aysor», 19.12.2019 (https://www.aysor.am/ru/news/2019/12/19/война-кланов/1642216?fb_comment_id=2908839059148477_2909508322414884):

առևտրային հարաբերությունները Ռուսաստանի հետ Եվրասիական գործընկերության ընդլայնված ձևաչափով: Մյուս կողմից՝ ուժեղանալու է Ադրբեջանի համագործակցությունը Չինաստանի և Համագործակցության շանհայյան կազմակերպության, Ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի այլ պետությունների հետ²¹: Այս առումով Հարավային Կովկասում Չինաստանի ազդեցության աճումը ներկայումս արդեն նշանակալի է, իսկ Ադրբեջան–Չինաստան առևտրաշրջանառությունը 2017 թ. կազմել է 1,2 միլիարդ դոլար, ինչը 43 %-ով ավելի է, քան 2016 թ. ցուցանիշը: Ռուսաստանն ու Չինաստանը դառնում են Ադրբեջանի գլխավոր առևտրային գործընկերները, այն դեպքում, երբ ադրբեջանական նավթի արտահանման հիմնական ուղղությունները մնում են եվրոպական շուկաները²²:

Դրա հետ մեկտեղ պետք է ակնկալել, որ Ադրբեջանը ձգտելու է թյուրքալեզու պետությունների և արաբական աշխարհի կապիտալ հոսքերն ուղղելու դեպի իրեն՝ հանդես գալով որպես վստահելի և կանխատեսելի ներդրումային միջավայրով պետություն: Ավելին. ԱՄՆ-ի վարած հակաչինական քաղաքականությունը առաջ է բերում համաշխարհային մակարդակում կապիտալ հոսքերի վերակողմնորոշումներ Չինաստանից դեպի այլ պետություններ: Տվյալ պայմաններում Ադրբեջանը ձգտելու է դեպի իրեն ուղղելու այդ հոսքերի հնարավորինս մեծ մասը:

Այս պայմաններում ներդրումային գրավչության և միջազգային առևտրատնտեսական համագործակցության առումով Ադրբեջանի նկատմամբ առավելություն ստանալու նպատակով Հայաստանի ղեկավարությունը, մեր կարծիքով, պետք է վարի գլխավորապես խոշոր ներդրումային նախագծերի բարձր մասնագիտական մակարդակով մշակման և օտարերկրյա գործընկերներին դրանց ակտիվ հրամցման հետևողական քաղաքականություն: Նպատակահարմար է գործարարական նախագծերի մշակման նկատմամբ մշտապես կիրառել ժամանակակից մոտեցումներ, ձեռնարկել օտարերկրյա կառավարությունների և խոշոր ընկերությունների ներկայացուցիչների հետ ինտենսիվ հանդիպումներ և, ամենակարևորը, գործնական քայլերով միջազգային գործընկերներին վստահեցնել, որ Հայաստանի որդեգրած տնտեսական ու ներդրումային քաղաքականություններն ունեն երկարաժամկետ հեռանկարներ և պետական երաշխավորություն:

Իհարկե, արտաքին աշխարհի հետ Հայաստանի տրանսպորտային կապի դժվարությունները նվազեցնում են նրա ներդրումային գրավչությունը, սակայն միջազգային պրակտիկայում կան բազմաթիվ օրինակներ (Իսրայել, Վիետնամ, Ճապոնիա), երբ մեծ խնդիրներ և գործնականում ավերված տնտեսություն ունեցող պետությունները կարողացել են համաշխարհային կապիտալ հոսքերի ներգրավման հարցում հասնել հաջողության:

²¹ Ств «Россия-Азербайджан: Горизонт 2025 – Часть 2» (<http://press-unity.com/analitika-stati/11394.html>):

²² Ств նույն տեղում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կորոնավիրուսի համավարակի պատճառով միջազգային ասպարեզում տեղի են ունենում առևտրային և գործարարական կապերի վերանայում և, համապատասխանաբար, առևտրատնտեսական հարաբերությունների կառուցվածքային փոփոխություններ: Այս ամենը հանգեցնում է Աղրբեջանի տնտեսության հսկայական կորուստների, ինչն ուղեկցվում է կլանային համարտության խորացմամբ:

Մյուս կողմից՝ այդ համավարակի հետևանքով տնտեսական և գործարար առավելություններ են ստանալու այն պետությունները, որոնք ունեն բազմազանեցված տնտեսություն, արդիականացվող արտադրական հզորություններ և տնտեսական կառավարման առաջավոր մոդել:

Աշխարհում կորոնավիրուսի համավարակի հաղթահարումից հետո Աղրբեջանը ձգտելու է արագորեն վերականգնելու այլ երկրներում իր, ինչպես նաև գրավելու միջազգային շուկաներում Հայաստանի ունեցած դիրքերը: Այդպիսով՝ առևտրատնտեսական քաղաքականության շրջանակներում Աղրբեջանի ղեկավարությունը կարևորելու է առաջին հերթին պետության տնտեսության միջազգայնացումը: Ընդ որում, Աղրբեջանը կարևորելու է իր ոչ նավթագազային ոլորտների ներուժի և իր աշխարհագրական շահավետության օգտագործումը՝ պետական աջակցության լայն գործիքարանի կիրառմամբ:

Այս պայմաններում Հայաստանի ռազմաքաղաքական ղեկավարությունը պետք է վարի արտաքին առևտրատնտեսական հարաբերությունների ամրապնդմանը և ներդրումների ներգրավմանը միտված գերակտիվ քաղաքականություն, որը կհանգեցնի ինչպես Հայաստանի շարունակական տնտեսական աճման, այնպես էլ տարածաշրջանային նշանակության մեծացման:

РЕГИОНАЛЬНАЯ БЕЗОПАСНОСТЬ

**ЭКОНОМИЧЕСКИЕ ПЕРСПЕКТИВЫ АЗЕРБАЙДЖАНА
В СВЕТЕ ВНУТРИПОЛИТИЧЕСКИХ И ГЛОБАЛЬНЫХ
ТОРГОВО-ЭКОНОМИЧЕСКИХ ПРОЦЕССОВ**

*А. Г. ДАВТЯН, кандидат экономических наук, доцент, ученый-аналитик ГСИМ
Центра региональных стратегических исследований ИНСИ НИУО МО РА*

РЕЗЮМЕ

Значительное сокращение объемов торговых потоков по территории Азербайджана и иностранных инвестиций, а также медленное восстановление рынка нефтегазовых ресурсов, обусловленные пандемией коронавируса, наносят огромные финансовые убытки экономике Азербайджана. Решение проблемы восстановления Азербайджаном экспортных рынков своих товаров осложняется обострением рыночной конкуренции и консервативной экономической поли-

тикой многих стран. С другой стороны, в неблагоприятных торгово-экономических условиях в Азербайджане обостряется борьба между «нахичеванским» и «пашаевским» кланами в целях достижения политического доминирования. Следует ожидать, что при сохранении экономических трудностей борьба этих кланов еще более обострится, в результате чего возрастет вероятность внутривнутриполитического кризиса.

REGIONAL SECURITY

AZERBAIJAN'S ECONOMIC OUTLOOKS IN THE LIGHT OF DOMESTIC-POLITICAL AND GLOBAL TRADE AND ECONOMIC PROCESSES

A. G. DAVTYAN, PhD in Economics, Associate Professor, Research Fellow, Strategic Gaming and Modeling Group, Center for Regional Strategic Studies, INSS, NDRU, MOD, RA

SUMMARY

The significant reduction in the trade flows through the territory of Azerbaijan and in the international investments, as well as the slow recovery of oil and gas markets because of the coronavirus pandemic, cause tremendous financial damages to Azerbaijan's economy. The solution to the problem of restoring by Azerbaijan the export markets of its goods is becoming more complicated due to the aggravation of market competition and the conservative economic policy of a number of states. On the other hand, under the unfavourable trade and economic conditions in Azerbaijan, the struggle between the Nakhichevan and Pashayev clans for the achievement of political dominance is getting tough. In case the economic difficulties are preserved, the struggle between these clans is to get even tougher, leading to an increase in the internal crisis.

ԲՆԱՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՄԵԶ
ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՇԱՀԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ՂԱՐԱԲԱՐՅԱՆ
ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ

*Ա. Մ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ, փոխգնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի
Ռազմական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի
ավագ դասախոս, ՊԱՀՀ-ի հայցորդ*

Այսօր աշխարհում գոյություն ունեն մի շարք խնդիրներ, որոնք այս կամ այն չափով պարբերաբար ցնցում են միջպետական հարաբերություններն ու պետությունների վարած քաղաքականությունը: Սակայն, մեր համոզմամբ, դրանց շարքում առանձնանում են բնապահպանական բնույթի խնդիրները, որոնք ունենում են համամոլորակային ընդգրկում¹: Այդ խնդիրները հաճախ դառնում են միջպետական հարաբերությունների օրակարգային հարցեր, որոնք հնարավոր է լուծել միայն համատեղ ջանքերով, ինչի շնորհիվ դառնում են տվյալ պետությունների միջև եղած հարաբերությունների խորացման, կամ նախկինում գոյություն չունեցած հարաբերությունների ձևավորման անկյունաքար:



Այսպես. մի քանի պետությունների տարածքներով հոսող և դրանց համար կենսական նշանակություն ունեցող գետի աղտոտումը կարող է և, որպես կանոն, ունենում է բնապահպանական, տնտեսական, առողջապահական և մի շարք այլ հետևանքներ թե՛ ներպետական, թե՛ միջպետական մակարդակներում²:

Իհարկե, պետության կամ պետությունների արդյունաբերական գործունեության հետևանքով բնությանը հասցված հսկայական վնասների, ինչպես նաև բնական աղետից տուժելու դեպքում զգալիորեն փոխվում է այդ պետությունների փոխադարձաբար վարվող քաղաքականությունը, քանի որ նրանք միավորվում են մեկ ընդհանուր, համընդհանուր խնդրի լուծման համար: Սակայն բնապահպանական խնդիրները, միավորող գործոն լինելուց բացի, ավելի հաճախ դառնում են միջպետական, միջէթնիկական հարաբե-

¹ Տես, օրինակ, «Экологические проблемы стран Азии и Африки». Под. ред. Д. В. Стрельцова и Р. А. Алиева. М., 2012, сс. 223–224:

² Տես, օրինակ, *Ա. Մ. Շահվերդյան*, Բնապահպանական անվտանգության որոշ հարցերի դիտարկումը քաղաքական գիտության տեսանկյունից: «ՀԲ», 2010, հմ. 2 (էլեկտրոնային տարբերակը՝ https://razmavaraget.files.wordpress.com/2011/10/n2_2010-final.pdf):

րությունների սրման պատճառ՝ ընդհուպ մինչև զինված բախումների ու պատերազմի հարուցում³: Այդ բախումները կարող են պայմանավորված լինել ինչպես բնական պաշարների ուղղությամբ ու դրանցով հարուստ տարածքների յուրացման ձգտմամբ, այնպես էլ մի պետության կենսականորեն կարևոր բնական պաշարների յուրացման կամ նվազեցման հետևանքով մեկ այլ պետության դժգոհությամբ: Տվյալ իրողությունն ունի իր տրամաբանական բացատրությունը. բնական պաշարները, ինչպիսին է, օրինակ, խմելու ջուրը, այսօր գնալով նվազում են: Ուժային բևեռները լավ են գիտակցում այդ փաստը և, երբ ստեղծվում է հարմար առիթ, փորձում են ուժով կամ այլ եղանակով տիրել կամ առնվազն իրենց վերահսկողության տակ առնել այդ ռեսուրսները, ինչը կարող է հանգեցնել զինված բախման: Բազմաթիվ պետություններում բնակչության թվի շարունակական աճումը և տնտեսական զարգացումը անխուսափելիորեն առաջ են բերում խմելու ջրի պահանջարկի մեծացում: Աշխարհի տարբեր տարածաշրջաններում իրավիճակը պայմանավորված խմելու ջրի համար մրցակցությամբ առաջացնում է բախումներ մի շարք աֆրիկյան պետությունների, հատկապես՝ դրանցում բնակվող էթնիկական խմբերի միջև⁴:

Այս համատեքստում Հայաստանը նույնպես գտնվում է ռիսկային գոտում, քանի որ նրա տարածքում է Սևանա լճի քաղցրահամ ջրի ռազմավարական նշանակություն ունեցող պաշարը:

Հակառակորդի բնահամակարգին տնօրինելը կամ դրան վնասելը ավելի քան իմաստավորված է հակամարտության գոտիներում, որտեղ բնությանը հասցված վնասը շատ ավելի զգալի է և հաճախ՝ անդառնալի: Հակամարտող կողմերը բնապահպանական խնդիրները հաճախ օգտագործում են որպես մեղադրական խաղաթուղթ և դրանով երբեմն միջազգային ասպարեզում շահում են քաղաքական օգուտներ, զբաղեցնում քաղաքականորեն շահեկան դիրքեր: Քաղաքական նպատակներով բնապահպանական խնդիրների օգտագործումն ու շահարկումը երբեմն լուրջ գործիք են դառնում նաև բանակցային գործընթացներում՝ հանդես գալով կամ որպես հակառակորդի զսպման միջոց, կամ տարածաշրջանի բնահամակարգերին հասցված վնասի համար նրան միջազգայնորեն դատապարտելու նպատակով: Այս համատեքստում ի հայտ է գալիս բնապահպանական անվտանգության ապահովման խնդիրների քաղաքական նպատակով շահարկումների միտումը:

Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ հակառակորդի բնահամակարգի

³ Տես, օրինակ, “Environmental Security and Ethnic Conflict in Eastern Burma”, 03 April 2008 (https://www.academia.edu/7921740/Environmental_Security_and_Ethnic_Conflict_in_Eastern_Burma); В. П. Юрченко. Конфликт в Дарфуре; истоки, состояние и перспективы. «Институт Ближнего Востока», 7 апреля, 2005 (<http://www.iimes.ru/?p=3559>):

⁴ Տես, օրինակ, Daniel Schwartz, Ashbindu Singh. Environmental Conditions, Resources, and Conflicts. New UNEP Report provides an overview of Environmental Conditions, Resources, and Conflict. Nairobi, June 1999 (<https://na.unep.net/siouxfalls/publications/Conflicts.pdf>):

ոչնչացումը, կամ էկոցիդը*, արդի աշխարհում որոշակիորեն կերպավորվել է ու ձեռք բերել յուրատիպություն: Եթե նախկինում վնասը հակառակորդի բնությանը հասցվում էր ակնհայտ կերպով, առանց քողարկման (օրինակ՝ Վիետնամի կամ Պարսից ծոցի պատերազմներում)⁵, ապա այսօր դա հիմնականում կրում է քողարկված բնույթ՝ դառնալով, կարելի է ասել, հիբրիդային պատերազմի բաղադրատարր:

Ժամանակակից պատերազմներում հակառակորդի բնաշխարհի վնասումն ունի նույն նպատակը, ինչ նախկինում. այն է՝ ավերիչ ազդեցություն ունենալ կենսոլորտի կարևորագույն տարրերի՝ բուսական ու կենդանական աշխարհի, մթնոլորտի, գետերի ու լճերի վրա, որպեսզի հակառակորդի զինված ուժերի գործողությունները դժվարանան, խաթարվի նրա տնտեսության բնականոն գործունեությունը, իսկ բնակչությունն էլ զրկվի կյանքի ու կենսագործունեության համար կենսականորեն անհրաժեշտ պայմաններից: Երբեմն մյուս կողմի բնահամակարգերը որպես առաջնային թիրախ դիտում է նույնիսկ հակառակորդը, ինչը եթե ոչ ավելի, ապա և ոչ պակաս կարևոր ու արդյունավետ միջոց է, քան նրա կենդանի ուժի, տեխնիկայի, հենակետերի, քաղաքացիական բնակչության կուտակումների ու քաղաքների խոցումը: Այդ նպատակով ձեռնարկվող գործողություններն ու դրանց բնապահպանական հետևանքները հանգեցնում են այնպիսի լուրջ խնդիրների, որ հակառակորդը բուն պատերազմական գործողությունների փոխարեն ստիպված է լինում լուծելու իր բնակչությանն սպառնացող բնապահպանական խնդիրներ, որոնք ըստ էության ոչ պակաս կարևոր են:

Բնահամակարգերի վնասումից և բնապահպանական խնդիրների քա-

* Էկոցիդ (հուն․՝ *οικος* (*οικος*)՝ տուն, ցիդե (*caedo*)՝ սպանում) նշանակում է բուսական և կենդանական աշխարհի կանխամտածված զանգվածային ոչնչացում, մթնոլորտի կամ ջրային ռեսուրսների թունավորում, բնական համակարգը քայքայող և դրա կայուն գործունեությունը խաթարող այլ գործողությունների ձեռնարկում, ինչը դառնում է բնապահպանական աղետի պատճառ: Ռազմական գործողությունների ժամանակ դա մարդու բնակության միջավայրի ոչնչացումն է:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի՝ բուսական կամ կենդանական աշխարհի դիտավորությամբ զանգվածային ոչնչացում, մթնոլորտի, հողերի կամ ջրային պաշարների թունավորում, ինչպես նաև բնապահպանական աղետ առաջացնող այլ արարքներ կատարած անձինք պատժվում են՝ տասից տասնհինգ տարի ժամկետով ազատազրկմամբ: Բնաոչնչացումը հանրային վտանգավորություն ներկայացնող հանցագործություն է, որը հսկայական վնաս է հասցնում շրջակա բնական միջավայրին և անհնար է դարձնում մարդու հետագա գոյությունը (տես «Էկոցիդը մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործություն է», 29.05.2013 (<https://iravaban.net/34561.html>)):

⁵ Տես *А. А. Алимов*. Экологические последствия современного военного конфликта. «Вестник Санкт-Петербургского университета», 2005, сер. 6, вып. 2; *А. В. Захаров*. Характеристика экологической войны как современного глобального экологического вызова человечеству. «Вестник Тамбовского государственного университета», 2015, вып. 1 «Политические науки и право»; *Ա. Մ. Շահվերդյան*, Պատերազմի կործանարար ազդեցությունը բնության վրա: Հակառակորդի բնահամակարգը՝ որպես պատերազմի թիրախ: «ՀԲ», 2010, հմ. 4 (էլեկտրոնային տարբերակը՝ https://razmavaraget.files.wordpress.com/2011/10/n4-_2010-final.pdf):

ղաքական շահարկումներից գերծ չեն մնացել նաև Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը: Ղարաբաղյան հակամարտության ամբողջ ընթացքում* բնապահպանական պրոբլեմները մշտապես եղել են Ադրբեջանի վարած հակահայկական քաղաքականության նպատակային թիրախներից: Այն մեղադրանքները, թե իբր հայկական կողմը միտումնավոր կերպով վնասում է տարածաշրջանի բնությունը, Ադրբեջանի արտաքին քաղաքականության խաղաթղթերից մեկն է⁶: Նման մեղադրանքներով Ադրբեջանը հանդես է գալիս նաև միջազգային հարթակներում (ՄԱԿ, ԵՄ, ԵՆԽՎ և այլն)՝ փորձելով հասնել հակահայկական բանաձևերի ընդունման:

Որպես բնութագրական օրինակ նշենք, որ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵՆԽՎ) 2014 թ. գարնանային նստաշրջանում Ադրբեջանի պատվիրակությունը քննարկման էր դրել Սարսանգի ջրամբարի վերաբերյալ բանաձևի նախագիծը: Այնտեղ ասվում էր, թե ջրի պակասի հետևանքով Ադրբեջանի սահմանամերձ գոտու շրջանների բնակչությունը բախվում է լուրջ մարդասիրական, տնտեսական, բնապահպանական և կենսաբանական աղետի: Նախագծում Ադրբեջանը կոչ էր անում խնդրի վերաբերյալ ձեռնարկելու անհապաղ ու կոնկրետ միջոցներ⁷:

ԵՆԽՎ 2015 թ. ձմռային նստաշրջանում ընդունվել է «Ադրբեջանի սահմանամերձ շրջանների բնակիչները կանխամտածված կերպով զրկված են ջրից» բանաձևը⁸: Նախագծի հեղինակը Բոսնիայի և Հերցեգովինայի պատվիրակ Միլիցա Մարկովիչն էր: Նախագծում հղում էր արվում ՄԱԿ-ի 1992 թ. կոնվենցիային, որտեղ ջրային ռեսուրսների օգտագործման իրավունքը համարվում է մարդու հիմնարար իրավունքներից մեկը: Փաստաթղթում ամրագրված էր, որ ջրի հասանելիությունը չի կարող սահմանափակվել սահմաններով, և նա դիտվում է որպես կյանքի աղբյուր ու ռազմավարական նշանակություն ունի յուրաքանչյուր անդամ պետության համար: Բանաձևի նախագծում, մասնավորապես, նշված էր. «Վեհաժողովն իր ափսոսանքն է

* Մենք այստեղ խոսում ենք Ղարաբաղյան հակամարտության ժամանակաշրջանի մասին, մինչդեռ Ադրբեջանը միշտ էլ մեծ ուշադրություն է դարձրել բնակլիմայական պայմանները հոգուտ իրեն օգտագործելու հնարավորություններին (տես, օրինակ, *Д. Бабаян. Проблема водной безопасности Республики Армения и Арцаха в контексте урегулирования Нагорно-Карабахского конфликта* (http://arat-center.org/upload/files/Liberated_16.pdf):

⁶ Տես, օրինակ, «Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը», գ. 3. ««Թշնամի հայի» կերպարը ադրբեջանական մեդիատարածքում»: Ե., 2009, էջ 62, 71 (<http://ysu.am/files/%20հակահայկական%20տեղեկատվական%20համակարգը.pdf>):

⁷ Տես *Տ. Աբրահամյան*, «Սարսանգի ջրամբար. ԵՆԽՎ-ն ԼՂՀ-ին չարձագանքեց, իսկ Ադրբեջանին չմերժեց»: «panorama.am», 18.04.2014 (<https://www.panorama.am/am/news/2014/04/18/t-abrahamyan/306900>):

⁸ Տես *Milica Marković*. Inhabitants of frontier regions of Azerbaijan are deliberately deprived of water, 12 December 2015 (<http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-DocDetails-EN.asp?FileID=22290&lang=EN>); նաև՝ «ԵՆԽՎ Սարսանգի ջրամբարի մասին գեկույցում կա «ՀՀ-ի կողմից Լեռնային Ղարաբաղի օկուպացիա» եզրույթը»: «Pan ARMENIAN.Net», 27.11.2015 (<http://www.panarmenian.net/arm/news/201335/>):

հայտնում, որ Հայաստանի կողմից Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի հարակից այլ շրջանների օկուպացիան շրջակա միջավայրի խնդիր է ստեղծում նաև Դաշտային Ղարաբաղի հովտում ապրող բնակչության համար», իսկ «Պահանջներ» բաժնում նշված էր, որ պետք է հայկական զինված ուժերը դուրս բերվեն տվյալ շրջաններից, անկախ փորձագետների միջոցով հետազոտվեն Սարսանգի և Մատաղիսի ջրամբարները: Փաստաթղթում ամրագրված էր նաև, որ Վեհաժողովը դատապարտում է հայկական պատվիրակությանը և ՀՀ իշխանություններին զեկույցի պատրաստման ընթացքում զեկուցողի հետ չհամագործակցելու համար: Վեհաժողովը Հայաստանի՝ որպես ԵՄ անդամ պետության նման վերաբերմունքը համարում էր ստանձնած պարտավորությունների հետ անհամատեղելի: Բանաձևի 5-րդ կետում նշված էր. «ՀՀ-ի կողմից էկոլոգիական արհեստական ձգնաժամի կանխամտածված ստեղծումը պետք է դիտարկել որպես «բնապահպանական ագրեսիա» և մի պետության թշնամական ակտ մյուսի հանդեպ՝ բնապահպանական աղետի գոտիներ ստեղծելու և տեղի բնակչության բնականոն կյանքը անհնար դարձնելու նպատակով»⁹:

Այսօրինակ մեղադրանքներն ու բանաձևերի առաջքաշումները շարունակվում են նաև այսօր¹⁰: Հայաստանը երբեմն նաև դառնում է Թուրքիայի մեղադրանքների թիրախ՝ կապված Մեծամորի ատոմակայանի շահագործման հետ: Օրինակ՝ 2016 թ. Թուրքիայի էներգետիկայի նախարար Բերատ Ալբայրակը ՄԱԳԱՏԷ-ի Գլխավոր խորհրդաժողովում հայտարարել էր, որ Հայաստանի Մեծամորի ատոմակայանը գտնվում է սեյսմիկ գոտում և վտանգ է ներկայացնում տարածաշրջանի պետությունների, մասնավորապես՝ Թուրքիայի համար: «Մեծամորի ատոմակայանը պետք է փակվի: Աշխարհը և տարածաշրջանը չեն կարող թույլ տալ երկրորդ ատոմային աղետը Չեռնոբիլից հետո: Մեծամորի ատոմակայանը կառուցվել է 47 տարի առաջ: Բացի այդ, ԱԷԿ-ը գտնվում է թուրքական սահմանից ընդամենը 16 կմ հեռավորության վրա», ասել էր թուրք նախարարը¹¹:

Հայաստանի հասցեին ուղղված մեղադրանքներին ընդդիմադրելու համար անհրաժեշտ է իրավիճակի հստակ գնահատում և համարժեք ռազմավարության ու քաղաքականության մշակում:

Մեր կարծիքով՝ հայկական կողմը այս իմաստով երկար տարիներ հիմնավոր հակազդեցություն չի ցուցաբերել բավարարվելով միայն դիվանագիտական մեղմ արծազանքներով ու պաշտպանվելով: Օրինակ՝ 2010 թ. փետրվարի 2-ին ՀՀ բնապահպանության նախարարությունը պարզապես

⁹ Տես *Միլիցա Մարկովիչ*, Նշ. աշխ.:

¹⁰ Տես նույն տեղում:

¹¹ Տես «Թուրքիան ՄԱԳԱՏԷ-ին բողոքել է Մեծամորի ատոմակայանից»: «ArmlInfo», 26.09.2016 (https://armlinfo.info/full_news.php?id=22204&lang=1), նաև՝ «Թուրք պատգամավորը Մեծամորի ատոմակայանի «վտանգավորության» հարցով դիմել է Թուրքիայի փոխնախագահին»: «Թերթ.am», 24.12.2019 (<https://www.tert.am/am/news/2019/12/24/turkey-armenia/3172344>):

հայտարարել է, թե ադրբեջանական մամուլի տարածած տեղեկույթը, իբր Հայաստանը պղնձի միացություններով ու ֆենոլով աղտոտում է Կուր և Արաքս գետերը, չի համապատասխանում իրականությանը¹²: Համոզված ենք, որ անհրաժեշտ է որդեգրել նախահարձակ քաղաքականություն՝ ցույց տալով իրական պատկերը, քանի որ հակառակորդ պետությունը քառորդ դարից ավելի է, ինչ իր սանձազերծած պատերազմի հետևանքով շարունակում է զգալի վնաս հասցնել տարածաշրջանի բնահամակարգին: Խոսքը վերաբերում է և՛ անմիջական ռազմական գործողություններին, և՛ ականապատմանը, և՛ բնական կենսատարածքների միտումնավոր ոչնչացմանը:

Համոզված ենք, որ այս հարցը հրատապ է և հույժ կարևոր, որովհետև կապված է հայության անվտանգության և գոյապահպանության գերակա խնդրի՝ Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման հետ:

Պետք է նշել, որ թեև առկա են մի շարք հետազոտություններ, սակայն չկա այն բնապահպանական պրոբլեմների համապարփակ ուսումնասիրությունն ու վերլուծությունը, որոնք ծագում են Ղարաբաղյան հակամարտության հետևանքով: Ճշտված չեն նաև Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համար այն հնարավորությունները, որոնք կարող են ստեղծվել տվյալ խնդրի ուսումնասիրության և շրջանառության շնորհիվ: Հետազոտված և հրապարակայնորեն հնչեցված չեն, թե ինչպես են Ադրբեջանի ռազմական հարձակումները վտանգում ու չվերականգնվող վնաս հասցնում ինչպես Արցախի բնությանը՝ մասնավորապես, այնպես էլ Հարավային Կովկասի բնությանն՝ ընդհանրապես:

Ղեռևս կատարված չէ Ղարաբաղյան հակամարտության քաղաքական ու քաղաքագիտական վերլուծություն բնապահպանական անվտանգության տեսանկյունից: Հույս ունենք, որ սույն հոդվածը կարող է այդ իմաստով օգտակար ներբերում ունենալ տվյալ խնդրի հանրահռչակման ու նորովի գնահատման հարցում:

Ելնելով առաջ քաշված թեմայի խիստ արդիականությունից՝ ներկայացնում ենք որոշ գործնական առաջարկություններ*.

- ուսումնասիրել Ղարաբաղյան հակամարտության զինված փուլում և ներկայումս հրադադարի ռեժիմի խախտման ընթացքում Ադրբեջանի ձեռնարկած մարտական գործողությունների հետևանքով Արցախի խաղաղ բնակչությանը և բնահամակարգին՝ որպես Կովկասի բացառիկ կենդանական ու բուսական տեսակներով հարուստ կենսատարածքի մի հատվածին, պատճառած վնասները.
- այդ նպատակով ստեղծել ներկայացուցչական հանձնաժողով՝ կազմված Հայաստանի, Արցախի և օտար պետությունների փորձագետ-

¹² Տե՛ս «Հայաստանը չի աղտոտում Քուր – Արաքս գետերը»: «NEWS.am», 02.02.2010 (<https://news.am/arm/news/13434.html>):

* Տողերիս հեղինակն իր առաջարկությունները մշակել ու շրջանառության մեջ է դնում նաև ՊԱՀՀ-ում իր դասախոսական գործունեության շրջանակներում և տարբեր գիտակրթական հարթակներում՝ «Էկոլոգիական անվտանգությունը՝ որպես ազգային անվտանգության բաղադրիչ» թեմայի ներկայացմամբ:

ներից, որոնք վայելում են միջազգային հեղինակություն գիտության ու տեխնիկայի տարբեր ոլորտներում,

- հնարավորության դեպքում կյանքի կոչել ուղեծրային մշտազննման վերաբերյալ պրոֆեսոր Հ. Քոթանջյանի առաջարկությունը¹³,
- հետազոտության արդյունքները տարածել հեղինակավոր կազմակերպությունների (ՄԱԿ, ԵԱՀԿ, ՀԱՊԿ, ՆԱՏՕ, ինչպես նաև ԵՄ, Մինսկի խմբի համանախագահներ) շրջանում, դնել Ղարաբաղյան հարցով բանակցությունների սեղանին, դիմել միջազգային դատական ատյաններին,
- Արցախի տեղային (էնդեմիկ) կենսաբազմազանության արդյունավետ պահպանումը կազմակերպելու համար հասնել այն բանին, որ Արցախին ու նրա հարակից շրջաններին միջազգային մակարդակով շնորհվի հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ: Տվյալ հարցը բարձրաձայնել միջազգային ատյաններում և բնապահպանական համաժողովներում,
- համացանցում տվյալ հարցի բազմալեզու լուսաբանումը ապահովելու համար համախմբել բնապահպաններին, քաղաքացիական ակտիվիստներին, ՋԼՄ-ներին, բնասեր բլոգերներին և սոցիալական մեդիայի օգտատերերին և խելամիտ կերպով ուղղորդել նրանց ջանքերը միջազգային բնապահպանական հարթակներում Ադրբեջանի վարած քաղաքականությունը մերկացնելու և դատապարտելու նպատակով:

¹³ Տես Հ. Քոթանջյան, ԵԱՀԿ Մինսկի խումբը որպես պատերազմի զսպման նկատմամբ Ռուսաստանի Ղաշնության, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի դիրքորոշումների չընդհատվող փոխհամաձայնության հարթակ. Ղարաբաղի օրինակով: «ԱՐՄԵՆՊՐԵՍ», 19.11.2016 (<https://armenpress.am/arm/news/868587/eahk-minski-khumby-paterazmi-zspman-nkatmamb-rusastani.html>), նաև՝ *նույնի*՝ The Promotion of Democracy in the Karabakh Conflict Zone as a Peacebuilding Resource for Conflicting Parties and the OSCE Minsk Group Co-Chairmanship. "EUROPE et ORIENT", 14.04.2017 (<https://europeetorient.blogspot.com/2017/03/the-promotion-of-democracy-in-karabakh.html>):

КОНФЛИКТОЛОГИЯ

**ИСПОЛЬЗОВАНИЕ ОБВИНЕНИЙ В УНИЧТОЖЕНИИ
ЭКОСИСТЕМЫ В ЦЕЛЯХ ПОЛИТИЧЕСКИХ СПЕКУЛЯЦИЙ
НА ПРИМЕРЕ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА**

А. М. ШАХВЕРДЯН, подполковник, старший преподаватель Центра Военных стратегических исследований ИНСИ НИУО МО РА, соискатель в НИУО

РЕЗЮМЕ

С учетом особой важности экологических проблем в современном мире одна из конфликтующих сторон подчас пытается спекулировать ими в целях получения политических дивидендов на международной

арене. Подобные методы в своей антиармянской политике использует и Азербайджан, пытающийся обвинить Армению и Арцах в нанесении ущерба местной экосистеме, являющейся частью уникальной биосистемы Южного Кавказа.

Между тем Армения и Арцах реагируют лишь пассивно, парируя измышленные нападки Азербайджана, хотя и обладают неопровержимыми доказательствами нанесения экологического ущерба самим Азербайджаном. В статье предлагается ряд объективных фактов, способных дискредитировать Азербайджан в глазах мирового сообщества.

CONFLICTOLOGY

BRINGING ACCUSATIONS OF DESTROYING THE ECOSYSTEM FOR THE PURPOSE OF POLITICAL SPECULATIONS BY EXAMPLE OF THE KARABAKH CONFLICT

A. M. SHAHVERDYAN, Lieutenant Colonel, Senior Lecturer, Center for Military Strategic Studies, INSS, NDRU, MOD, RA, Applicant, NDRU

SUMMARY

Taking into account the special importance of the environmental problems in the contemporary world, one of the conflicting sides at times makes an attempt to speculate on them aiming to receive political dividends in the international arena. Azerbaijan also does employ suchlike methods in its anti-Armenian policy, in an effort to accuse Armenia and Artsakh in inflicting damage to the local ecosystem, constituting part of the unique biosystem of the South Caucasus.

Meanwhile, Armenia and Artsakh only passively respond, parrying Azerbaijan's fabricitious attacks, despite having the irrefutable evidence of the environmental damage caused by Azerbaijan itself. The article brings forward a number of objective facts capable of discrediting Azerbaijan in the eyes of the world community.

ԱՐԴԻԱԿԱՆ ՈԱԶՄԱԿԱՆ ՈԱԴԻՈԿԱՅԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

*Գ. Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ, պահեստագործի գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի
Օպերատիվ արվեստի հետազոտությունների կենտրոնի
գիտնական-վերլուծաբան*



Այսօր էլ ռադիոկապը մնում է որպես զորքերի կառավարման կարևոր միջոց: Այն հատկապես էական դեր է խաղում կառավարման մարտավարական օղակում (ԿՄՕ), որն իր վրա կրում է հակառակորդի հետ անմիջական շփումների պայմաններում մեծ լարվածությամբ ու շարժունությամբ բնորոշվող մարտական գործողությունների հիմնական բեռը: Արդի տարաշարժուն արագընթաց մարտերում, երբ տեղի են ունենում

իրադրության կտրուկ փոփոխություններ և չկա զորքերի շփման հոծ գիծ, հուսալի ու որակյալ ռադիոկապը կայուն և ճկուն կառավարման երաշխիքն է, իսկ կառավարման ավտոմատացված համակարգերի (ԿԱՀ-եր) և ԿՄՕ տեղեկատվական համակարգերի լայն կիրառման պարագայում այն նաև հակառակորդի նկատմամբ տեղեկատվական գերազանցության նվաճման անհրաժեշտ պայման է, քանի որ այդ համակարգերի կիրառումը խառնախառն է ռադիոկապի տարածուն ցանցերի վրա:

Հաշվի առնելով մեր պետության տարածքի փոքրությունը՝ մենք հիմնականում կխոսենք ԿՄՕ ռադիոկապի միջոցների մասին:

Ժամանակակից բանակներում ԿՄՕ-ի հիմնական խնդիրը մարտական իրադրությունում սերտ փոխգործության հուսալի ապահովումն է, ընդսմին կապի կիրառվող միջոցներից իրենց թվաքանակով ու բազմապիսուսությամբ առանձնանում են գերկարճալիք (ԳԿԱ) ռադիոկայանները, որոնք ռազմական ռադիոկապի ցանցի առավել հագեցված օղակն են: Դրանց թողարկվող ապրանքատեսակներն այնքան շատ ու խայտաբղետ են, որ հաճախ դժվար է լինում ճիշտ կողմնորոշվել ընտրության հարցում: Ուստի և ընտրելիս հարկ է առաջին հերթին նկատի առնել այնպիսի գործոններ, ինչպիսիք են հուսալիությունը, շահագործման համար հարմարավետությունը, խանգարումապաշտպանվածությունը, գինը և այլն: Հույժ կարևոր է նաև ռադիոկապի ընդհանուր համակարգի հետ դրանց համատեղելիությունը, այսինքն՝ ընտրել այնպիսի համալիրներ, որոնք առանց որևէ դժվարությունների ու շեղումների կարող են աշխատել իրար հետ:

Կարևոր օղակ է նաև կարճալիք (ԿԱ) ռադիոկայանների համակարգը, քանի որ դրանցով ապահովվում է կապը մինչև 300 կմ հեռավորություններ-

րով: Այդ ռադիոկայանները հիմնականում օգտագործում են հատուկ ստորաբաժանումները: Վերջերս նատոյական մասնագետները, թեև այդ կազմակերպությունում հիմնական շեշտը դրվում է հաղորդակցման արբանյակային համակարգերի վրա, խոստովանեցին, որ Աֆղանստանում և Իրաքում ձեռնարկված օպերացիաներում զգալի դեր են խաղացել այդ տիրույթի ռադիոկայանները, քանի որ այնտեղ արբանյակային կապը մեկ գերծանրաբեռնվում էր, մեկ դադարում աշխատելուց: Կրովի ռադիոկայաններին ներկայումս ներկայացվող հիմնական պահանջներն են եզրաչափքերի ու կշռի նվազարկումը, ինչպես նաև աշխատանքի հուսալիությունն ու դյուրինությունը: Ժամանակակից մարտադաշտի վերափոխումների հաշվառմամբ կարևոր է համարվում նաև թվային ռադիոփոխանակման հնարավորության ամրապայթյունը, քանի որ դրանով կապահովվեն տվյալների, այդ թվում՝ պատկերների ու տեսանյութերի, հաղորդման հսկայական արագություններ ու մեծ ճշգրտություն:

Ներկայումս ռադիոկապի կազմակերպումը հույժ բարդ խնդիր է:

Հարկավոր է ռադիոհաձախականություններն այնպես բաշխել, որ կայանների միջև չառաջանան խանգարումներ (բախումներ), նվազարկվեն արհեստական խանգարումներ ստեղծելու հակառակորդի հնարավորությունները և ապահովվի կայուն կապ՝ անկախ արտաքին գործոններից:

Առանձնապես արդյունավետ է ԳԿԱ տիրույթի գործածումը: Այդ պատճառով մեծ թվով բանակներում ստորին մակարդակի ռադիոկապը կազմակերպված է ԳԿԱ տիրույթում: Այս տիրույթում կիրառվող հաձախականային մոդուլացումը հնարավորություն է տալիս ապահովելու առանց խոտորումների ընդունում, նվազեցնելու գաղտնալսման հավանականությունը, քանի որ կապի հեռավորությունը փոքր է և հնարավոր է կիրառել ուղղորդված ճառագայթում:

Երբեմն ռադիոկայանները կարող են կիրառվել որպես ոչ միայն հաղորդակցման, այլև հակառակորդի ապակողմնորոշման ու մոլորեցման միջոց: Այդ նպատակով երբեմն կիրառվում է մեծ թվով կայանների կեղծ աշխատանքը, ինչի շնորհիվ ստեղծվում է զորքերի մեծ կուտակումների պատրանք: Մինչդեռ իրականում հարվածի նախապատրաստում ձեռնարկվում է միանգամայն այլ հատվածում: Այդ եղանակի կիրառման փայլուն օրինակ է Միջագետքի թուրքական ճակատի ճեղքումը 1918 թ. սեպտեմբերին, որը հմտորեն իրագործեցին անգլիացիները ռադիոկայանների լայն օպերատիվ կիրառմամբ: Նման եղանակով նմանարկվում էր ուժերի մեծ կուտակում Հորդանան գետի շրջանում՝ Մեռյալ ծովի մոտ: Թուրքական հետախուզությունը չկարողացավ ճիշտ գնահատել կեղծ ուղղություններում տեղակայված մեծաթիվ ռադիոկայանների ինտենսիվ աշխատանքը:

Ռադիոմոլորեցումն ակտիվ կերպով օգտագործվել է նաև Ղարաբաղյան պատերազմում: 1992–1994 թթ., երբ հայկական կողմը հակառակորդի ռադիոհաձախականություններով հաղորդում էր կեղծ տեղեկություններ, ինչը հաձախ ապակողմնորոշում էր հակառակորդին, նրա շարքերում խուճապ

ստեղծում: Նման եղանակը կարող է արդյունավետ լինել նաև այսօր՝ ռադիոկայանների հմուտ կիրառման դեպքում:

Ընդամին պետք է նշել, որ ռադիոկապի միջոցների զարգացմանը ներկայացվող հիմնական պահանջներից մեկը, ինչպես նշվեց, հենց դրանց խանգարումապաշտպանվածության մակարդակի բարձրացումն է: Խոսքն առաջին հերթին վերաբերում է 6-րդ սերնդի ռադիոկայաններին, որոնք օժտված են ավելի մեծ թողունակությամբ, այդ թվում և կազմակերպված ու չկանխամտածված խանգարումների առկայությամբ: Տվյալ միջոցները հնարավորություն են տալիս ցանկացած ձևով ու եղանակով վարվող մարտական գործողություններում կապ կազմակերպելու «յուրաքանչյուրը յուրաքանչյուրի հետ» սկզբունքով՝ ավտոմատ և ավտոմատացված բանեկարգով: Բացի այդ, դրանք ունեն բազմահենամեջ ավտոմատ վերահաղորդման բանեկարգ, ինչի շնորհիվ լեռնային ու միջին կտրվածությամբ տեղանքում հնարավոր է լինում հեռահար կապ կազմակերպել առանց լրացուցիչ սարքավորանքի կիրառման:

Արդեն թողարկվում ու գործերին են հատկացվում կապի դաշտային հանգույցների ու կառավարման շարժական կետերի արդիական համալիրներ, որոնք ապահովում են կապի պահանջվող որակի զանազան ծառայություններ, ինչպիսիք են, օրինակ, տեսակոնֆերանս կապը, տվյալների փոխանցումը, էլեկտրոնային նամակների ու նիշքերի փոխանակումը, գծանկարային տեղեկությո՞վ կոլեկտիվ աշխատանքը, բաց և պաշտպանված հեռախոսակապը, տեղեկատու ծառայությունները և այլն:

Ժամանակակից ռադիոմիջոցները կարող են մեծ արագությամբ փոխանցել ոչ միայն ձայնային հաղորդագրություններ, այլև տվյալներ ու պատկերներ: Այսպես. ծրագրավորվող պարամետրներով ռադիոկայանը (ԾՊՌ, *Software Defined Radio, SDR*) ստեղծում է միանգամայն նոր հեռանկարներ: ԾՊՌ տեխնոլոգիաները հիմնված են համակարգչի ու ռադիոկայանի միավորման սկզբունքի վրա: Եթե նախկինում ռադիոկայաններն ունեին որոշակի ներառված գործառնությունների հավաքածու, որը սահմանափակվում էր կիրառվող սարքավորանքով, ապա ԾՊՌ-ներում խնդիրների կատարման համար կիրառվում է մի քանի մակարդակի ծրագրային ապահովում, ինչպես սեղանի համակարգիչն ըստ օգտատիրոջ նախապատվությունների կարող է կատարել տեքստի մշակում, համացանցի դիտում կամ տվյալների շտեմարանի կառավարում:

ԱՄՆ-ում կիրառվող ԾՊՌ օպերացիոն համակարգը կոչվում է բաց ճարտարապետությամբ հաղորդակցային ծրագրային ապահովում (<ՕՃ, *Software Communications Architecture, SCA*): Այդ ճարտարապետությունը ԾՊՌ սարքերին հնարավորություն է տալիս միմյանց միջև փոխանակելու տեղեկույթ, իսկ ազդանշանների ծածկագրումը դարձնում է վերածրագրավորելի ու ձկուն: ԾՊՌ գլխավոր առավելությունն այն է, որ այդ տեխնոլոգիաներով ստեղծված սարքերը միանգամայն համատեղելի են ռադիոկապի նախորդ սերունդների միջոցների հետ, քանի որ տվյալ սարքերը կարող են

հարմարեցվել արձանագրությունների հավաքածուին, ինչով ապահովվում է տարբեր մոդելների ու ցանցերի փոխգործելիությունը: Դա հույժ կարևոր է, որովհետև ներկայումս ավելի հաճախ են կազմակերպվում մեծամասշտաբ ու բազմակողմ օպերացիաներ, ինչպիսիք են Աֆղանստանում, Իրաքում, Սիրիայում և այլ տեղերում ձեռնարկված ռազմական գործողությունները, որոնցում ներգրավվում են բազմազգ ուժեր՝ իրենց սպառազինությամբ ու տեխնիկական (այդ թվում՝ ռադիոկապի) միջոցներով:

Կարևոր հանգամանք է նաև այն, որ արդիական տեխնոլոգիաներով ապահովվում է խնդիրների ավտոմատ կատարումն առանց օգտատիրոջ միջամտության: Օրինակ՝ ռադիոն կարող է ընթացքի ժամանակ կիրառվել որպես վերահաղորդիչ և տվյալների փոխանցման անհաղորդալար ցանցեր ստեղծելու համար:

Եվս մեկ առավելություն է այն, որ ԾՊՌ տեխնոլոգիաների շնորհիվ կարելի է մեկ պարփակ պատյանում տեղակայված սարքով ապահովել տարբեր գործառնությունների ու ծառայությունների կատարում, ինչի համար նախկինում պահանջվում էին մի քանի ռադիոկայաններ: Օրինակ, ցանցով կարող են հաղորդվել տվյալներ բոլոր հետևակայինների մասին, այդ թվում նաև՝ զինվորների ու հրամանատարների կենսականորեն կարևոր պարամետրները, ուստի ցանկացած օգտատեր կարող է տեղեկանալ, թե որտեղ և ինչ վիճակում են նրանք գտնվում:

Փորձագետները նշում են, որ ԾՊՌ տեխնոլոգիաներով բանող ռադիոկայանները միավորվում են՝ կազմելով կապի ինքնակազմակերպվող համակարգեր, որոնք հնարավոր չէ ձնշել ՌԷՊ-ի միջոցներով կամ ֆիզիկապես ոչնչացնել: Դա նշանակում է, որ մարտական գործողությունների ժամանակ բոլոր ստորաբաժանումներն ապահովված կլինեն կայուն ռադիոկապով:

ԾՊՌ կայաններն ավտոմատ բանելակարգով գտնում են մեկ օգտատիրոջից դեպի մյուսը տանող օպտիմալ երթուղին՝ անգամ զորքերի անդադար տեղաշարժման ու հակառակորդի ՌԷՊ-ի միջոցների անընդհատ կիրառման պայմաններում: Կապի որակը չի վատթարանա, նույնիսկ եթե հակառակորդին հաջողվի ձնշել կայաններից մեկի աշխատանքը, քանի որ այդ կայանի գործառնությունները կսկսեն կատարել դրա հարևանները: Ընդամին թվային տեխնոլոգիաների դարաշրջանում այդ խնդիրը լուծվում է ոչ թե ապարատային, այլ ծրագրային միջոցներով: Ռադիոկայանների միջադրման* միջոցով կարելի է լուծել ընդունման ու հաղորդման համար համալրմանն առնչվող մեծաթիվ պրոբլեմներ:

Ռուսաստանյան «Սոզվեդգրիե» կոնցեռնը, որը մասնագիտացած է ՌԴ ՋՌԻ-ի համար կապի համալիրների, համակարգերի ու միջոցների մշակման

* Ռադիոկայանների միջադրումը (*прошивка*) ի սկզբանե արտադրողի ներդրած ինչ-որ պարամետրների (որոշակի կապուղուն հաճախականության հատկացում, հաղորդման հզորության վերալարում, անհրաժեշտ գործառնության տեղակայում և այլն) փոփոխումը կամ վերալարումն է: – *ԽՄԲ.*:

և արտադրության գծով, մշակել է մի մոդուլ, որն ապահովում է ժամանակակից ռադիոկայանների և հին սարքավորանքի համատեղելիությունը և, միևնույն ժամանակ, ընդլայնում է հաղորդիչների գործառնությունների շրջանը: Ընդամին այդ մոդուլը հնարավորություն է տալիս փոփոխելու ազդանշանի հաղորդման արագությունը, հզորությունը և հեռահասությունը՝ համապատասխան մարտական գործողությունների պլանի կամ օդերևութաբանական պայմանների: Աշխատանքներ են տարվում նաև «խելացի պեցիրի» ստեղծման ուղղությամբ. այն պետք է «ունակ» լինի նվազեցնելու կանխատեսված ու պատահական խանգարումների ներգործությունը:

Արդեն ՌԴ զորքեր են ուղարկվում «Անտեյ» շարժական ռադիոկենտրոնները, որոնք ավտոմատացված կարճալիքային կապով են ապահովում ՋՌԻ-ի կառավարման բարձրագույն օղակներին: Ընդամին նշվում է, որ դրանք երաշխավորում են տվյալների հաղորդում մի քանի հազար կմ հեռավորությունների վրա անգամ խանգարումների առկայությամբ:

«Անտեյ»-ն զգալիորեն մեծացնում է դաշտային ու անշարժ ռադիոկենտրոնների հնարավորությունները: Դրա աշխատանքը խարսխվում է ԾՊՌ սկզբունքի վրա, այսինքն՝ դա համակարգչի ու ռադիոկայանի միաձուլում է: Նախկին սերունդների ռադիոապարատուրան ենթարկված էր խիստ աստիճանակարգության: Դասակը վաշտի հետ կապ էր հաստատում իր գծով, վաշտը գումարտակի հետ՝ իր, և այդպես մինչև Քերագույն շտաբի կապի հանգույց, որը այդ բուրգի գագաթում էր: Եթե այդ շղթաներից մեկը չէր գործում, կապավորներին պետք էր լինում որոշակի ժամանակ հին գծերի աշխատանքը վերականգնելու կամ նոր շրջանից գիծ ստեղծելու համար: Նոր տեխնոլոգիաների կիրառման դեպքում նման խիստ աստիճանակարգություն չկա, ընդամին եթե ռադիոկայաններից մեկը դադարեցնի աշխատանքը, ապա նրա գործառնությունն անմիջապես կսկսի կատարել մեկ ուրիշը:

«Անտեյ»-ն աշխատում է ԿԱ–ԳԿԱ տիրույթներում: Ինչպես հայտնի է, խաղաղ ժամանակ կարճալիքային ռադիոկապն իր դանդաղագործության պատճառով օգտագործվում է գլխավորապես կապի հիմնական՝ հաղորդալարային, ռադիոռելեային և օպտիկական, տեսակների համար որպես պահուստային: Սակայն պատերազմի ժամանակ այն ստանում է կարևոր նշանակություն, քանի որ հեռու տարածությունների վրա ռադիոկապի միակ միջոցն է:

Դրա հետ մեկտեղ, «Անտեյ»-ում իրացված են որոշ նորություններ, որոնք էապես դյուրինացնում են ռադիոհաղորդումների օպտիմալ հաճախականությունների որոշումը և զգալի չափով մեծացնում են դրա շահագործային ինքնավարությունը:

Կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ համալիրի աշխատանքը բարձր աստիճանի ավտոմատացված է: Այսպես. Եթե առաջներում կապի հանգույցի հետ փոխգործությունը կատարվում էր խոսողական բանեկարգով, ապա այժմ ապահովվում է ԿԱՀ-ի միջոցով, ինչի շնորհիվ նվա-

գարկվում են անձնակազմի հնարավոր սխալները և մեծանում է ամբողջ համալիրի աշխատանքի արդյունավետությունը:

Այս ամենի շնորհիվ մեկ «Անտեյ-ՊՈՒ» ընդունիչը փոխարինում է այսօր դեռ սպառազինության մեջ գտնվող ԿԱ–ԳԿԱ տիրույթներում աշխատող մեծ ու միջին հզորությամբ երեք Ռ-161 «Պոխկ» ռադիոկայաններին: «Խելացի» տեխնիկան առանց օպերատորների միջամտության է լուծում խնդիրների մեծ մասը, ներառյալ՝ ռադիոկապի պլանավորումը, կազմակերպումը և վերահսկումը:

ԾՊՌ տեխնոլոգիաներով պատրաստված հաջորդ համալիրը «Արզոն-է»-ն է, որն աշխատում է ԳԿԱ տիրույթում՝ 146-174 ՄՀց հաճախականություններով: Դա մի սարքավորանք է, որն ունի մինչև 100 թվային կապուղի, և ապահովում է երկկողմ (դուպլեքսային) կապ մեկ հաճախականությամբ և վերահաղորդում նույնպես մեկ հաճախականությամբ: Կա հնարավորություն վերահաղորդումն ապահովել համալիրի ցանկացած ռադիոկայանով: Տվյալ համալիրում ապահովված են՝ ձայնային փեյջինգը (տեղեկույթը վերջ ի վերջո կհասնի հասցեատիրոջը, անգամ եթե նա տվյալ պահին զբաղված է այլ խոսակցությամբ կամ կապի համար անհասանելի է), «դասական» նմանակային միջոցների հետ համատեղելիությունը, խանգարումների հարմարվողական համակշռումը: Ըստ էության, «Արզոն-է»-ն չի կարող ճնշվել:

ԱՄՆ-ի ռադիոկայաններից նպատակահարմար ենք համարում հիշատակել «Ջեներալ Դայնամիքս» ընկերության «ԷսԴիԱր–էյէն/ՓիԱրՍի-154» կայանը, որի շնորհիվ հետևակայինները մարտադաշտում հանդես են գալիս որպես շարժունակ «ԷՄէյէնիթի» ցանցի օգտատերեր: Տվյալ ցանցի օբյեկտներն ու համակարգերը ավտոմատ կերպով ուրվապատկերվում են, ներքին միակցումը հնարավորություն է տալիս ազդանշանները վերահաղորդելու մի կայանից մյուսին:

«էյէն/ՓիԱրՍի-117 Ջի Ֆակոն-III» բազմագործառության ռադիոկայանը կարող է աշխատել ինչպես արդիական լայնատիրույթ թվային, այնպես էլ նեղ տիրույթով ցանցերում՝ հաճախականությունների 30-2000 ՄՀց ընդմիջակայքում:

ԱՄՆ-ի բանակի «էյէն/ՓիԱրՍի-150 Ֆակոն-II» ռադիոկայանների ընտանիքն ունի հետևյալ բնութագրերը. բազմագործառության ռադիոկայան է (ծածկագրման սարքով օժտված տարբերակը «ԱրէՖ-5800 էյէ-էմփի» ռադիոկայանն է), որն աշխատում է ամբողջ ԿԱ տիրույթում, ինչպես նաև ԳԿԱ տիրույթի ցածր հաճախականությունների (մինչև 60 ՄՀց) ընդմիջակայքում:

Ամերիկյան «Հարիս/Իքզելիս» ընկերությունը արտասահմանյան գնորդներին առաջարկում է ռազմական նախանշանակման ուսապարկային ռադիոկայանների լայն տեսականի:

Չինաստանում ռադիոկայաններ և դրանց առնչվող այլ սարքավորանք արտադրող կազմակերպություններից առանձնակի ուշադրության է արժանի «Հայտերա» ընկերությունը, որի տեղափոխովի ռադիոկայաններն ունեն հույժ որակյալ պատյան և բազմապիսի տեսականի ըստ ՏԵՏՌԱ, ԴՄՌ, ՓիԴիԱր ու մեծ թվով այլ ստանդարտների:

Ռադիոկապի ապագայի հիմնական առանձնահատկությունն այն է, որ կատարելագործվող սարքերի թիվը տեխնոլոգիաների զարգացման համեմատ անընդհատ նվազում է: ԾՊՌ համակարգը կարող է ներառվել այնպիսի սարքերում, որոնք տեղադրվեն դաստակին կամ սաղավարտի ցուցասարքում: Ապագա ցանցերը, օրինակ, կցուցադրեն ժամանակի ռեալ մասշտաբում, թե որտեղ են տեղաբաշխված յուրային զորքերը, իսկ որտեղ՝ հակառակորդը, և այլն: Այդուհանդերձ, հիմնական ուղղությունը կլինի դրանց և համակարգիչների սերտաձումը:

Ամփոփելով՝ նշենք, որ վերը հիշատակված բոլոր ռադիոկայանները լիովին համապատասխանում են ժամանակակից զինված հակամարտություններում ռադիոկապին ներկայացվող հիմնական պահանջներին, ընդամին գրեթե բոլորն էլ անցել են փորձարկում ռեալ մարտական պայմաններում՝ ապացուցելով իրենց բարձրակարգ կիրառելիությունը: Դա էլ ավելի է բարդացնում ճիշտ ընտրության խնդիրը և ստուգապես կողմնորոշվելու, թե որը կլինի առավել օպտիմալ ՀՀ ՋՌԻ-ի և մեր պայմանների համար: Ընդամին չի կարելի աչքաթող անել նաև մեր հայրենական մշակումները, որոնց արգասիքները պետք է լինեն գերակա՝ բոլոր ժամանակակից պահանջներին բավարարելու պայմանով:

В ВОЙСКАХ СВЯЗИ

СОВРЕМЕННЫЕ ВОЕННЫЕ РАДИОСТАНЦИИ И ПЕРСПЕКТИВЫ ИХ РАЗВИТИЯ

Г. С. АЛЕКСАНИЯ, полковник запаса, ученый-аналитик Центра исследований оперативного искусства НИУО МО РА

РЕЗЮМЕ

В современных условиях для надежного и оперативного управления боевыми действиями необходимы современные средства связи. Особенно для обеспечения мобильности применяются современные SDR радиостанции КВ и УКВ диапазонов. Важно, чтобы данные радиостанции работали в единой системе управления, а также необходимо предусмотреть их работу с радиостанциями старого парка и нового.

Для оперативного управления все новые радиостанции должны обладать возможностью передачи данных, а также необходимо в будущем предусмотреть компьютеризацию радиостанций (включая определение местонахождения человека, состояние его здоровья и т. д.).

IN THE SIGNAL CORPS

**MODERN MILITARY RADIO STATIONS
AND THE PERSPECTIVES FOR THEIR DEVELOPMENT**

G. S. ALEXANYAN, Colonel (Ret.), Research Fellow, Centre for Operational Art Studies, NDRU, MOD, RA

SUMMARY

Under current conditions for secure and operational command and control, contemporary communication facilities are needed. In particular, modern SDR radio stations of SW and VHF range are used to provide mobility. The functioning of such radio stations within an integrated control system is of due importance, while it is of another main necessity to provide for the compatibility of these radio stations with those of obsolete and modern stocks.

For operational control all new radio stations should be capable of data transmission, while in the future it is necessary to envisage the computerization of radio stations (inclusive of positioning and medical checkup of a human, and etc.).

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՄՈԴԵԼԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ
ՈՐՈՇ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ**

*Վ. Վ. ՄԵԼՔՈՆՅԱՆ, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական
համալսարանի Գիտաուսումնական կենտրոնի պետ*

Վերջին քառորդ դարում աշխարհում տեղի ունեցող գիտատեխնոլոգիական զարգացումները, համընդհանրացմամբ և համատեղայնացմամբ¹ պայմանավորված դինամիկ շարժերը անմիջականորեն ազդում են պետությունների և հասարակությունների կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտների վրա: Այդ իրողությունները անխուսափելիորեն հանգեցնում են պետություններում գործող տարբեր համակարգերին ներկայացվող պահանջները վերանայելու անհրաժեշտությանը՝ դրանց գործունեության որակի բարելավման և արդյունավետության մեծացման, հասարակությունների պահանջունքներին համապատասխանեցման նպատակով: Ուստի առաջնային է դառնում տվյալ զարգացումներից բխող խնդիրների համալիր ուսումնասիրությունը և ըստ դրա արդյունքների՝ անհրաժեշտ վերափոխումների ձեռնարկումը:



Ցանկացած պետության կենսականորեն անհրաժեշտ համակարգերից է կրթության համակարգը, որը սոցիալապես առավել ընդգրկուն է, բարդ ու բազմակողմանիներից մեկն է: Բոլոր ժամանակներում կայացած հասարակություններում միշտ էլ կարևորվել է կրթությունը: Դրա բովանդակության մշակման և կազմակերպման հարցերի պատասխանատվությունը վերապահվել է պետությանը*, որն էլ իր և հասարակական պահանջունքների բավարարման նպատակով ստեղծում էր կրթության արդյունավետ համակարգ: Ժամանակ առ ժամանակ, այդ պահանջունքների փոփոխությամբ պայմանավորված, կատարելագործվում էր կրթության համակարգը², որը

¹ Համատեղայնացման (գլոկալիզացիա) մասին ավելի հանգամանորեն տես «ՀԲ», 2018, հմ. 3. «Համընդհանրացման պայմաններում ՀՀ ոգեբարոյական անվտանգության ուղենիշները «թավշյա հեղափոխության» գլոկալիզացման դիտակետից» (էլեկտրոնային տարբերակը՝ https://razmavaraget.files.wordpress.com/2018/12/armenian_army_n3_2018.pdf):

* Այդ գործառնությունը պետությունը սովորաբար իրականացրել է հոգևոր-կրոնական, լուսավորամշակութային կամ հատուկ ստեղծված կառույցների միջոցով:

² Տես *Н. Н. Зверева, О. И. Муравьева*. Опыт модернизации японской системы образования: история и современность. «Вестник Томского государственного университета», 2008, № 310 (<https://cyberleninka.ru/article/n/opyt-modernizatsii-yaponskoj-sistemy-obrazovaniya-istoriya-i-sovremennost/viewer>); *И. В. Вешнева, Р. А. Сингату-*

այլ համակարգերի համեմատությամբ առավել զգայուններից լինելու պատճառով գերծ էր մնում մշտական արմատական բարեփոխումներից:

Քանի որ 21-րդ դարում էապես փոխվել են անհատին, հասարակությանը և պետությանը ներկայացվող պահանջները, ուստի, համապատասխանաբար, պետք է ստեղծվի այնպիսի կրթական համակարգ, որը կբավարարի անհատի կրթական պահանջմունքները, կլինի տվյալ պետության համար կայուն, իսկ միջազգային ասպարեզում՝ մրցունակ³: Այդ նպատակով անհրաժեշտ է համալիր կերպով ուսումնասիրել անհատի, հասարակության և պետության փոխհարաբերությունները (այդ թվում՝ անհատի սոցիալականացման գործընթացում մշակույթի և պետական իշխանության փոխգործության սկզբունքը) պարզելու, թե տվյալ պահին անհատը ինչ կարգավիճակ ունի, որոնք են անհատին ներկայացվող պահանջները և ընդհանուր առմամբ ինչ որակներով անհատ է հարկավոր:

Այսպես. երբ ՀՀ-ում շուկայական հարաբերությունները դրվեցին պետական քաղաքականության հիմքում, տեղի ունեցավ անհատի, հասարակության ու պետության փոխհարաբերությունների արմատական փոփոխություն, անհրաժեշտաբար պետք է փոփոխվեր և կրթական համակարգը, որի համար դա, մի կողմից, դարձավ զարգացման հնարավորություն, սակայն, մյուս կողմից, վերածվեց մարտահրավերի: Այդ անցմանը ՀՀ կրթական համակարգը պարզապես պատրաստ չէր, ինչը հանգեցրեց բովանդակային ճգնաժամի՝ մի վիճակի, որը մինչ օրս էլ հաղթահարված չէ այն պարզ պատճառով, որ ՀՀ-ում դեռևս ստեղծված չէ մեր ազգային առանձնահատկություններն ու միջավայրը հաշվի առնող ազգային կրթական համակարգ: Հատկապես Բոլոնյան համակարգին ՀՀ միանալուց հետո շատ են քննարկվել, վերլուծվել ՀՀ կրթական համակարգում առկա հիմնախնդիրները և նախանշվել բարեփոխումների հնարավոր ուղղությունները⁴:

Քանի որ ռազմավարական տեսանկյունից առաջնային պետք է լինեն հասարակության ընդհանուր քաղաքական, հոգևոր, մշակութային-արժեքային, գաղափարական, սոցիալական համակարգերը, որոնք հենց «կրթությունն» են, հետևաբար սույն ուսումնասիրության օբյեկտը կրթությունն է, առարկան՝ կրթության համակարգը*։ Կրթությունը, լինելով ամենաընդգրկուն

лин. Трансформация образования: тенденции, перспективы. «Высшее образование в России», 2016, № 2 (<https://vovr.elpub.ru/jour/article/view/392/342>):

³ Տես *P. Howard, C. O'Brien, B. Kay, K. O'Rourke*. Leading Educational Change in the 21st Century: Creating Living Schools through Shared Vision and Transformative Governance. Sydney. 2019. P. 13:

⁴ Տես, օրինակ, «Բարձրագույն կրթությունը Հայաստանում. առկա խնդիրների վերլուծություն»: Բուդապեշտ, 2013 (http://www.osf.am/wp-content/uploads/2013/10/OSF_HE_report_ARM.pdf), *П. С. Аветисян*. Формирование единого образовательного пространства СНГ в условиях глобализации (социально-философская концепция). Е., 2007:

* «Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու ու սերունդներին փոխանցելու համար:

հասարակական համակարգերից մեկը, ինքնըստինքյան դառնում է լայն հասարակական քննարկումների առարկա, որի առնչությամբ հաճախ հնչեցվում են անհիմն և իրարամերժ կարծիքներ: Միևնույն ժամանակ, դա ոլորտի պատասխանատուներին հնարավորություն է տալիս իրենց ուշադրությունը սևեռելու իրականում գոյություն ունեցող, թեև երբեմն ոչ բացահայտ, թերությունների վրա՝ դրանց տալով իրենց բարձր մակարդակի մասնագիտական պատրաստականության վրա հիմնվող լուծումներ: Կրթության վիճակը ուսումնասիրելու համար պետք է պարզել տվյալ հասարակության պատմահասարակական և մշակութա-արժեքանական հիմքերը:

Խնդրին կրթության փիլիսոփայության⁵ տեսանկյունից մոտենալու դեպքում հետազոտման մեթոդաբանական սկզբունքը մեզ պետք է հղի առաջինը պատմությանը⁶ (քանի որ ապագայի պլանավորումը շարունակականության սկզբունքով հնարավոր է միայն անցյալի հիմքի վրա), հետո արդեն՝ մշակութաբանությանը (սոցիոմշակութային միջավայրի առանձնահատկությունները հասկանալու և արժեքակողմնորոշական բաղադրիչների վրա հիմնվելու համար):

Պատմականության տեսանկյունից կարևոր են հետևյալ երկու հարցերը. հետազոտության օբյեկտիվությունը և պատմական գործընթացի զարգացման ամբողջական ընկալումը: Կրթության տեսանկյունից պատմության ընթացքի ընկալումը առանցքային հարց է, քանի որ եթե ճիշտ կերպով չընկալվեն ու հասարակության անդամին չմատուցվեն նրա ինքնության պատմական ակունքները, մարդկային քաղաքակրթությունում նրա զբաղեցրած տեղն ու դերը, նախկինում ունեցած ձեռքբերումների և կորուստների հիմնական պատճառները, հնարավոր չի լինի պատմական առաքելության տեսանկյունից նախանշել նրա հավանական ապագան: Իհարկե, ապագայի տեսլականը, եթե խոսքն իրապես երկարատև ռազմավարական տեսլականի մասին է, պետք է բխեցվի համամարդկային սկզբունքներից: Սովորաբար պատմության ընկալման կտրուկ փոփոխություններ, որպես կանոն, տեղի են ունենում հեղափոխությունների ժամանակ, երբ փոխվում է հասարակարգը: Նմանատիպ անցումային շրջաններում հարկ է խուսափել կրթության ոլորտում պատմականության սկզբունքի խախտումից, քանի որ դա չափազանց

Հայաստանի Հանրապետության *կրթության համակարգը* պետական կրթական չափորոշիչների, պետական հավատարմագրման չափանիշների, կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրերի, ուսումնական հաստատությունների և կրթության կառավարման մարմինների փոխկապակցված ամբողջությունն է» (տես ՀՀ 1999 թ. ապրիլի 14-ի «Կրթության մասին» հմ. ՀՕ-297 օրենքը, հոդ. 3, կետ 1, հոդ. 8 (<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=68299>):

⁵ Stu J. Macdonald. A Philosophy of Education. University of Alberta, Scott, Foresman and company, 1965 (<http://library.um.edu.mo/ebooks/b28350467.pdf>):

⁶ Տես Ա. Բ. *Պարհն*, Մշակութային գործոնը ազգային անվտանգության ռազմավարությունում: «ՀԲ», 2012, հմ. 1–2 (էլեկտրոնային տարբերակը՝ https://razmavaraget.files.wordpress.com/2012/06/hb-n1-2_2012.pdf):

վտանգավոր է և, վստահաբար, անհեռանկարային. փորձը ցույց է տալիս, որ կրթության համակարգում տվյալ պատմական շրջանում արժարժվող գաղափարների ներմուծումը ունենում է ժամանակավոր նշանակություն և խեղաթյուրում է կրթության իրական նպատակները՝ առանձին դեպքերում ձևախեղելով մի ամբողջ սերնդի հոգեկերտվածքը:

Պատմականության սկզբունքի մեկ այլ առանցքային խնդիր է կրթության վրա քաղաքական-գաղափարական գործոնի անմիջական ազդեցությունը: Պատմությանը հայտնի են այս երևույթի և՛ դրական, և՛ բացասական օրինակներ: Դրանցից են, համապատասխանաբար՝ Ֆրանսիան Մեծ հեղափոխությունից հետո և Նացիստական Գերմանիան: Առաջինի դեպքում մարդկությունը վերցրեց և կրթության մեջ որպես համամարդկային-քաղաքակրթական զարգացման կարևոր սկզբունքներ ներդրեց մինչ օրս հաջողությամբ կիրառվող հեղափոխական գաղափարախոսության հիմնադրույթները՝ ազատություն, հավասարություն, եղբայրություն: Նացիստական Գերմանիան իր չափազանց որակյալ կրթության համակարգում ներդրեց ռասիստական-ազգայնամոլական գաղափարներ, որոնք ունեցան ժամանակավոր ազդեցություն և հետագայում լայն տարածում չստացան այլ պետությունների կրթական համակարգերում, քանի որ ի բնե հակամարդկային էին ու սխալական⁷: Իհարկե, հնարավոր չէ լիովին խուսափել կրթության քաղաքականացումից, քանի որ կրթությունը քաղաքական համակարգի մաս է: Սակայն հաստատապես կարելի է նվազեցնել կրթության մեջ քաղաքականության՝ որպես անցողիկ երևույթի գործոնը:

Կրթության համակարգի կառուցման մշակութաբանական հիմքերի վերլուծությունը հնարավորություն է տալիս դուրս բերելու տվյալ հասարակության արժեքային կողմնորոշման հիմքերը, որոնցից պետք է բխեցվի մարդկանց որոշակի խմբի միասնականությունը: Երբ կրթության համատեքստում խոսում ենք մշակույթի մասին, պետք է հասկանալ, որ այն ոչ թե տվյալ ազգի ճակատագրի անփոփոխ պարամետր է, այլ դինամիկ բնութագիր, որը պատմության ընթացքում թեպետ դանդաղորեն, բայց մշտապես փոփոխվում է (առաջին գործոն): Մշակութային գործոնի կարևորությունը բացառիկ է անհատի ոչ միայն ուսուցման սկզբունքներն ու բովանդակությունը, այլ նաև դաստիարակության էությունը և պայմանները որոշելու համար: Իսկ դաստիարակության միջոցով կանխորոշվում է, թե ապագայում ինչ վարք կունենա տվյալ անհատը: Այստեղ հարկ է շեշտել, որ եթե ուսուցումը ներդաշնակորեն կապակցված չէ դաստիարակության հետ, ապա անհատի ձևավորման և ներդաշնակ զարգացման միջև կարող է առաջանալ չափազանց վտանգավոր ջրբաժան: Դա նշանակում է, որ պետք է հասկանալ, թե, մի կողմից, ինչ սովորեցնել անհատին (ուսուցման բովանդակություն), իսկ մյուս

⁷ Stu *M. C. Бабина*. Высшее образование как инструмент политической власти в Третьем рейхе. «Вестник Томского государственного университета», 2016, № 404 (<https://cyberleninka.ru/article/n/vysshee-obrazovanie-kak-instrument-politicheskoy-vlasti-v-tretyem-reyhe/viewer>):

կողմից՝ ինչ արժեքներ սերմանել (դաստիարակություն)⁸: Օրինակ՝ նացիստական Գերմանիայի կրթության համակարգը աշխարհում ամենակատարյալներից էր, իսկ համակենտրոնացման ճամբարներ կառուցողները, ռազմագերիներին այնտեղ ուղարկողներն ու խոշտանգողները ուսյալ ինժեներներն ու բժիշկներն էին:

Քանի որ հասարակության անդամի աշխարհայացքի ձևավորման հիմնական միջոցներն են ուսուցումն ու դաստիարակությունը, ապա կարևոր է անհատի կենսական արժեքների ամբողջական հաստատությունացման և աստիճանակարգման համար ուսումնասիրել «ունենալ» և «լինել» երևույթները, դրանց տեղն ու դերը և հաշվեկշիռը⁹: Դրանցից մեկին նախապատվություն տալը կնշանակի տվյալ կողմնորոշման համար սահմանված արժեքների համալիրի ընտրություն: Արժեքների կառուցվածքը և աստիճանակարգությունը որոշում են կրթության նպատակամիտվածության ամբողջ շղթան, այն է՝ ուսուցման նպատակը, օբյեկտը, սուբյեկտը, համակարգի կազմակերպման սկզբունքները, դրա կառավարման մեթոդները, բովանդակությունը, ուսումնադաստիարակչական մեթոդների ու ձևերի համալիրը և այլն: Ըստ այդմ, եթե ընտրվում է կյանքի, այսպես կոչված, «նյութական գործոնը» («ունենալը»)՝ հոգուտ անհատի մասնագիտության և մասնագիտացման, ապա, նշանակում է, հասարակությունը նախապատվություն է տալիս իրական ուսուցմանը և մեծացնում է մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանցը, մեծ տեղ է տալիս դրանց ինքնուրույնությանը, իսկ կրթական համակարգը կառուցվում է կենսական գիտելիքների, կարողությունների և հմտությունների հիման վրա:

Իսկ եթե ընտրությունը կատարվում է ըստ հոգևոր գործոնի («լինել»)՝ հոգուտ անհատի անձնային որակների, ապա նշանակում է՝ հասարակությունը նախապատվություն է տալիս ձևական կրթությանը, հիմնվում է ընդհանուր կրթական ուսումնական հաստատությունների ցանցի վրա, որոնցում ուսուցումն ու դաստիարակությունը ուղղված են ուսումնառողների հոգևոր ու մտավոր հնարավորությունների զարգացմանը:

Պատմական տարբեր փուլերում կրթության համակարգերը, որպես կանոն, սոցիոմշակութային առումով տարբեր կերպ են դրսևորվել և տարբեր խնդիրներ են լուծել: Կրթության պատմական հիմքերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ հասարակության մի հատվածը, որի հիմնական գործառնությունն էր զլխավորապես հասարակական պահանջունքների նյութական մասի բավարարումը առանց էական գիտելիքների գործադրման, կողմնորոշված է եղել դեպի «ունենալը»: Իսկ մյուս հատվածը կողմնորոշված է եղել դեպի «լինելը», քանի որ մեծ մասամբ

⁸ Տես *С. Н. Гавров, Н. Д. Никандров. Образование в процессе социализации личности. «Вестник УРАО», 2008, № 5 (http://www.vestnikurao.ru/pdf/VESTNIK_URAO_5-2008r.pdf):*

⁹ Տես *А. П. Булкин. Социокультурная динамика образования. Исторический опыт России. Дубна, 2005, сс. 115–126:*

գբաղվել է կառավարման, հոգևոր-մշակութային ու գիտակրթական հարցերով: «Լինելու» սկզբունքը կենսական-գոյաբանական նշանակություն է ունեցել անցյալում և ունի հիմա էլ: Քանի որ պատմական ճակատագրի բերումով հայ իրականության մեջ գրեթե մշտապես արդիական են եղել գոյության պահպանման հարցերը, ապա այդ խնդիրներն արտացոլվել են կրթության մեջ՝ անուղղակի կերպով հաստատելով «լինելու» հայեցակարգի գերակայությունը¹⁰:

Մեր կարծիքով՝ կրթության կազմակերպման նկատմամբ արդյունավետ ռազմավարական մոտեցում պետք է լինի հենց այս երկու սկզբունքների՝ «ունենալու» և «լինելու» խելամիտ համադրումը: Ընդամենի համադրման ու փոխլրացման ճանապարհը տանում է դեպի կայուն որակներով ընտրախավի ձևավորում, մի ընտրախավի*, որը հանուն իր ազգի բարգավաճման պետության զարգացման հիմքում կոնի կրթված և տնտեսապես ամուր անհատին: Ըստ այդմ՝ գաղափարական նախաձեռնությունը պետք է ուղղված լինի ներքևից վերև, մինչդեռ կրթության և դաստիարակության վրա հիմնված զարգացման հիմնական ռազմավարությունը՝ վերևից ներքև: Կարող է տարօրինակ թվալ, որ բարեփոխումների և ռազմավարությունների իրականացման համար որպես պատասխանատու առաջարկում ենք ոչ թե պետությունը, այլ հասարակության ընտրախավին: Իհարկե, պետությունը ևս մնալու է այս գործընթացի առանցքային դերակատար, քանի որ նրանից է կախված այդ գործընթացները մեծ արդյունավետությամբ կառավարելու կարևոր գործառույթը:

Պետությունն ինքը պետք է խրախուսի անհատի նախաձեռնողականությունը, ստեղծագործականությունը, վստահությունն ու արժանավայելությունը՝ նրան մղելով դառնալու ոչ թե մասնավոր, այլ ընդհանուր բարիքի ստեղծող: Այս պարագայում առանցքային նշանակություն է ստանում այն խնդիրը, թե ինչպես պետք է պետությունը նախաձեռնողականությունն ուղղորդող այդ գաղափարը հասցնի հասարակ անհատին: Դրա լավագույն ձևը, թերևս, դրա զետեղումն է կրթության և գլխավորապես՝ հանրակրթության բովանդակության մեջ: Ընդ որում, ուսուցման և դաստիարակության հիմքում պետք է դրվեն այնպիսի անձնային որակների ձևավորումն ու զարգացումը, ինչպիսիք են աշխատասիրությունը, պատասխանատվության զգացումը, ճշտապահությունը, խնայողականությունը, որոնք ինքնին տնտեսական առաքինություններ են՝ բխեցված հասարակ անհատի այլ անձնային որակներից՝ ազատատենչությամբ:

¹⁰ Տես Վ. Բարխուդարյան, Կրթությունը միջնադարյան Հայաստանում, X-XIV դարեր (Համառոտ ուրվագիծ) (http://hpj.asj-oa.am/5887/1/1_VI_Barkhudaryan.pdf): Տես նաև՝ Ա. Սահակյան, Մանկավարժական մտքի պատմություն: ՈՒՄՈՒՄՆԱԿԱՆ ԺԵՆԱՐԿ: Ե., 2010, էջ 64–75 (<http://ijevanlib.yso.am/wp-content/uploads/2018/02/sahakyan-manka-varjakan-mtqi-patmutyun.compressed.pdf>):

* Այստեղ գործածված «ընտրախավ» հասկացությունը չպետք է շփոթել տարիներ ի վեր ՀՀ հասարակական-քաղաքական շրջաններում օգտագործվող «վերնախավ» և, որպես հոմանիշ, «ընտրախավ» հասկացությունների հետ:

յունից, ինքնուրույնությունից, ինքնաքննադատականությունից և այլ նման հատկություններից: Ժամանակակից տնտեսությունը կենսունակ է հենց շնորհիվ աշխատողի նախաձեռնողականության, գիտակցականության և ստեղծագործականության: Այսպիսի ուղենիշներով կառուցված կրթական համակարգը միանշանակ կերպով կծնավորի անհրաժեշտ փոփոխություններ կատարելու, եղածը մշտապես կատարելագործելու անհատի ձգտումը:

Բացի վերը շարադրված զուտ տեսական նկատառումներից, կարևոր ենք համարում դիտարկել նաև կրթության բուն բովանդակային խնդիրը՝ նրա մրցունակության և պետության տնտեսության զարգացման գործում նրա ունեցած դերի հարցը: Այն, որ 21-րդ դարում կրթությունը պետք է լինի շահեկանորեն տարբերվող, մրցունակ և հանդես գա որպես պետության տնտեսության զարգացման լոկոմոտիվ, թերևս, անվիճելի է: Այլ է հարցը, թե որոնք պետք է լինեն կրթության մրցունակության չափանիշները, ինչ առաջնահերթություններ պետք է սահմանվեն կրթության համար, որպեսզի այն չվերածվի զուտ տնտեսության զարգացման կցանքի: Ջարգացած աշխարհում, որտեղ մեծ տեղ է հատկացվում կյանքի նյութական կողմին, այսպես կոչված բարեկեցությանը, հենց այդպես էլ արվում է: Նման պայմաններում կրթության իրական նպատակներն ու բովանդակությունն ստորադասվում են մրցունակ տնտեսության շահերին, ընդամին մեծ տեղ է տրվում կրթության մեկ այլ բաղադրիչին՝ գնահատմանը: Ցավոք, գնահատումն իր ամենատարբեր դրսևորումներով հանդերձ, հաճախ վերածվում է պարզ մրցավազքի, երբ ստվերում են մնում այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսին են բոլոր առումներով առողջ անհատի ձևավորումը և զարգացումը: Երբ կրթության հիմքում անհատական մոտեցումը, այն է, թե սոցիալապես առողջ անհատի ձևավորումը, փոխարինվում է գնահատումով և անընդհատ մրցակցությամբ, ապա ամբողջովին խեղաթյուրվում են կրթության իրական, փիլիսոփայական նպատակները և բովանդակությունը: Հայաստանի պարագայում նրա ռազմավարական-անվտանգային միջավայրի առանձնահատկությունների, առկա սպառնալիքների ու մարտահրավերների հաշվառմամբ կրթությանը պետք է վերապահել գործառույթների հնարավորինս լայն շրջան, քան զուտ տնտեսության զարգացմանը ծառայեցնելը:

Այնուհանդերձ, կրթությունը չի կարող չունենալ մրցակցային միջավայր և մրցունակություն, որտեղ առավել քան բնական են ինչպես անհատի, այնպես էլ պետության մրցունակությունն ապահովելու ձգտումները: Սակայն դա պետք է արվի մի շարք կարևոր գործոնների հաշվառմամբ, որպեսզի չկորչեն կրթության իրական նպատակները: Թերևս այդ գործոններից կարելի է առանձնացնել արդարության սկզբունքը, որը բովանդակում է մրցակցության՝ որպես անհատի ներուժը դրսևորելու գաղափարի խրախուսում, նրա ստեղծագործ նախաձեռնողականությունը խթանելու հնարավորություն և, դրա շնորհիվ, պետության ներուժը նոր մակարդակի բարձրացնելու միջոց:

Ամփոփելով սույն համառոտ ուսումնասիրությունը՝ նպատակահարմար ենք համարում ՀՀ-ում կրթության նոր հեռանկարային մոդելի մշակման ժամանակ կիրառել հետևյալ սկզբունքները.

- տարբեր կրթական մակարդակների ավարտական և շեմային չափանիշների որոշումը իրագործել վերևից ներքև. ինչ մակարդակի մասնագետ է հարկավոր հասարակությանը, ըստ այդմ՝ ինչ մակարդակի դիմորդ պետք է ընդունվի բուհ, ըստ այդմ՝ ինչ մակարդակի շրջանավարտներ պետք է տա դպրոցը, և այլն,
- պետական կրթական չափորոշիչների վերամշակման ժամանակ ուշադրություն դարձնել «ունենալ» և «լինել» սկզբունքով կրթության համակարգերի հաշվեկշռմանը,
- վերանայել դաստիարակության գործընթացը՝ որպես ուսուցման անբաժան բաղադրիչի, բոլոր կրթական մակարդակներում՝ սկսած նախադպրոցական կրթությունից մինչև մասնագիտական կրթություն, ապահովել դաստիարակության և կրթության խիստ ներդաշնակությունը (մակարդակների համապատասխանությունը),
- բարելավել մանկավարժի սոցիալական կարգավիճակը և, համապատասխանաբար, խստացնել մասնագիտական ընտրազատման չափանիշները, կրթության ոլորտը գերծ պահել քաղաքական-կուսակցական կողմնորոշումների ազդեցությունից,
- տարածքային կառավարման մարմիններում կրթության պատասխանատու ստորաբաժանումների տրամադրել հանրակրթության որակի ապահովման մեխանիզմներ՝ դրանք վերածելով որակի ապահովման տարածքային կենտրոնների:

ВОЕННОЕ ОБРАЗОВАНИЕ

НЕКОТОРЫЕ ПОДХОДЫ К РАЗРАБОТКЕ НОВОЙ ПЕРСПЕКТИВНОЙ МОДЕЛИ ОБРАЗОВАНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

В. В. МЕЛКОНЯН, начальник Научно-учебного центра НИУО МО РА

РЕЗЮМЕ

Образование является одной из социальных сфер с наибольшим охватом населения. Включая обучение и воспитание, оно определяет мировоззрение и установки личности, модели его поведения. В силу этого, образование по своему содержанию и структуре должно чутко реагировать на изменения, происходящие в обществе и государстве, в целях эффективного удовлетворения их потребности в индивидуумах с определенными личностными качествами. В то же время постоянное реформирование системы образования неизбежно приводит к ее деформациям и, как следствие, резкому снижению результативности ее функционирования.

Правильный выбор системы образования, ее критериев и стандартов особо важен для таких малых государств, как Армения, обладающих скудными материальными и человеческими ресурсами и находящимися в сложной, полной угроз и неопределенностей региональной безопасностной среде.

При теоретическом определении направлений развития образования целесообразен философский подход к исследованиям, включающий исторический (непрерывности) и культурологический (выявление особенностей социокультурной среды и ценностно-ориентировочных составляющих) принципы. При этом важно определиться в вопросе приоритетности организации образования по принципам «иметь» или «быть», т. е. с акцентацией подготовки кадров, предназначенных для эффективного удовлетворения материальных нужд общества (реальное обучение), или кадров, способных создавать жизненно важные знания, интеллектуальный потенциал для всестороннего развития общества (формальное образование).

MILITARY EDUCATION

SOME APPROACHES TO THE DEVELOPMENT OF THE NEW PERSPECTIVE EDUCATIONAL MODEL IN THE REPUBLIC OF ARMENIA

V. V. MELKONYAN, Head, Academic-Teaching Center, NDRU, MOD, RA

SUMMARY

Education is one of the social spheres with maximum engagement of population. With training and raising included, it defines the world outlook and attitude of the individual, his/her behavioral models. By virtue of this, education in its content and structure should keenly respond to the changes taking place in the society and the state aiming to effectively address their needs among individuals with certain personal features. Meanwhile, the consistent reformation of the educational system results inevitably in its deformations, and, as a result, abrupt decline in its effective functioning.

The correct choice of the educational system, its criteria and standards, is of special importance for such small states as Armenia, having scarce material and human resources, and being situated in a complicated regional security environment hefty with threats and uncertainties.

With the theoretical determination of directions of developing education, it is reasonable to use the philosophical approach to the

studies, which embraces historical (continuity) and culturological (revealing the characteristic traits of the socio-cultural environment and the value-oriented components) principles. In addition, it is important to decide upon the question of priority of organizing the education according to the principles of “having” or “being”, i. e., accentuating the staff training, who are meant for effectively addressing the material needs of the society (real training), or the staff quite apt at creating knowledge of vital importance, intellectual potential for the all-out development of the society (formal education).

ԱՐՇԵՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԻՑ. ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ՈԱԶՄԱԿԱՆ
ՈԼՈՐՏԻ ՀԱՄԱՐ*

Գ. Է. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի Ռազմավարական խաղերի և մոդելավորման
խմբի պետ



Չնայած բազմաթիվ հոռետեսական կանխատեսումների, թե արհեստական բանականությունը (ԱԲ), որը մարդկության պատմության մեջ ամենանշանակալից տեխնոլոգիական հեղաշրջումներից է, կարող է հանգեցնել մարդկության կործանմանը¹, արդի աշխարհում դրա զարգացումը և կիրառումը՝ բոլոր ռիսկերով հանդերձ, արդեն անշրջելի իրողություն է: Խոսքը վերաբերում է ձեռակերտ բանական համակարգերի գոյությանը, որոնք ունակ են իրականացնելու մինչ այժմ մարդկային մենաշնորհի համարվող ստեղծագործական գործառնություններ՝ դրանց նմանակման, ինքնուսուցման և ինքնուրույն գործողությունների ու որոշումների կայացման ալգորիթմների ստեղծմամբ:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության արհեստական բանականության հարցերով խորհրդի հանձնարարական բնույթի իրավական փաստաթղթերում ԱԲ-ն սահմանվում է որպես մեքենայացման հիմքով գործող, ինքնուրույնության տարբեր աստիճաններով համակարգ, որը մարդու առաջադրած խնդիրների լուծման համար կարող է կատարել կանխատեսումներ, առաջարկել որոշումներ և հանձնարարականներ՝ ազդելով իրական կամ երևակայական (վիրտուալ) միջավայրների վրա²: ԱԲ-ի տեխնոլոգիական լուծումները ներառում են զարգացած տեղեկատվա-հեռահաղորդակցային ենթակառուցվածքներ, ծրագրային ապահովում (այդ

* Սույն հետազոտությունը կատարվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 19T-5B12 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

¹ Stu *Rory Cellan-Jones*. Stephen Hawking warns artificial intelligence could end mankind. "BBC News", 2 December 2014 (<https://www.bbc.com/news/technology-30290540>); "Elon Musk: artificial intelligence is our biggest existential threat". "The Guardian", 27 October 2014 (<https://www.theguardian.com/technology/2014/oct/27/elon-musk-artificial-intelligence-ai-biggest-existential-threat>):

² Stu "Recommendation of the Council on Artificial Intelligence" (OECD/LEGAL/0449). Series: OECD Legal Instruments, 2019 (<https://www.fsmb.org/siteassets/artificial-intelligence/pdfs/oecd-recommendation-on-ai-en.pdf>):

թվում՝ նաև մեքենայական ուսուցում), տվյալների մշակում և որոշումների կայացում: Կարելի է առանձնացնել ԱԲ-ի հետևյալ ենթատեխնոլոգիաները³.

- ❖ համակարգչային տեսողություն (*Computer Vision*)՝ ալգորիթմների այնպիսի համակարգ, որը հնարավորություն է տալիս որոնելու, հետևելու և դասակարգելու տարբեր օբյեկտներ,
- ❖ բնական լեզվի մշակում (*Natural Language Processing*), ինչը հնարավորություն է տալիս հասկանալու լեզուն և գեներացնելու գրագետ տեքստ՝ ավելի հեշտացնելով մարդու և համակարգչի փոխգործությունը,
- ❖ խոսքի ճանաչում և համադրում (*Speech Analysis, Synthesis and Perception*), ինչը հնարավորություն է տալիս կենդանի խոսքը փոխարկելու տեքստայինի, ընդ որում՝ ձայնի տեմբրի, տոնայնության, հուզական շեշտադրումների հաշվառմամբ,
- ❖ որոշումների կայացմանն աջակցող խորհրդատվական ու բանական համակարգերի (*Recommender Engine and Intelligent Systems to Support Human Decision Making*) մշակում, որոնք նախատեսված են բարդ տեղեկատվական միջավայրում բազմահայտանիշային որոշումների կայացմանն օժանդակելուն,
- ❖ ներդրող թեզավորում, ներդրող տերֆեյսներ, ներդրող մոլդացում և ներդրող սենսինգ, այսինքն՝ այնպիսի լուծումների մշակում, որոնք հնարավորություն են տալիս բարելավելու մարդկանց ֆիզիկական և հաղորդակցային ունակությունները՝ տարբեր սարքավորանքի հետ ներդրող կապերով գործակցելու միջոցով, իսկ այս տեխնոլոգիաների կատարելագործումը մոտ ապագայում հնարավորություն կտա նաև համակողմանիորեն հետևելու և ներազդելու մարդկային ուղեղի ակտիվության վրա:

Որպես գերարդիական տեխնոլոգիա, այն հավակնում է առանցքային դեր ունենալու մարդկային հասարակության բարեկեցության և կենսապայմանների բարելավման, համաշխարհային տնտեսության կայուն զարգացման, արտադրողականության աճման և համամարդկային խնդիրներն առավելագույնս արդյունավետ կերպով լուծելու գործում: Այսօր արդեն ԱԲ-ն լայն կիրառություն ունի հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում՝ արդյունաբերությունից ու ֆինանսներից մինչև առողջապահություն ու անվտանգություն: Ընդ որում, բոլոր գործընթացները, որոնցում այս կամ այն կերպ սկսում է կիրառվել արհեստական բանականությունը, անմիջապես դառնում են ավելի արդյունավետ ու եկամտաբեր: Բերենք մի քանի օրինակ:

Ֆինանսական և արտադրական ոլորտները ԱԲ-ի կիրառման առաջատարներից են, ինչը պայմանավորված է առաջին հերթին աշխատողների գործողությունների որոշակի մոնոտորությամբ, որի փոխարինումն ավտոմատացված համակարգերով խոստանում է էական արդյունավետություն:

³ Տես «Дорожная карта развития «сквозной» цифровой технологии «Искусственный интеллект и нейротехнологии»». М., 2019 (<https://digital.gov.ru/uploaded/files/07102019ii.pdf>):

«ՄակԲինսի» (*“McKinsey”*) ինստիտուտի մասնագետների հետազոտությունները փաստում են, որ ֆինանսական ոլորտում ԱԲ-ն հանգեցրել է զգալի տնտեսական էֆեկտների՝ շնորհիվ հաճախորդների հետ արդյունավետ աշխատանքի, ռիսկերի կառավարման, գնագոյացման գործընթացի օպտիմալացման, ինչպես նաև նոր ֆինանսական արդյունքների առաջարկի: ԱԲ-ի կիրառումը հնարավորություն է տալիս հաճախորդների ծայնի ու դիմագծերի հիման վրա կատարվող նույնականացման շնորհիվ արագորեն բացահայտելու խաբեբաներին, կամ հակառակը՝ բարեխիղճ հաճախորդներին և ծառայությունների անհատականացման շնորհիվ կրճատելու հաճախորդների արտահոսքը⁴: ԱԲ-ն նաև արագորեն գնահատում է վարկային ռիսկերը, կանխատեսում պահանջարկը: Օրինակ՝ հոլանդական «ԱլենՋի» ընկերության մշակած «Քատանա» գործիքը հնարավորություն է տալիս կանխատեսելու՝ թրեյդերներին օգնելով պարտատոմսերի առք ու վաճառքի ժամանակ առաջարկելու ավելի շահավետ գին: Բարձր ճշգրտությամբ գնահատականների ստացման համար ԱԲ-ն ժամանակի իրական ռեժիմում վերլուծում է ամբողջ հասանելի տեղեկույթը, այդ թվում՝ ժամանակագրական տվյալները: Այն գրեթե 90 %-ով մեծացնում է գնագոյացման վերաբերյալ որոշումների կայացման արագությունը և 25 %-ով կրճատում գործարքային ծախսերը⁵:

Ստենֆորդի համալսարանի պրոֆեսոր Էնդրյու Ինի հաջողությամբ պսակված մեկնարկային գործարարության (*startup*) նախագծերից մեկը՝ «Լենդինգ.Ալ» (*“Landing.AI”*)-ն առաջարկում է համակարգչային տեսողության և մեքենայական ուսուցման հնարավորությունների վրա հիմնված ԱԲ-ի համակարգ, որը տեսահսկողության (*visual inspection*) շնորհիվ կարող է արտադրության բոլոր փուլերում արագորեն հայտնաբերել թողարկվող արտադրանքի թերությունները: Տեխնոլոգիան հատկապես արդյունավետ է փոքր դետալներով աշխատանքի ժամանակ, ինչը պահանջում է մեծ կենտրոնացվածություն և վերահսկողություն, որոնք կենդանի աշխատուժը միշտ չէ, որ կարող է ապահովել բարձր արդյունավետությամբ⁶:

Առողջապահություն: ԱԲ-ն արդեն վաղուց թափանցել է նաև բժշկության ոլորտ: Դրա շնորհիվ ավելի հեշտացել է հիվանդության կամ տարբեր ախտանիշների դինամիկայի վերահսկումը և հիվանդների վիճակի փոփոխությունների վերաբերյալ ճշգրիտ կանխատեսումների կատարումը (օրինակ՝ հայտնի «Քվենտուս» ԱԲ-ն հնարավորություն է տվել կլինիկաներից մեկում մոտ 40 %-ով կրճատելու ոչ պիտանի բժշկական թեստերի թիվը): Ավելի վստահելի են դարձել բժշկական ախտորոշման արդյունքները: ԱԲ-ի շնորհիվ

⁴ Stu *Семен Яковлев*. Что может искусственный интеллект в финансовом секторе. «Ведомости», 16 июля 2019 (<https://www.vedomosti.ru/finance/blogs/2019/07/16/806645-iskusstvennii-intellekt-finansovom>):

⁵ Stu “Katana gives bond traders a cutting edge”, 12 December 2017 (<https://www.ing.com/Newsroom/News/Katana-gives-bond-traders-a-cutting-edge.htm>):

⁶ Stu *Yifan Yu*. AI world has room for both US and China: ex-Google and Baidu insider. “Nikkei Asian Review”, 7 September 2019 (<https://asia.nikkei.com/Business/China-tech/AI-world-has-room-for-both-US-and-China-ex-Google-and-Baidu-insider>):

դեղագործության ոլորտում կատարվում են բացառիկ հետազոտություններ՝ նպատակաուղղված նոր դեղամիջոցների ստացմանը (օրինակ՝ «Ատոմնետ») խոր մեքենայական ուսուցման ու նեյրոնային ցանցերի տեխնոլոգիաները օրական մոտ 10 մլն քիմիական միացություններ են ուսումնասիրում՝ դրանց օպտիմալ փոխազդեցության հնարավորությունները գնահատելու համար): Ի հայտ են գալիս այսպես կոչված «խելացի» բուժաշխատողներ՝ հոգեբաններից ու «անհատական բժիշկներից» մինչև ռոբոտ-վիրաբույժներ (օրինակ՝ հայտնի չորսձեռքանի ռոբոտ-վիրաբույժ «Դա Վինչին», որը մշակվել է դեռ 1980-ականներին, և այսօր արդեն կա դրա զանգվածային արտադրություն)⁷:

Պետական կառավարման ոլորտ ԱԲ-ն այնքան էլ արագ չի թափանցել: Դրա պատճառներից մեկն այն է, որ պետական մարմինները տվյալների անվտանգության ապահովման հարցում ավելի զգայուն են, և որոշակի ժամանակ է պետք բանական ավտոմատացման համար անհրաժեշտ մեծածավալ տվյալների հետ աշխատանքի անվտանգությունը բարձր մակարդակով ապահովելու համար: Այնուամենայնիվ, այսօր արդեն աշխարհի մեծ թվով պետություններում իշխանությունները լիովին օգտվում են ԱԲ-ի տեխնոլոգիաների առավելություններից՝ պետական կառավարման ոլորտում գործառնությունների արդյունավետության մեծացման նկատառումներով: Ներկայացնենք պետական կառավարման ոլորտում ԱԲ-ի կիրառման մի քանի ուղղություն:

- ❖ **Քաղաքացիների դիմումների հետ աշխատանք:** Քաղաքացիների դիմումները պետական մարմինների համար ներկայացնում են մեծածավալ տեղեկատվական հոսքեր, որոնց ուսումնասիրության, դասակարգման, վերլուծության և քննարկման համար անհրաժեշտ են զգալի մարդկային ռեսուրսներ: Հաճախ մարդկային գործոնի պատճառով (անուշադրություն, անհատական մոտեցում, հոգնածություն) դիմումների հետ աշխատանքը հնարավոր չէ կատարել բավարար արդյունավետությամբ: Այս նպատակով ԱԲ-ի օգտագործման փորձը ցույց է տալիս, որ կարելի է արդյունավետությունը մեծացնել մոտ 35 %-ով՝ դիմումների մշակման ժամանակի ու մարդկային սխալի նվազեցման և դիմումների պատասխանների ու կայացվող որոշումների օպտիմալացման շնորհիվ⁸: Առաջարկվում են նաև ծայնային հաղորդագրությունները (օրինակ՝ հեռախոսային ծայնագրությունները) տեքստայինի վերածելու պայմանանշանների օպտիկական ճանաչման տեխնոլոգիաներ, որոնք ավելի արդյունավետ կդարձնեն քաղաքացիների հետ աշխատանքը:

⁷ Տես «Возможности ИИ в медицине: примеры применения», 25 февраля 2019 (<https://mhealthcongress.ru/ru/article/vozmognosti-ii-v-meditsine-primeri-primeneniya-96282>):

⁸ Օրինակ՝ ռուսական «Դիրեկտում» (*“DIRECTUM”*) ընկերության մշակած համակարգը հաջողությամբ կիրառվում է ՌԴ Օմսկի մարզի կրթական գերատեսչությունում (տես *Виталий Астраханцев. Применение интеллектуальных технологий в ИТ-инфраструктуре органов государственной власти. Миф или реальность? «ECM-Journal»*, 8 ноября 2019 (<https://ecm-journal.ru/docs/Primenenie-intellektualnykh-tekhnologijj-v-IT-infrastrukture-organov-gosudarstvennoj-vlasti-Mif-ili-realnost.aspx>)):

- ❖ **Գործառնությունների արդյունավետության մեծացում:** ԱԲ-ն լայնորեն կիրառվում է նաև ճանապարհային երթևեկության կարգավորման և վերահսկման ոլորտում: Դեռ 2012 թ. մշակված «ՍՈՒՐՏՐԱԿ» (*Scalable Urban Traffic Control*) համակարգը վարորդներին հնարավորություն է տալիս 30-40 %-ով կրճատելու երթևեկության ընդհանուր ժամանակը՝ կանգառումները բացառելու, սպասման ժամանակը կրճատելու և արագությունն ավելացնելու շնորհիվ: Քիչ կանգառումները և կարճ վազքատարածությունները կրճատում են անվադողերի (20 %-ով) և ճանապարհների (25 %-ով) մաշվածությունը, վնասակար արտանետումների ծավալները (20 %-ով)՝ հանգեցնելով ծախսերի զգալի տրնտեսման թե՛ վարորդների, թե՛ քաղաքային իշխանությունների համար⁸:
- ❖ **Քաղաքական և օրենսդրական գործընթացների արդյունավետության մեծացում:** ԱԲ-ն պետական իշխանություններին հնարավորություն է տալիս նաև բարելավելու տարբեր ոլորտներում իրականացվող քաղաքականությունը և կայացնելու ավելի ճիշտ որոշումներ: Այն արդյունավետ է հասարակության տրամադրությունների գնահատման, սոցիալ-քաղաքական հակամարտությունների բացահայտման և դրանց հետևանքների հաղթահարման հարցում: 2019 թ. ԱԲ-ն կիրառվել է համացանցում տեղի ունեցող քննարկումների և Քենիայիում քաղաքական բռնությունների միջև կապը բացահայտելու նպատակով⁹:

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈԱԶՄԱԿԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ

Գիտնականները համակարծիք են, որ ԱԲ-ն փոխելու է պատերազմը բոլոր տեսանկյուններից¹⁰: Պենտագոնի «Արհեստական բանականության ռազմավարություն»-ում շեշտվում է, որ «այն պատրաստվում է փոխել ապագա ռազմադաշտի բնույթը» և հնարավոր սպառնալիքների արագությունը¹¹: Իսկ ՌԴ Նախագահ Վ. Պուտինը 2019 թ. մայիսին ԱԲ-ի զարգացմանը նվիրված խորհրդակցության ժամանակ նկատել է, որ եթե որևէ մեկը կարողանա այս ոլորտում հաստատել մենաշնորհ, նա կդառնա աշխարհի տիրակալը¹²:

⁸ Stu “SURTRAC: intelligent traffic signal control” (<https://www.rapidflowtech.com/surtrac>):

⁹ Stu *Chris Mahony, Eduardo Albrecht and Murat Sensoy*. The relationship between influential actors’ language and violence: A Kenyan case study using artificial intelligence. February 2019:

¹⁰ Stu “Battle algorithm: Artificial intelligence is changing every aspect of war”. “The Economist”, 07.09.2019 (<https://www.economist.com/science-and-technology/2019/09/07/artificial-intelligence-is-changing-every-aspect-of-war>):

¹¹ Stu “Summary of the 2018 Department of Defense Artificial Intelligence Strategy. Harnessing AI to Advance Our Security and Prosperity”, P. 4 (<https://media.defense.gov/2019/Feb/12/2002088963/-1/-1/1/SUMMARY-OF-DOD-AI-STRATEGY.PDF>):

¹² Stu «Путин взялся за искусственный интеллект. Что обсуждали на первом совещании». «BBC News», 30 мая 2019 (<https://www.bbc.com/russian/news-48463710>):

Ակնհայտ է, որ ԱԲ-ի զարգացումը յուրաքանչյուր պետության համար (իսկ առավել մեծ հրատապությամբ՝ փաստացի պատերազմական վիճակում գտնվող պետությունների համար) վերածվել է ազգային անվտանգության և առհասարակ գոյության հարցի, քանի որ մեծ արագությամբ ներթափանցել է ռազմական ոլորտ և պահանջում է պետությունների ռազմապաշտպանական գերատեսչությունների արծազանքը՝ համարժեք արագությամբ:

Համառոտ դիտարկենք ռազմական նպատակներով արհեստական բանականության կիրառության հիմնական ուղղությունները¹³:

Հետախուզություն: Ակնհայտ է, որ ԱԲ-ն օգտագործելու պաշտպանական գերատեսչությունների շարժառիթներից մեկը հսկայական ծավալներով այն տվյալների մշակումն է, որոնք անհրաժեշտ է ճշգրիտ և արագ կերպով հավաքել ու վերլուծել՝ ազգային անվտանգության ապահովման խնդիրները լուծելու համար: Ուստի պատահական չէ, որ ԱԲ-ն ամենալայն տարածումն է ստացել հենց հետախուզության ոլորտում: ԱՄՆ-ում Ալգորիթմական պատերազմի միջգործառության խումբը (*Algorithmic Warfare Cross-Functional Team*) ներդրել է ԱԲ-ի համակարգեր, որոնք, հիմնվելով համակարգչային տեսողության և մեքենայական ուսուցման տեխնոլոգիաների վրա, մշակում են անօդաչու թռչող ապարատներից և այլ միջոցներից ստացված հետախուզական տվյալները, արագորեն բացահայտում թշնամու ակտիվությունը՝ վտանգի աղբյուրների նշանառմամբ: Մինչդեռ որպեսզի այդ գործողություններն արդյունավետ կերպով կատարի մարդը, կարող են պահանջվել ժամեր, ընդ որում, սխալվելու հավանականությունն այս պարագայում զգալիորեն ավելի մեծ է լինում¹⁴: Փաստորեն, ԱԲ-ն սպառնալիքների մշտազննման ճանապարհով էականորեն բարձրացնում է իրավիճակային իրազեկվածության (*situation awareness*) մակարդակը՝ ապահովելով անձնակազմի աշխատանքի անվտանգության և արդյունավետության ավելի բարձր մակարդակներ:

Լոգիստիկ համակարգ*: ԱԲ-ն կարող է կարևոր դեր ունենալ լոգիստիկ համակարգի կատարելագործման համար: Ընդ որում, ռազմական ոլորտում այդ համակարգի «բանական ավտոմատացման» հնարավորությունները բազմաթիվ են՝ տրանսպորտային միջոցների նախագրուշական սպասարկում, մատակարարման համակարգի կառավարում, բուժօգնության ապահովում, պահեստների ու պահուստների համալրում ինքնակառավարվող փոխադրամիջոցներով և այլն: Օրինակ՝ «Լոկիդ Մարտին» ընկերությունը զգալիորեն բարելավել է Ֆ-35 կործանիչների սպասարկման աշխատանքները՝

¹³ Տես «Artificial Intelligence and National Security». Congressional Research Service, 21 November 2019 (<https://fas.org/sgp/crs/natsec/R45178.pdf>):

¹⁴ Տես *Jack Corrigan*. Three-Star General Wants AI in Every New Weapon System. «Defense One», 3 November 2017 (<https://www.defenseone.com/technology/2017/11/three-star-general-wants-artificial-intelligence-every-new-weapon-system/142239/>):

* Լոգիստիկ համակարգը նյութական, ֆինանսական, տեղեկության և մարդկային ռեսուրսների հոսքերի պլանավորման, կառավարման ու վերահսկողության համակարգն է օպտիմալացման (ծախսերի նվազարկման) նկատառումներով:

կիրառելով այնպիսի ԱԲ, որն ունակ է շարժիչում տեղադրված տվիչներից ժամանակի իրական մասշտաբում ստացվող տվյալների վերլուծությանը արագորեն բացահայտելու թերությունները, գտնելու մատակարարման շղթաների թույլ օղակները, հաշվարկելու երթուղու երկարությունը, պլանավորելու թռիչքները և այլն:

Գործողություններ կիրառատարածությունում: ԱՄՆ-ի պաշտպանական գերատեսչության Ազգային անվտանգության գործակալության տնօրեն և կիրառականատարության հրամանատար ծովակալ Մայքլ Ռոջերսը, 2016 թ. էլույթ ունենալով Սենատում, շեշտել է, որ «կիրառատարածությունում միայն մարդկային բանականության վրա հիմնվելը պարտվողական ռազմավարություն է»¹⁵: Կիրառականության այն համակարգերը, որոնց հիմքում ԱԲ-ն է, կարող են ինքնուրույնաբար հայտնաբերել, գնահատել ու շտկել կիրառատարածությունում ծրագրային ապահովման խոցելի տեղերը և հնարավոր կիրառարձակումները, ի տարբերություն ավանդական կիրառարձակումներից, որոնք պարզապես համեմատում են ծրագրային կոդերը հայտնի վնասաբեր կոդերի հետ: ԱԲ-ով հազեցած կիրառականության համակարգերի առավելությունն այն է, որ դրանք կարող են մեկ ալգորիթմով միաժամանակ իրականացնել երկու գործառնություն: պաշտպանական և հարձակողական:

Կառավարում: ԱԲ-ի վերլուծական ներուժն արդեն վաղուց է օգտագործվում ռազմական գործողությունների կառավարման ոլորտում: Օրինակ՝ ԱՄՆ-ում Ռազմաօդային ուժերը և «Լոկիդ Սարտին» ընկերությունը համատեղ մշակել են «Կառավարման բազմատիրույթ համակարգը» (*“System of Multi-Domain Command and Control”*), որի նպատակն է համակարգել և հնարավորինս արդյունավետ դարձնել օդատիեզերական, կիրառատարածական, ծովային և վրազետնյա գործողությունների պլանավորումը և իրականացումը¹⁶: տարբեր աղբյուրներից ստացվող բազմաբնույթ տվյալների վերլուծության և իրավիճակի վերաբերյալ մեկ ընդհանրական «պատկերում» ներկայացման միջոցով: Նույն նպատակով է ստեղծվել «ԴԱՐՊԱ»-ի «Խճանկարային պատերազմ» (*“Mosaic Warfare”*) ծրագիրը, որը փորձում է համադասել ՋՈՒ-ի ինքնուրույն բաղադրիչների աշխատանքը և ձևավորել կառավարման ու վերահսկման բազմատիրույթ հանգույցներ¹⁷: ԱԲ-ի կիրառումը շատ արդյունավետ է նաև հակահրթիռային պաշտպանության բնագավառում:

Ինքնակառավարվող և կիսաինքնակառավարվող մեքենաներ: ԱԲ-ով ԱԹԱ-ների, կործանիչների, ռազմանավերի ու ցամաքային փոխադրամիջոց-

¹⁵ Stu “Testimony of Michael Rogers”. “Hearing to Receive Testimony on Encryption and Cyber Matters”. Senate Armed Services Committee. Washington, 13 September 2016 (https://www.armed-services.senate.gov/imo/media/doc/16-68_09-13-16.pdf):

¹⁶ Stu Colin Clark. “Rolling the Marble”: BG Saltzman on Air Force’s Multi-Domain C2 System. “Breaking Defense”, 8 August 2017 (<https://breakingdefense.com/2017/08/rolling-the-marble-bg-saltzman-on-air-forces-multi-domain-c2-system/>):

¹⁷ Stu “Strategic Technology Office Outlines Vision for ‘Mosaic Warfare’”. “DARPA”, 4 August 2017 (<https://www.darpa.mil/news-events/2017-08-04>):

ների հազեցումը դրանց հնարավորություն է տալիս ավելի լավ կողմնորոշվելու տեղանքում՝ շրջակա միջավայրի առանձնահատկությունների գնահատման, խոչընդոտների որոշարկման, ուղեվարության պլանավորման և այլ տրանսպորտային միջոցների հետ կապակցման շնորհիվ: Որպես նորագույն օրինակ կարող ենք ներկայացնել «ՂԱՌՊԱ»-ի մշակած և 2018 թ. փորձարկած՝ հակասուզանավային պատերազմի ժամանակ անընդհատ հետախուզության համար նախատեսված ինքնակառավարվող «Շովային որսորդ» (*Anti-Submarine Warfare Continuous Trail Unmanned Vessel*) նավը, որը կարող է ինքնուրույն կերպով նավարկել, փոխել մոդուլային օգտակար բեռը, աշխատանքը համադասել այլ ինքնակառավարվող ռազմանավերի հետ և մի քանի ամիս շարունակ անընդհատ հետախուզել սուզանավը: Ընդ որում, փորձագետների կարծիքով՝ «Շովային որսորդ» նավի ամենօրյա շահագործման համար անհրաժեշտ է ընդամենը ԱՄՆ-ի 20000 դոլար, այն դեպքում, երբ ավանդական էսկադրային ականակիրների օրական ծախսը մոտ 700 000 դոլար է¹⁸:

Ինքնակառավարվող մահաբեր սպառազինությունների համակարգը հատուկ տեսակի համակարգ է, որն օգտագործում է տվիչների ու զգայարարների մի ամբողջ հավաքածու, թիրախի ինքնուրույն հայտնաբերման և խոցման ծրագրային ալգորիթմներ: Նման համակարգերի գործարկման ժամանակ վերջնական որոշումն այնուամենայնիվ վերապահվում է մարդուն: Սակայն ենթադրաբար նման սպառազինությունների համակարգերը կարող են գործել նաև բացարձակապես ինքնուրույնաբար, օրինակ՝ օպերատորի հետ կապի ընդհատման կամ ինչ-ինչ պատճառներով օպերատորի արձագանքման ուշացման դեպքում: Այն պետությունները, որոնք կարող են ունենալ նման սպառազինություն, ժխտում են իրենց զինանոցում դրանց առկայության փաստը, սակայն իրականում օրենսդրորեն դա որևէ երկրում արգելված չէ: ԱՄՆ-ի պաշտպանական գերատեսչության 3000.09 ցուցումնազիրը նման համակարգերի մշակման և օգտագործման համար սահմանում է որոշ սահմանափակումներ, որոնք կոչված են նվազագույնի հասցնելու անկանխատեսելի հետևանքները: Մասնավորապես նշվում է, որ «ինքնակառավարվող մահաբեր սպառազինությունների համակարգերի մշակման մասին որոշում կայացնելուց առաջ պատկան մարմինները պետք է վստահ լինեն, որ այդ համակարգը հնարավորություն կտա դրա ուժի կիրառման ժամանակ ապահովելու անհրաժեշտ մակարդակի մարդկային վերահսկողություն»¹⁹:

Պատերազմական իրավիճակի խաղարկում և վարժանքներ: Պատերազմական իրավիճակի մոդելավորումը միջգիտակարգային հետազոտական

¹⁸ Stu *Julian Turner*. Sea Hunter: inside the US Navy's autonomous submarine tracking vessel. "Global Defence Technology" (https://defence.nridigital.com/global-defence-technology_may18/sea_hunter_inside_the_us_navys_autonomous_submarine_tracking_vessel):

¹⁹ Stu "Autonomy in Weapon Systems". "Department of Defense Directive 3000.09", 21 November 2012. Incorporating Change 1, 8 May 2017 (<https://www.esd.whs.mil/Portals/54/Documents/DD/issuances/dodd/300009p.pdf>):

ոլորտն է, որում համատեղվում են համակարգային ինժեներիան, ծրագրային ապահովումը և ռազմարվեստի վերաբերյալ գիտությունները, որպեսզի ստեղծվեն թվայնացված մոդելներ, որոնք զինծառայողներին ծանոթացնեն տարբեր ռազմական իրավիճակների և սպառազինությունների համակարգերի հետ: Նմանարկային ռազմական խաղերը կարող են նաև բավական լավ հարթակ ապահովել ինտելեկտուալ ավտոմատացման փորձարկման համար:

Ռազմական նպատակով ԱԲ-ի կիրառումը սերտորեն փոխկապված է այնպիսի տեխնոլոգիաների հետ, ինչպիսիք են *ամպային տեխնոլոգիաները* և *իրերի համացանցը*: Իրերի համացանցը հնարավորություն է տալիս առարկաներից ստացվող տեղեկույթի հիման վրա վերլուծելու դրանց շրջակա միջավայրը և ըստ այդմ հեռակառավարելու տվյալ առարկաները՝ գործողությունների արդյունավետության և ճշգրտության մեծացմամբ: Օրինակ՝ պատերազմական իրավիճակում մեծ արդյունավետություն կարող է ունենալ այսպես կոչված անօդաչու թռչող ապարատների (կամ ստորջրյա ու վրագետնյա ինքնակառավարվող սարքերի) «հարձակողական երամը», որը կարող է գործողությունների մեկ միասնական պլանով հաջողությամբ կատարել իր խնդիրները՝ չնորհիվ ներկառուցված զգայուն սարքերի (*իրերի համացանց*), որոնք օպերատիվ կերպով հավաքում են անհրաժեշտ տեղեկույթը (*ամպային տեխնոլոգիաներ*), որը մշակվում է *ժամանակի իրական ռեժիմում* (*մեքենայական ճանաչում*) և ուղղորդում գործողությունները (*արհեստական բանականություն*): Այդ տեխնոլոգիական նորամուծությունն ընթացիկ տարվա փետրվարի 28-ից մինչև մարտի 2-ը Սիրիայի Իդլիբ քաղաքում կիրառել է թուրքական զինուժը, ինչի պատճառով գոհվել է 19 զինվորական և ոչնչացվել է զգալի քանակությամբ ռազմական տեխնիկա (այդ թվում՝ զենիթահրթիռային կայանքներ)²⁰:

Արհեստական բանականության կիրառմամբ զարգացած ռազմաարդյունաբերություն ունենալու հայկական տեսլականը

Ջարգացած պաշտպանական համակարգ ունենալու ճանապարհներից ամենաարդյունավետը տեղական ռազմաարդյունաբերության զարգացումն է: Փոքր պետությունների համար այս խնդրի լուծումը, անշուշտ, կարող է լինել բավական բարդ, եթե հաշվի չառնենք տեխնոլոգիական նոր դարաշրջանի ընձեռած հնարավորությունները: Մասնավորապես՝ զարգացած մարդկային կապիտալով փոքր պետությունները (որոնց մրցակցային առավելությունները տեղեկատվական տեխնոլոգիաների, հատկապես՝ ծրագրային ապահովման, ռադիոէլեկտրոնային և ճշգրիտ մեքենաշինության ոլորտներն են) իրական հնարավորություն ունեն սպառազինությունների հայրենական մշակումներով «տեխնոլոգիական առաջընթաց–պատերազմների բնույթի փոփոխություն» փուլաշրջանային զարգացման շղթայում հայտնվելու պատերազմի

²⁰ Stu Selcan Hacaoglu. Turkey’s Killer Drone Swarm Poses Syria Air Challenge to Putin. “Bloomberg”, 1 March 2020 (<https://www.bloomberg.com/news/articles/2020-03-01/turkey-s-killer-drone-swarm-poses-syria-air-challenge-to-putin>):

բնույթը թելադրողի դերում²¹: Հատկապես այն պետությունները, որոնք մեծ ռազմական ծախսեր են կատարում, կարող են, ելնելով իրենց ռազմավարական պահանջմունքներից, այդ ծախսերի վերաբաշխմամբ խթանել բարձր-տեխնոլոգիական ոլորտը՝ նպաստելով թե՛ տնտեսական, թե՛ նոր տեխնոլոգիական հիմքերով ռազմաարդյունաբերության զարգացմանը:

Նկատենք նաև, որ ԱԲ-ի ներթափանցումը ռազմական ոլորտ իրականում ավելի է խտացրել «պատերազմի մշուշը»՝ ավելի մեծ արագություն հաղորդելով պատերազմական գործողություններին, ավելի բարդ պայմաններ ու ավելի մեծ անորոշություններ ստեղծելով: Ուստի գրեթե անհմաստ է տեխնոլոգիական փուլաշրջանի վերջին փուլերում (հասունություն և անկում) շեշտադրել ռազմական նախանշանակման արտադրության կազմակերպումը: Նոր տեխնոլոգիական դարաշրջանը շարունակ պահանջում է նորամուծություններ ու նոր լուծումներ, և դա առաջին հերթին վերաբերում է ռազմական ոլորտի ճանաչողականացմանը: Այս առումով Հայաստանի ռազմաարդյունաբերության ոլորտում առաջընթացը հնարավոր է միայն տեխնոլոգիապես նոր արտադրանքի թողարկման հնարավորությունների զարգացման պարագայում:

Իհարկե, հարց է ծագում. արդյոք Հայաստանն ունի նման ներուժ և կարող է համարժեք քայլեր ձեռնարկել տեխնոլոգիական նոր դարաշրջանի մարտահրավերները հնարավորությունների ու զարգացման անկյունաքարի վերածելու համար: Տարիներ շարունակ ՏՏ ոլորտը և մասնավորապես՝ ծրագրային ապահովումը համարվել են Հայաստանի համեմատական առավելություն, որը նաև ստեղծում էր տնտեսական շրջափակման հետևանքով երկրի առաջ ծառայած մի շարք խնդիրների լուծման հեռանկար: Թվում է՝ եկել է ժամանակը այդ առավելությունը կատարելապես ծառայեցնելու պետության անվտանգության ապահովմանը՝ տնտեսության բոլոր ոլորտների համար դրական կողմնակի էֆեկտների ապահովմամբ: Սակայն արդյոք ՏՏ ոլորտում մասնագիտացումը բավարար է ԱԲ-ի ոլորտի զարգացման համար: Ակնհայտորեն անհրաժեշտ են նաև տեխնոլոգիական զարգացած էկոհամակարգ, ֆինանսավորման նկատմամբ նոր մոտեցումներ, վեճուրային ձեռնարկություն, գիտության և արտադրության փոխադարձ սերտ կապվածություն: Ինչ խոսք, վերջին մի քանի տարիներին Հայաստանում տեխնոլոգիական էկոհամակարգն էապես բարելավվել է, մասնավորապես՝ նշվում է 27 % աճ²²:

Տեխնոլոգիական ոլորտի համաշխարհային առաջատարները Հայաստանը դիտում են որպես էական ներուժ ունեցող պետություն, ինչն էլ պայմանավորել է այստեղ հայտնի ընկերությունների ներկայացուցչությունների առկայությունը («Մայկրոսոֆտ», «ԱԲԻԷմ», «Սինոպսիս», «Նեյշնել Ինստրումենտս», «Օրեյվլ», «ՎիեմՎար», «Սիսկո» և այլն): Ընդ որում, դրանց աշխատանքը բավական արդյունավետ է: Օրինակ՝ «ՎիեմՎար»-ի Երևանյան

²¹ Տես, օրինակ, *Максим Сучков, Сим Тек. Будущее войны. Доклад Международного дискуссионного клуба «Валдай», август 2019:*

²² Տես «Ինովացիոն Հայաստան»: «Անալիտիկոն», հոկտեմբեր 2019, հմ. 10 (130):

գրասենյակի 100 ինժեներներն ապահովում են ընկերության ընդհանուր եկամուտների 30 %-ը, նույն գրասենյակի 3 հետազոտողներ գրանցել են ընկերության ընդհանուր պատենտների 50 %-ը²³: Տեխնոլոգիական էկոմիջավայրի վրա իր դրական ազդեցությունն է ունեցել պետության ներդրումային քաղաքականությունը, որը հարկերից ազատում է սկսնակ ընկերություններին, եկամտահարկի արտոնություններ է սահմանում ոլորտի աշխատողների համար (10 %՝ այլ ոլորտներում գործող 23 %-ի փոխարեն), ինչպես նաև վենչուրային ֆինանսավորման լայն հնարավորությունների ընձեռումը տարբեր ներդրումային հիմնադրամների միջոցով:

Այսօր ՀՀ-ում առկա է ԱԲ-ի ոլորտում կայացած բիզնես մշակույթ և փոքր պետության հնարավորություններին անհամաչափ զարգացման ներուժ: Այսպես. «ԵրևանՆՆ» հետազոտական լաբորատորիայի ինտերնետային կայքը «Գուգլ»-ում խոր մեքենայական ուսուցման ամենահայտնի ռեսուրսն է²⁴: ԱԲ-ի հետազոտական լաբորատորիաներ են ստեղծել Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը, Ամերիկյան համալսարանը («Փիկս Արտ»-ի հետ), «Քատալիստ Ֆաունդեյշն»-ը և այլն: Ձեռնարկվել են ԱԲ-ի բազմաթիվ հաջող մեկնարկային նախագծեր, որոնք դարձել են միջազգային հեղինակավոր մրցույթների մրցանակակիրներ:

Փաստորեն, Հայաստանում կան ռազմական ոլորտում «հայկական» ԱԲ-ի գործարկման համար բոլոր նախադրյալները: Հիմնական խնդիրը, թերևս, պաշտպանական գերատեսչության հետ արդյունավետ համագործակցության հարթակի ստեղծումն է, ընդսմին առաջնահերթ պետք է լինի արհեստական բանականության համար անհրաժեշտ «գիտելիքի» հիմքերի ձևավորումը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որպես ամփոփում՝ ներկայացնենք առաջարկություններ, որոնց իրագործումը, մեր կարծիքով, կհանգեցնի Հայաստանում ԱԲ-ի զարգացմանը:

- Առաջնահերթ է արհեստական բանականության զարգացման ազգային ռազմավարական ծրագրի մշակումը: Աշխարհի շատ պետություններ, գիտակցելով, որ ԱԲ-ն էական ազդեցություն ունի և շարունակելու է ունենալ ոչ միայն անվտանգային համակարգի, այլև պետական կառավարման համակարգի, տնտեսության, կրթության և առողջապահության վրա, այդ ճյուղի զարգացման համար ընդունել են ծրագրային փաստաթղթեր՝ դրան ուղղելով պետական կառավարման բոլոր լծակները:
- Այն, որ ռազմական նպատակներով արհեստական բանականության արտադրությունն ու կիրառումը պահանջում են նորամուծական և ռիսկայնության ջիղով լավ գործարարների գոյություն, համապատասխան

²³ Տես *Надежда Юшкевич*. Стартап экосистема Армении, 15 ноября 2019 (<https://vc.ru/finance/92853-startap-ekosistema-armenii>):

²⁴ Տես “YerevaNN, the Armenian Hub for AI Research”, 23 January 2017 (<http://whyarmenia.am/work-here/extreme-living/detail/yerevann-the-armenian-hub-for-ai-research>):

Ֆինանսական ռեսուրսներ, ինչպես նաև ծրագրային ապահովման գծով փայլուն մասնագետներ, ավելի քան ակնհայտ է: Սակայն հաջողությունը մեծ չափով պայմանավորված կլինի նաև ռազմական գործին քաջատեղյակ զինվորականների առկայությամբ, որոնք ունակ լինեն ցանկացած իրավիճակում կայացնելու ճշգրիտ օպերատիվ-մարտավարական և ռազմավարական որոշումներ, քանի որ ավտոմատացված համակարգերը ծրագրավորվում են նրանց գիտելիքների շնորհիվ: Պարզ ասած՝ չենք կարող ունենալ լավ ռոբոտներ, եթե չգիտենք, թե ինչ գործողություններ պիտի կատարի լավ զինվորը այս կամ այն իրավիճակում կամ անորոշության պայմաններում: Այս տեսանկյունից հատկապես կարևոր է Հայաստանում ռազմական գիտության զարգացումը, ինչպես նաև հայադրբեջանական հակամարտության օպերատիվ-մարտավարական առանձնահատկությունները հաշվի առնող ռազմական կրթության զարգացումը: Մինևույն ժամանակ, նոր սերնդի սպառազինությունների նմուշների մշակման և արտադրության համար անհրաժեշտ է միջգիտակարգային համագործակցություն գործարարների, ծրագրավորողների և արհեստավարժ զինվորականների միջև:

- Հայաստանում կա մեծ ներուժ թվային նմանարկային ռազմավարական խաղերի մշակման և ռազմական վարժանքների երևակայական դաշտերի ստեղծման համար: Պահանջարկ կա ստեղծելու ապագայի թվային ռազմական գործողությունների թատերաբեմեր, մշակելու դրանց համապատասխան մարտավարություններ ու ռազմավարություններ, դրանցով հիմնավորելու բանական ավտոմատացման արդյունավետությունը՝ ապագայում դրանց գործնական կիրառման համար հիմքերի նախապատրաստմամբ:
- Հատկապես կարևորելով ռազմական գործողությունների ժամանակ, ինչպես նաև մարտական հերթապահություն կատարող զինվորական անձնակազմի բարոյահոգեբանական վիճակի կայունությունը՝ անհրաժեշտ ենք համարում Հայաստանում արտադրել «խելացի» ռազմական համազգեստ՝ հագեցած հատուկ զգայուն սարքերով, արհեստական բանականության տարրերով, ինչը հնարավորություն կտա արագորեն ի հայտ բերելու զինվորականի բարոյահոգեբանական վիճակի փոփոխությունները և արագ արձագանքմամբ վերականգնելու բնականոն վիճակը:
- ԱԲ-ի ներդրումը կարող է կարևոր դեր ունենալ ռազմական տնտեսության լոգիստիկ համակարգի բարելավման և տրանսպորտային համակարգի օպտիմալ կազմակերպման գործում: Ռազմական նախանշանակման բեռների, զենքի ու զինամթերքի, ինչպես նաև զինվորական ստորաբաժանումների արդյունավետ տեղափոխումը ռազմական գործողությունների հաջողության գրավականն է: «Խելացի» տրանսպորտային-ապահովումային համակարգի ներդրումը կտնտեսի զգալի ծախսեր ու մարդկային ջանքեր: Միաժամանակ, դա պետական մարմիններին հնարավորություն կտա հեշտությամբ վերահսկելու խախտումները և

արագորեն վերացնելու դրանք: Սա նաև կլուծի ռազմավարական նշանակության օբյեկտների, ռազմական տեխնիկայի բազաների, զինապահեստների օպտիմալ ապակենտրոնացման խնդիրը: Ռուստի առաջնահերթ է «խելացի» ռազմաարդյունաբերական համալիրի ճարտարապետության և թվային կառավարման մոդելի մշակումը:

- Ինչպես գիտենք, մեքենայական ուսուցման համար անհրաժեշտ է նախ ձևավորել գիտելիքների ու տեղեկությունների շտեմարան, պարզել դրանցում եղած կախվածություններն ու օրինաչափությունները այս կամ այն խնդիրների լուծման համար: Քանի որ պաշտպանական գերատեսչությունն ունի նշանակալից անորոշությամբ իրավիճակներում օպտիմալ որոշումների կայացման ավտոմատացված համակարգերի մեծ պահանջարկ, անհրաժեշտ է նախ ձեռնամուխ լինել պաշտպանական նկատառումներով նման բազայի կառուցմանը: Միայն դրա առկայությունը կարող է երաշխավորել ԱԲ-ի համակարգերով նշանակետերի հայտնաբերման մեծ ճշգրտությունը, հակառակորդի վարքագծի կանխատեսումը և գործողությունների հետագա ընթացքի վերաբերյալ ճիշտ որոշումների կայացումը: Նման համակարգեր արդեն մշակել և կիրառում է ՂԱՌՊԱ-ն, օրինակ՝ «ԹՌԷՅՍ» (*Target Recognition and Adaption in Contested Environments*)^{*} ծրագիրը՝ հիմնվելով ռադիոտեղորոշումային պատկերների և սինթետիկ անկյունային բացվածքի (ապերտուրա)^{**} մոդելավորման վրա և խոր մեքենայական ուսուցման մեթոդները՝ նշանակետի հայտնաբերման, տեղորոշման և որոշարկման համար:
- Ինքնակառավարվող սարքերի (օրինակ՝ ԱԹԱ) պահանջարկը հիմա և հետագայում ևս մնալու է բավական մեծ, սակայն նկատենք, որ միայն տեղեկույթ հավաքելու համար դրանց արտադրությունը պարզապես միջոցների ու ժամանակի անհիմաստ վատնում է: Մինչդեռ դրանց բազմանպատակային կիրառման ամենակարևոր ուղղություններից մեկը դարձյալ կապված է մեքենայական ուսուցման և ԱԲ-ի հետ: Օրինակ՝ ԱԲ-ի տարրերով ԱԹԱ-ները հնարավորություն կտան էապես բարձրացնելու իրավիճակային իրազեկվածության մակարդակը: Կարելի է արտադրել սահմանային տարածքում հերթապահող ԱԹԱ-ներ, որոնք ունակ լինեն բացահայտելու հնարավոր սպառնալիքները և դրանց մասին տեղեկությունները փոխանցելու արձագանքման խմբերին: Դրա շնորհիվ հնարավոր կլինի մեծացնել անձնակազմի աշխատանքի արդյունավետությունը պատերազմական և խաղաղ իրավիճակներում:

* Հակամարտային իրավիճակում նշանակետի գատորոշման և հարմարեցման համակարգ:

** Օպտիկական սարքերի բնութագրեր, որոնք արտահայտում են դրանց ունակությունը հավաքելու լույսը և հակազդելու պատկերի դետալների դիֆրակցիոն աղավաղմանը:

ВОЕННАЯ ИНФОРМАТИКА

**ИЗ МИРОВОГО ОПЫТА ПРИМЕНЕНИЯ
ИСКУССТВЕННОГО ИНТЕЛЛЕКТА:
ПЕРСПЕКТИВЫ ДЛЯ ВОЕННОЙ СФЕРЫ**

Г. Э. АРУТЮНЯН, кандидат экономических наук, доцент, начальник Группы стратегических игр и моделирования ИНСИ НИУО МО РА

РЕЗЮМЕ

Ученые единогласны в том, что искусственный интеллект (ИИ) полностью изменит характер будущих войн. Это заставляет военные ведомства всех государств адекватно реагировать на данные вызовы.

Как чисто теоретические, так и прикладные исследования по созданию и применению ИИ актуальны в особенности для Армении, которая считается одним из немногих государств на постсоветском и региональном пространствах, имеющим большой научно-технический потенциал в этой сфере. Представленные основные субтехнологии ИИ, особенности применения как в военной, так и в других сферах, а также перспективы развития армянской оборонной промышленности на основе искусственного интеллекта могут стать отправной точкой для дальнейшего заинтересованного обсуждения данной темы.

MILITARY INFORMATION SCIENCE

**FROM THE WORLD'S EXPERIENCE OF APPLYING ARTIFICIAL
INTELLIGENCE: PERSPECTIVES FOR THE MILITARY SPHERE**

G. E. HARUTYUNYAN, PhD in Economics, Associate Professor, Head, Strategic Gaming and Modeling Group, INSS, NDRU, MOD, RA

SUMMARY

Scientists unanimously agree that artificial intelligence (AI) is going to completely change the nature of modern warfare. That makes the military departments of all the states adequately respond to the concerned challenges.

Both purely theoretical, and the applied studies in designing and using the AI are in particular topical for Armenia, which is one of the few states in the post-Soviet and regional space, possessing immense scientific-technical potential in the mentioned realm. Reviewing the key sub-technologies of artificial intelligence, so as the peculiarities of using it both in the military, and other spheres, as well as the perspectives of developing the Armenian defense industry on the basis of the artificial intelligence, may become a starting point for the future interested discussion of this specific topic.

**ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱՏԵՐԱԲԵՄԻ
ՌԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐ**

*Ս. Ա. ՍՈՒԶՅԱՆ, աշխարհագրական գիտությունների թեկնածու,
դոցենտ, պահեստազորի գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմարվեստի
պատմության հետազոտությունների կենտրոնի պետ*



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ-ի Նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը 1940 թ. սեպտեմբերի 20-ին՝ Փենսիլվանիայի համալսարանում ելույթի ժամանակ ակնարկել է, որ ֆիզիկական, մշակութային և ռազմաքաղաքական աշխարհագրություններն ազդում են բոլոր մակարդակների ռազմական պլանների, ծրագրերի և օպերացիաների վրա, քանի որ յուրաքանչյուր շրջանի նշանակությունը մշտապես փոփոխվում է: Դա պետք է հաշվի առնեն հրամանատարները և շտաբները, քանի որ հետախուզությունը համակարգչային տեխնիկայի միջոցով հավաքում և դասակարգում է շրջանի վերլուծության համար անհրաժեշտ տվյալների մեծ մասը, սակայն իրադրության ճիշտ գնահատումը կախված է մարդուց¹:

Դեռ ֆեոդալական ժամանակաշրջանի պատերազմներում ի հայտ է եկել «*ռազմական գործողությունների թատերաբեմ*» հասկացությունը, որը նշանակում էր մի տարածք, որտեղ կենտրոնանում, ծավալվում և մարտական գործողություններ էին վարում հակամարտող կողմերը²: Այսօրվա գնահատմամբ, լայն իմաստով, **ռազմական գործողությունների թատերաբեմ (ՌԳԹ) ասելով հասկանում ենք ցամաքի, օվկիանոսի այն հատվածները և դրանց վերևում գտնվող օդատիեզերական տարածությունը, որոնց սահմաններում ծավալվում են ԶՈՒ-ի ռազմավարական խմբավորումները և կարող են մղվել ռազմավարական մասշտաբի ռազմական գործողություններ³:** Այն ռազմական աշխարհագրության հետազոտության կարևորագույն օբյեկտն է: Հնարավոր ռազմական գործողությունների տարածքների սահմանի ու կազմության որոշումը, ձեռք բերված տվյալների վերլուծումն ու գնահատումը ռազմարվեստի կարևորագույն խնդիրներից են:

¹ Տես *Дж. М. Коллинз. Военная география для профессионалов и непрофессионалов. М., 2005, с. 445:*

² Տես «*Основы военной географии*». Учебное пособие. М., 2011, с. 5:

³ Տես *Ղ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 227:*

ՌԳԹ-ն լինում է մայրցամաքային և օվկիանոսային: Ընդ որում, դրա գնահատման համար առանձնացվում են նաև ռազմաաշխարհագրական շրջանները և աշխարհառազմավարական տարածությունը, որն ունի գերտերությունների ազգային շահերին ու անվտանգությանը համապատասխանող բաժանում: Այսպես. ԱՄՆ-ը աշխարհը բաժանել է պատասխանատվության 6 գոտիների⁴, Ռուսաստանը հյուսիսային կիսագնդում առանձնացնում է 4 այդպիսի գոտի:

Ցամաքային ՌԳԹ-ն կարող է ընդգրկել նաև մեկ ամբողջական մայրցամաք, ծովայինը՝ սովորաբար ամբողջ օվկիանոս կամ դրա մի մասը՝ մեկ կամ մի քանի ծով: Պետության տարածքային ջրերի սահմանները որոշված են Միավորված ազգերի կազմակերպության 1982 թ. կոնվենցիայով⁵, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր պետություն իրավունք ունի սահմանելու իր տարածքային ծովի լայնությունը մինչև 12 ծովային մղոնը չգերազանցող սահմանով»: Թեև ըստ Հաագայի 1907 թ. կոնվենցիայի⁶ չեզոք պետությունները և տիեզերական տարածությունը չեն կարող մտնել ՌԳԹ-ի մեջ, սակայն գրեթե բոլոր բառարաններում տիեզերական տարածությունը ներառված է ՌԳԹ սահմաններում⁷, ինչն արտացոլում է գերտերությունների մոտեցումը: ՌԳԹ օդային տարածության վերին սահմանը կազմում է 21–26 կմ⁸, իսկ տիեզերական տարածության վերաբերյալ միասնական դիրքորոշում չկա, թեև Միջազգային ավիացիոն դաշնությունը որպես մթնոլորտի և տիեզերքի միջև աշխատանքային սահման է համարում 100–110 կմ բարձրությունը, Ռուսաստանի Դաշնությունն իր համար սահման է դիտարկում մինչև 110 կմ, իսկ երբեմն՝ մինչև 160 կմ, ԱՄՆ-ը և Կանադան՝ 118 կմ, իսկ ահա ՆԱՍԱ-ն առաջարկում է այն հասցնել մինչև 122 կմ⁹:

Պատերազմների վերլուծությունը ցույց է տալիս, որ պետության, պատերազմի թատերաբեմի ռազմաաշխարհագրական պայմանների լավ իմացությունը և գնահատումը նպաստում են ռազմական գործողությունների վերաբերյալ առավել խելամիտ որոշման ընդունմանը, հեշտացնում օպերացիայի պլանավորումը և հաջող անցկացումը: Միևնույն ժամանակ, այդ նույն

⁴ Տես *В. Марченков*. Объединенное стратегическое командование Вооружённых сил США. «Зарубежное военное обозрение», 2016, № 6:

⁵ Տես «Ծովային իրավունքի Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիա»: Ընդունվել է 1982 թ. դեկտեմբերի 10-ին, բաժին 2, հոդ. 3 (<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=76633>):

⁶ Տես «Гаагская конвенция об открытии военных действий». Гаага, 18 октября 1907 г. (https://doc.mil.ru/documents/quick_search/more.htm?id=11911625@egNPA):

⁷ Տես *Д. Рогозин*. Война и мир в терминах и определениях. Военно-технический словарь. М., 2016, сс. 428–429:

⁸ Տես *Matthew T. King*. Sovereignty's Gray Area: The Delimitation of Air and Space in the Context of Aerospace Vehicles and the Use of Force. “Journal of Air Law and Commerce”, 2016, Vol. 81, Issue 3:

⁹ Տես «Ученые уточнили границу космоса». «Lenta.ru», 10 апреля 2009 (<https://lenta.ru/news/2009/04/10/boundary/>):

վերլուծությունները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ հաջողությամբ պատկանած տարբեր մասշտաբի օպերացիաների և մարտական գործողությունների մեծ մասը պլանավորվել և իրագործվել է ռազմաաշխարհագրական պայմանների համակողմանի գնահատման հիման վրա: Անհրաժեշտ է եղել հավաքել, ուսումնասիրել և գնահատել ոչ միայն յուրային զորքերի և հակառակորդի, այլև առաջիկա մարտական գործողությունների շրջանի բնական պայմանների, օպերատիվ սարքավորման, քաղաքական և տնտեսական իրադրության մասին տվյալները¹⁰:

Տեղանքի մանրամասն հետազոտությամբ, ինչպես հայտնի է, զբաղվում են *ռազմական տեղագրությունը և ռազմական աշխարհագրությունը*: Եթե **ռազմական տեղագրությունն** ուսումնասիրում է տեղանքի մարտավարական հատկությունները, տեղանքի գնահատման մեթոդներն ու եղանակները, տեղանքում կողմնորոշումը¹¹, ապա **ռազմական աշխարհագրությունն** ուսումնասիրում է քաղաքական ուժերի տեղաբաշխումը, երկրների (պետությունների դաշնադրությունների) տնտեսական և ռազմական հնարավորությունները, բնական պայմանները և դրանց ազդեցությունը պատերազմ վարելու (ռազմական գործողությունների) վրա¹²: Ռազմական աշխարհագրությունը ներառում է ռազմական հիմնախնդիրներին առնչվող մի ամբողջական շարք աշխարհագրական հետազոտություններ: Ռազմական օպերացիան, ընդհանուր առմամբ, հնարավոր չէ անջատել տվյալ տարածքի աշխարհագրական պայմաններից¹³:

Այսպիսով՝ **ՌԳԹ ռազմավարական գնահատման նպատակն է** բացահայտել և վերլուծել ՌԳԹ և տարածաշրջանի ռազմաքաղաքական, ռազմատնտեսական, ռազմական ու բնական պայմանները, որոշել այդ պայմանների ազդեցությունը օպերացիաների նախապատրաստման և վարման վրա:

ՈԱԶՄԱՎԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱՏԵՐԱԲԵՄԻ
ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱԼԳՈՐԻԹՄԸ, ՏԱՐԵՐԸ
ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՌԳԹ ուսումնասիրման և ռազմավարական գնահատման ժամանակ հետազոտվում են **ռազմաաշխարհագրական գործոնները**, որոնք ազդեցություն են ունենում օպերացիայի վարման, զորքերի մարտական գործողությունների և այլ գործոնների վրա, ՌԳԹ կազմը և նշանակությունը, զորքերի մարտական կիրառման վրա ռազմաաշխարհագրական գործոնի ազդեցության առանձնահատկությունները՝ ՌԳԹ զորահավաքային, մարդկային և նյութական ռեսուրսները, ինչպես նաև ֆիզիկաաշխարհագրական պայման-

¹⁰ Տես «Основы военной географии», с. 6:

¹¹ Տես «Военная топография». Учебник для высших военно-учебных заведений. М., 2008, с. 5:

¹² Տես «Военный энциклопедический словарь». М., 2002, с. 352:

¹³ Տես *Д. Рассел*. Военная география. «Американская география. Современное состояние и перспективы». М., 1957, с. 463:

ները (ռելիեֆ, հողեր, ջրագրություն, բուսականություն, կլիմա, կենդանական աշխարհ և այլն):

ՌԳԹ գնահատումը պետք է կատարվի ըստ զինված պայքարի հնարավոր նպատակների, այդ նպատակների իրագործման համար ներգրավվող ուժերի ու միջոցների կազմի և թատերաբեմի ռազմաաշխարհագրական առանձնահատկությունների: Ցանկացած ՌԳԹ որպես ռազմավարական գնահատման օբյեկտ, իր բովանդակությամբ բնական, սոցիալ-քաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական, ռազմական, ժողովրդագրական, բնապահպանական և իր սահմաններում գոյություն ունեցող այլ իրողությունների փոխադարձ կապն է. այն անհրաժեշտ է գնահատել կանոնակարգված ու առաջնորդվել որոշակի չափանիշներով:

ՌԳԹ ռազմավարական գնահատման ամենաընդունելի հաջորդականությունը (ալգորիթմը) հետևյալն է.

1. որոշվում են այն գործոններն ու պայմանները, որոնք ազդում են կամ կարող են ազդել ռազմական վտանգի և հնարավոր ռազմական գործողությունների բնույթի վրա,
2. գործոնները միավորվում են խմբերում՝ որպես ռազմավարական գնահատման տարրեր,
3. վերլուծվում են ռազմավարական գնահատման բոլոր տարրերի ցուցանիշները,
4. յուրաքանչյուր տարրի ռազմավարական գնահատումից արվում են եզրակացություններ,
5. ռազմավարական գնահատման տարրերի վերլուծությամբ արվում է ընդհանուր եզրակացություն¹⁴:

ՌԳԹ ռազմավարական գնահատման համար անհրաժեշտ է այն տրոհել առանձին տարրերի և ըստ վերը նշված ալգորիթմի կատարել դրանց գնահատումն ու վերլուծությունը: Այդ տարրերն են.

- 1) ՌԳԹ-ի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ,
- 2) ֆիզիկաաշխարհագրական (բնական) պայմաններ,
- 3) ռազմաքաղաքական իրադրություն,
- 4) տարածաշրջանի երկրների տնտեսական հնարավորություններ,
- 5) տարածաշրջանի երկրների զինված ուժեր և զորահավաքային հնարավորություններ,
- 6) տարածքի օպերատիվ սարքավորվածություն,
- 7) տարածաշրջանի ռազմավարական նշանակություն:

1. ՌԳԹ-ի վերաբերյալ ընդհանուր տեղեկություններից անհրաժեշտ է գնահատել նրա սահմանները, չափերն ու մակերեսը, աշխարհագրական դիրքը և տեղը մյուս ՌԳԹ-ների նկատմամբ, ՌԳԹ-ում ընդգրկված երկրները, շրջանները, տարածքները, ծովերը, բնակչության թվաքանակը և ժողովրդագրական կազմը: Այս ամենը հնարավորություն է տալիս պարզելու ՌԳԹ

¹⁴ Տես Ս. Ա. Սուջյան, Աշխարհառազմավարական տարածության բաժանումը և տարածաշրջանների ռազմավարական գնահատումը: «Ռազմարվեստի պատմություն»: Դասախոսությունների ժողովածու, մաս 2: Ե., 2019, էջ 213:

չափերը և ռազմական գործողությունների հավանական բնույթը, դրանց ազդեցությունը պատերազմի ընթացքի վրա և փոխադարձ կապը հարևան ՌԳԹ-ներում ռազմական գործողությունների հետ:

2. Տարբեր ֆիզիկաաշխարհագրական (բնական) պայմաններում գործողություններ վարելու հնարավորություններն ու ձևերը պետք է զորքերին ուսուցանվեն դեռ խաղաղ ժամանակ: Ընդամին դրանք ուսումնասիրվում և գնահատվում են տարբեր զորատեսակների կողմից իրականացվող տարաբնույթ գործողությունների վրա դրանց դրական կամ բացասական ազդեցության, պաշտպանության կամ հարձակման համար զորքերի օպերատիվ դասավորման, հիմնական ջանքերի կենտրոնացման ուղղության ընտրության, զորքերի պաշտպանության հնարավորության, ինժեներական ապահովման, ռազմավարական գործողությունների հավանական բնույթի որոշման, տարբեր ուղղություններում ՋՌԻ-ի զորատեսակների և հատուկ զորքերի (ուժերի) կիրառման կարգի, զորքերի (ուժերի) խմբավորումների ծածուկ ստեղծման հնարավորությունների, մարտական և հատուկ տեխնիկայի կիրառման հնարավորությունների, լեռնային, ջրային և այլ արգելքների հաղթահարման եղանակների, ռազմավարական պաշտպանության ընդհանուր համակարգում բնական և արհեստական բնագծերի (արգելքների) օգտագործման, այլ տարածաշրջաններում գործող խմբավորումների հետ փոխգործության կազմակերպման պայմանների տեսանկյունից:

Անհրաժեշտ եզրակացություն անելու համար այդ պայմաններից գնահատվող բաղադրիչներ են՝ տեղանքի ռելիեֆը, ջրային ռեսուրսները, բուսականությունը, կլիման, օդերևութաբանական պայմանները, ծովափի բնութագիրը:

Տեղանքի ռելիեֆն այն հիմնական տարրերից է, որն առավել մեծ ազդեցություն է ունենում զորքերի գործողությունների վրա: Ռելիեֆը, սովորաբար, հարձակվող զորքերի համար առաջացնում է առավելապես բարդ և դժվարամատչելի արգելքներ, իսկ պաշտպանության կազմակերպման համար՝ բնական հարմար բնագծեր: Ռելիեֆի բնույթից են առավելապես կախված զորքերի տարաշարժի պայմանները:

Ջրագրության տարրերը՝ գետերը, լճերը, ձահիճները (աղուտները), ծովերը, ջրանցքները, ջրամբարները և այլ ջրային տարածքներ, կարող են օգտագործվել որպես բնական արգելքներ պաշտպանական բնագծերի ստեղծման համար: Նախապես պատրաստված արհեստական արգելափակոցների հետ միասին ջրային արգելքները զորքերի շարժման ճանապարհին զգալիորեն դժվարացնում են նրանց հարձակողական գործողությունները: Ռազմական գործողությունների վրա գետերի ազդեցության աստիճանը և բնույթը կախված են տվյալ շրջանում դրանց խտությունից և քանակից, տեղադրիչից (միմյանց նկատմամբ ունեցած ուղղություններից) և, որպես արգելք, յուրաքանչյուր առանձին գետի հատկությունից: Որպես ջրային բնագիծ՝ գետի ռազմավարական նշանակությունը որոշվում է նրա հովտի և ողողատի առանձնահատկությամբ, լայնությամբ և հունի խորությամբ, հոսքի արագությամբ, գետի վրա հակառակորդի պաշտպանության բնույթով, ջրա-

տեխնիկական կառույցների առկայությամբ, ինչպես նաև տարվա ժամանակահատվածով և եղանակով:

Բուսականությունը, կամ բուսական ծածկույթի զգալի տարածքները, շատ դեպքերում պայմանավորում է անցանելիությունը, դիտման պայմանները, տեղանքի քողարկման և պաշտպանիչ հատկությունները: Ջորքերի գործողությունների վրա առավել մեծ ազդեցություն ունեն անտառները, որոնց նշանակությունը մեծանում է միջուկային զենքի և զանգվածային խոցման այլ զենքերի կիրառման դեպքում: Անտառային զանգվածները սահմանափակում են մարտական և տրանսպորտային մեքենաների անցունակությունը, նվազեցնում են տեսանելիությունը, կրճատում ռադիոկապի հեռավորությունը և հրածգային ու հրետանային զենքի կրակի արդյունավետությունը, դժվարացնում են կողմնորոշումը, նպատականշումը, թուլացնում հարձակման տեմպը:

Կլիման ազդում է անձնակազմի, ռազմական տեխնիկայի և սպառազինության կիրառման վրա:

Ռազմարվեստի պատմության մեջ հայտնի են պատերազմներում տեղանքի խելամիտ օգտագործմամբ հաղթանակի նվաճման բազմաթիվ դեպքեր: Դրանցից մեկը **Մարաթոնի ճակատամարտն** է, որը տեղի է ունեցել մ.թ.ա. 490 թվականի սեպտեմբերի 12-ին՝ Աթենքի և Աթեննյան Պարսկաստանի միջև՝ Աթենքից շուրջ 40 կմ հեռավորության վրա գտնվող Մարաթոն բնակավայրի մոտ: Հույն զորահրամանատար Միլթիադեսը, ճիշտ գնահատելով իրադրությունը (պարսիկներն ունեին քանակական առավելություն՝ 20 հազարը 11 հազարի դիմաց)՝ պարսկական բանակի հիմքը կազմող այրուծիով իր զորքերի շրջառման հնարավորությունը, հաշվի առավ տեղանքի բնույթը և իր փաղանգների դասավորության համար ճիշտ տեղ ընտրեց՝ լայնարձակ Մարաթոնյան հովտի մուտքի մոտ: Հունական փաղանգների թևերը ուժեղացվեցին ընտրովի ջոկատներով, որոնք քողարկված էին լեռների անտառապատ լեռնաձյուղերում, որտեղ ստեղծել էին անցկալներ և ծառափակոցներ: Պարսկական այրուծիի տեղաշարժը հյուսիսից հարավ սահմանափակում էին անտառով ծածկված բարձունքները և ճահիճները, իսկ պարսիկների թիկունքում գտնվում էր ծովը: Միլթիադեսը պարսիկներին հնարավորություն տվեց աստիճանաբար անցնելու հովտի խորքը, որտեղ հույները ուժեղ թևերով հարձակվեցին պարսիկների վրա և ջախջախեցին նրանց: Պարսիկները տվեցին 6400 զոհ՝ հույների 192 զոհի դիմաց¹⁵:

3. Ռազմաքաղաքական իրավիճակը վերլուծելու, գլխավոր և հավանական հակառակորդներին ու դաշնակիցներին, դաշինքների կազմը և դրանց կայունությունը պարզելու, ռազմական վտանգի աստիճանը, հավանական ընդհարումների գոտիները, կողմերի՝ պատերազմներ (ռազմական գործողություններ) վարելու հնարավորությունները, այս կամ այն ՌԳԹ-ում կամ ռազմավարական ուղղությունում անհրաժեշտ ուժերը ու միջոցները որոշելու,

¹⁵ Ств «100 великих битв». М., 2005., сс.10–13; Д. Р. Эрнест, Д. Т. Невитт. Война. Полная энциклопедия. Все битвы, сражения и военные кампании мировой истории с 4-го тысячелетия до нашей эры до конца XX века. М., 2015, сс. 30–31:

ռազմավարական շրջանների և ուղղությունների կարևորությունը գնահատելու, օբյեկտները և դրանց գրավման հաջորդականությունը սահմանելու համար անհրաժեշտ է գնահատել հետևյալ բաղադրիչները¹⁶։ ընդհանուր ռազմաքաղաքական իրավիճակը, պետությունների վարած քաղաքականությունը և ազգային շահերը, դրանց միջև առկա հակասությունները, ռազմական ուժի կիրառման նկատմամբ տեսակետները, ռազմաքաղաքական ուժերի, միությունների, դաշնադրությունների, ռազմական բլոկների փոխդասավորությունը, ռազմաքաղաքական իրավիճակի զարգացման և ընդհարումների ու պատերազմների ծագման վերաբերյալ կանխատեսումները, ռազմական գործողությունների և, ընդհանուր առմամբ, պատերազմի կանխմանը և ռազմական ռազմավարության համար շահեկան պայմանների ստեղծմանն ուղղված հիմնական միջոցառումների և մեխանիզմների մշակումը։

4. Տարածաշրջանի երկրների տնտեսական հնարավորությունների, այսինքն՝ ՌԳԹ տնտեսական ներուժի, գնահատումը սկսվում է բնական ռեսուրսների (այդ թվում՝ բնակչության ռեսուրսների) գնահատմամբ։ Նախ՝ գնահատվում են բնական ռեսուրսների օգտագործման համակարգը, վերականգնման հնարավորությունը, օգտակար հանածոները, հողային, ջրային, էներգետիկ, անտառային, կենդանական և այլ ռեսուրսներ։ Որոշվում են դրանց շահագործման, վերականգնման և պահպանման հնարավորությունները, պետության (դաշնադրության) զարգացման վրա չվերականգնվող ռեսուրսների ազդեցության աստիճանը։ Այնուհետև ուսումնասիրվում և գնահատվում են արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը, ընդսմին գնահատումն սկսվում է էներգետիկ համակարգից, որտեղ որոշվում են հզորությունը, տարածական տեղաբաշխումը, էներգիայի փոխանցման համակարգը, էներգակրուստները, էներգիայի օգտագործման աստիճանը և այլն¹⁷։

Սրանցից բացի, կատարվում է պետությունների (դաշնադրությունների) ռազմատնտեսական գործունեության բնույթի, ռազմական բյուջեի, ռազմատնտեսական ներուժի (այդ թվում՝ ՍՌՏ թողարկման գծով), տնտեսության ուժեղ և թույլ կողմերի, ռազմավարական հումքով ապահովվածության, պատերազմական ժամանակաշրջանում ռազմական արդյունաբերության վիճակի և հնարավորությունների, արդյունաբերության օբյեկտների տեղաբաշխման գնահատում։ Այս ամենը հնարավորություն է տալու որոշելու ռազմաքաղաքական ուղեգծի ձևավորման և պահպանման գործում տնտեսության խաղացած դերը, տնտեսության ռազմականացման աստիճանը և պատերազմի կարիքների բավարարման կարողությունը, տնտեսության խոցելի կողմերը, միջուկային և քիմիական արդյունաբերության օբյեկտների քանդման հավանական հետևանքները։

Կարևոր է վերլուծել և գնահատել ծառայությունների մատուցման հատվածն իր հիմնական ցուցանիշներով հանդերձ, այդ թվում՝ ըստ հասարակության, մարդկանց խմբերի և անհատների պահանջմունքների ամբողջությամբ

¹⁶ Տես «Основы военной географии», сс. 25–26։

¹⁷ Տես նույն տեղում, էջ 32–33։

յամբ բավարարման և ըստ տարածաշրջանների: Հարկ է նշել, որ զինված ուժերին և բնակչությանը հնարավոր է ապահովել ամեն անհրաժեշտ բանով՝ միայն զարգացած տնտեսական ներուժ ունենալու դեպքում:

5. Տարածաշրջանի պետությունների զինված ուժերը և զորահավաքային հնարավորությունները գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ սրանք պետության հետազոտության կարևորագույն օբյեկտներից են: Նախևառաջ անհրաժեշտ է որոշել ՋՈՒ-ի ընդհանուր թվաքանակը և կազմը, զորահավաքային, ուժեղացման և համալրման հնարավորությունները, ՋՈՒ-ի կառավարման համակարգը, ՋՈՒ-ի մարտունակության և անձնակազմի պատրաստականության աստիճանը, զորքերի կառուցվածքը և գործողությունների մարտավարությունը, օդային և տիեզերական ուժերի և միջոցների վիճակն ու հնարավորությունները (եթե այդպիսիք կան), զորքերի խմբավորումների տեղակայման վայրերը, հատկապես՝ օդային և հրթիռային միջոցների ու կառավարման կետերի, դրանց փոփոխությունները¹⁸:

ՋՈՒ-ի ուսումնասիրումն ավարտվում է պետության (պետությունների դաշնադրության) ռազմական ներուժի որոշմամբ: Այն բարոյաքաղաքական ներուժի հետ (*պատերազմի բոլոր փորձություններին ժողովրդի և բանակի դիմագրավելու ու պատրաստ լինելու ունակությունը*) ներկայացնում է տվյալ պետության բնակչության նյութական և հոգևոր ուժի ամբողջությունը՝ ռազմական հզորությունը:

Բոլոր այս ցուցանիշների գնահատումը հնարավորություն է տալիս որոշելու, թե ինչ խմբավորման հետ ենք գործ ունենալու, զորահավաքի և վերախմբավորման միջոցով դրա ուժեղացման հնարավորությունները, ՋՈՒ-ի և տնտեսության՝ խաղաղ ժամանակաշրջանից պատերազմականի փոխադրման ժամկետներն ու կարգը, ՋՈՒ-ի գործողությունների հավանական բնույթը նախապատերազմական և պատերազմական ժամանակաշրջաններում, ՋՈՒ-ի ուժեղ և թույլ կողմերը¹⁹:

Ջորահավաքային հնարավորությունները գնահատելու համար անհրաժեշտ է նկատի առնել, որ **զորահավաքային ռեսուրսները** կազմում են *մարդիկ*, որոնք գտնվում են պահեստազորում, և որոնց զորակոչը կատարվում է զորքերը որոշակի թվաքանակով լրահամալրելու նպատակով, տարբեր նշանակության *ավտոտրանսպորտը*, որի կցագրումը կատարվում է ղեկավար նորմերի սահմաններում, և *քաղաքացիական ավիացիան*, որով ուժեղացվում է ռազմատրանսպորտային ավիացիան:

6. Տարածքի օպերատիվ սարքավորումը: Կարելի է եզրակացնել, որ ՌԳԹ օպերատիվ սարքավորման հիմնական բաղադրիչները, որոնք անհրաժեշտ է գնահատել, սրանք են. կառավարման համակարգերը (ռազմաքաղաքական, ռազմավարական, օպերատիվ), հրթիռային բազաները և մեկնարկային դիրքերը, օդանավակայանները, ՀՕՊ-ի ստացիոնար դիրքերը, ռադիոտեղորոշումային կայաններն ու դիրքերը, գենքի կառավարման

¹⁸ Տես նույն տեղում, էջ 31–32:

¹⁹ Տես *Ս. Ա. Սուջյան*, Նշ. աշխ., էջ 216–217:

կետերը, բոլոր տեսակների հաղորդակցությունները, ինժեներական սարքավորանքը, պահեստներն ու զորակայանները, ինչպես նաև ռազմածովային բազաները և նավահանգիստները²⁰: Սրանց զարգացման աստիճանից և վիճակից են կախված թատերաբեմի ծավալը, հնարավորությունները և ՋՈՒ-ի տարբեր տեսակների և զորատեսակների կիրառման բնույթը:

Կատարված գնահատումը հնարավորություն կտա պարզելու տարածաշրջանի օպերատիվ սարքավորվածության և օպերացիաների նախապատրաստման ու վարման վրա դրա ազդեցության աստիճանը:

7. Տարածաշրջանի ռազմավարական նշանակությունը հասկանալու, պատերազմի ընթացքի և ելքի վրա տվյալ տարածաշրջանում ձեռնարկվող ռազմական գործողությունների ազդեցության աստիճանը պարզելու համար անհրաժեշտ է գնահատել ռազմաքաղաքական իրավիճակը և մոտակա տարիներին դրա զարգացման հեռանկարը, տարածաշրջանի պետությունների տնտեսությունների՝ արտաքին քաղաքական ուղեգիծը ապահովելու հնարավորությունները, հավանական հակառակորդի ՋՈՒ-ի խմբավորումների վիճակը և գործողությունների հավանական բնույթը, տարածաշրջանի աշխարհագրական դիրքը և փոխադարձ կապը այլ տարածաշրջանների հետ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ռազմական գործողությունների թատերաբեմի հետազոտման և գնահատման մեթոդաբանության իմացությունը և ճիշտ կիրառումն ապահովում են ՌԳԹ նկարագրության, վերլուծության և գնահատման միասնական մոտեցումը և հաջորդականությունը, նպաստում են ռազմական գործողությունների թատերաբեմում ռազմական գործողությունների հնարավոր բնույթի կանխագուշակմանը, ՋՈՒ-ի կիրառման ռազմավարական պլանավորմանը, յուրային երկրի տարածքի նախապատրաստմանը՝ օպերատիվ և թիկունքային առումով, պատերազմի կանխարգելման և պետության ռազմական անվտանգության ապահովման համար առավել արդյունավետ միջոցների ձեռնարկմանը:

²⁰ Сту «Основы военной географии», сс. 63–65:

ВОЕННАЯ ГЕОГРАФИЯ

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ МЕТОДОЛОГИИ СТРАТЕГИЧЕСКОЙ ОЦЕНКИ ТЕАТРА ВОЕННЫХ ДЕЙСТВИЙ

*С. А. СУДЖАН, кандидат географических наук, доцент, полковник запаса,
начальник Центра исследований истории военного искусства НИУО МО РА*

РЕЗЮМЕ

Целью стратегического анализа театра военных действий (ТВД) является определение воздействия природно-климатических, военно-политических и военно-экономических условий ТВД на подготовку и проведение военных операций.

Наиболее принятый алгоритм стратегического анализа ТВД включает: 1. определение факторов и условий, которые влияют или могут повлиять на характер военной угрозы и вероятных военных действий; 2. распределение этих факторов по группам в качестве элементов стратегической оценки; 3. анализ показателей всех элементов; 4. выводы по стратегической оценке каждого из элементов; 5. общий вывод на основе стратегических оценок отдельных элементов.

Элементами стратегической оценки ТВД являются: а) общие сведения о ТВД; б) физико-географические условия; в) военно-политическая обстановка; г) экономические возможности государств региона; д) ВС и мобилизационные возможности государств региона; е) оперативная оборудованность территории; ж) стратегическое значение региона.

MILITARY GEOGRAPHY

SOME ISSUES OF THE METHODOLOGY OF THE STRATEGIC ASSESSMENT OF THE THEATER OF OPERATIONS

S. A. SUJYAN, PhD in Geography, Associate Professor, Colonel (Ret.), Head, Center for Research on the History of Military Art, NDRU, MOD, RA

SUMMARY

The objective of the strategic analysis of the theater of operations is to determine the effect of natural and climatic, military-political and military-economic conditions of the theater of operations on the preparation and conduct of military operations.

The most accepted algorithm for the strategic analysis of the theater of operations includes: 1. the identification of factors and conditions that affect or may affect the nature of the military threat and potential military actions; 2. the grouping of these factors as elements of the strategic assessment; 3. the analysis of indicators of all the elements; 4. conclusions on the strategic assessment of each of the elements; 5. the overall conclusion based upon the strategic assessments of single elements.

The elements of the strategic assessment of the theater of operations are: a) background information on the theater of operations; b) physiographic conditions; c) the military and political situation; d) economic opportunities of states in the region; e) the armed forces and mobilization capabilities of states in the region; f) the operational equipment of the territory; g) the strategic importance of the region.

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈԿ-ի կողմից հաստատված «Գոկտորական և քեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրատարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով (առավելագույնը 20000 նիշ՝ ներառյալ բացատները), հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները ոչ ավելի, քան 1 (մեկ) էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղափարային պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմաճակատական հասկացումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրատարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Национального исследовательского университета обороны МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала (максимально 20000 знаков, включая пробелы), с приложением резюме на русском и английском языках объемом не более одной страницы.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of National Defense Research University of the Ministry of Defense of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length (maximum 20000 characters with spaces). Provide Russian and English summaries (no more than 1 page long).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱՆԱՆ ԲՆՆԱԿ

Պատասխանատու քարտուղար՝ *Ա. Ա. Խաչատրյան*
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Ջ. Դ. Ասատրյան*
Լեզվական խմբագրման խմբի պետ՝ *Զ. Վ. Փիրոյան*
Տեխնիկական բաժանմունքի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*

Չևավորող նկարիչ՝ *Գ. Վ. Բսկանդարյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Ս. Ռ. Հակոբջանյանի, Ա. Հ. Սարուխանյանի*

Տեքստերի թարգմանությունը՝ *Ա. Ա. Մարտիրոսյանի,
Ն. Ս. Մկրտչյանի, Դ. Ս. Չիլինգարյանի, Թ. Դ. Չիլինգարյանի*

Համակարգչային ապահովումը՝ *Ս. Ա. Դավթյանի, Ս. Ռ. Հակոբջանյանի,
Ա. Հ. Սարուխանյանի*

Սրբագրիչ՝ *Ն. Հ. Բաղդասարյան*

Լուսանկարչական ապահովումը՝ *Ա. Դ. Ներսիսյանի, ՀՀ ՊՆ Տեղեկատվության
և հասարակայնության հետ կապերի վարչության և համացանցային*

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. ՌԻՄեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25

Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ <http://www.mil.am/arm/index.php?page=105>

Պաշտոնական բլոգ-կայքը՝ <http://razmavaraget.wordpress.com>

Էլ. հասցեն՝ haykakanbanakmod@gmail.com

© ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի
«Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2020 թ.

Թուղթը՝ օֆսեթային: Չևաչափը՝ 70×100 1/16:

Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր: Պայմանական տպագրական 10,5 մամուլ:
Տպաքանակը՝ 500: Տառատեսակները՝ «Arial», «Arial Unicode», «GHEA Grapalat»,
«Russian Baltica» և «Times»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «ԹԱՍԿ» ՍՊԸ տպարանում



Մի խումբ ազատամարտիկներ Շուշիի
Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցու մոտ



Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի
և ազատամարտիկների համատեղ աղոթքը
Շուշի քաղաքի ազատագրման կապակցությամբ
Շուշի, Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցի, 1992 թ. մայիսի 9



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՈՒԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

1 (103). 2020